ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎ*

ԿԱՏԱՐՈՂ՝ *Կ. ԱԶԱՐՅԱՆ*

ՂԵԿԱՎԱՐ՝ *մ.գ.թ. Լ. ՄԻՐԱԲՅԱՆ*

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳԼՈՒԽ 1. ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ.....5
1.1. Պարապմունքների տեսակները.....7
1.2. Պարապմունքների կազմակերպման ոչ ավանդական ձևերը.....9
1.3. Թեմատիկ պարապմունքներ.....11
1.4. Տարբեր տարիքային խմբերում պարապմունքների կազմակերպման և անցկացման առանձնահատկությունները.....13
ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՆԹԱԽՄԲԵՐՈՎ.....16
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ.....17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....21
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պարապմունքները՝ որպես ուսուցման հիմնական ձև, շատ կարևոր մեթոդ է երեխաների զարգացման, իմացության աստիճանի բարձրացման և հետագայում այդ իմացությունը դպրոցում կիրառելու, ավելի դյուրին ուսուցման պրոցես անցնելու համար:

Այսօր մանկապարտեզում պարապմունքների կազմակերպումը մեծ վարպետություն է պահանջում մանկավարժից: Առավել արժեքավոր են համարվում համալիր բնույթի պարապմունքները, որոնց ընթացքում դիդակտիկ խնդիրները լուծվում են երեխաներին ներգրավելով գործունեության տարբեր ձևերի մեջ: Մշակվում են նաև ինտեգրված պարապմունքներ, որոնց ընթացքում երեխային ներկայացվում են նույն դիդակտիկ նպատակին ծառայող գիտելիքներ տարբեր ոլորտներից:

Թեմայի արդիականությունը:

Բոլոր ժամանակներում մարդկության համար գերխնդիր է եղել պարապմունքների ճիշտ կազմակերպումը ուսուցման գործընթացում: Թեմայի արդիականությունը պայմանավորված է պարապմունքի արդյունավետ պլանավորմամբ և կազմակերպմամբ, որում վճռորոշ դեր են կատարում փոխգործուն մեթոդների ճիշտ ընտրությունը, դիդակտիկ նյութերի կիրառումը տվյալ փուլին համապատասխան:

Հետազոտական աշխատանքի նպատակն է.

- ✓ Ուսումնասիրել տարբեր տարիքային երեխաների հետ պարապմունքների անցկացման արդյունավետությունը՝ որպես ուսուցման ձև:
- ✓ Ուսումնասիրել, թե ինչպես է անդրադառնում տարբեր ոլորտներին վերաբերող պարապմունքների մասնակցություն մանկապարտեզի երեխաների հետագա զարգացման վրա:

Ելնելով նպատակից՝ հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

- ✓ Ներկայացնել ավանդական և ոչ ավանդական ձևերի պարապմունքները:
- ✓ Առաջ քաշել հնարավոր խնդիրները և գտնել դրանց լուծումները՝ ուսուցումն ավելի արդյունավետ դարձնելու համար:

- ✓ Իրականացնել փորձարարական աշխատանք՝ պարապմունքների միջոցով երեխաների հետ աշխատելու և ուսուցման ձևերի ու մեթոդների օգտագործմամբ:

Հետազոտության համար կիրառել ենք փորձարարական պարապմունքներ՝ տարբեր առարկաների, տարբեր ոլորտների թեմաներով**:**

Հետազոտական աշխատանքը կազմված է **ներածությունից, երկու գլուխներից, ենթագլուխներից, փորձարարական մասից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից**:

ԳԼՈՒԽ 1. ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Մանկապարտեզում ուսուցման դեռևս ամենատարածված ձևը պարապմունքն է: Պարապմունքների կազմակերպումը մեծ վարպետություն է պահանջում մանկավարժից: Այսօր առավել արժեքավոր են համարվում համալիր բնույթի պարապմունքները, որոնց ընթացքում դիդակտիկ խնդիրները լուծվում են երեխաներին ներգրավելով գործունեության տարբեր ձևերի մեջ: Մշակվում են նաև ինտեգրված պարապմունքներ, որոնց ընթացքում երեխային ներկայացվում են նույն դիդակտիկ նպատակին ծառայող գիտելիքներ տարբեր ոլորտներից:

3-6 տարեկան երեխաների օրվա կանոնակարգում իրենց կարևոր տեղն ունեն պարապմունքները1: Պարապմունքների ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորը յուրացվում և ամրապնդվում են տարբեր խաղերի, մեծերի և հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում:

Պարապմունքները իրենց բովանդակությամբ և կազմակերպման ձևով չպետք է առանձնացվեն և շատ տարբերվեն մյուս աշխատանքներից, որոնք իրականացվում են երեխաների հետ օրվա տարբեր ժամերին: Պարապմունքները պետք է ներառվեն օրվա աշխատանքներում այնպես, որ անցումը պարապմունքից երեխայի գործունեության մյուս ձևերին լինի բնականոն, տրամաբանական, սահուն և հիմնավորված: Անհրաժեշտ է հիշել, որ օրվա ընթացքում երեխաների հետ տարվող բոլոր աշխատանքները՝ անկախ դրանց բնույթից, հավասարաչափ կարևոր են և իրենց դերն ունեն երեխայի համակողմանի զարգացման գործում:

Պարապմունքներն անցկացվում են շաբաթական տեղաբաշխման գրաֆիկի և ռեժիմի (կանոնակարգի) համաձայն: Օրվա կանոնակարգը փոփոխվում է տարվա ցուրտ և տաք եղանակներին համապատասխան: Նկատի առնելով օրվա ռեժիմի վերը նշված տարբերակները՝ յուրաքանչյուր հաստատություն կազմում է իր պայմաններին և յուրահատկություններին համապատասխան ռեժիմ՝ բնականաբար կատարելով կանոնակարգային առանձին պահերի փոփոխություն:[5, 11-12]

Պարապմունքների միջև պետք է ապահովել 10-15 րոպեանոց ընդմիջումներ/դադարներ, որոնք անհրաժեշտ են երեխաների ֆիզիկական ակտիվացման և մի պարապմունքից մյուսին սահուն անցումն ապահովելու համար:

Մանկապարտեզի երեխաների հետ աշխատանքն իրականացվում է խաղային գործունեության միջոցով: Պարապմունքները տարվում են երկու ձևով՝

ա) համընդհանուր (ֆրոնտալ) ուսուցման ձևով, որը հիմնականում կատարվում է նոր նյութի հաղորդման ժամանակ,

բ) մի քանի պարապմունքների ինտեգրման ճանապարհով, օրինակ՝ մայրենի լեզու-կերպարվեստ, մաթեմատիկա-երաժշտություն, մաթեմատիկա-կառուցողական աշխատանք և այլն:

Թեմաների զարգացումը, նյութի ամրապնդումը, ամփոփումը կարելի է կատարել՝ կիրառելով ուսուցման փոխգործուն մեթոդները, օգտագործելով աշխատանքային կենտրոնները և կազմակերպելով փոքր խմբերով աշխատանք: Պարապմունքները երեխայի համար հնարավորություն են ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իրական փորձառություն, որն օգնում է յուրաքանչյուր երեխայի լիարժեք բացահայտել իր ստեղծագործական կարողությունները, բավարարել հետաքրքրությունները:

Պարապմունքների ժամանակ երեխաները հետազոտում են, ուսումնասիրում, պրպտում, լուծումներ գտնում, որոշումներ կայացնում: Նրանք սովորում են ոչ միայն դաստիարակին լսելով, այլ նաև սեփական փորձով, ընկերների հետ քննարկելով, պարապմունքին մասնակցող այլ մեծահասակների հետ շփվելով: Պլանավորված պարապմունքներն իրականացվում են խմբով, ենթախմբերով, անհատական՝ կախված ուսուցանվող նյութի բովանդակությունից, թեմայի նպատակներից, երեխաների նախապատրաստվածության մակարդակից և հոգեբանական առանձնահատկություններից, ծնողների պահանջներից:

Պարապմունքների ընթացքում անցկացվում է թարմացնող վարժություն կամ աշխուժացնող խաղ՝ 2-3 րոպե տևողությամբ: Պարապմունքների միջև կազմակերպվում է ընդմիջում՝ 10-15 րոպե տևողությամբ: Ընդմիջումների ժամանակ անհրաժեշտ է կազմակերպել աշխուժացնող, թարմացնող կարճատև խաղեր, խուսափելով

չափազանց ակտիվություն առաջացնող և երկարատև խաղեր: Պարապմունքների ընթացքում երեխաների ակտիվ շարժունակության և բարձր աշխատունակության ապահովման համար կարևոր է, որ դաստիարակը նախապես ճիշտ պլանավորի գործունեության առանձին տեսակների և հանգստի հերթագայումը:

1.1. Պարապմունքների տեսակները

Պարապմունքները կարելի է դասակարգել ըստ թեմաների, զարգացման կարևորության.

1. Զրույց

2. Բանաստեղծության ուսուցում

3. Դիդակտիկ խաղ

4. Գեղարվեստական ընթերցանություն

5. Վերապատմում

6. Պատմում (նկարով, խաղալիքների նկարագրություն, դաստիարակի ցուցումով, կիսատ թողած պատմության շարունակություն, հիշողությամբ, ստեղծագործական...)

Զրույցը նպաստում է երեխաների տրամաբանական մտածողության զարգացմանը, ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնմանը, երկխոսության զարգացմանը: Այն իրականացվում է հարց ու պատասխանի ձևով՝ տարբեր թեմատիկ ուղղություններով. կենցաղային, հասարակական, բարոյագիտական:

Բանաստեղծությունների ուսուցումը երեխայի մեջ սեր է արթնացնում գեղարվեստական գրականության տվյալ ժանրի հանդեպ, զարգացնում է գեղարվեստական ճաշակը, մայրենի լեզվի գեղեցկությունը, ստեղծագործության մեղեդայնությունը զգալու և գնահատելու կարողությունը:

Դիդակտիկ խաղերի միջոցով երեխաները ծանոթանում են առարկաների կառուցվածքին, հատկանիշներին, բնության երեևույթներին, մարդկանց կյանքին, նրանց փոխհարաբերություններին, որոնց շնորհիվ հարստանում, ակտիվանում է

երեխայի բառապաշարը, զարգանում է կապակցված խոսքը, կանոնավորվում արտասանությունը:

Դիդակտիկ խաղերն ուղղված են երեխայի իմացական կարողությունների ձևավորմանը («Ի՞նչ է սա», «Ինչպիսի՞ն է այն», «Լրացրո՛ւ նախադասությունը », «Ասա՛ Լ հնչյունով սկսվող բառեր » և այլն):

Գեղարվեստական ընթերցանության ժամանակ դաստիարակը երեխաների համար ընթերցում է իրենց տարիքին համապատասխան հետաքրքիր պատմվածքներ, հեքիաթներ և այլ ստեղծագործություններ:

Վերապատմելու համար պետք է ընտրել փոքրիկ հետաքրքիր ստեղծագործություններ, որոնք ծավալով մեծ չեն և գրված են արտահայտիչ ու գեղեցիկ լեզվով: Երեխաները վերապատմելու ընթացքում հաղորդում են ստեղծագործության բովանդակությունն առանց բացթողումների: Կարելի է սովորեցնել երեխաներին վերապատմելիս նաև խաղարկել կամ բեմականացնել պատմվածքների, ծանոթ ժողովրդական հեքիաթների որոշ հատվածներ և դրանք ներառել պամության մեջ: Շատ ավելի կարևոր է պատմության ընկալումը. երեխաներին պետք է սովորեցնել տարբերել գլխավորը երկրորդականից, գնահատել հերոսների արարքները, դրանց դրական և բացասական կողմերը, հնարավորության դեպքում կապակցել դրանք սեփական կենսափորձին:

Պատմում նկարով պարապմունքի ընթացքում երեխաները սովորում են դիտել, հասկանալ և վերարտադրել նկարի բովանդակությունը: Անհրաժեշտ է խրախուսել, որ պատմելուց բացի երեխաները որոշակի վերաբերմունք դրսևորեն նկարչի կողմից պատկերվածի նկատմամբ:

Խաղալիքների նկարագրության միջոցով պատմելու մեթոդն իր ուրույն տեղն ունի հատկապես կրտսեր տարիքի երեխաների խոսքի զարգացման պարապմունքների ցանկում: Խաղալիքն օգնում է հարստացնել և ակտիվացնել փոքրիկի բառապաշարը, առաջացնում դրական հույզեր, արտահայտվելու ցանկություն: Խաղալիքների նկարագրությունը կարելի է իրականացնել դիդակտիկ խաղերի միջոցով: Նկարագրության համար պետք է ընտրել այնպիսի խաղալիքներ, որոնք կգրավեն

երեխայի ուշադրությունը: Երեխաներին պետք է սովորեցնել նախ կենտրոնանալ խաղալիքի կամ առարկայի ուսումնասիրության վրա. զննել տարբերություններն ու նմանությունը, մանրամասները, հետո սովորեցնել պատասխանել դրանց նկարագրությանը վերաբերող հարցերին: [7]

Դաստիարակի ցուցումով պատմում պարապմունքի ընթացքում դաստիարակը երեխաներին առաջադրում է մի քանի հարց՝ կապված իրենց հետ տեղի ունեցած որևէ իրադարձության հետ: Թեմաների ընտրության մեջ կարևորվում է դրանց դաստիարակչական և ճանաչողական նշանակությունը:

Երեխաների ստեղծագործական երևակայության զարգացման լավագույն միջոց է՝ ***կիսատ թողած պատմության շարունակությունը:*** Դրա սկիզբը հաղորդում է դաստիարակը: Նա կանգ է առնում պատմության հանգուցային կետում ևերեխաներին առաջարկում ինքնուրույն շարունակել այն:

Ստեղծագործական պատմումների համար դաստիարակը երեխաներին հանձնարարում է տպավորությունների հիման վրա որևէ կոնկրետ թեմա, նրանց մասնակից դարձնում սյուժեին, ևերեխաներն իրենց երևակայությամբ հորինում են պատմություններ: Ծանոթացում շրջակա միջավայրին, ***էկոլոգիա և վաղ գրաճանաչություն.*** այս պարապմունքները նույնպես խոսքի զարգացման լավ հնարավորություններ են:

1.2. Պարապմունքների կազմակերպման ոչ ավանդական ձևերը

Դաստիարակներից ոմանք պարզապես կատարում են իրենց պարտականությունները և չեն փորձում որևէ նոր բան բացահայտել, որտեղ, կարծես թե, ամեն ինչ բաց է: Մյուսները անվերջ փնտրտուքի մեջ են և չեն ցանկանում կրկնել նույն ճանապարհը նորից ու նորից երեխաների տարբեր խմբերի հետ:

Ներկայումս նախադպրոցական հաստատությունների պրակտիկայում արդյունավետորեն օգտագործվում են կրթության կազմակերպման ոչ ավանդական ձևերը. դասեր ոչ միայն խմբերով, այլև ըստ ենթախմբերի, որոնք ձևավորվում են՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները: Դրանք

զուգակցվում են շրջանային աշխատանքի հետ՝ ձեռքի աշխատանք, տեսողական գործունեություն: Դասերը հարստացված են խաղով և հեքիաթներով: Երեխան, տարված խաղի հայեցակարգով, չի նկատում թաքնված ուսումնական առաջադրանքը: Այս գործողությունները օգնում են ազատել երեխայի ժամանակը, որը նա կարող է օգտագործել իր հայեցողությամբ՝ հանգստանալ կամ անել մի բան, որը հետաքրքիր է կամ էմոցիոնալ նշանակություն ունի իր համար:

Մեր ուսումնասիրության ժամանակ ծանոթացանք մի քանի համայնքներում կիրառած մի ծրագրի հետ, որում ընդգրկված մանկապարտեզների մի մասը հավաքագրել են տարբեր տարիքային կազմով խմբեր, նպատակ ունենալով օպտիմալացնել խմբերի քանակը և համապատասխանաբար՝ մանկավարժների հաստիքաքանակը: Այդպիսի խմբեր կային բոլոր թիրախ համայնքներում: Ըստ քննարկումներին մասնակցած ծնողների՝ այս հանգամանքը ևս խնդրահարույց է երեխաների զարգացման տեսանկյունից, քանի որ տարբեր տարիքային խմբերի համար տարբեր տևողության ու բովանդակության պարապմունքներ են նախատեսված, և թե՛ պարապմունքները համատեղ անցկացնելու դեպքում, թե՛ երեխաներին նույն խմբասենյակում խմբերի բաժանելիս կրթական գործընթացը տուժում է: *«Պարապմունքները անցկացնելը կրկնակի անգամ բարդանում է, որովհետև երեք տարեկան երեխան նստում է չորս ու կես տարեկան երեխայի հետ և չի կարելի, որ նրանք նույն տեղեկությունը ստանան»* (Համայնքներից մեկի քննարկման մասնակից ծնող): [4]

Ուսումնասիրված ՆԴՀ-ներում պարապմունքների շաբաթական քանակը հիմնականում համապատասխանում է ԱՆ թիվ 857-Ն հրամանով նախատեսված նորմատիվներին: Կրտսեր խմբերի պարապմունքների քանակի ու տևողության վերաբերյալ ԱՆ նորմատիվներով չեն առանձնացված առաջին և երկրորդ կրտսեր խմբերը: Ըստ այդմ, փոքրերի համար նախատեսված է 10-15 րոպե տևողությամբ շաբաթական 10 պարապմունք: Սակայն մանկապարտեզների մեծ մասում կրտսեր խմբի պարապմունքները տևում են 15-20, իսկ մեկում՝ անգամ 20-25 րոպե: Մանկապարտեզների ղեկավարները պարապմունքների այս տևողությունը

հիմնավորում են Կրթության ազգային ինստիտուտի կողմից մշակված կրթական ծրագրով: Կրթության ազգային ինստիտուտի ներկայացուցիչը իր հերթին նշում է, որ կրտսեր երկրորդ խմբի դեպքում կարող են նախատեսվել 10-12 պարապմունք, իսկ պարապմունքների տևողությունը ըստ ծրագրի 15-20 րոպե է սահմանված: Միջին և ավագ խմբերում պարապմունքների տևողությունը համապատասխանում է նորմատիվին, բացառությամբ մեկ մանկապարտեզի, որտեղ ավագ խմբի երեխաների պարապմունքը 25 րոպեի փոխարեն տևում է 15-20 րոպե: Առանձին մանկապարտեզներում պարապմունքների միջև ընկած ընդմիջումը չափազանց կարճ է տևում, 10-12 րոպեի փոխարեն՝ 5-10 րոպե:[3, 26-27]

1.3. Թեմատիկ պարապմունքներ

Առանձին պարապմունքների համար հատուկ թեմատիկ պարագաների օգնությամբ խմբասենյակը կարելի է դարձնել «խանութ », «վարսավիրանոց », «այգի » և այլն:

1. **էկոլոգիական դաստիարակության** միջոցը մանկապարտեզում կազմակերպվող նպատակային պարապմունքն է: Նախապես պլանավորված պարապմունքների համակարգը նպաստում է էկոլոգիական գիտելիքների յուրացմանը և սովորեցնում երեխաներին տարբերել էկոլոգիական գիտելիքների ուղղվածությունը՝ դրանք հարկ եղած դեպքում կիրառելու նպատակով: էկոլոգիական գիտելիքները լինում են երեք ուղղվածության.

- կենսաբանական բնույթի՝ դրանք բնութագրում են կենդանի օրգանիզմների բազմազանությունը (ջրային, օդային, երկկենցաղ, ցամաքային), նրանց յուրահատկությունները (արտաքին տեսքը, վարքը), կենսակերպը;

- սոցիալական բնույթի՝ դրանք ներկայացնում են «մարդ-բնություն» փոխհարաբերությունները (բնությունը և ես, մարդիկ և շրջակա միջավայրը, շրջակա միջավայրը և առողջությունը, բնական պաշարները);

- կիրառական բնույթի՝ որոնք ուղղված են բնապահպան գործունեության գիտակցմանը (ի՞նչ է արգելոցը, ինչի՞ համար է «Կարմիր գիրքը», ինչու՞ են

աստիճանաբար վերանում բույսերի և կենդանիների որոշ տեսակներ): Հատուկ կազմակերպված պարապմունքներից բացի էկոլոգիական գիտելիքներ կարող են փոխանցվել խաղ-պարապմունքների, խաղ-վիկտորինաների, պարապմունք-բանավեճերի և ուսուցման այլ ձևերի միջոցով: Արդյունավետ է նշված հիմնական միջոցների համատեղ կիրառումը բնության գրկում: Պարապմունքների համակարգում իր ուրույն տեղն է գրավում համալիր պարապմունքը, որը չափազանց արդյունավետ է նաև նախադպրոցականի էկոլոգիական դաստիարակության ընթացքում:

Էկոլոգիական պարապմունքների կազմակերպման ձևերն են.

- էքսկուրսիաները և արշավները,

- բացօթյա կամ բնության գրկում կազմակերպվող հանդեսներն ու տոնակատարությունները,

- բնաճանաչողական տոնահանդեսները (ծաղկի տոն, բերքահավաքի տոն, վարդավառ, գարնանը ծառերի բողբոջման տոն),

- էկոլոգիական բնույթի միջոցառումները՝ շաբաթօրյակները, ծառատունկը, միջավայրի բարեկարգումը և այլ: էկոլոգիական դաստիարակության կարևորագույն մանկավարժական պայմաններն են. էկոլոգիական զարգացնող միջավայրի կազմակերպումը, էկոլոգիական աշխատանքի պլանավորումը էկոլոգիական դաստիարակության տեխնոլոգիաների առկայությունը:

Գեղագիտական դաստիարակության կազմակերպման ձևերը բազմաթիվ են և բազմաբնույթ: Ամենաարդյունավետ ձևը նախադպրոցականի գեղագիտական դաստիարակության կազմակերպման՝ համալիր պարապմունքն է, որի ընթացքում երեխային ներգրավելով գործունեության տարբեր ձևերի մեջ, կարելի է լուծել մի շարք խնդիրներ: Մանկապարտեզի մանկավարժական գործընթացում ծրագրավորված կազմակերպվում և իրականացվում են բազմատեսակ պարապմունքներ, խաղ-պարապմունքներ, պարապմունք-վիկտորինաներ և այլն: Նշված պարապմունքների համակարգում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում կերպարվեստի պարապմունքները:

1.4. Տարբեր տարիքային խմբերում պարապմունքների կազմակերպման և անցկացման առանձնահատկությունները

Դրական արդյունքների հասնելը կախված է ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպումից: Դասերի հաճախելիս առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել հիգիենիկ պայմանների պահպանմանը. սենյակը պետք է օդափոխվի, ընդհանուր նորմալ լուսավորության դեպքում լույսը պետք է ընկնի ձախ կողմից. սարքավորումները, գործիքներն ու նյութերը և դրանց տեղադրումը պետք է համապատասխանեն մանկավարժական, հիգիենիկ և գեղագիտական պահանջներին:

Պարապմունքի տևողությունը պետք է համապատասխանի սահմանված նորմերին, իսկ ժամանակն ամբողջությամբ օգտագործել: Մեծ նշանակություն ունեն դասի սկիզբը, երեխաների ուշադրության կազմակերպումը, երեխաների առջև ուսումնական կամ ստեղծագործական առաջադրանք դնելը, դրա իրականացման ուղիների բացատրությունը:

Կարևոր է, որ դաստիարակը բացատրության ժամանակ, ցույց տալով գործողության մեթոդները, ակտիվացնի երեխաներին, խրախուսի նրանց ըմբռնել, հիշել, թե ինչի մասին է խոսում: Երեխաներին պետք է հնարավորություն տալ կրկնել, արտասանել որոշակի դիրքեր (օրինակ՝ ինչպես լուծել խնդիրը, պատրաստել խաղալիք): Բացատրությունը չպետք է տևի 3-5 րոպեից ավելի:

Պարապմունքի ընթացքում դաստիարակը բոլոր երեխաներին ներգրավում է աշխատանքին ակտիվ մասնակցության՝ հաշվի առնելով նրանց անհատական հատկանիշները, ձևավորում երեխաների հմտությունները, զարգացնում է նրանց գործողությունները գնահատելու և վերահսկելու կարողությունը: Կրթական իրավիճակն օգտագործվում է երեխաների մոտ ընկերների նկատմամբ բարեգործական վերաբերմունք ձևավորելու, տոկունություն, նպատակասլացություն:

Դաստիարակը գիտելիքները փոխանցում է երեխաներին խիստ տրամաբանական հաջորդականությամբ: Բայց ցանկացած գիտելիք (հատկապես նոր) պետք է հիմնված լինի երեխայի սուբյեկտիվ փորձի, նրա հետաքրքրությունների, հակումների, ձգտումների, անհատական նշանակալի արժեքների վրա, որոնք որոշում են

յուրաքանչյուր երեխայի կողմից շրջապատող աշխարհի ընկալման և իրազեկման ինքնատիպությունը:

Խմբում հաղորդակցության գործընթացում դաստիարակի ոչ միայն միակողմանի ազդեցություն է գործում երեխայի վրա, այլև հակառակ ընթացքը:

Երեխան պետք է կարողանա առավելագույնս օգտագործել իր համար անձնապես նշանակալի սեփական, արդեն իսկ գոյություն ունեցող փորձը, այլ ոչ թե պարզապես անվերապահորեն ընդունել («յուրացնել») այն ամենը, ինչ իրեն ասում է մանկավարժը:

Այս առումով դաստիարակը և երեխան հանդես են գալիս որպես հավասար գործընկերներ, տարասեռ, բայց նույնքան անհրաժեշտ փորձի կրողներ: Անհատականության վրա հիմնված դասի հիմնական գաղափարը երեխայի անհատական փորձի բովանդակության բացահայտումն է, այն ներդաշնակեցնելն այն, ինչին խնդրում են, և դրանով իսկ հասնել այս նոր բովանդակության անձնական յուրացմանը:[2, 248]

Պարապմունք անցկացնելիս դաստիարակի մասնագիտական դիրքորոշումը կայանում է նրանում, որ դիտավորյալ հարգալից վերաբերմունք է ցուցաբերում երեխայի կողմից քննարկվող թեմայի բովանդակության վերաբերյալ ցանկացած հայտարարության:

Երեխաների աշխատունակությունը բարձրացնելու, հոգնածության կանխարգելման ձևերից մեկը, որը կապված է մեծ կենտրոնացման, ուշադրության երկարատև լարվածության, ինչպես նաև սեղանի շուրջ նստած մարմնի միապաղաղ դիրքի հետ, ֆիզիկական դաստիարակության րոպեն է: Ֆիզիկական դաստիարակության րոպեները բարենպաստ ազդեցություն են ունենում երեխաների ակտիվության բարձրացման վրա, օգնում են կանխարգելել կեցվածքի խանգարումները: Սովորաբար դրանք կարճ ընդմիջումներ են (2-3 րոպե) ֆիզիկական վարժությունների համար մաթեմատիկայի, մայրենիի և ֆիզիկական ակտիվության խմբում: Օրինակ, նկարչության, մոդելավորման դասերին, ֆիզիկական դաստիարակությունը ներառում է ակտիվ ճկում, ձեռքերի երկարացում, մատների սեղմում և տարածում, ձեռքերի ազատ թափահարում: Խոսքի, մաթեմատիկայի

զարգացման դասերին օգտագործվում են մեջքի մկանների վարժություններ՝ ձգում, ուղղում՝ քթով խորը շնչելով: Զորավարժությունների ընթացքում երեխաները հակված են մնալ իրենց տեղերում: Ֆիզիկական դաստիարակության րոպեների էմոցիոնալ ազդեցությունը բարձրացնելու համար մանկավարժները կարող են օգտագործել փոքրիկ բանաստեղծական տեքստեր:

Յուրաքանչյուր տարիքային խմբում պարապմունքներն ունեն իրենց առանձնահատկությունները թե՛ ժամանակային, թե՛ կազմակերպչական առումով:

Կյանքի 4-րդ տարի՝ 10 դաս 15 րոպեից ոչ ավել տեւողությամբ:

Կյանքի 5-րդ տարի՝ 20 րոպեից ոչ ավել տեւողությամբ 10 դաս.

Կյանքի 6-րդ տարի 25 րոպեից ոչ ավելի տեւողությամբ 13 դաս.

Կյանքի 7-րդ տարի՝ 30 րոպեից ոչ ավելի տեւողությամբ 14 դաս.

Դաստիարակին իրավունք է տրվում փոխել պարապմունքների տեղը մանկավարժական գործընթացում, ինտեգրել տարբեր տեսակի բովանդակությունը՝ կախված վերապատրաստման և կրթության նպատակներից և խնդիրներից, դրանց տեղը, կրճատել կանոնակարգվող խմբերի թիվը՝ դրանք փոխարինելով կրթության այլ ձևերով:

Վաղ նախադպրոցական տարիքում երեխաների հետ խաղեր են անցկացվում: Վաղ տարիքի առաջին խմբում երեխաներին ուսուցանում են անհատական: Շնորհիվ այն բանի, որ երեխայի կյանքի առաջին տարում հմտությունները դանդաղ են ձևավորվում և դրանց ձևավորման համար հաճախակի վարժություններ են պահանջվում, խաղեր-դասերը անցկացվում են ոչ միայն ամեն օր, այլև օրվա ընթացքում մի քանի անգամ:

Բոլոր նոր տեսակի գործողությունները, քանի դեռ երեխաները չեն տիրապետում առաջնային հմտություններին և չեն տիրապետում վարքի անհրաժեշտ կանոններին, անցկացվում են անհատապես կամ 3 հոգուց ոչ ավելի ենթախմբով:

3-6 հոգանոց ենթախմբի հետ անցկացվում են դասավանդման առարկայական գործունեության, շինարարության, ֆիզիկական դաստիարակության, ինչպես նաև խոսքի զարգացման պարապմունքների մեծ մասը:

ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՆԹԱԽՄԲԵՐՈՎ

Պարապմունքների արդյունավետության համար կարևորվում է ենթախմբերով աշխատանքը: Այն երեխաներին հնարավորություն է տալիս համագործակցել, փոխանակել իրենց գիտելիքներն ու փորձը, ձգտել հասնելու ընդհանուր նպատակին:

Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները.

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողությունը,
- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- երեխաները սովորում են միմյանցից,
- զարգանում է պատասխանատվության զգացումը. խթանում է թիմային աշխատանքը, ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար, ընձեռում է ակտիվ մասնակցության և ինքնադրսևորման հնարավորություն:

Հնարավոր են փոքր խմբերով աշխատանքի հետևյալ մակարդակները.

Կեղծ խմբեր

Թեև երեխաներն աշխատում են խմբերով, բայց առանձնակի շահագրգռվածություն չեն դրսևորում: Արտաքուստ երեխաները քննարկում են, բայց հոգու խորքում մրցակցում են: Միմյանցից քողարկում են գիտելիքները, իրար շփոթեցնում

Ավանդական խմբեր

Երեխաները բաժանված են խմբերի, բայց առաջադրանքը տրված է այնպես, որ համատեղ աշխատանքի կարիք չի զգացվում: Երեխաներն աշխատում են անհատական, առանց մտքեր փոխանակելու, միմյանց հետ համագործակցելու:

Համագործակցային խմբեր

Երեխաները հասկանում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամերի մասնակցությունից: Նման խմբերին բնորոշ է թիմային աշխատանքի ոգին, նպատակին հասնելու համար առավելագույնը անելու ցանկությունը, փոխկախվածություն, սոցիալական փոխազդեցության հմտությունները, խմբի աշխատանքի արդյունքը մշտապես գնահատելու և վերանայելու կարողությունը:

Փորձարարական մաս

Ահա պարապմունքների ժամանակ կիրառվող համագործակցության մի քանի ձև.

«Հեքիաթի բեմականացում»

Պարապմունքի ժամանակ երեխաները միասին նախապես ընտրում են հերոսներին, բաժանում դերերը և համագործակցելով դաստիարակի հետ՝ որպես հեղինկի, կատարում դրանք:

Երեխաների մի մասը մասնակցում է որպես հանդիսատես:

«Ճանապարհորդություն նավով»

Պարապմունքին երեխաները միասին կառուցում են նավը, որոշում այն առարկաներն ու իրերը, որոնք պետք է վերցնեն իրենց հետ: Միմյանց օգնելով՝ դրանք տեղավորում են նավի մեջ: Այդ ընթացքում նավի ու նավարկության վերաբերյալ բազմաթիվ հարցեր են տալիս դաստիարակին:

«Շարունակիր կիսատ թողած պատմությունը»

Պարապմունքի ընթացքում դաստիարակը, կիսատ թողնելով սկսած պատմությունը, առաջարկում է երեխաներին այն շարունակել և ավարտել: Երեխաները մտածում են, սկսում միմյանց հարցեր տալ, քննարկել պատասխանները, համաձայնության գալ և վերջապես որոշում, թե ինչպե՛ս են շարունակելու և ավարտելու պատմությունը:

«Աշխարհը՝ մեր աչքերով»

Պարապմունքի նախապատրաստմանը մասնակցում են բոլոր երեխաներիները: Նրանք ձեռք են բերում թղթեր՝ համատեղ աշխատանքի համար, ընտրում են գունավոր մատիտներ, ներկեր և վրձիններ: Միասին քննարկում են, թե ինչպե՛ս պետք է նկարեն Երկիր մոլորակը, ի՞նչ գույնով ներկեն ծովերը, օվկիանոսները, ցամաքը: Այնուհետև միմյանց օգնելով՝ սկսում են աշխատել: Յուրաքանչյուր երեխա իր անհատական մոտեցումն ունի: Սակայն նրանց ստեղծած նկարում ընդհանուր նպատակաուղղված և վերջնական արդյունքը, որի կայացման աղբյուրը թաքնված է ճիշտ համագործակցության մեջ:

Երեխաների հետ մեր կատարած հետազոտական աշխատանքի ընթացքում պարզ

դարձավ, որ նրանց մոտ գերակշռում էր մտավոր զարգացման միջին մակարդակը, ուստի նրանց ճանաչողական հետաքրքրությունների մակարդակի բարձրացման նպատակով մշակվել և անցկացվել են մի շարք համալիր և ինտեգրված պարապմունքներ:

Պարապմունք N1 - «Հմուտ ձեռքեր»

Ծրագրային խնդիրները, ձևավորել սեր և հարգանք աշխատանքի նկատմամբ, զարգացնել հուզականությունը արվեստի տարբեր տեսակների ընկալման ճանապարհով, տարբերակել գրական, երաժշտական ստեղծագործությունների գեղագիտական կողմը, զարգացնել գեղարվեստական խոսքի միջոցով մարդկային աշխատանքի առանձնահատկությունները վերարտադրելու կարողությունը:

Պարապմունքի ընթացքը՝

Դաստիարակ՝

- Երեխանե՛ր, ես ձեզ կպատմեմ մի փոքրիկ պատմություն, որի վերնադիրն է «Հմուտ ձեռքեր»:

Ապա դաստիարակը ընթերցում է պատմությունը և հարցնում.

- Երեխաներ, ինչպե՞ս եք հասկանում հեղինակի՝ «աշխատող ձեռքերը ողջ աշխարհը կարող են պահել» միտքը:

Հայ ժողովուրդը աշխատանքին նվիրված շատ ստեղծագործություններ է ստեղծել՝ երգեր, հանելուկներ, ասացվածքներ: Եկեք հիշենք դրանք, օրինակ՝ «Ով աշխատի, նա կուտի», «Ով ալարի, ոչ դալարի» և այլն: Տեսնում եք, երեխաներ մարդիկ միշտ էլ հարգանով են մոտեցել աշխատող մարդկանց: Սեր հեքիաթներում նույնպես գովերգվում է աշխատանքը: Հիշո՞ւմ եք «Անբան հուռի» հեքիաթը: Հեքիաթասացը՝ մեր սիրելի Հովհաննես Թումանյանը, մեզ փորձել է ներկայացնել աշխատանքի կարևորությունը՝ դատապարտելով ծուլությունը, չէ՞ որ մենք գիտենք, որ ծուլանալը ոչ մի լավ բանի չի բերում և բոլորիս խանգարում է, այնպես չէ՞, երեխաներ:

- Իրենց հարգանքն ու սերը դեպի աշխատանքը մեր պապիկներն ու տակիկները արտահայտել են ոչ միայն ժողովրդական ստեղծագործություններում, այլ նաև այն իրերի մեջ, որոնք ստեղծվել են նրանց ձեռքերով: Ապա նայեք դրանց, երեխանեփ

(դաստիարակը ցույց է տալիս ավանդական հայկական սպասքի, աշխատանքային գործիքների, կենցաղային այլ իրերի օրինակներ):

Երեխաները ուսումնասիրում են ազգային արվեստի նմուշները: Ընթացքում հնչում է ազգային գեղեցիկ երաժշտություն դաստիարակի ընտրությամբ: Դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է առարկաների գույներին:

- Երեխաներ, իսկ այժմ մենք կտեղափոխվենք արվեստանոց և կփորձենք նկարել այնպես, ինչպես այս առարկաների պատկերներն են:

Երեխաներին տալիս ենք հատուկ ափսեներ, և նրանք ինքնուրույն աշխատում են դրանց վրա: Աշխատանքի ընթացքում դաստիարակը անընդհատ երեխաներին առաջադրում է զանազան հանելուկներ, ասում ասացվածքներ, որոնք վերաբերում են աշխատանքին և աշխատանքային գործունեությանը: Աշխատանքի ընթացքում նույնպես հնչում է երաժշտություն: Աշխատանքի ավարտին դաստիարակը երեխաներին խնդրում է դնել իրենց աշխատանքները տոնական սեղանին և ուսումնասիրել միմյանց աշխատանքները: Ապա դաստիարակն ասում է.

- Ահա տեսնո՞ւմ եք երեխանե՛ր, դուք նույնպես ունեք հմուտ ձեռքեր, քանի որ կարող եք նկարել, կարել, ծեփել: Իսկ այժմ ես բոլորիդ կտամ մի կոնֆետ, քանի որ հին ասացվածքն ասում է՝ «Ով աշխատի, նա կուտի»:

Պարապմունք N2 - «Անտառի թիթիզները» (Ծանոթացում շրջակա միջավայրին):

Խնդիրները՝ երեխաների ներկայացնել սնկերի արտաքին տեսքը, ծանոթացնել ուտելի և թունավոր սնկերի որոշ տեսակների հետ:

Անհրաժեշտ նյութերը՝ խաղալիք կամ չորացրած սնկեր, սունկ պատրաստելու համար կաղապար:

Պարապմունքի ընթացքը, դաստիարակ.

- Երեխաներ, գիտե՞նք ինչի մասին է մեր այսօրվա պարապմունքը: Այն պարզերս համար դուք պետք է գուշակ եք հանելուկը՝

- Ապրում է նա անտառում

Եվ անձրևից է ծնվում,

Ունի գլխարկ իր գլխին,

Փոքրիկ է ծառի կողքին (սունկ):

- Ճիշտ է, երեխաներ, հանելուկը սնկի մասին է (ցուցադրում է խաղալիք սնկերը): Իսկ դուք գիտե՞ք, թե քանի տեսակ սունկ կա: Գոյություն ունի սնկերի 100 հազար տեսակ: Իսկ ի՞նչ սնկեր գիտեք դուք (երեխաները պատասխանում են): Իսկ հիմա ես ձեզ համար կկարդամ Գիտուն պապիկի ուղարկած նամակը. «Շատերը կարծում են, որ սնկերը աճում են մեկ-մեկ: Բայց դա այդպես չէ: Հողի տակ ապրում են սնկիկները, որոնք ունեն երկար թելիկներ: Դա նշանակում է, որ սնկերը աճում են ոչ թե մեկ-մեկ, այլ միասին»:

- Իսկ դուք գիտեի՞ք այդ մասին: Իսկ ինչու՞ են սնկերը աճում միասին: (երեխաներին առաջարկում է նկարել, թե ինչպես են սնկերը աճում): Ապա կրկին ցուցադրում է խաղալիք սնկերը և երեխաներին առաջադրում է միասին հորինել պատմություն սնկերի մասին' ինչ տեսք ունեն, որտեղ են ապրում, ինչ համ ունեն: Հետո դաստիարակը երեխաների պատմում է, որ կան են նաև թունավոր սնկեր, որոնք չի կարելի ուտել:

Դաստիարակ.

- Երեխանե'ր, իսկ դուք գիտեի՞ք, որ սնկերը քիչ են ապրում' ընդամենը մի քանի օր, իսկ ահա սնկիկներն ապրում են շատ երկար: Երբ անձրևում է, հողից նորից աճում են:

Այսպիսով, ելնելով կազմակերպված և անցկացված հետազոտական աշխատանքների արդյունքներից և տվյալներից' եզրակացնում ենք, որ ավագ նախադպրոցականների մտավոր, իմացական կարողությունների զարգացմանն ու ակտիվացմանը մեծապես նպաստում են այդ ուղղությամբ մշակված համալիր և ինտեգրված պարապմունքները: Ապահովելով միջառարկայական կապերը (խոսքի զարգացում, տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորում, ֆիզդաստիարակություն, էկոլոգիական կրթություն, երաժշտություն, կերպարվեստ)' մշակված ինտեգրված պարապմունքները նպաստում են երեխաների մտավոր կարողությունների զարգացմանը: [4, 75]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը նրանց ինտելեկտուալ-ստեղծագործական նախադրյալների զարգացման կարևոր միջոց է: Ժամանակակից մանկավարժության մեջ գոյություն ունեն մեթոդիկաներ, որոնք թույլ են տալիս ակտիվացնել երեխաների ինտելեկտուալ ստեղծագործական նախադրյալները, բայց հաճախ դրանք կապված են գեղարվեստական գործունեության հետ: Մտավոր դաստիարակության գործընթացով է պայմանավորված երեխայի ինչպես ճանաչողական հետաքրքրությունների, այնպես էլ մտավոր զարգացման դինամիկան: Իմացական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը ներառելով գործնական վարժություններ և խնդիրներ: Նկարով պատմումի ուսուցման ավանդական մեթոդիկայում խորհուրդ է տրվում որպես օրինակ կիրառել դաստիարակի պատմումը: Փորձը ցույց է տալիս, որ երեխաները դաստիարակի պատմումը վերարտադրում են աննշան փոփոխություններով: Երեխաներն իրենք պատմում են աղքատիկ բառապաշարով, նրանց վերարտադրման գործընթացում գրեթե բացակայում են բարդ նախադասությունները: Այս ամենի հիմքում ընկած են մանկապարտեզում կազմակերպվող համալիր և ինտեգրված պարապմունքները: Նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրություններն ու մտավոր ընդունակությունները ձևավորվում են գործունեության մեջ: Երեխաներին մատուցվող նյութը պետք է լինի արդիական, ճշմարիտ, ունենա կենսական նշանակություն, հնարավորություն տա ընկալելու նորը, բխի ժամանակակից կյանքի պահանջներից և նպաստի նրանց տրամաբանական մտածողության զարգացմանը, կիրառական հմտությունների ձևավորմանը:

Այսպիսով, մանկապարտեզի մանկավարժական գործընթացի հիմքում ընկած են փոխհարաբերություններն ու համագործակցությունը: Դրանք են որոշում բարոյական

մթնոլորտը: Իսկ գործունեության տարբեր ձևերը՝ խաղը, աշխատանքը և ուսուցումը, նպաստավոր պայմաններ են ստեղծում երեխաների համագործակցության համար, որը անձնավորության ձևավորման կարևոր նախադրյալ է: [4, 76-81]

Որքան էլ մեր պայմաններում փոքր ինչ դժվար է համապատասխան պայմաններ ունենալ մատաղ սերնդի դաստիարակման գործում, այնուամենայնիվ, կարծում ենք, որ երեխան պետք է սովորի անհատական ակտիվ գործունեության միջոցով: Ստեղծագործական մոտեցումն առաջին տեղում պիտի լինի՝ անկախ նրա գործունեության ձևերից՝ նկարչություն, երաժշտություն, պար, թատրոն, վարվեցողության նորմեր, խաղ, մարզանք, ուսուցում, աշխատանք: Եվ այդ ամենը ավելի արդյունավետ է դառնում թեմատիկ պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է կիրառել նաև ժամանակակից մեթոդներ՝ պարապմունքներն անցկացնել դրսում՝ բնության գրկում, էքսկուրսիաների միջոցով, օգտագործել տեխնոլոգիական տեխնոլոգիական միջոցներ, պարապմունքների ժամանակ ցուցադրել տեսաֆիլմեր: Կարելի է նաև պարապմունքների ժամանակ հրավիրել հայտնի մարդկանց, ծնողների: Արդյունքում կունենանք ինտերակտիվ, հագեցած և արդյունավետ գործընթաց և հոգեբանորեն և մտավոր զարգացած երեխաներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանդրյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 1992, 163 էջ
2. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Ուսումնական ձեռնարկ, Մանկավարժ, 2005, 230 էջ
3. «Մասնակցային գործընթացը կրթության հիմքերում», Զեկույց, Երևան, 2017, 81 էջ
4. Նախադպրոցական ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը համալիր և ինտեգրած պարապմունքների միջոցով, «Մխիթար Գոշ», Գիտամեթոդական հոդվածներ, 2020, №1, 452 էջ
5. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով, դաստիարակի ուղեցույց, Երևան, 2018, 200 էջ
6. https://podarilove.ru/hy/formy-i-metody-metodicheskoi-raboty-sovremennogo-doshkolnogo/
7. https://iwbe.ru/hy/soviet-poets/netradicionnye-formy-organizacii-zanyatii-v-detskom-sadu-zanyatiya-s-detmi-v-dou.html

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *ԸՆՏԱՆԻՔ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ*

ԿԱՏԱՐՈՂ՝ *Կ. ԳՈՔՈՐՅԱՆ*

ՂԵԿԱՎԱՐ՝ *մ.գ.թ. Լ. ՄԻՐԱԲՅԱՆ*

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Գլուխ 1. Ի՞նչ է ընտանիքը 4
ԳԼՈՒԽ 2. Մանկապարտեզ 6
ԳԼՈՒԽ 3. Ընտանիք-մանկապարտեզ համագործակցություն 7
3.1. Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության ձևերն ու մեթոդները 8
Փորձարարական մաս 11
Հետազոտական մաս 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այսօր նախադպրոցական տարիքի երեխաների համակողմանի, ներդաշնակ զարգացման գործընթացում մեծ նշանակություն ունի ընտանիք-մանկապարտեզ համագործակցության արդյունավետ կազմակերպումը:

Ընտանեկան դաստիարակության շարունակականության ապահովումն էապես պայմանավորված է մանկապարտեզի աշխատանքով: Չնայած մանկապարտեզը չի կարող փոխարինել ընտանիքին, սակայն կարող է բարձրացնել նրա դերը դաստիարակության հարցում: Խիստ ցանկալի է, որ ընտանիքն ու մանկապարտեզը աշխատեն նույն ուղղությամբ, նրանց միջև բացառվեն հակասությունները, քանի որ նրանց համագործակցության կենտրոնում երեխան է, որն իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է և՛ ընտանիքում, և՛ մանկապարտեզում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է .

Ուսումնասիրել մանկապարտեզի և ընտանիքի փոխգործունեության ձևերի և մեթոդների վերաբերյալ գիտամեթոդական, գիտատեսական գրականությունը:

Ելնելով նպատակներից՝ ներկայացնենք **հետազոտական աշխատանքի խնդիրները**.

- ✓ Նկարագրել ընտանիք-մանկապարտեզ փոխգործունեության ձևերն և մեթոդները:
- ✓ Բացահայտել ընտանիք-մանկապարտեզ համագործակցության ձևերի ու մեթոդների ընտրության առանձնահատկություններն ու կարևորությունը:
- ✓ Իրականացնել հետազոտություն՝ ընտանիք-մանկապարտեզ համագործակցության ձևերի ու մեթոդների առանձնահատկությունների վերաբերյալ:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, երրորդ գլխի 1 ենթակետից, փորձարարական և հետազոտական մասերից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. Ի՞ՆՉ Է ԸՆՏԱՆԻՔԸ

Ընտանիքը սոցիալական խումբ է, որտեղ իրար լավ են ճանաչում, գիտեն միմյանց առանձնահատկությունները, նախասիրությունները, թերությունները...: Եվ յուրաքանչյուր ընտանիք ունի իր գործառույթները, որոնք կարող են հետապնդել տարբեր նպատակներ՝ սկսած մանկածնությունից մինչև կրթության, գիտության և հասարակական կյանքի այլ ոլորտների զարգացմանն ուղղված գործունեություն:

Առանձնացվում է ընտանիքի հետևյալ ձևերը.



Բազմաթիվ գիտական և այլ աշխատանքներ են նվիրվել ընտանիքի ամենա-տարբեր և միշտ էլ օրախնդիր հիմնահարցերին: Ընտանիքի վերաբերյալ արտաքուստ կարծես թե ամեն ինչ հայտնի է ու պարզ, սակայն այն նույնքան պարզ ու նույնքան բարդ է, որքան ինքը՝ հասարակությունը, իր ժամանակը: Ընտանիքի և հասարակության հետ կապն առանձնահատուկ նշանակություն ունի անձի զարգացման, նրա մարդկային ճակատագրի համար: Եվ պատահական չէ, որ բոլոր հասարակական ֆորմացիաները շահագրգիռ են ընտանիքի կյանքի բովանդակության և կառուցվածքի նկատմամբ: Չափազանցրած չենք լինի, եթե պնդենք, որ ընտանիքը,

դրա յուրաքանչյուր տեսակը քաղաքակրթության զարգացման էական ցուցանիշ է, հասարակության կերպի սոցիալ–հոգեբանական հայելին:[4, 9]

Այսօր քիչ չեն ընտանեկան վեճերի տեսարանները, որոնց ականատես են լինում երեխաները: Ծնողները չեն էլ գիտակցում, թե դա ինչ խորը հոգեբանական հետք կարող է թողնել երեխայի վրա, կհանգեցնի նաև ցավալի և անդառնալի հետևանքների: Թե՛ ծնողները, թե՛ ընտանիքի մյուս անդամները մշտապես պետք է հիշեն, որ իրենք են երեխայի առաջին ուսուցիչները, նրանց անձնական օրինակը մեծ, կարևորագույն նշանակություն ունի երեխայի դաստիարակության գործում: Ընտանիքներում են դրվում երեխայի բարոյական, գեղագիտական, հայրենասիրության դաստիարակության հիմքերը:

Այսպիսով՝ ծնողների գերագույն նպատակը պետք է լինի երեխաների դաստիարակությունը: Եվ շատ հաճախ երեխաների դաստիարակության մեջ թույլ տված սխալները, անհաջողությունները բացատրվում են հետևյալ կերպ, որ ծնողը չունի անհրաժեշտ փորձ կամ ունի անբավարար մանկավարժական գրագիտություն: Այս բացը պետք է լրացվի մանկապարտեզի հետ համագործակցելով:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

Մանկապարտեզն այն կառույցն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթությունը, որը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Նախադպրոցական կրթությունն ամբողջական գործընթաց է, որն ուղղված է՝ նախադպրոցական տարիքի երեխայի բազմակողմանի զարգացման ապահովմանը, նրա հակումներին, ընդունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան:

Մանկապարտեզն այն վայրն է, որտեղ բացահայտվում, ամրապնդվում և կատարելագործվում են երեխաների կարողություններն ու ընդունակությունները: Մանկապարտեզը բոլոր երեխաներին տալիս է չափորոշչային պահանջներին համապատասխան գիտելիքներ, կարողություններ, հմտություններ՝ հաշվի առնելով նրանց տարիքային ու հոգեբանական առանձնահատկությունները:

Այսօր մանկապարտեզը կանգնած է երեխայի և նրա ծնողի կողքին՝ պատրաստ համագործակցության:

ԳԼՈՒԽ 3. ԸՆՏԱՆԻՔ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Այսօր խիստ կարևորվում է ընտանիք-մանկապարտեզ սերտ կապի ապահովումը: Եվ եթե մանկապարտեզն ու ընտանիքը ճիշտ, հաջողությամբ համագործակցում են, ինչը երեխայի կրթության և դաստիարակության վճռորոշ գործոն է, ապա հաղթանակն ապահովված է: Ընտանիք-մանկապարտեզ փոխհարաբերության մեջ կողմերից յուրաքանչյուրը յուրովի պատասխանատվության է կրում մյուսի հանդեպ: Հայտնի մանկավարժ Ժան-Ժակ Ռուսոն նկատել է, որ ընտանիքից հետո յուրաքանչյուր դաստիարակ ավելի քիչ ազդեցություն ունի երեխայի վրա, քան նախորդը:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության հիմքում ընկած է երկու սկզբունք.

- ✓ Նախադպրոցական կրթական հաստատության ներքին ներգործությունների հանդեպ բաց լինելու,
- ✓ Նախադպրոցական կրթական հաստատության արտաքին ներգործությունների հանդեպ բաց լինելու:

Առաջին սկզբունքը ենթադրում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավում մանկապարտեզում մանկավարժական գործընթացին: Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Ծնողներն իրենց հերթին ձեռք են բերում չափազանց կարևոր մանկավարժական գիտելիքներ և կարողանում են գնահատել մանկավարժի ծանրագույն աշխատանքը:

Երկրորդ սկզբունքը կարևորում է մանկապարտեզի՝ դեպի դուրս բաց լինելու անհրաժեշտությունը: Մանկապարտեզը պիտի լինի համագործակցելու միկրոսոցիումի՝ համայնքի բոլոր սոցիալական ինստիտուտների հետ [2, էջ 270]

Նշենք, որ բավականին արդյունավետ է մանկապարտեզի փոխադարձ կապը թանգարանների, թատրոնների, գրադարանների հետ, ինչը և՛ արժեքավոր

գիտելիքներ է տալիս երեխաներին, և՛ ունի դաստիարակչական կարևոր նշանակություն: Ընտանիքի և մանկապարտեզի փոխադարձ կապի ձևերը քարացած չեն մնում և ժամանակի պահանջներին համընթաց վերանայվում են և փոփոխվում:

3.1. Մանկապարտեզ – ընտանիք համագործակցության ձևերն ու մեթոդները

Ընտանիքի և մանկապարտեզի արդյունավետ համագործակցության համար խիստ կարևոր են.

- ✓ Ծնողական ժողովներ, որտեղ քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող հարցեր,
- ✓ Շաբաթական կամ ամսական լրատուներ, որոնք տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները,
- ✓ Առավոտյան հանդիպումներ, որի ընթացքում ծնողներին նախապես ներկայացնում են թեմաները, որոնք զետեղված են շաբաթական լրատուներում,
- ✓ Օրվա երկրորդ կեսին հանդիպումների ժամանակ դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք երեխան կատարել է և կարող է կատարել նաև տանը,
- ✓ Գրքերի փոխանակում, որոնք ոչ պաշտոնական հանդիպում են այն ծնողների հետ, ովքեր սիրում են կարդալ և կիսվել իրենց գաղափարներով:
- ✓ Բարի գործերի օր:
- ✓ Կլոր սեղան,
- ✓ Բաց դռների օր
- ✓ Այցելություններ ընտանիք
- ✓ Հարց ու պատասխանի ցերեկույթներ
- ✓ Մանկավարժական հյուրասրահ
- ✓ Գաղափարների տոնավաճառ
- ✓ Զրույցներ՝ անհատական և խմբային,
- ✓ Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ

- ✓ Սպորտային միջոցառումներ:
- ✓ Ցերեկույթներ

Ուսումնական տարվա սկզբի անցկացվող ծնողական ժողովների ժամանակ ծնողները ծանոթանում են տարվա ընթացքում նախատեսված կրթության և դաստիարակության պլաններին: Ձևավորվում են անկյուններ, որոնցում տեղադրվելու են ծնողների համար խորհրդատվական նյութեր:

Ծնողական ժողովների արդյունավետությունը կախված է մի շարք ուղենիշերի հետևողական իրագործումից.

- Պետք է տեղեկություններ հաղորդել ժողովին առնչվող նպատակների մասին,
- Ժամանակ հատկացնել ծնողական ժողովի համապատասխան միջավայրի ստեղծմանը,
- Ստեղծել ընկերական մթնոլորտ: Ծնողների հետ քննարկել երեխային առնչվող կրթական, ճանաչողական, հուզական և ֆիզիկական նպատակները և նշել անհրաժեշտ ռազմավարությունները:

Այսօր մեր իրականության մեջ հաճախ ենք բախվում այն կարծրատիպին, որ ծնողական ժողովը բողոքի, երեխային փնովելու, վարքի ու բնավորության մեջ բացասականը շեշտելու նպատակ է հետապնդում: Այս կարծրատիպը պետք է կոտրել» և ծնողական ժողովներն այնպես կազմակերպել, որ ծնողներն իրենց հանգիստ, հարմարավետ և ցանկալի հյուր զգան, շեշտը դնել երեխայի վարքի և բնավորության դրական հատկանիշների վրա, ծնողներին առաջարկել մեթոդներ, որոնցով նրանք կարող են տանը ևս օգնել իրենց երեխաներին:

Տնային այցելություններ: Այստեղ կարևոր է, որ թե՛ կատարողի, թե՛ ծնողի միջև փոխհարաբերությունները կառուցվեն համագործակցային սկզբունքով: Կարելի է տնային այցելություններն այնպես կազմակերպել, որ ծնողի ներկայությունը անհրաժեշտ չլինի: Այս հատկապես հնարավոր է այն դեպքում, երբ նպատակը տունը խմբասենյակին նմանեցնել է կամ ուսումնական կենտրոնների հենքով մշակված ծրագրերը տան պայմաններում իրականացնելը: Տնային այցելությունները

դաստիարակներին երեխաների և նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն է ընձեռում:

Պատի տեղեկատվական թերթեր: Դրա միջոցով կարելի է ընտանիքներին նոր տեղեկատվություն հաղորդելու, ազդարարել ժողովներ: Այստեղ կարող են զետեղվել ընտանիքների համար նախատեսած միջոցառումները, ամենօրյա դասացուցակը, ուսումնական հաստատության անցուդարձը, խորհուրդներ ծնողներին և այլն:

Ոչ պաշտոնական գրառումներ: Դաստիարակը կարող է երեխայի միջոցով տուն ուղարկել կարճ գրառումներ: Նաև կարելի է այդ կերպ շնորհակալություն հայտնել ծնողներին մանկապարտեզին այս կամ այն ձևով աջակցելու համար կամ որևէ խնդրանք պարունակող գրություններ:

Առաջարկությունների արկղիկ: Ծնողները կարող են տուփի մեջ գցել գրավոր ձևակերպված իրենց հուզող հարցերը, մտահոգությունները, առաջարկությունները:

Անհատական գրառումների գրքույկներ: Այս գրքույկները կարող ենք ամեն օր մանկապարտեզից տուն և տնից մանկապարտեզ փոխանցել ընթացիկ տեղեկատվություններ: Ընտանիքները կարող են մանկավարժներին նախազգուշացնել ճանապարհորդությունների, այցելությունների ծննդյան տոների մասին:

Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1. հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցության
2. ծնողների ներգրավման բազմազան միջոցներ [3, 214]

Վերջին տարիներին առանձնահատուկ կարևորվում է երկարատև համագործակցության կազմակերպումը բավական ժամանակ հանձնարարությունների կամ պրոբլեմային իրադրությունների առաջարկման եղանակով: Հանձնարարությունները կարող են լինել երկարաժամկետ համատեղ դիտարկումներ, փորձարկումներ, հետազոտական ուսումնասիրություններ և այլն: [2, 272]

Այսպիսով՝ անհերքելի է, որ ընտանիքը երեխայի առաջին, կարևորագույն ուսուցիչն է, և նրա դերն անկյունաքարային է երեխայի թե՛ դաստիարակության, թե՛

կրթության, թե՛ անհատականության կայացման հարցում: Այսօր կարևոր խնդիր է ընտանիք-մանկապարտեզ համագործակցության ճիշտ կառուցումը, որը պետք է ծառայի երեխայի բնականոն և համակողմանի զարգացմանը:

Փորձարարական մաս

Փորձարարական մասում կներկայացնենք մեր փորձի վերլուծությունը.

Նախ նշենք, որ ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունն արդյունավետ կազմակերպելու համար կարևոր գործոն է փոխադարձ վստահությունը: Մեր փորձից ելնելով՝ կարող ենք նշել, որ համագործակցության գրեթե բոլոր ձևերը (ծնողական ժողով, տնային այցելություններ, անհատական և խմբային զրույցներ, ցերեկույթներ...) կազմակերպում ենք ԽԻԿ համակարգով, ինչը դրական ազդեցություն է ունենում համագործակցության գործընթացում:

Յուրաքանչյուր ծնողական ժողով կազմակերպելիս նախ մանրամասն, ԽԻԿ համակարգով պլանավորում ենք մեր քայլերը: Խթանման փուլում կիրառում ենք «Սառույց կոտրող» վարժություններ: Իմաստի ընկալման փուլում խոսում, քննարկում ենք օրակարգի հարցերը, իսկ կշռադատման փուլում տարբեր մեթոդներով («Սարդոստայն», «Քառաբաժան», ...) ամփոփում ենք:

Վերջում կատարում ենք ինքնավերլուծություն, ինքներս մեզ հարց ուղղելով, եթե նույն ծնողական ժողովը երկրորդ անգամ կազմակերպեինք, ի՞նչը կփոխեինք, ի՞նչը կշտկեինք կամ կավելացնեինք: Այսպիսի ինքնաքննադատական մոտեցումը թույլ է տալիս ինքնակատարելագործվել և հետագայում խուսափել սխալվելուց, թերություններից:

Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության մեջ անխուսափելի ձևերից մեկն էլ տնային այցելություններն են: Համագործակցության անցում կատարելիս ծնողներին նախապես ներկայացվում է տուն այցելության նպատակները և ձեռք բերվում փոխադարձ վստահություն:

Ցավոք, համավարակը որոշ ժամանակ խոչընդոտեց համագործակցության այս ձևի բնականոն և շարունակական գործընթացին, բայց այսօր կրկին կատարում ենք տնային այցելություններ, որոնք արձանագրվում են «Տնային այցելությունների արձանագրության» տետրում: Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության այս ձևի դրական կողմերից կարող ենք նշել, որ ծնողն իմանալով, որ այդ այցելությունները կրելու են շարունակական բնույթ, այդ դեպքում ծնողն էլ ավելի պատասխանատվություն է կրում, հետևողական է լինում երեխայի օրվա ռեժիմին, նրա անհատական առանձնահատկությունների դրսևորմանը, երեխայի համակողմանի զարգացման համար ստեղծվում է համապատասխան գրենական պիտույքներով հագեցած կենտրոն, որտեղ երեխան կբավարարի իր նախասիրություններն ու հետաքրքրությունները:

Ընտանիքի միջազգային օրվա առթիվ՝ մայիսի 15-ին, կազմակերպում ենք յուրօրինակ միջոցառում: «Ընտանիքը բնության հրաշալիքներից մեկն է» խորագրով միջոցառմանը ոչ միայն մասնակցելու են մայրերը, այլ նաև ընտանիքի մյուս անդամները: Այդ միջոցառմանը յուրաքանչյուր ընտանիք մանկապարտեզի բակի ձևավորան համար երեխաների համատեղ ուժերով ներկայացնելու են մնայուն և գեղեցիկ աշխատանքներ:

Միջոցառումն սկսում ենք գեղեցիկ նախաբանով՝ կարևորելով ընտանիքի դերը մանկապարտեզի կյանքում: Երեխաները հանդես են գալիս իրենց ելույթներով, և անցում ենք կատարում բուն աշխատանքին: Եվ այդ պահին մնում է միայն կողքից նայել և հիանալ ընտանիքների կատարած յուրօրինակ աշխատանքներով: Հատկապես ոգևորիչ է հայրերի և պապիկների միջև ակտիվ մրցակցությունը:

Միջոցառման ավարտին բոլոր ընտանիքները խրախուսվում են: Միջոցառումը եզրափակում ենք երեխաների գեղեցիկ պարային բեմադրությամբ:

«Ոսկե աշուն» խորագրով մեր կազմակերպած ցուցահանդես ցերեկույթին մասնակցում են ծնողները: Նախապես որոշում են աշնանային թեմային համապատասխան ինչ կոմպոզիցիաներ են ներկայացնելու և անհրաժեշտ

պարագաները հավաքում, համակարգում են և այդ օրը բերում են մանկապարտեզ: Այստեղ երեխաների հետ համագործակցելով՝ ստանում են գունեղ ու տարբերվող աշխատանքներ: Ավելացնենք նաև, որ բուն աշխատանքի ընթացքում վայելում ենք Վիվալդիի «Աշուն» ստեղծագործությունը և մի շարք այս դասական երաժշտություններ:

Միջոցառումն ամփոփում ենք աշխատանքների ներկայացումով և կազմակերպում ենք շրջագայություն խմբասենյակում, որտեղ ցուցադրված են երեխաների կատարած աշնան թեմային առնչվող բազմաբնույթ աշխատանքները:

Մեր փորձից եկել ենք այն եզրահանգման, որ համագործակցության գործընթացում շատ արդյունավետ է յուրաքանչյուր եռամսյակ կազմակերպվող «Գիտունիկների մոլորակ» օրինակելի պարապմունքը, որին հրավիրվում են ծնողները:

Այս պարապմունքի հիմնական նպատակն է վեր հանել երեխաների ձեռք բերած գիտելիքները տվյալ եռամսյակում: Պարապմունքն անց է կացվում ԽԻԿ համակարգով, յուրաքանչյուր փուլին համապատասխան ընտրված փոխգործուն մեթոդներով, ֆիզկուլտդադարներով: Առանձնակի կարևորվում է ծնողների անմիջական մասնակցությունն այդ գործընթացին:

Մեր փորձում արդեն երկրորդ տարին է, որ կիրառում ենք ընտանիք-մանկապարտեզ համագործակցության «Իմ օգնական տետրը» ձևը: Մանկապարտեզում տուն գնալուց հետո, օրվա ընթացքում ծնողները հարցնում են երեխաներին՝ ինչ են տվյալ օրը սովորել մանկապարտեզում և երեխայի ցանկացած պատասխան գրի են առնում այդ տետրում, անգամ եթե ոչինչ չեն հիշում, հենց այդպես էլ նշում են, որպեսզի հետագայում այդ թեմաների շուրջ երեխաների հետ իրականացվեն լրացուցիչ, անհատական աշխատանքներ: Ծնողները ոչ միայն գրի են առնում, այլ նաև տվյալ թեմային համապատասխան նկարում են, գունավորում, ձևավորում, ինչ էլ երեխաներին ավելի է ոգևորում: Համագործակցության այս ձևի կարևորությունը կայանում է նրանում, որ ծնողները ամենօրյա հետևողական աշխատանք են տանում, ինչը դրականորեն է նպաստում երեխայի կրթադաստիարակչական գործընթացին: Ծնողները փաստում են, որ այդ տետրում

երեխաները աշխատում են մեծ սիրով և ոգևորությամբ: Եվ այդ գրած նյութը երեխաները կարդում են այնպես, կարծես հենց իրենք են գրել:

Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության վերը նշված ձևով, եթե ծնողը տեղեկություններ էր ստանում գիտելիքների ձեռքբերման, յուրացման մասին, ապա «Անհատական գրառումների թերթիկ»-ում մենք ծնողին տեղեկություններ ենք հաղորդում երեխայի սնման և քնի մասին: Այս և նախորդ համագործակցության ձևերը կրում են ամենօրյա և շարունակական բնույթ:

Կից ներկայացնում ենք «Անհատական գրառումների թերթիկ»-ի նմուշ-օրինակ.

Երեխայի անուն, ազգանուն
Նախաճաշ
ԱՄԲՈՂՋ
ՄԱՍՆԱԿԻ
ՈՉԻՆՉ
Ճաշ 1 (....)
ԱՄԲՈՂՋ
ՄԱՍՆԱԿԻ
ՈՉԻՆՉ
Ճաշ 2 (....)
ԱՄԲՈՂՋ
ՄԱՍՆԱԿԻ
ՈՉԻՆՉ
Քուն
ԱՅՈ
ՈՉ

Այսպիսով, ընտանիք-մանկապարտեզ համագործակցության մեջ չենք կարող առանձնակի կարևորություն տալ այս կամ այն ձևին և անտեսել կամ պակաս կարևորել, քանի որ յուրաքանչյուրն ունի իր նպատակները, իրականացման քայլաշարը ընտանիք-մանկապարտեզ համագործակցության գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Հետազոտական մասում օգտվել ենք հարցաթերթիկների մեթոդից.

Հարց 1. Կարևորո՞ւմ եք ընտանիք-մանկապարտեզ համագործակցության.

ա) այո 70%

բ) ոչ 10%

գ) ոչ այնքան 20%



Հարց 2. Ընտանիքում երեխաների դաստիարակության գործում բախվո՞ւմ եք հակասությունների.

ա) այո 70%

բ) ոչ 5%

գ) ոչ այնքան 25%



Հարց 3. Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության մեջ ո՞ր ձևն եք նախընտրում:

ա) Ծնողական ժողովներ 50%

բ) Տնային այցելություններ 30%

գ) Ցերեկույթներ 10%

դ) Պատի տեղեկատվական թերթեր 10%



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության ձևերին ու մեթոդներին ուղղված մեր ուսումնասիրությունների հետազոտությունների հիման վրա եկանք հետևյալ եզրահանգումների.

- ✓ Բացահայտեցինք, որ ընտանիքն ու մանկապարտեզը պետք է աշխատեն նույն ուղղությամբ և այստեղ պետք է բացառվեն նրանց միջև հակասությունները:
- ✓ Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը պետք է այնպես իրականացնել, որ լավագույնս ծառայի երեխայի շահերին:
- ✓ Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության մեջ հանգուցային է ընտանիքի դերը: Մեր փորձից ելնելով, վստահաբար կարող ենք նշել, որ հայ իրականության մեջ երեխայի դաստիարակության ամբողջ ծանրությունը դրված է հիմնականում մայրերի ուսերին: Անգամ ծնողական ժողովներին հազվադեպ կտեսնենք հայր ծնողների, ինը ցավալի փաստ է: Եվ հենց մանկապարտեզից պետք է ուշադրություն դարձնենք այս խնդրին և յուրաքանչյուր համագործակցության ընթացքում շեշտել ընտանիքի անդամների կարևորությունը երեխայի դաստիարակության հարցում: Այստեղ ևս բացառելով հակասությունները:
- ✓ Ընտանիքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար դաստիարակը պետք է տարբեր ռազմավարություններ կիրառի, լինի ճկուն, ստեղծագործ, համբերատար, բարեհամբույր, բանիմաց:
- ✓ Դաստիարակը պիտի կարողանա ներգրավել ծնողներին ուսումնադաստիարակչական աշխատանքների մեջ, ծնողների հետ հաղորդակցվելիս խուսափել խիստ մասնագիտական բառապաշարի օգտագործումից, բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան:
- ✓ Խուսափել երեխաների մասին ծնողներին բացասական որակավորումներ

տալուց, շեշտը դնել երեխաների բնավորության և վարքի դրական հատկանիշների վրա: Ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որով կարող են տանը ևս օգնել երեխաներին:

- ✓ Տարբեր պատճառներով հաճախ են ծնողները պասսիվ դիտորդի դեր ստանձնում: Այս ամենը պահանջում է նպատակաուղղված աշխատանք: Դաստիարակներիս խնդիրն է՝ ստեղծել ծնողական թիմ, որտեղ ծնողը կդառնա մեր խորհրդատուն և գործընկերը:
- ✓ Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության բոլոր ձևերն ու մեթոդները կիրառեի են և արդյունավետ, քանի որ յուրաքանչյուրն ունի իր հստակ նպատակն ու խնդիրները: Այստեղ կարևոր է դաստիարակի ճկունությունը, որպեսզի կարողանա իրավիճակին համապատասխան ընտրել համագործակցության ձևերն ու մեթոդները և այն իրականացնելու ճիշտ քայլաշարը, որի ճիշտ կազմակերպման դեպքում համագործակցության արդյունավետության մակարդակն էլ ավելի կբարձրանա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2004, 446 էջ
2. Մարության Ս.Ա., Դալլաքյան Ա.Մ., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2005, 126 էջ
3. Միտոյան Հ., Սմբատյան Լ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան, 2010, 223 էջ
4. Հոգեբանությունը և կյանքը, Տաթև գիտակրթական համալիր, 1-2, Զանգակ, 2010, 177 էջ
5. Նախաշավիղ, 01.2017, 64 էջ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Խաղը նախադպրոցականի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց

ԿԱՏԱՐՈՂ՝ Կիրակոսյան Լուսինե

ՂԵԿԱՎԱՐ՝ մ. գ. թ. Լուսինե Միրաբյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ I. ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ 5

1.1. «Խաղ» հասկացությունը, դիդակտիկական շրջանակները.....5

1.2. Խաղերի տեսակները և գործառույթները 9

1. 3. Խաղային գործունեության գործառույթները.....12

ԳԼՈՒԽ II. ԽԱՂԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ 14

2. 1. Խաղի դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում 14

2.2. Խաղը որպես սովորելու միջոց, դրանց կազմակերպման առանձնահատկությունները.....17

ԳԼՈՒԽ III. ԽԱՂԸ, ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՁԵՎ.....20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 32

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ 22

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ 22

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԲԱՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ-ԿՈՆՍՊԵԿՏ.....29

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....34

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքի ամենաարդյունավետ ձևը խաղն է, քանի որ այդ տարիքում խաղը նրանց գործունեության հիմնական ձևն է: Երեխաների համար խաղը և՛ ուսուցում է , և՛ աշխատանք, և՛ դաստիարակություն: Խաղի միջոցով ուսուցումը նպաստում է երեխաների հետաքրքրությունները խաղային գործունեությունից աստիճանաբար տեղափոխվել դեպի ուսումնական գործունեության:

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և մարդուն ուղեկցում ողջ կյանքի ընթացքում:

Նախադպրոցական տարիքի երեխաների առողջության, ֆիզիկական և շարժիչ զարգացման ցուցանիշների վերլուծությունը վերջին տարիներին ցույց է տալիս տագնապալի միտումներ: Ըստ Է.Ն. Վավիլովայի, Ն.Ա. Նոտկինայի, Մ.Ա. Պրավդովայի, Յու.Կ. Չերնիշենկոյի, Վ.Ի. Ուսակովի և այլոց, ավագ նախադպրոցական տարիքի երեխաների 30%-ից մինչև 40%-ը շարժողական զարգացման ցածր մակարդակ ունի: Դրա պատճառները ժամանակակից ապրելակերպի մեջ են: Հոգեբանները, ուսուցիչները, բժիշկները նշում են ընդհանուր միտում՝ երեխաների շարժիչ գործունեության նվազում (Յու.Ֆ. Զմանովսկի, Մ.Ա. Ռունովա, Ս.Բ. Շարմանովա):

Այսպիսով՝ ուսումնասիրվող թեմայի **արդիականությունը** կայանում է նախադպրոցական տարիքում խաղի կրճատման միտումով, ինչը շատ վատ ազդեցություն է ունենում երեխաների ընդհանուր մտավոր և անձնական զարգացման վրա, քանի որ հենց խաղի մեջ է ամենաինտենսիվ զարգանում երեխայի մտածողությունը, հույզերը, հաղորդակցությունը, երևակայությունը, գիտակցությունը և այլն:

Աշխատանքի հիմնական **նպատակն է** ուսումնասիրել և ցույց տալ խաղերի որպես առաջատար գործունեության դերը նախադպրոցականի զարգացման և դաստիարակության գործում, վերլուծել գիտական ու գիտամեթոդական գրականությունը տվյալ թեմայով և այլոց փորձը, կատարել եզրակացություն:

Նպատակից ելնելով առաջ ենք քաշել հետևյալ **խնդիրները**.

- Նկարագրել նախադպրոցական երեխաների կյանքում խաղերի դերն ու նշանակությունը, խաղը որպես սովորելու միջոց։
- Ներկայացնել խաղի հիմնական տեսակները և գործառույթները։
- վերլուծել խաղը, որպես նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման նդաստիարակության առաջատար ձև։
- Իրականացնել ձեռք բերված գիտելիքներ փորձնական ստուգում և փորձարկել դրանք գործնականում։

ԳԼՈՒԽ I. ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1.1. «Խաղ» հասկացությունը, դիդակտիկական շրջանակները

Խաղը որպես բազմաչափ և բարդ երևույթ դիտարկվում է հոգեբանների, մանկավարժների, կենսաբանների, ազգագրագետների, մարդաբանների և նույնիսկ տնտեսագետների ուսումնասիրություններում: Վերջին տասնամյակների ընթացքում մանկավարժական գրականության մեջ ձևավորվել են տարբեր սահմանումներ ու կատարվել բազմաթիվ ուսումնասիրություններ խաղի վերաբերյալ: Վերլուծենք դրանցից մի քանիսը:

Բազմաթիվ ուսումնասիրությունների վերլուծության ընթացքում դժվար չէ բացահայտել որոշակի հակասություն, որը պայմանավորված է հենց խաղի երևույթի բնույթով:

Մի կողմից, խաղ բառն ինքնին այնքան համընդհանուր ճանաչված է, որ դրա օգտագործումը, լինի դա առօրյա խոսքում, գրական ստեղծագործություններում, թե գիտական աշխատություններում, չի ուղեկցվում սահմանմամբ: Ընդհանուր առմամբ խաղի հասկացությունն արտահայտված է կատակի, ծիծաղի, ուրախության, զվարճանքի, մանկական զվարճանքի մասին ժողովրդական պատկերացումների բազմազանությամբ:

Մյուս կողմից՝ մարդու խաղը բազմակողմանի է ու երկիմաստ: Նրա պատմությունը մանրուքների, զվարճանքների՝ գործիքների, առաջին հերթին մշակույթի և, ավելին, գոյաբանական և իմացաբանական փիլիսոփայական կատեգորիայի վերածելու պատմություն է, որը նման է այնպիսի կատեգորիաների, ինչպիսիք են ճշմարտությունը, գեղեցկությունը, բարությունը, աշխարհայացքի և վերաբերմունքի կատեգորիայի մեջ, մշակույթի տիեզերքի մեջ:

Այսպիսով, խաղի բնույթը թաքցնում է ոչ միայն մանկական խաղեր, այլև ինտուիտիվ գեղարվեստական գործունեության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են նկարչությունը, երաժշտությունը, գրականությունը, կինոն և թատրոնը, և առավել ևս՝ քաղաքականությունն ու պատերազմը: Իսկապես մարդկային խաղը հնարավոր չէ հասկանալ պարզ գծապատկերներով, կարճ բանաձևերով և հստակ արտահայտություններով:

Քննարկելով խաղային գործունեությունը տարբեր տեսանկյուններից՝ գիտնականները միահամուռ նշում են, որ խաղը մարդկային մշակույթի համակարգի ուրույն և անբաժանելի մասն է։

Ռուս հոգեբան Դ.Բ. Էլկոնինը խաղին մոտենում է հոգեբանական տեսանկյունից. «Խաղը հանդես է գալիս որպես մի գործունեություն, որը կապ ունի երեխայի պահանջմունքների ոլորտի հետ։ Դրանում տեղի է ունենում նախնական, հուզական, գործուն կողմնորոշում դեպի մարդկային գործունեության իմաստը։ Ծագում է մեծերի հետ հարաբերություններում իր սահմանափակ տեղի գիտակցումը և չափահաս լինելու պահանջմունքը» [16, 28]։

Ռուս մանկավարժ Սելևկոն տվել է խաղի հետևյալ սահմանումը. «Խաղը իրադրային պայմաններում տեղի ունեցող գործունեության ձև է՝ ուղղված հասարակական փորձի ստեղծմանն ու յուրացմանը, որում ձևավորվում ու կատարելագործվում է վարքագծի ինքնավերահսկողությունը» [14, 5]։ Ռուս մի շարք այլ մանկավարժների կարծիքով (Ս.Ն. Կարպով, Ս.Ա. Շմակով և այլոք) խաղը մեծ նշանակություն ունի երեխաների դաստիարակության, ուսուցման ու հոգեկան զարգացման մեջ։ Այն անհամարձակ, անվստահ աշակերտներին հնարավորություն է տալիս հաղթահարելու իրենց բարդույթներն ու անվճռականությունը [ըստ 6, 15]։

Հաշվի առնելով խաղի վերաբերյալ հոգեբաների ու մանկավարժների բերած սահմանումները՝ կարծում ենք, որ խաղը նաև շրջակա աշխարհի ճանաչման գործընթաց է, որն օգնում է բացահայտելու մեզ շրջապատող իրականության իրերի ու երևույթների միջև եղած բազմաթիվ կապերն ու հարաբերությունները, բացի դրանից խաղը նաև տարածական կողմնորոշման զարգացման կարևորագույն հնար է, որն ուղղակի անհրաժեշտություն է կյանքի դժվար իրավիճակներից արագ ու ճիշտ ելքեր փնտրելու համար։

Խաղը երեխայի ներքին պահանջմունքներով պայմանավորված գործունեություն է, որը յուրաքանչյուր երեխայի համար ունի սուբյեկտիվ՝ ներանձնային նշանակություն և արժեք։ Խաղն ինքնարժեք գործունեություն է և անփոխարինելի է նախադպրոցականի կյանքում։ Որևէ այլ գործունեություն չունի խաղային գործունեության նշված առավելությունները։

Այսպիսով, խաղային գործունեությունը նախադպրոցականի անձնավորության կայացման ներքին սուբյեկտիվ գործոն է։

Միևնույն ժամանակ, խաղային գործունեությունը օբյեկտիվ մանկավարժական նշանակություն ունի։ Խաղն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացմանը, օրինաչափորեն նպաստում է նրանց հոգեկանի զարգացմանը, հուզազգացմունքային ոլորտի հարստացմանը, հասակակիցների հետ փոխհարաբերությունների հաստատմանը, սեփական սոցիալական փորձի ձեռքբերմանը։ Խաղը նախադպրոցականի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է և նրա հետագա զարգացման հիմնական գրավականը։

Միավորելով խաղային գործունեության սուբյեկտիվ արժեքը և զարգացնող օբյեկտիվ նշանակությունը, կարելի է եզրակացնել, որ խաղը նախադպրոցական երեխաների կյանքի և գործունեության կազմակերպման ամենահարմար ձևն է։

Քննարկենք խաղային գործունեության հիմնական **առանձնահատկությունները**։

1. Խաղային գործունեության ընթացքում բավարարվում է նախադպրոցականի՝ ակտիվության և ինքնուրույնության, հաղորդակցման, մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու, արտաքին աշխարհը ճանաչելու և այն արտացոլելու հիմնական պահանջմունքները։ Ինչպես նշում էր Կ. Դ. Ուշինսկին, երեխան խաղի ընթացքում փորձարկում է իր ապագա կյանքը և «փորձում սեփական ուժերը» [15, 325]։

2. Խաղային գործունեության ընթացքում բնականոն ճանապարհով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները, որոնք նախապատրաստում և ապահովում են երեխայի հոգեկանի զարգացման հաջորդ փուլը։ Հետաքրքիր են նախադպրոցականի երևակայության զարգացման յուրահատկությունները, որոնք լավագույնս դրսևորվում են խաղի ընթացքում։ Որևէ այլ գործունեության ընթացքում երեխան չի գործում «երևակայան իրադրության» պայմաններում և չի օգտագործում փոխարինող առարկաներ։

3. Խաղային գործունեությունը նպաստում է գործունեության նոր ձևերի՝ աշխատանքի և ուսումնական գործունեության, առանձնացմանը։ Երեխայի խաղն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում աշխատանքային և ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝ նպատակ, պլանավորում,

արդյունք, որոնք, ձևավորվելով խաղային գործունեության ընթացքում, տեղափոխվում են գործունեության այլ ձևեր։

4. Խաղային գործունեությունը բնական գործունեություն է, ուր չկա ճնշում և հարկադրանք, առկա է երեխաների համար բնական միջավայր։ Խաղի ընթացքում երեխաներն ազատ են և ինքնություն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ։ Խաղն ապահովում է հուզականությամբ հագեցած հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ։

5. Խաղը ստեղծագործական գործունեություն է, քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը։

6. Խաղի ընթացքում են լավագույնս դրսևորվում երեխայի նախադրյալները, հակումներն ու հետաքրքրությունները։ Խաղի ընթացքում երեխան փորձում է ինքնահաստատվել և բնականաբար ջանում է առավելագույնս դրսևորել իր հակումներն ու կարողությունները։ Խաղը նաև երեխայի ընդունակությունների և կարողությունների ախտորոշման արդյունավետ միջոց է։

7. Խաղը աշխարճանաչման և աշխարհի արտացոլման եղանակ է, իմացական գործունեություն։ Խաղային գործունեության ընթացքում ձեռքբերած գիտելիքները կրկնակի արժեքավոր են՝ դրանք և՛ տեղեկատվական են, և՛ գործնական։ Այն, որ երեխան հնարավորություն ունի խաղի ընթացքում անմիջապես կիրառելու կամ փորձարկել ձեռք բերած գիտելիքները, նպաստում է դրանց արդյունավետ յուրացմանն ու ամրապնդմանը, խաղի ընթացքում ձեռք բերած գիտելիքները չափազանց կայուն են։

8. Խաղային գործունեությունն իր բնույթով ուղղված է նախադպրոցականի հուզակամային ոլորտի զարգացմանը, հետևաբար և հիմնարար անձնային որակների ձևավորմանը։ Նախադպրոցականի անձնավորության ձևավորման գործընթացը պայմանավորված է նրա հուզական և կամային ոլորտների ներդաշնակ զարգացմամբ, ինչը լավագույնս ապահովվում է խաղային գործունեության ընթացքում։

Այսպիսով, ակնհայտ են խաղային գործունեության առավելությունները մանկան գործունեության այլ ձևերի նկատմամբ, ուստի խաղը, հանդես գալով որպես նախադպրոցական տարիքի երեխաների առաջատար գործունեություն, նախադպրոցահասակ երեխաների զարգացման և դաստիարակության լավագույն միջոցն է, և պետք է դառնա նրանց կյանքի և գործունեության կազմակերպման հիմնական ձևը:

1.2. Խաղերի տեսակները և գործառույթները

Խաղի յուրաքանչյուր տեսակ զարգացման հրաշալի միջոց է նախադպրոցական երեխաների համար: Դաստիարակի խնդիրն է՝ շարունակել խաղը, ծավալել ու ընդլայնել այն՝ միշտ ուշադրության կենտրոնում պահելով դրա դաստիարակչական և ուսումնական նպատակները:

Վերջին տարիներին խաղերի դասակարգման տարբերակ է առաջարկել Ս.Լ. Նովոսյոլովան: Նա դասակարգման հիմք է համարել խաղային գործունեության նախաձեռնությունը, որի հետևանքով առանձնացվել է 3 խումբ [13].

- Խաղեր, որոնց նախաձեռնողը երեխաներն են: Դրանք ինքնուրույն և ստեղծագործական բնույթի խաղեր են: Օրինակ՝ գտի՛ր ավելորդը, շարունակի՛ր շարքը, որոնք ձևավորում են խմբի առանձին առարկաները ընդհանուր անվանման տակ միավորելու, առարկան ըստ «ինչի՞ց է բաղկացած, ի՞նչ է անում» սկզբունքի նկարագրելու ունակություն:
- Խաղեր, որոնց նախաձեռնողը մեծահասակներն են, դրանք ունեն ընդգծված մանկավարժական ուղղվածություն: Դրանցից են՝ ուսուցողական-ինտելեկտուալ խաղերը: Օրինակ՝ պատկերները դասավորի՛ր ըստ գույնի, ըստ ձևի և այլն [13, 117].
- Ժողովրդական խաղեր, որոնք ավանդաբար փոխանցվում են սերնդեսերունդ՝ իրենց մեջ ամփոփելով ազգի ավանդույթներն ու սովորույթները:

Ներկայումս արժեքավոր է նաև ռուս մանկավարժներ Ս.Ա. Կոզլովայի և Տ.Ա. Կուլիկովայի կողմից առաջարկված խաղերի դասակարգման եղանակը՝ ըստ որի խաղային գործունեությունը իր բնույթով լինում է ստեղծագործական և

նպատակաուղղված զարգացնող կամ կանոնով: Առաջ են քաշվում խաղերի հետևյալ տեսակները՝

1. Ռեժիսորական խաղեր:
2. Խաղ - թատերականացումներ:
3. Շինանյութով խաղեր:
4. Կանոնով խաղեր:
5. Շարժախաղեր:
6. Դիդակտիկ խաղեր [7]:

1. Խաղի անվանումը՝ ռեժիսորական, խոսում է խաղի նմանության մասին ֆիլմերի և ներկայացումների ռեժիսոր-բեմադրողների գործունեության հետ: Իսկապես, ռեժիսորական խաղերում երեխան հանդես է գալիս խաղի բեմադրողի դերում: Ինքն է ընտրում սյուժեն, «գրում է» խաղի «սցենարը», ընտրում խաղի դերերն ու «մասնակիցներին» և ինքն է կարգավորում խաղի ընթացքը: Ռեժիսորական խաղը ստեղծագործական բնույթի, ինքնուրույն խաղ է: Այն միանձնյա խաղ է, քանի որ մյուս «մասնակիցները» անշունչ առարկաներ են՝ խաղալիքներ, տարբեր իրեր, փոխարինող առարկաներ: Խաղացող երեխան միաժամանակ գործում է իր և մնացած բոլոր «խաղընկերների» կողմից, դրանով իսկ կառավարում խաղային իրադրությունը և կարգավորում խաղի ընթացքը: Ռեժիսորական խաղն ունի արտաքին հայացքից անտեսանելի, սակայն բավական լուրջ խորհուրդ. այն նրբանկատորեն սովորեցնում է երեխային խաղալ և գնահատել սեփական ուժերը: Անշունչ «խաղընկերների»՝ խաղալիքների և առարկաների հետ շփվելու միջոցով, նա, կարծես, նախապատրաստվում է հասակակիցների հետ հաղորդակցման: Անհատական խաղը հնարավորություն է տալիս երեխային ազատ արտահայտելու սեփական փորձը, դիտարկելու այն տարբեր կողմերից և տեսանկյուններից և խաղալու բոլոր խաղալիքներով: Ռեժիսորական խաղերի ղեկավարումը մանկավարժներից պահանջում է նրբանկատ մոտեցում: Ռեժիսորական խաղերի զարգացման կարևորագույն պայմանը խաղային միջավայրի ստեղծումն է և հարուստ խաղանյութի ապահովումը:

2. Խաղ-թատերականացումները, կամ դերային խաղեր, երեխաների կողմից նախաձեռնված բեմականացումներ են, խաղ-ներկայացումներ, որոնց միջոցով

երեխան փորձում է վերարտադրել իր երազած աշխարհը, աշխարհի այն կատարյալ պատկերը, որին նա ներքուստ ձգտում է:

Խաղ-բեմականացումները հաճելի են երեխաներին իրենց մարդասիրական ուղղվածությամբ և պարզությամբ, երեխային հասկանալի բովանդակությամբ և բարձր հուզականությամբ: Այսպես, գեղարվեստական գրականության լավագույն տարբերակը հեքիաթն է, որի բովանդակությունը երեխաները գերագույն հաճույքով են ներկայացնում խաղ - թատերականացումներում:

Վաղ մանկության և նախադպրոցական մանկության սահմանագծում ծնվում են երեխայի խաղերի առաջին տեսակները:

Սյուժետա-դերային խաղերում երեխաները վերարտադրում են անմիջապես մարդկանց, մարդկային դերերն ու հարաբերությունները: Երեխաները միմյանց, կամ տիկնիկի հետ խաղում են ինչպես իդեալական պարտնյորի հետ, որը նույնպես ունի իրդերը:

3. Շինանյութով խաղերը կառուցողական խաղեր են, որոնց մանկավարժական նշանակությունը բազմիցս հիշատակվել է ականավոր մանկավարժների աշխատություններում: Կառուցողական խաղն իրենից ներկայացնում է բնույթով ստեղծագործական, արդյունավետ գործունեություն, որի օգնությամբ երեխան ձեռք է բերում մարդկային պրակտիկ գործունեության կարողություններ և հմտություններ: Ռուս հոգեբան և մանկավարժ Ա.Ն. Լեոնտևը, կարևորելով կառուցողական խաղերի մանկավարժական նշանակությունը, նշում է, որ շինանյութով խաղերը կամ շինարարական խաղերն իրենց բնույթով և կառուցվածքով ստեղծարար են, արգասաբեր ու նպաստում են մանկան գործունեության նոր ձևերի առաջացմանը [11]: Շինանյութով խաղերի ընթացքում զարգանում է երեխայի տարածական երևակայությունն ու տրամաբանական մտածողությունը, ձևավորվում է երեխայի կառուցողական գործունեությունը, նախապատրաստվում են ուսումնական գործունեության տարրերը, կատարելագործվում են աշխատանքային գործունեության կարողություններն ու հմտությունները:

4. Կանոնով խաղին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ, որոնք ներկայացնում են դրանց էությունն ու մանկավարժական արժեքը: Այսպես.

ա. Կանոնով խաղը նպատակաուղղված մանկավարժական գործընթաց է, որն ունի ուսումնական, դաստիարակչական ու զարգացնող հստակ նպատակներ և խնդիրներ:

բ. Կանոնով խաղերի ընթացքում երեխաների խաղային գործողություններն ու հարաբերությունները կարգավորվում են խաղի համապատասխան կանոններով:

գ. Կանոնով խաղերը ղեկավարվում են ուղղակի եղանակներով:

դ. Կանոնով խաղերին բնորոշ հստակությունն ու պատրաստի բովանդակությունը նպաստում են դրանց ինքնաղեկավարմանը [7]:

5. Շարժախաղերը մեծ նշանակություն ունեն հատկապես մաթեմատիկայի և ֆիզիկական զարգացման բնագավառում, քանի որ դրանք նպաստում են սովորողների տարածական կողմնորոշմանը, ձևավորում են միմյանց հետ մրցելու, պայքարելու, հաղթելու,: Շարժախաղերի շնորհիվ ամրապնդվում է երեխաների առողջությունը, ընդլայնվում է աշխարհայացքը, առաջանում է հետաքրքրություն գիտության տարբեր բնագավառների նկատմամբ [15]:

6.Դիդակտիկական խաղը ուսուցման միջոց է, որը ձևավորում է ինքնուրույն սովորելու ունակություն՝ ելնելով երեխաների ինքնավերլուծության և ինքնագիտակցության կարողություններից [13]:

1.3. Խաղային գործունեության գործառույթները

Ինչպես ցանկացած գործունեություն, այնպես էլ խաղը կատարում է որոշակի գործառույթներ, որոնցով էլ պայմանավորված է նրա յուրահատկությունը:

Ռուս մանկավարժ Վ.Ս. Կուկուշինը ներկայացնում է խաղային տեխնոլոգիայի առավել կարևոր գործառույթները [10].

• Սոցիալ–մշակութային գործառույթ: Խաղը երեխայի սոցիալականացման կարևոր միջոցներից մեկն է: Այն իր մեջ ներառում է սոցիալ–վերահսկող գործընթացներ:

Խաղի սոցիալ–մշակութային նշանակությունը ենթադրում է մարդու կողմից մշակույթի յուրացման, անձի ձևավորման ու դաստիարակման միջոց և թույլ է տալիս

նրան գործել որպես կոլեկտիվի լիարժեք անդամ: Խաղի սոցիալ–մշակութային բնույթն այն դարձնում է ուսուցման անփոխարինելի տարր:

• Ինքնաիրականացման գործառույթ: Սա խաղի հիմնական գործառույթներից է: Խաղը կարևոր է որպես անձի ինքնաիրականացման ոլորտ: Հենց այս տեսակետից առավել էական նշանակություն ունի խաղի գործընթացը և ոչ թե դրա արդյունքը, մրցակցությունը կամ որևէ նպատակի հասնելը:

• Հաղորդակցման գործառույթ: Խաղը հաղորդակցման գործունեություն է՝ կոնկրետ խաղային կանոններով: Այն երեխային ներգրավում է իրական մարդկային հարաբերությունների համակարգի մեջ:

• Ախտորոշիչ գործառույթ: Խաղն ավելի ախտորոշիչ է, քան մարդու որևէ այլ գործունեության տեսակ: Այն յուրահատուկ «ինքնաարտահայտման միջոց է», որը հնարավորություն է տալիս բացահայտել թաքնված ներուժը:

• Թերապևտիկ գործառույթ: Խաղը կարելի է օգտագործել տարբեր դժվարություններ հաղթահարելու նպատակով: Գնահատելով խաղային գործելակերպի թերապևտիկ նշանակությունը՝ Դ.Բ. Էլկոնինը գրել է, որ խաղային թերապիայի արդյունավետությունը որոշվում է նոր սոցիալական հարաբերությունների հաստատմամբ, որոնցում երեխան մտնում է դերային խաղի մեջ [16, 218]:

• Խաղի շտկողական գործառույթ: Խաղի միջոցով հոգեբանական շտկումն ընթանում է բնականոն ձևով. եթե բոլոր մասնակիցները յուրացրել են խաղի կանոններն ու սյուժեն, և յուրաքանչյուր մասնակից լավ գիտի ոչ միայն իր, այլև խաղընկերների դերերը, ապա խաղի ընթացքը և նպատակը նրանց համախմբումն է:

• Խաղի զվարճացնող գործառույթ: Զվարճանքի ապրումը ծնվում է սովորականից տարբերվող, անկեղծ ուրախության շեշտադրումներով զանազանվող իրավիճակներում: Եվ դրան ինքնաբերաբար ձգտում են բոլորը: Խաղի զվարճացնող գործառույթն առնչվում է որոշակի հարմարավետության ու հաճելի միջավայրի ստեղծմանը: Խաղի զվարճանքը որոնումն է: Խաղը մոգական ուժ ունի. այն ունակ է սնելու երևակայությունը:

Խաղի կիրառումն ուսուցման գործընթացում հնարավորություն է ընձեռում աշխատանքն առավել բազմազան ու ճկուն դարձնել [1, 30]:

ԳԼՈՒԽ II. ԽԱՂԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ

2.1. Խաղի դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում

Երեխաների զարգացման և անհատականության ձևավորման համար խաղի նշանակության ուսումնասիրությունը շատ դժվար է: Մաքուր փորձարկումն այստեղ անհնար է, պարզապես այն պատճառով, որ անհնար է հեռացնել խաղային գործունեությունը երեխաների կյանքից և տեսնել, թե ինչպես կշարունակվի զարգացման գործընթացը:

Ամենակարևորը խաղի կարևորությունն է երեխայի մոտիվացիոն-կարիքավոր ոլորտի համար: Դ.Բ. Էլկոնինի աշխատությունների համաձայն՝ առաջ է գալիս մոտիվների և կարիքների խնդիրը [16]:

Նախադպրոցական տարիքը երեխայի զարգացման եզակի և որոշիչ շրջան է, երբ առաջանում են անհատականության հիմքերը, զարգանում է կամքն ու կամավոր վարքագիծը, ակտիվորեն զարգանում է երևակայությունը, ստեղծագործական միտքը և ընդհանուր նախաձեռնությունը: Նշված բոլոր կարևոր հատկությունները ձևավորվում են նախադպրոցական երեխայի առաջատար և հիմնական գործունեության մեջ՝ խաղի մեջ: «Խաղը մեծացող երեխայի մարմնի կարիքն է: Խաղում զարգանում է երեխայի ֆիզիկական ուժը, մարմինն ավելի ճկուն է, ավելի ճիշտ՝ զարգանում է աչքը, խելքը, հնարամտությունը, նախաձեռնողականությունը: Նրանց համար խաղը ուսումնառություն է, խաղը նրանց համար աշխատանք է, խաղը նրանց համար կրթության լուրջ ձև է » [9, 129]:

Ինչպես արդեն նշել ենք, խաղը շատ կարևոր է երեխայի զարգացման համար, այն երեխայի հիմնական գործունեությունն է: Խաղով է նա ճանաչում ինքն իրեն, աշխարհը, սովորում է խոսել, շփվել, պահպանել ընդունված նորմերը և այլն:

Խաղը՝ որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն, երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոցն է: Խաղը նպաստում է նախադպրոցականի ճանաչողական, հուզակամային և բարոյական զարգացմանը, նորմերի յուրացմանը, բառապաշարի հարստացմանը, հաղորդակցական

հմտությունների ձևավորմանը: Կարելի է ասել, որ երեխայի և՛ ֆիզիկական, և՛ հոգեկան առանձնահատկությունները, ինչպես նաև նրա ընդունակություններն ու հոգեկան հակազդումները խորապես պայմանավորված են խաղի բնույթով:

Կյանքի առաջին տարիներին երեխայի մեջ տեղի են ունենում ոչ միայն ֆիզիոլոգիական, այլև մտավոր բնույթի կարևոր փոփոխություններ: Նա ձգտում է ինքնուրույնության, ներաշխարհում կատարվում են հոգեբանական բարդ երևույթներ, որոնք բացահայտվում են տարբեր խաղերում: Յուրաքանչյուր խաղային հարաբերություն վերարտադրում է իրականության մեջ գոյություն ունեցող սոցիալական այնպիսի փոխհարաբերություններ, որոնց շնորհիվ լայն հնարավորություն է ստեղծվում երեխայի դաստիարակության համար: Երեխան ընդհանուր ընդօրինակումից անցնում է սոցիալական ազդեցությունների ընտրողական յուրացման, որի արդյունքում որակապես փոխվում է կապը հասարակության հետ: Մեծահասակի նպատակաուղղված ներգործությունների շնորհիվ երեխան խաղի միջոցով յուրացնում է սոցիալական մեծ արժեք ունեցող բարոյական որակներ՝ ընկերասիրություն, մարդասիրություն, բարություն, ազնվություն, հայրենասիրություն, կազմակերպվածություն և այլն:

Խաղերը երեխայի նյարդային համակարգի վրա ամրապնդող ազդեցություն ունեն, նպաստում են երեխաների մոտ ուրախ տրամադրության ստեղծմանը: Իսկ խաղերում առկա ակտիվ շարժումները մեծացնում են երեխայի դիմադրողականությունը՝ առաջացնելով մարմնի պաշտպանական ուժերի մոբիլիզացիա, բարելավում է հյուսվածքների սնուցումը, կմախքի ձևավորումը, ճիշտ կեցվածքը:

Խաղերի ժամանակ երեխաները բարելավում են իրենց շարժումները, զարգացնում այնպիսի որակներ, ինչպիսիք են նախաձեռնողականությունն ու անկախությունը, վստահությունն ու հաստատակամությունը: Նրանք սովորում են համակարգել իրենց գործողությունները և նույնիսկ հետևել որոշակի կանոնների:

Խաղային գործունեության մանկավարժական նշանակությունը երեխաների կյանքում կարևորել են Ա. Կոմենսկին, Ժ. Ռուսոն, Ֆ. Ֆրյոբելը, հայ մանկավարժներ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը , Հ. Թումանյանը և այլք:

Հ. Թումանյանը գտնում էր, որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»։ Հավաքելով և մշակելով ժողովրդական բանահյուսության հոգևոր գանձերը՝ Հ. Թումանյանը մշակում է երեխաների համար հայրենագիտական խաղեր և վերլուծում նրանց մանկավարժական արժեքը երեխայի միտքը և բարոյականությունը զարգացնելու գործընթացում։ Հ. Թումանյանի կողմից մշակած խաղերի մեծ մասը տարբերակված ձևով առ այսօր օգտագործվում է նախադպրոցական դիդակտիկայում։ Դրանցից են. «Գույների խաղը», «Աստղերի խաղը», «Տառերի խաղը», «Հայկական առածների լոտո» և այլ օրինակներ [ըստ 2]։

Խաղի էությանն ու յուրահատկություններին անդրադարձել է հայ մանկավարժական մտքի խոշոր ներկայացուցիչ Ղ. Աղայանը։ Նա գտնում էր, որ երեխաներին հրապուրում է շրջապատողների գործունեությունը, և նրանք ցանկանում են վերարտադրել այդ իրենց խաղերում՝ ընդօրինակելով մեծահասակներին։ Ղ. Աղայանը նկարագրում է տարբեր միջավայրերում ապրող երեխաների խաղերը և գալիս եզրակացության, որ դրանք արտացոլում են իրական կյանքը։ Աղայանը կյանքի է կոչում նախադպրոցականի դաստիարակության «լավ երգի և խաղի» սկզբունքը [ըստ 2]։

Խաղի դերն ու նշանակությունը նախադպրոցականի կյանքում մանրամասն ուսումնասիրվել ու քննարկվել է նաև խորհրդային մանկավարժության ու հոգեբանության ականավոր ներկայացուցիչների՝ Լ. Ս. Վիգոտսկու, Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ա. Ն. Լեոնտևի, Դ. Բ. Էլկոնինի և ուրիշների կողմից։ Նրանք խաղը դիտարկում են որպես երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնակատարելագործման կարևորագույն միջոց։ Նշում են խաղային գործունեության պատմական ծագումն ու սոցիալական բնույթը։

Խաղի ժամանակակից տեսությունն այսօր լրամշակվում է մանկավարժական նորագույն մոտեցումներով։ Համաձայն նախադպրոցական դաստիարակության հայեցակարգի՝ խաղն ինքնարժեք գործունեություն է, որը շնորհում է նախադպրոցահասակ երեխային ներքին ազատություն և ինքնուրույնության զգացողություն, ցանկալին իրողություն դարձնելու վստահություն, իրականության իր տեսանկյունից նշանակալի կողմերը կրկին վերապրելու, հաճույք և բավարարվածություն զգալու լայն հնարավորություն։

Ինչպես աշխատանքը կարևոր է յուրաքանչյուր մեծահասակի համար, այնպես էլ երեխան ունի խաղի կարիք: Խաղի միջոցով երեխան ծանոթանում է իրեն շրջապատող աշխարհին, մարդկանց փոխհարաբերություններին: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման մեջ խաղն ունի առաջատար դերերից մեկը, քանի որ դրանում է, որ մենք տեսնում ենք երեխայի մտածողության, երևակայության, նրա հակումների և հետաքրքրությունների պրոյեկցիան:

2.2. Խաղը որպես սովորելու միջոց, դրանց կազմակերպման առանձնահատկությունները

Խաղը նրա, մանուկ մարդու բնական օրգանական
պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է [1, 28]:

Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է, որի ընթացքում երեխաներն առաջին անգամ շփվում են իրենց հասակակիցների հետ: Նրանց միացնում են ընդհանուր նպատակը, դրան հասնելու միասնական ջանքերը, ընդհանուր հետաքրքրություններն ու ապրումները: Այդ պատճառով էլ խաղը երեխաներին սովորեցնում է իրենց գործողություններն ու մտքերը ծառայեցնել որոշակի նպատակի, օգնում դաստիարակելու նպատակասլացություն: Երեխան սկսում է զգալ իրեն որպես ընդհանուր խմբի անդամ, արդարացիորեն գնահատել իր և ընկերների գործողություններն ու արարքները [3]: Դա նշանակում է, որ միջավայրը թուլացնում է երեխայի զգացմունքային լարվածությունը և տրամադրում խաղին: Երեխան դառնում է նախաձեռնող և սոցիալապես ակտիվ: Անգամ ամենապասիվ երեխաները մտնում են խաղի մեջ մեծ ցանկությամբ՝ օգտագործելով բոլոր ուժերը, որպեսզի խաղի ժամանակ ընկերներից հետ չմնան: Խաղի ընթացքում հետևելով երեխայի վարքին՝ կարելի է դատել ընտանիքում մեծահասակների հետ նրանց ունեցած հարաբերությունների մասին: Միաժամանակ երեխան փորձում է կատարել մեծի դեր՝ հասկանալով հանդերձ, որ ինքը դեռ մեծ չէ: Նմանակելով մեծահասակների տնային գործերը՝ երեխաները յուրացնում են կենցաղային աշխատանքի որոշ հմտություններ: Խաղերի ճնշող մեծամասնությունն արտացոլում է նաև տարբեր մասնագիտության մարդկանց աշխատանքը: Այսպիսով՝ այստեղից

գալիս ենք այն եզրահանգման, որ խաղի միջոցով ընդլայնվում և խորանում են երեխաների հետաքրքրությունները տարբեր մասնագիտությունների նկատմամբ, և ձևավորվում է հարգանք աշխատանքի հանդեպ: Եվ արդյունքում երեխայի մեջ ձևավորվում է մեծի, հասարակայնորեն արժեքավոր դեր կատարելու դրդապատճառը [3]: Սակայն խաղային գործունեություն իրականացնելուց առաջ պիտի որոշել խաղի կանոնները: Դրանք բխում են գործունեության բնույթից, «թեմայից» և այլն: Երեխաներն ընդունում են այդ կանոնները, ենթարկվում դրանց սահմանած պայմաններին, անհրաժեշտության դեպքում՝ փոխում: Այս կերպ վարժվում են հասարակական կյանքի ապրելակերպին՝ իրականացնելով ինքնուրույն ու ստեղծագործական գործունեություն: Ուստի խաղի մեջ մտավոր ակտիվությունը միշտ շաղկապված է երևակայությանն ու խոսքին. որքան զարգացած է մարդու մտածողությունը, այնքան հստակ է արտահայտվում նրա խոսքը: Իսկ գրագետ խոսքը վկայում է մարդու զարգացած մտածողության մասին: Իսկ խոսքի զարգացման գործընթացն առավելագույն արդյունք է տալիս, երբ ուսուցումն ընթանում է խաղերի ձևով, և ընթացքում օգտագործվում են ակտիվ բառապաշարը հարստացնող սյուժետային նկարներ, աշխուժացնող վարժություններ [2]: Խաղի կանոնները որոշելուց հետո պիտի բաշխել դերերը: Դերերը բաշխելիս պետք է նկատի ունենալ ոչ թե այն, թե ով լավ կկատարի այդ դերը, այլ այն, թե տվյալ դերն ինչ դրական ազդեցություն կունենա երեխաների փոխհարաբերությունների վրա [3]: Դերային խաղերի համար կարևոր են նաև մասնակիցների կարողություններն ու հմտությունները, որոնց նրանք տիրապետում են: Դրանք ընդհանուր ունակություններ են, որոնք պահանջվում են ցանկացած խաղում՝ հաղորդակցման ունակություն, խմբում աշխատելու կարողություն, ղեկավար որակներ, դիրքորոշումը պաշտպանելու ունակություն, անընդհատ փոփոխվող պայմաններում գործելու ունակություն և այլն [4]: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ խաղային գործունեության միջոցով երեխան պիտի իր մեջ ավելացնի դրական ու նվազեցնի բացասական որակները:

Այսպիսով, ինքնակազմակերպվող գործունեության ժամանակ երեխան.

- բավարարում է իր բնական հակումները,
- բացահայտում է իր առանձնահատկությունները,

- ինքնադրսևորվում է,
- սոցիալական հարաբերությունների մեջ է մտնում ընկերների հետ և ինքնուրույն կարգավորում այդ հարաբերությունները,
- փորձում է ինքնուրույն հաղթահարել իր առջև դրված խոչընդոտները:

Խաղերի ճիշտ կազմակերպման, մասնավորապես, նրանց նպատակների միջև գոյություն ունեցող կապերի մասին ուշագրավ եզրահանգում է կատարում ռուս մանկավարժ Մ.Է. Վայները՝ կարևորելով ուսումնական գործընթացում մտավորի և զգացմունքայինի միասնությունը: Ընդունելով Լ.Ս. Վիգոտսկու և Ս.Լ. Ռուբինշտեյնի այն տեսակետը, որ երեխաների մտավոր զարգացման ուղղությամբ պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է մտավոր և զգացմունքային գործընթացների միասնության ապահովում՝ Մ.Է. Վայները նշում է. «…առաջին հերթին երեխայի զարգացման գործընթացում անհրաժեշտ է պահպանել նրա զգացմունքային և մտավոր ներուժի ներդաշնակ հավասարակշռությունը… Երկրորդ՝ անհնար է երեխայի լիարժեք մտավոր զարգացում, եթե զգացմունքների ձևավորման անբավարարվածություն կա: Զգացմունքները չեն կարող փոխարինվել, ճանաչվել մտավոր կարողություններով, քանզի դրանց բացակայությունը կամ զգացմունքային ոլորտի աղքատությունը կհանգեցնեն մտածողական գործընթացների պասիվության» [5, 16]:

ԳԼՈՒԽ III. ԽԱՂԸ, ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՁԵՎ

Ինչպես նշում է Դ.Բ. Էլկոնինը, երեխան հասարակության անդամ է և հասարակությունից դուրս ապրել չի կարող: Նրա հիմնական պահանջմունքն է ապրել շրջապատող մարդկանց հետ: Երեխան շրջապատող աշխարհի հետ գտնվում է ոչ թե ուղղակի, այլ միջնորդավորված կապի մեջ: Այդ կապն իրականացվում է խաղի, առավելապես սյուժետային, դերային խաղերի միջոցով [16]:

Խաղը հենց այն գործունեությունն է, որում երեխան սկզբում էմոցիոնալ, իսկ հետո ինտելեկտուալ ձևով յուրացնում է մարդկային հարաբերությունների ողջ համակարգը [11, 24]:

Ըստ Էլկոնինի խաղը պատմական ծագում ունի, այն առաջ է եկել պատմական զարգացման որոշակի փուլում, երբ դրվել է մեծերի աշխարհի և երեխայի աշխարհի բաժանման հիմքը, որի արդյունքում երեխաները դուրս են մղվել աշխատանքի պրոցեսից [16]: Տարանջատվում է մանկական աշխարհը մեծերի աշխարհից և վերջինս երեխայի համար դառնում է իդեալ, և երեխաները իրենց խաղի մեջ այդ աշխարհը սիմվոլիկ իրականություն են դարձնում: Չէ որ երեխայի մեջ կյանք մտնելու, աշխարհը ճանաչելու իրենց տեղն ունենալու ակտիվ տենդենց կա, որի հիման վրա էլ ծագում է խաղը: Ուշագրավ է նաև Պիաժեի ու Կոֆկայի «երկու աշխարհի» տեսությունը: Ըստ նրանց երեխան երկու աշխարհ ունի՝ իրական աշխարհ (ռեալ մեծահասակների աշխարհ, ուր երեխան ներգրավվում է 6-7 տարեկանից) և խաղային աշխարհ, որը պատկանում է երեխային: Եվ քանի որ երեխայի հնարավորությունները, կարողությունները զարգացած չեն, նա այլ ելք չունի քան խաղային աշխարհում ապրելը, այն երեխայի ստեղծած երևակայական աշխարհն է, ոչ ռեալ, ոչ իրական, որը, գուցե և նախապատրաստում է, օգնում է երեխային անցնելու իրական մեծերի աշխարհ [8]:

Նախադպրոցական տարիքում առաջատարը խաղային գործունեությունն է, և ոչ թե նրա համար, որ այն առավել հաճախ է կրկնվում երեխայի զարգացման այս փուլում, հակառակը, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխան օրվա ընթացքում մոտավորապես երեք ժամ է տրամադրում խաղին: Նշանակում է խնդիրը

քանակական անձերի մեջ չէ, որ զարգացնում է խաղը նախադպրոցական տարիքում, պարզապես խաղի զարգացմամբ տեղի են ունենում գլխավոր փոփոխություններ երեխայի հոգեկանում և նրանում զարգանում են հիմնական այն գործընթացները, որոնք նախապատրաստում են երեխային իր զարգացման նոր, առավել բարձր աստիճանի [5, 48]:

Նախադպրոցական մանկությունը երեխայի կյանքի մի մեծ հատված է: Կյանքի պայմաններն այս ընթացքում կտրուկ ընդլայնվում են: Երեխան իր համար բացահայտում է մարդկային փոխհարաբերությունների աշխարհը, գործունեության տարբեր բնագավառները և մարդկանց շփման, հաղորդակցման ֆունկցիաները:

Երեխան ընտրելով և կատարելով որոշակի դեր, ունի այդ կերպարի և նրան համապատասխան գործողությունների մտապատկերը: Խաղի պատկերացումային պլանը այնքան կարևոր է, որ առանց նրա խաղը պարզապես հնարավոր չէ [6, 16]: Եվ չնայած կյանքը խաղում ընթանում է ընդհանրական ձևով, այն երեխայի համար դառնում է իրական կյանք:

Դերային խաղերի կազմակերպման կարևոր հիմք է հանդիսանում նաև երեխայի խոսքը, այն էապես զարգանում է, սկսում է օգտագործել բարդ նախադասություններ: Զարգանում են խոսքի հաղորդակցական և կարգավորող գործոնները, և երեխան խոսքի միջոցով ևս կարող է ազատ շփվել մեծահասակների և հասակակիցների հետ:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ազգային խաղերի միջոցով նախադպրոցականը ծանոթանում է հայ ազգային մշակութային, որտեղ միասին ներկայանում են խաղը, երգը, պարը, ծիսական գործողությունները: Դրանք իրենց մեջ ընդգրկում են պատմական բոլոր ժամանակաշրջանների երևույթներ, հագեցած են հումորով և կատակներով, ուրախ պահերով և շուտասելուկներով: Ազգային խաղերի հիմքում ընկած են ազգային մշակույթի հարուստ ձևերը: Շատ խաղերի բովանդակությունը ներառում է հայ ժողովրդի ծիսակատարություններն ու աշխատանքային գործունեությունը:

Ելնելով ազգային խաղերի նշված կրթադաստիարակչական յուրահատկություններից՝ ես իմ գործնական աշխատանքում լայնորեն կիրառում եմ հետևյալ ազգային խաղերը.

Թու—թու

Խաղատեղը պետք է ընտրել այնպիսի մի տեղ, ուր ծառեր կան: Ամեն մեկը կանգնում է մի ծառի մոտ, բացի մեկից, որը կանգնում է մեջտեղում:

Այս վերջինիս պարտականությունն է՝ խաղացողներից մեկն ու մեկի տեղը գրավել, երբ նրանք միմյանց հետ փոխում են տեղերը: Եթե վազողը կարողացավ անվտանգ անցնել ու ասել՝ «թու-թու», ապա նրանք ազատվում են և երեք անգամ հարվածում ծառին:

Դաշտի չոբան

Խաղացողներից մեկը լինում է չոբան, մյուսը՝ գայլ: Երեխաները գառներն են: Վերջիններս բռնում են միմյանց և կանգնում չոբանի հետևում: Չոբանն աշխատում է պաշտպանել իր գառներին: Գայլը մոտենամ է չոբանին և ասում.

— Սարի գելն եմ, կտանեմ:

Չոբանը պատասխանում է.

— Դաշտի չոբանն եմ, չեմ տա:

Գայլը սա լսելուց հետո աշխատում է տանել գառներին, իսկ չոբանը պաշտպանում է: Եթե գայլին հաջողվում է ձեռքով դիպչել մի երեխա — գառնուկի, ապա նրան տանում է իր մոտ: Երկու-երեք գառ բռնվելուց հետո ընտրվում են նոր չոբան և գայլ:

Կանոնները

- Գայլը կարող է տանել գառներին միայն չոբանի «չեմ տա» ասելուց հետո:
- Ում դիպչում է գայլի ձեռքը, նա էլ համարվում է բռնված գառնուկ:

Պուտ—պուտ

Երեխաները կազմում են շրջան և նստում քարերի (աթոռակների) վրա: Մեկը կանգնում է շրջանի ներսում և աշխատում խփել նստած երեխաներից մեկին: Ում հարվածում է, նա վեր է կենում տեղից և վազում խփողի հակառակ ուղղությամբ: Մեկ անգամ շրջանը շրջանցելուց հետո երկրորդ անգամ շուտ նստել հասցնողը տեղավորվում է ազատ քարին, իսկ մյուսը մնում է առանց տեղի և խաղն սկսում ինքը:

Կանոնները

1. Պետք է հարվածել երեխաներից մեկի ուսին:
2. Վազել հակառակ ուղղությամբ:
3. Սկզբում կարելի է շրջանցել մեկ, իսկ հետո՝ երկու-երեք անգամ (նայած երեխաների ֆիզիկական պատրաստվածությանը, նրանց թվին և տարիքին):

Բռնոցի

Երեխաներն ազատ կանգնում են հրապարակում: Խաղավարը (բռնողը), որին նշանակում է դաստիարակը կամ ընտրում են երեխաները, կանգնում է հրապարակի կենտրոնում: Դաստիարակն ասում է. «Մեկ, երկու, երեք, բռնի՛ր»: Այդ ազդանշանով բոլոր երեխաները վազվզում են հրապարակում՝ խուսափելով բռնողից, որն աշխատում է հասնել որևէ երեխայի և ձեռքով դիպչել նրան: Այն երեխան, որին բռնողը դիպել է, ժամանակավորապես դուրս է գալիս խաղից: Խաղն ավարտվում է, երբ բռնողը կարողանում է բռնել 3-4 երեխայի: Այնուհետև ընտրվում է նոր խաղավար (բռնող), և խաղը կրկնվում է 4-5 անգամ:

Կանոնները

1. Պետք է վազել միայն դաստիարակի «Մեկ, երկու, երեք, վազի՛ր» ազդանշանից հետո:
2. Այն երեխան, որին դիպել է բռնողը, պետք է ժամանակավորապես դուրս գա խաղից: Նոր խաղավար ընտրելիս բռնված երեխաները նորից մտնում են խաղի մեջ:

Անկյունիկներ

Երեխաները կանգնում են ծառերի մոտ կամ գետնին գծված շրջանների մեջ: Երեխաներից մեկը կանգնում է կենտրոնում: Նա մոտենում է որևէ երեխայի և ասում. «Մկնի՛կ, մկնի՛կ, տու՛ր ինձ քո անկյունը»: Այդ ժամանակ բոլոր երեխաները վազում են, որպեսզի ընկերների հետ փոխեն տեղերը:

Խաղավարն աշխատում է զբաղեցնել որևէ մեկի տեղը: Եթե դա նրան հաջողվում է, ապա խաղավարը դառնում է այն երեխան, որը տեղ չունի: Եթե խաղավարը երկար ժամանակ չի կարողանում անկյուն գրավել, դաստիարակն ասում է. «Կատուն»: Այդ ազդանշանով բոլոր խաղացողները միաժամանակ փոխում են տեղերը, իսկ խաղավարն աշխատում է զբաղեցնել որևէ մեկի անկյունը:

Կանոնները

1. Երեխաները պետք է անընդհատ փոխեն իրենց տեղերը:
2. Այն երեխան, որն անկյուն չունի, դառնում է խաղավար:

Զույգերով վազք

Երեխաները կանգնում են հրապարակի մի կողմում գծված սահմանագծի մոտ՝ զույգ գծերով օղակ կազմած: Սահմնանագծից 12-15 քայլ հեռավորության վրա յուրաքանչյուր օղակի դիմաց դրվում են բուլավաներ, աթոռ, լցրած գնդակ, կանգնակ՝ վրան ամրացված դրոշակ: Դաստիարակի ազդանշանով օղակի դիմաց կանգնած առաջին զույգերը միմյանց ձեռք բռնած վազում են դեպի դիմացի առարկան, շրջանցում, վերադառնում. կանգնում իրենց օղակի վերջում: Հաջորդ ազդանշանով վազում է երկրորդ զույգը և այդպես, մինչև բոլոր երեխասերը կատարում են հանձնարարությունը:

- Վազել միայն դաստիարակի ազդանշանով (հարված թմբուկին, դրոշակի իջեցում):
- Սահմանագծից առաջ չանցնել:
- Վազելիս ձեռքերը բաց չթողնել:

Հատակին չմնաս (Ծիտը ծառին)

Հրապարակի կամ դահլիճի տարբեր մասերում՝ պատերի մոտ դրվում Են աթոռներ, որոնց բարձրությունը 25-30 սմ է: Այդ աթոռակների վրա պետք է բարձրանան երեխաները (կարող են լինել նստարաններ, արկղներ, աստիճաններ, տախտակներ): Երեխաներից մեկը լինում է բռնողը, նրա թևին կապում են կարմիր

ժապավեն: Դաստիարակի ազդանշանով (հարված թմբուկին, ծափ) երեխաները վազում են, ցրվում են հրապարակի տարբեր մասերում, կատարում տարբեր շարժումներ (երաժշտության տակ ռիթմիկ քայլք, վազք, յուրաքանչյուր Երեխա իր ցանկացած շարժումը կարող է կատարել): Բռնողը նույն պես կատարում է այդ շարժումները:

Դաստիարակի «Բռնիր» ազդանշանով բոլորը վազում են դեպի աթոռակները և բարձրանում դրանց վրա, իսկ բռնողը աշխատում է խփել երեխաներին նախքան աթոռակի վրա բարձրանալը: Ում որ բռնում է, նա ժամանակավորոպես դուրս է գալիս խաղից: Խաղը անգամ կրկնելուց հետո հաշվում են բռնված երեխաներին, ընտրվում է նոր բռնող, խփված երեխաները մասնակցում Են խաղին և խաղը նույնությամբ կրկնվում է: Խաղը տևում է 6-8 րոպե:

Կանոնները

- Երեխաներին պետք է բռնել միայն «Բռնիր» ազդանշանից հետո:
- Երեխաները կարող են բարձրանալ ցանկացած աթոռակի վրա միայն «Բռնիր» ազդանշանից հետո:

Աղվեսը հավանոցում

Հրապարակի մի մասում գծվում է հավանոցը (նրա չափը կախված է խաղացողների թվից), որի մեջ դրվում են նստարաններ (դա աթոռն է): Հավերը թառում են (կանգնում են նստարաններին): Հակառակ կողմում գծվում են «աղվեսի բույնը»՝ հավաբնից 10-12 քայլ հեռավորությամբ: Ազատ տարածությունը բակն է: Երեխաներից մեկին դաստիարակը նշանակում է «աղվես», մյուսները լինում են «հավեր»: Նրանք քայլում և վազում են բակում, կուտ ուտում, թափահարում թևերը:

Դաստիարակի «աղվեսը» ազդանշանով հավերը վազում են դեպի հավանոց և թառում, իսկ «աղվեսը» աշխատոևմ է նախքան թառելը բռնել նրանց: Աղվեսը բռնված հավին տանում է իր բույնը: Հավերը ցատկելով իջնում են թառից և խաղը նույնությամբ շարունակվում է: Խաղն ավարտվում է, երբ աղվեսը բռնում է երկու-երեք հավ: Կարելի է աղվեսին փոխել և խաղը շարունակել: Խաղը կրկնվում է 4-5 անգամ:

Կանոնները

1. Աղվեսը կարող է բռնել հավերին, իսկ հավերը կարող են թառել միայն դաստիարակի ազդանշանով:

2. Բռնված երեխան /հավը/ ժամանակավորապես դուրս է գալիս խաղից /մինչև աղվեսին փոխելը/:

Ներկայացված խաղերը հիմնականում սոցիալական հմտությունների՝ հասակակիցների հետ շփման, հաղորդակցության, համագործակցության կարողությունների զարգացման լավ հնարավորություն են տալիս: Դրանցից յուրաքանչյուրն ունի հստակ նպատակ, և երբ հասնում էինք մեր նպատակին, պարզ էր դառնում, որ տվյալ խաղն արդեն յուրացված է: Որքան էլ ժամանակատար ու բարդ էր աշխատանքը, չի կարելի չնշել, որ բոլորի կողմից արվել է սիրով, բարեխիղճ, անտրտունջ: Եվ, ամենակարևորը, երեխաների ընտանիքները, բացի մեր առաջարկած խաղերից, մեզ են տրամադրել այլ խաղեր՝ համալրելով ազգային խաղերի շտեմարանը:

Մանկական ճվիկներ՝ «Ճվիկ, ճվիկ, ճկույթիկ», «Ճվիկ, ճվիկ, Ակնա ճվիկ»

— Ճվի՞կ, ճվի՞կ, ճկութիկ,

Երկեն տաճիկ, բարակ լաճիկ,

Ճվի՞կ, ճվի՞կ, ճկութիկ,

Ճվիկը թռավ մտավ …-ի ծոցիկ:

— Ճվիկ, ճվիկ, Ակնա ճվիկ,

Ճվիկ գնաց հեռու քաղաք,

Բուրդ բերեց, բամբակ բերեց,

Թել մանենք, գլխարկ գործենք,

Մեր …-ի գլխին կործենք:

Թը՞ռռ ճվիկ:

Նպատակը՝ ազգային մշակույթի փոխանցում, շփման, հաղորդակցության, համագործակցության կարողությունների զարգացում:

— Ծափիկ-ծափիկ, ծափ նաներով,

Փլավ կեփենք պուտուկներով,

Գդալ չկա, շերեփ չկա,

Մենք էլ կուտենք մատիկներով:

— Ըստում, ընդում,

Դեղին դդում,

Գցեմ, բռնեմ,

Գտնեմ ուտեմ,

Պապոնց տանը

Տիտիկ անեմ:

Զունն էկավ քուլա — քուլա,

Պապն ասեց. — Դանեն ու՞ր ա:

Գելն ասեց. – Հրես՝ տարա:

Շունն ասեց. – Հրես՝ բերի,

Պոչիկ թուլա,

Մեղրը կերար, պուլիկս ո՞ւր ա:

— Ընկավ թոնիր:

— Բա չհանեցի՞ր:

— Վախեցա մտնեմ:

— Դե փախի, գնա:

— Ասեմ, չասեմ,

Լավ բան ասեմ,

Քթիդ խփեմ,

Քեզի խաբեմ:

— Ըստում, ընդում,

Դեղին դդում,

Գցեմ, բռնեմ,

Գտնեմ ուտեմ,

Պապոնց տանը

Տիտիկ անեմ:

— Խնոցի, հարեցի,

Թանը հանի, քամեցի,

Սրսուռ չորթան շինեցի

Եղով ապուր եփեցի,

Պետոն ուզեց՝ տփեցի:

Նանի – նանի

ա. Խաղում են երկուսով: Խաղացողներից մեկը ձեռքերի մատները մի փոքր իրարից հեռացրած, ձեռքերի մատների ծայրերը պահում են իրար դիմաց և հպում իրար՝ պատկերելով թոնրի ձև: Մյուսը, ցուցամատը դնելով դիմացի խաղընկերոջ ճկույթների միացման տեղին, ասում է.

— Նանի, նանի, կրակ տուր:

— Ելի վերի թաղը (թարեքը, թառը):

Այսպես կրկնվում է՝ բարձրանալով մինչև ցուցամատ: Հասնելով ցուցամատին (թոնրի շրթին), ասում է.

— Նանի, նանի, որ կաթը դնեմ թոնիրը՝ տաքանա, հո շուն չկա՞:

— Չկա, չկա:

Խաղացողը ձեռքը՝ իբրև կաթ, իջեցնում է «թոնիրը»: Թոնիրը ցուցադրող երեխան արագ փակում է թոնիրը՝ ասելով.

— Հաֆ, հաֆ, հաֆ…

բ. Նույն խաղում են, վերջում ասելով.

— Հաց որ թխեմ՝ հո շուն չկա՞:

— Չկա, չկա:

«Հաց թխողը» ծափ է տալիս և աջ ձեռքով «հացը խփում» թոնրի աջ շրթին: Նույնը կատարում է՝ խփելով ձախ շրթին: «Թոնիրը», որսալով հարմար պահ, արագ փակվում է՝ բռնելով խաղացողի ձեռքը և ասում.

— Հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ:

— Ծիլ, ծիլ, ծիլծիլա,

Ելեք, տեսեք՝ ո՞վ կուգա,

Պստի պապը տուն կուգա,

Չամիչ ուտելեն կուգա,

Ճանճը տզզալեն կուգա,

Ճնճուղը թը՛ռնելեն կուգա:

— Ճիվո՛ւ, ճիվո՛ւ, ճնճղիկ,

Թռավ, գնաց արվու եզրիկ,

Կերավ կտիկ, խմեց ջրիկ,

Թռա՛վ, մտավ Մարոյի ծոցիկ:

Նպատակ՝ խոսքի զարգացում, շփման, հաղորդակցության, համագործակցության կարողությունների զարգացում:

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԲԱՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ-ԿՈՆՊԵԿՏ

ԹԵՄԱ «ՄԵՆՔ ԱՌՈՂՋ ԵՆՔ ՖԻԶԻԿԱՊԵՍ և ՀՈԳԵՊԵՍ»

Պարապմունքի խնդիրները.

1. Կատարել ընդհանուր զարգացմանը նպաստող վարժություններ /դրոշակներով/,

2. Ամրապնդել սողալու, ցատկելու, հավասարակշռությունը պահելու ընդունակությունը, պարկի միջով անցնելու կարողությունը, ճարպկություն, տարածության մեջ արագ կողմնորոշվելու ունակություն:

Անհրաժեշտ գույք և պարագաներ.

1. Գունավոր դրոշակներ երեխաների կրկնակի թվով,
2. Մարմնամարզական նստարան,
3. Պարկ 3 մ. -ոց,
4. Օղակներ միջին չափի /5 հատ/,
5. Դափ /1 հատ/:

Պարապմունքի ընթացքը

Ներգրավիչ մաս.

Շարվել մեկ շարքով, քայլք խրոխտ, քայլք թաթերի վրա, քայլք կրունկների վրա /ձեռքերը ծոծրակին/, քայլք անկյունագծով, քայլք զիգզագաձև, կից քայլք:

Ցատք՝ ոտքից ոտք, զույգ ոտքով, ձեռքերը կիսաբռունցք՝ երաժշտության համապատասխան արագ վազք, դանդաղ վազք, քայլել՝ կատարելով շնչառական վարժություններ, դաստիարակի հրահանգով վերցնել դրոշներ, կազմել եռյակներ:

Հիմնական մաս

Վարժ. 1. - ԵԴ՝ կանգնել ոտքերը միասին, դրոշները ներքև բռնած

1-հաշվին՝ գլուխը թեքում ենք աջ,

2-հաշվին՝ ուղղում,

3-հաշվին՝ գլուխը թեքում ենք ձախ,

4-հաշվին՝ ընդունում ենք ելման դրություն /6-8 անգամ/։

Վարժ. 2. - ԵԴ՝ կանգնել ոտքերը մի քիչ կողմ զատած, ձեռքերը ցած,

1-հաշվին՝ ձեռքերը տարածել կողմ,

2-հաշվին՝ ձեռքերը բարձրացնել վեր,

3-հաշվին՝ թափահարել դրոշակները,

4-հաշվին՝ ընդունում ենք ելման դրություն /4-6 անգամ/։

Վարժ. 3. - ԵԴ՝ ոտքերը ուսերի լայնությամբ զատած, աջ ձեռքը գոտկատեղում, ձախը պահած ներքև։

1-հաշվին՝ թեքվում ենք աջ, ձախ ձեռքը տանում ենք կողմ,

2-հաշվին՝ ընդունում ենք ելման դրություն /6-8 անգամ/։

Վարժ. 4. - ԵԴ՝ ոտքերը միասին, դրոշները պահած ցած։

1-հաշվին՝ դրոշները պահել կրծքի մոտ,

2-հաշվին՝ կքանստում ենք,

3-հաշվին՝ դրոշների փայտիկով հարվածում ենք հատակին,

4-հաշվին՝ ընդունում ենք ելման դրություն /8-10 անգամ/։

Վարժ. 5. - ԵԴ՝ հիմնական կանգ, դրոշները պահած ներքևում։

1-հաշվին՝ ձեռքերը տարածել կողմ,

2-հաշվին՝ աջ ոտքը տանում ենք ետ,

3-հաշվին՝ ոտքերը միացնել,

4-հաշվին՝ ընդունում ենք ելման դրություն /8-10 անգամ/։

Վարժ. 6. - ԵԴ՝ հիմնական կանգ, դրոշները պահած ներքևում։

1-հաշվին՝ ցատկով բացել ոտքերը, ձեռքերը՝ կողմ,

2-հաշվին՝ ցատկով միացնել ձեռքերը և ոտքերը,

Տեղում քայլով մարշ, դարձումներ աջ և ձախ, դաստիարակիհչահանգով եռաշարքից դառնալ մեկ շարք։

1. Սողանցել մարմնամարզական նստարանի վրայով։
2. Չորեքթաթ անցնել պարկի միջով։
3. Կատարել հեռացատկ զույգ ոտքերով իրարից հեռու դրված օղակների միջով։

Խաղալ «Դափովզարկ» շարժախաղը, նկարագր. ՝ Ռ. Առաքելյանի։

Խաղի կանոններն են՝ շրջան կազմած երեխաների մեջտեղումկանգնում է խաղավար երեխան: Հնչում է երաժշտություն, խաղավար երեխան ցատկելով և զարկելով դափին անցնում է երեխաների մոտով, որտեղ դադարում է երժշտությունը, այնտեղ կանգնում է խաղավար երեխան: Եվ դափի աջ և ձախ կողմում գտնվո երկու երեխաները կանգնում են և հրահանգի հետ միասին շրջանի հետևով վազում են հակառակ ուղղությամբ: Հաղթում է այն երեխան, ով շուտ հասնում և խփում է ձեռքով դափին: Խաղը կրկնվում է 3-4 անգամ:

Եզրափակիչ մաս

Հագիստ քայլք միմյանց հետևից:

Եզրակացություն

1 . Ընդհանուր զարգացնող վարժությունները խթան հանդիսացան երեխաների առողջության,ճիշտ կեցվածքի ձևավորման գործընթացին:

2. Մշակվեցին շարժողական հիմնական ընդունակությունները. արագաշարժություն, ուժ, դիմնացկունություն, ճկունություն:

3. Նախադպրոցականների մոտ խաղերի միջոցով ձևավորվեց պատասխանատվություն, ընկերասիրություն, փոխօգնություն և այլ հատկանիշների դաստիարակումը:

Խաղերի միջոցով նաև զարգացավ նրանց ուշադրությունը, համարձակությունը, ինքնավստահությունը, հնարամտությունը, փոխօգնության, ընկերասիրության և համագործակցության կարևորությունը:

Երեխաները ցուցաբերեցին ակտիվ մասնակցություն, մեծ ոգևորություն: Շարժախաղերը հիմնականում անցան հուզականությամբ, ինչը նպաստեց երեխաների շարժողական ակտիվության բարձրացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթության հիմնական նպատակը՝ ձևավորել հասարակության համար պիտանի անձնավորություն, որը կունենա իր որոշակի տեղն ու դերը հասարակության մեջ: Իսկ դրա հիմքերը դրվում են նախադպրոցական տարիքում: Այդ նպատակով հարկավոր է նպաստել նախադպրոցականների ճանաչողական գործունեության իրականացմանը՝ նախադպրոցական կրթությունը դարձնելով հետաքրքիր ու հասանելի նրանց համար: Այդ գործընթացում նախադպրոցական հաստատություններում դաստիարակներին օգնում են խաղերը: Դրանց էությունն այն է, որ ուսումնական գործընթացն իրականացվում է խաղի ձևով, որում նախադպրոցականը դառնում է բոլոր գործընթացների սուբյեկտ, որն ունակ է ինքնուրույն յուրացնելու անհրաժեշտ գիտելիքներ, փաստեր ու տեղեկություններ:

Խաղ այնպիսի նպատակաուղղված գործունեություն է, երբ յուրաքանչյուր երեխա դառնում է գլխավոր խնդրի լուծման սուբյեկտ և հանդես բերում վարքագծի համապատասխան դրսևորումներ հաղթելու նպատակով:

Այսպիսով, ուսումնասիրելով թեմային նվիրված եղած գիտամեթոդական գրականությունը և կատարելով փորձարարական աշխատանքներ Վանաձորի թիվ 31 մանկապարտեզ ՀՈԱԿ-ում՝ եկանք այն եզրահանգման, որ խաղը որպես նախադպրոցականների առաջատար գործունեություն շատ մեծ նշանակություն ունի նրա զարգացման գործում:

Խաղն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացմանը, օրինաչափորեն նպաստում է նրանց հոգեկանի զարգացմանը, հուզազգացմունքային ոլորտի հարստացմանը, հասակակիցների հետ փոխհարաբերությունների հաստատմանը, սեփական սոցիալական փորձի ձեռքբերմանը:

Խաղի մեջ երեխան ակտիվ է, երևակայում է, պատկերացնում է, ստեղծագործում է, մտածում է, ստեղծելով կերպարներ, որոնք դուրս են բերվում գիտակցություն և որոնք ծառայում են որպես հուզական ոլորտի արտահայտման միջոց, իսկ բուն խաղը ծառայում է երեխայի զգացմունքների մարմնական և հոգեկան արտահայտման նպատակներին:

Խաղի ճիշտ կազմակերպման և ղեկավարման համար դաստիարակը պետք է տիրապետի գործնական հմտությունների։ Խաղի կազմակերպումը ներառում է ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝ նպատակ, պլանավորում, արդյունք, որոնք, ձևավորվելով խաղային գործունեության ընթացքում, տեղափոխվում են գործունեության այլ ձևեր։ Խաղը պահանջում է ամենայն ուշադրություն, լուրջ և նրբանկատ վերաբերմունք։

Խաղը նախադպրոցականի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է և նրա հետագա զարգացման հիմնական գրավականը։ Միավորելով խաղային գործունեության սուբյեկտիվ արժեքը և զարգացնող օբյեկտիվ նշանակությունը, կարելի է եզրակացնել, որ խաղը նախադպրոցական տարիքի երեխաների կյանքի և գործունեության կազմակերպման ամենահարմար ձևն է։

Խաղը ստեղծագործական գործունեություն է, քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը։ Խաղի ընթացքում են լավագույնս դրսևորվում, հետևաբար և ախտորոշվում երեխայի ժառանգական նախադրյալները, հակումներն ու հետաքրքրությունները։

Ամփոփելով խաղային գործունեության առանձնահատկությունները, կարելի է համարձակորեն արձանագրել, որ խաղը, հանդես գալով որպես նախադպրոցական տարիքի երեխաների առաջատար գործունեություն, նախադպրոցահասակ երեխաների զարգացման և դաստիարակության լավագույն միջոցն է, նրանց կյանքի և գործունեության կազմակերպման հիմանական ձևը։ Խաղի վերաբերյալ հոգեբանամանկավարժական գրականության մեջ գոյություն ունեն նաև այլընտրանքային մոտեցումներ, որոնց բազմակողմանի քննարկումը, կարծում ենք, կօգնի խաղը դիտարկելու տարբեր տեսանկյուններից և ավելի լավ պատկերացնելու խաղային գործունեության բուն էությունը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղդասարյան Ա. «Խաղալով սովորեցնենք»: «Նախաշավիղ» Գիտամեթոդական հանդես, Երևան, 2011, №6, էջ 28 - 31:
2. Բաղդասարյան Ա. «Խաղ – պարապմունքները՝ որպես կրտսեր տարիքի երեխաների խոսքի զարգացման միջոց»: «Նախաշավիղ», Երևան, 2012, №6, էջ 35 – 43:
3. Սմբատյան Լ. «Երեխաների խաղային գործունեության զարգացման հոգեբանամանկավարժական հիմունքները»: «Նախաշավիղ», Երևան, 2007, №5-6, էջ 90– 99:
4. Абылгазиева И.И., Ильина И. В., Земцов Д. И., Федосеев А. И., Инновационные технологии в образовании выпуск №2. - М., 2011. - 145 с.
5. Вайнер М.Э. Игровые технологии коррекции поведения дошкольников: Учеб. Пособие. - М., 2004. – 95 с.
6. Глумова С.Н. Дидактическая игра как средство развития познавательного интереса младших школьников на уроках математики. - Белгород, 2012, - 22 с.
7. Козлова С.А., Куликова Т.А. Дошкольная педагогика. - М., 2000. - 406 с.
8. Коффка К. Основы психологического развития. - М.-Л., 1934.
9. Крупская, Н.К. Роль игры в детском саду. – М.,1980. – С. 128-129.
10. Кукушкин В.С. Педагогические технологии: Учебное пособие. Ростов н/Д., 2002.
11. Леонтьев А.Н. Психологические основы дошкольной игры. - М., – 1996. – №3. – С. 19–32.
12. Никитин Б.П. Интеллектуальные игры. – Изд. 6-е, испр. и доп. - Обнинск, 2009. –216 с.
13. Новосёлова С.Л. Игра дошкольника. – М., 1989. - 286 с.
14. Селевко Г.К. Педагогические технологии на основе активизации, интенсификации и эффективности управления УВП. – М., 2005. – С. 40 – 50.
15. Ушинский К.Д. Избр. Соч. Т1. - М., 1953. – 589 с.
16. Эльконин Д.Б. Психическое развитие в детских возрастах. - М., 1997. – 416 с.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՄՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԳԹ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՄԻՐԱԲՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

Ներածություն

Հետազոտության համար ընտրել եմ, <<**Խաղը որպես նախադպրոցական առաջատար գործունեություն**>> թեման, քանի որ խաղը կարևոր տեղ է գրավում երեխայի կյանքում, համարվում է նրա առաջատար գործունեությունը: Հաջողված խաղային գործունեությունն անհրաժեշտ է անհատական մտավոր գործընթացների և սոցիալական փորձի յուրացման, գործառույթների զարգացման համար: Նախադպրոցական տարիքում փոխվում է մեծահասակների հետ երեխայի փոխհարաբերությունների սոցիալական իրավիճակը, երեխան բացահայտում է մեծերի աշխարհը և սկսում է ձգտել անկախության, նա իր կարողությունների ուժով դեռ չի կարող մասնակցել մեծահասակների կյանքին, հետևաբար խաղալը փոքրիկի համար դառնում է առաջատար գործունեություն: Խաղում արտացոլվորմ են մարդկային հարաբերությունների նորմերն ու ձևերը: Խաղում իդեալական ձևով վերարտադրվում են մարդկային գործունեության իմաստը և այն հարաբերությունների համակարգը, որոնցում գտնվում են մեծահասակներն իրենց իրական կյանքում: Խաղը մեծ նշանակորություն ունի երեխայի անհատական զարգացման համար: Ասել է թե . երեխան զարգանում է խաղում ու խաղի միջոցով և, ինչքան էլ որ ուսոումնասիրված լինի խաղային գործունեությունը, այն միևնույն է **արդիական է**, քանզի յուրաքանչյուր փոքրիկ ուրույն ձևով է ինքնադրսևորվում խաղի մեջ: Եվ հենց սրանում է կայանում ընտրածս թեմայի **արդիականությունը** առավել ևս հիմա, երբ մեր իրականության մեջ նկատելի է, որ փոքրիկների ակտիվ շարժախաղերն իրենց տեղը զիջում են համակարգչային խաղերին: Այսօր ավելի ու ավելի հաճախ կարելի է տեսնել, որ նախադպրոցականներն իրենց ասոցացնում են ոչ թե իրական աշխարհի հերոսների , այլ կախարդների, մուտանտների, զոմբիների և այլնի հետ: Ըստ իմ դիտարկումների երեխաներն սկսել են ավելի հազվադեպ խաղալ այնպիսի կենսական իրավիճակներ, ինչպես <<Ընտանիք>>, <<Այց բժշկին>>, <<Վարսավիրանոց>> և այլն, ժամանակակից երեխաների խաղերում գերակայում են անիրական աշխարհի հերոսները: Սա անկասկած, իր բացասական հետևանքն է թողնում երեխայի մտավոր և հոգեբանական զարգացման վրա:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել խաղերի թեմաներին վերաբերող գիտական, գիտամեթոդական գրականությունը, այլոց փորձը տեսակները, կատարել եզրահանգումներ:

Նպատակից ելնելով առաջ եմ քաշել հետևյալ ***խնդիրները.***

1. Ուսումնասիրել խաղերի տեսակները
2. Նկարագրել խաղերի կիրառման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:
3. Բացահայտել՝ ժամանակի ընթացքում խաղերն ի՞նչ փոփոխության են ենթարկվել, կատարել հետազոտական աշխատանք
4. Իրականացնել դիդակտիկ խաղերի շարք, կատարել եզրահանգումներ:

Կառուցվածքը

Սույն հետազոտական աշխատանքը բաղկացած է հետևյալ մասերից.

4 գլուխ և 2 ենթագլուխ, ներածական մաս, բովանդակություն, հետազոտական մաս, փորձարարական մաս, գրականության ցանկ, ընդհանուր ծավալը կազմում է 21 էջ

Գլուխ 1

Խաղի դերը երեխայի կյանքում

<<Ուշադիր դիտեք, թե ինչ դեր է գրավում խաղը երեխայի կյանքում… Նրա համար խաղն ամենալուրջ գործն է : Խաղի ժամանակ երեխաների առջև բացվում են անձի ստեղծագործկան ընդունակությունները: Առանց դրանց չկա և չի կարող լինել լիարժեք մտավոր զարգացում: Խաղը մի հսկայական լուսավոր պատուհան է , որի միջով երեխայի հոգևոր աշխարհ են հորդում շրջակա աշխարհի մասին պատկերացումները և հասկացությունները: Խաղերը երեխայի ջանասիրությունն ու հետաքրքրությունը վառող կայծերն են: Երեխայի հոգեկան աշխարհը լիարժեք է միայն այն ժամանակ, երբ նա ապրում է խաղերի, հեքիաթների, երաժշտության, երևակայության ու ստեղծագործական աշխարհում>>: [5;64]

Խաղի վերաբերյալ տարբեր տեսություններ կան, մի մասը գտնում է , որ խաղն ուղղակի հաճույք է, զվարճանք, ուրախություն, ինչն ինքնին շատ կարևոր է և երեխային հնարավորություն է տալիս ուղղակի լիցքաթափվել, (այս տեսության մեջ ինչ որ չափով ճշմարտություն կա, որովհետև խաղի միջոցով երեխան իրոք լիցքաթափվում է): խաղի միջոցով տեղի է ունենում սոցիալականացում. երեխան խաղալիքի միջոցով մտնում է մեծահասակների բարդ աշխարհ և կարողանում է հասկանալ, որ այդ աշխարհում կան տարբեր մարդիկ և տարբեր մարդկանց հետ տարբեր հարաբերություններ պետք է հաստատել:

Խաղի օգնությամբ կարելի է զարգացնել երեխայի ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը, երևակայությունը, այսինքն այն որակները, որոնք անհրաժեշտ են հետագա կյանքի համար: Տեղին է հիշել Մակարենկոյի խոսքերը <<Այսօրվա լավ խաղացողը, վաղվա լավ աշխատողն է>>:

Խաղը գործունեության այն ձևերից է , որն սկսվում է մանկության տարիներից և ուղեկցում մեզ ողջ կյանքի ընթացքում: Հայտնի է, որ նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեությունը խաղն է , քանի որ խաղի միջոցով տեղի են ունենում երեխայի հոգեկան զարգացումը , ուսուցումն ու դաստիարակությունը: Խաղում դրսևորվում է երեխայի վերաբերմունքը շրջապատող աշխարհի, մարդկանց, առարկաների և երևույթների նկատմամբ:

Երեխայի անհանգստությունը, վախերը, չիրականացված ցանկությունները նույնպես դրսևորվում են նրա խաղերում: Խաղը նպաստում է նախադպրոցականի ճանաչողական , հուզակամային և բարոյական զարգացմանը , նորմերի յուրացմանը, հաղորդակցական հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը: Կարելի է ասել, որ երեխայի թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան առաձնահատկությունները խորապես պայմանավորված են խաղի բնույթով: Խաղալով երեխան ձեռք է բերում նոր գիտելիքներ, հմտություններ, կարողություններ՝ երբեմն անգամ այդ մասին չենթադրելով: Երեխաները խաղի մեջ այլ նպատակ, քան խաղալը, չեն դնում, բայց խաղի ընթացքում տեղի է ունենում զարգացում, այսինքն ոչ միայն գիտելիքների կուտակում, այլ նաև վարքի, բնավորության ձևավորում, այսինքն տեղի է ունենում անձի ամբողջական ձևավորում: Դեռ անցած դարի կեսերին Ուշինսկին խաղի նշանակության մասին արտահայտել է այնպիսի մտքեր, որոնք չեն կորցրել իրենց արժեքն այսօր: Նա գտնում էր. <<Խաղը թույլ է տալիս տեսնել ու ճանաչել երեխաների հոգին , այն նպաստում է մանուկների դաստիարակությանն ու զարգացմանը, խաղի մեջ երեխան փորձում է իր ուժերը, դառնում ինքնուրույն: Այստեղ երեխան յուրահատուկ ձևով վերարտադրում է այն, ինչը տեսնում է շրջապատում >> [10; 187]

Հետազոտության ընթացքում եկել եմ այն եզրակացության , որ էական տարբերություններ կան այն երեխաների միջև, որոնք խաղացել են , այսինքն հնարավորություն են ունեցել խաղալ, ներգրավվել խաղերի մեջ, խաղալիքներ ունենալու հնարավորություն են ունեցել (սա ևս շատ կարևոր է) և այն երեխաների միջև, որոնք կտրված են եղել խաղից, ինչ- ինչ պատճառով զրկված են եղել խաղալու հնարավորությունից: Վերջիններիս հոգեկան զարգացման մեջ էական տարբերորթյուններ են նկատվում, որովհետև ի՞նչ է անում խաղը. Խաղը ապահովորմ է շփումը հասակակիցների հետ, զարգացնում է երեխայի ճանաչողական գործընթացները՝ հիշողություն, մտածողություն, երևակայություն, ընկալում, խոսք: Խաղը զարգացնում է հուզակամային ոլորտը հույզերը զգացմունքները, ձևավորվում են կամային որակները, վարքը դառնում է կամածին, այսինքն երեխան կարողանում է գիտակցաբար վերահսկել իր գործողությունները, շարժումները, պահվածքը, ոչ թե իմպուլսիվ պահվածք է դրսևորում , այլ հասկանում է՝ որ պահին և ինչ գործողություն պետք է կատարի և ինչպես պետք է կատարի: Սա կատարվում է կամածին ձևով, այսինքն երեխան ջանքեր է գործադրում և նպատակ է դնում, որ օրինակ՝ այս

արդյունքին հասնելու համար իրենից պահանջվում է որոշակի գործողությունների իրականացում: Մոտիվացիոն պահանջմունքային ոլորտի զարգացումը խաղի միջոցով շատ ավելի հեշտ է կատարել, քան որևէ այլ գործողության միջոցով, որովհետև երեխայի համար առաջատար գործունեությունը խաղն է ու բնական է, որ խաղի միջոցով ցանկություններ առաջացնելը, նպատակադրումներ դնել և իրականացնելը շատ ավելի հեշտ է, քան օրինակ սիստեմատիկ պարապմունքների միջոցով արդյունքի հասնելը: Եթե մենք ընտրում ենք ճիշտ խաղեր, (դրաք բավականին տարբեր են՝ խաղ-զվարճանքներ, սեղանային խաղեր, զարգացնող խաղեր ևն) , և ընտրում ենք ճիշտ խաղալիքներ, ապա կարող ենք փոխել երեխայի՛ վարքը, և՛ բնավորությունը: Օրինակ՝ իմ աշխատանքի ընթացքում, երբ գործ եմ ունենում այնպիսի փոքրիկի հետ , որի բնավորության մեջ նկատելի են բացասական որակներ՝ եսասիրություն, կամակորություն, անվստահություն… և այլն, ապա սյուժետադերային խաղեր կազմակերպելիս այդ փոքրիկին առաջարկում եմ դրական, բարի կերպարի դեր: Կամ, երբ երեխան անվստահ է, մի կողմ քաշված, մեկուսացած է մնում, ապա խաղի միջոցով նրան առաջին պլան եմ բերում, իհարկե ՝ոչ միանգամից: Երբ երեխան մտնում է նման դերի մեջ, ապա որոշ ժամանակ անց նրա վարքն էլ է փոխվում, այսինքն, մտցնելով դերի մեջ, ուղղորդում եմ դեպի դրական փոփոխության: Նման ձևով կարելի է ժլատ երեխային առատաձեռն դարձնել և այլն, այսինքն խաղի հերոսի բնավորության գծերը կամաց-կամաց մտնում է երեխայի առօրյա կյանք՝ դառնալով բնավորության գծեր: Այստեղ դաստիարակներս շատ ուշադիր պիտի լինենք. բնական է մեզ համար բավականին դյուրին է, երբ դերաբաշխման ժամանակ երեխայի բնավորության գծին համապատասխան որևէ դեր ենք տալիս նրան, քանի որ այդ պարագայում, փոքրիկը գրեթե անթերի է կատարում այն, բայց երեխայի բնավորության բացասական գծերը հարթելու համար անհրաժեշտ է շատ հաճախ փոփոխություն կատարել:

Դաստիարակներիս միջամտությունը՝ խաղին, օգնությունը՝ փոքրիկին պետք է աննկատ լինի ու շատ զգույշ և փոքրիկը կամաց-կամաց ձեռք կբերի վստահություն, եթե անվստահ է. կդառնա կամեցող, երբ մինչ այդ որևէ խաղալիք չէր տալիս ուրիշին. կլսի գովեստի խոսքեր, երբ մինչ այդ միայն նկատողություն էր…

Գլուխ 2 .

Խաղերի տեսակները

<<Խաղի ժամանակ երեխան, տարված է խաղային մոլուցքով, հաղթելու դրապատճառները նրան հանում են իր <<կաղապարից>>՝ պայմաններ ստեղծելով ազատ դրսևորման համար: Այդպիսի պայմաններում բացահայտվում են երեխայի բոլոր առանձնահատկությունները, նրա հետաքրքրությունները, բնավորության գծերը խառնվածքը: Խաղերի բազմազանությունը տարբեր բնույթի արգելքներ է ստեղծում նպատակին հասնելու՝ հաղթելու ճանապարհին : Հենց այդ արգելքների հաղթահարման գործընթացն էլ նպաստում է երեխաների ուշադրության, հիշողության, կամքի, դիտողունակության, մտածողության, երևակայության զարգացմանը >> [2;4]

Կարելի է առանձնացնել խաղերի հետևյալ տեսակները, որոնք հաջորդում են միմյանց՝ երեխայի զարգացմանը զուգահեռ.

- Ֆունկցիոնալ
- Սիմվոլային
- Դերային
- Կանոններով
- Դերային

Ֆունկցիոնալ խաղերը բնորոշ են վաղ մանկությանը: Այս խաղերի հիմնական դրդապատճառը պաճառած հաճույքն է : Այսպիսի խաղերը մեղմացնում են երեխայի հոգեֆիզիոլոգիական լարվածությունը , հանում է սթրեսը, նպաստում մանր մոտորիկայի զարգացմանը: Այս խաղերը դիտվում են ամբողջ կյանքի ընթաքցում:

Սիմվոլային խաղերի ընթացքում փոքրիկները օգտագործվող առարկային այլ իմաստ են վերագրում. օրինակ՝ կաթսայի կափարիչը՝ ղեկ կամ թմբուկ: Ինձ մոտ՝ կրտսեր երկրորդ խմբում, երեխաներիցս մեկը, յուրաքանչյուր գլանաձև առարկա օգտագործում էր որպես բարձրախոս: Պետք է նշել , որ սիմվոլներ կարող են լինել ոչ միայն առարկաներն այլ նաև գործողությունները: Օրինակ երեխան վերցնում է փայտը, հեծնում և վերաբերվում դրան ինչպես ձիու: Անցումը ՝ ֆունկցիոնալ խաղերից դեպի սիմվոլիկ խաղեր , տեղի է ունենում 1,5 –ից 2 տարեկանում: Այս խաղերը նպաստում են երևակայության զարգացմանը:

Դերային խաղեր երեխան սկսում է խաղալ արդեն 3-4 տարեկանից: Այս խաղերը երեխայի սոցիալ – հոգեբանական հասունացման համար անփոխարինելի են: Դերային խաղերի տեսակներ են <<Տուն-տունիկ>>, <<Բժիշկ – բժիշկ>>, <<Վարսավիր>> և այլն: Այս խաղերով երեխան ընդօրինակում է մեծահասակների վարքը, նրանց դերերը՝ բժիշկ, խանութպան, հայրիկ, մայրիկ և այլն:

Կանոններով խաղեր երեխաներն սկսում են խաղալ արդեն 6 տարեկանից: Սրանք ավելի բարդ խաղեր են , քանի որ միավորում են նախորդ խաղերի տեսակները: Այս խաղերը երեխայի մոտ ձևավորում են կանոններին ենթարկվելու կարողություն , քանի որ խաղն ունի կանոններ և բոլորը ենթարկվում են այդ կանոններին: Այս խաղերը նպաստում են երեխաների կամային որակների զարգացմանը: Նման խաղի տեսակներ են լոտոն, պահմտոցի, դոմինո և այլն:

Ուսումնական խաղեր: Այս խաղերը նախատեսվում է մեզ՝ դաստիարակներիս համար, քանի որ դրանք օգտագործում ենք որպես ուսուցման ու դաստիարակության միջոց: Ի շնորհիվ նման խաղերի փոքրիկները ստանում են որոշակի գիտելիքներ և ունակություններ:

<<Խաղի միջոցով երեխաները սովորում են.

- Մարդկանց, կենդանիներին
- Զարգացնել իրենց ստեղծագործական կարողությունները
- Զարգացնել պրոբլեմներ լուծելու իրենց հմտությունները
- Սոցիալական հմտություններ (հաղորդակցում, բանակցում, պրոբլեմների լուծում)
- Հմտություններ զարգացման բոլոր ոլորտերում (իմացական, լեզվական, սոցիալ-հուզական, ֆիզիկական)
- Հաժույք զգալ, ուրախանալ >> [6; 122]

Գլուխ 3

Ուսուցում՝ խաղի միջոցով

<<Խաղը մարդու օրինական պահանջն է , նրա լրջությունն է , նրա էություն է : Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է նրա մեթոդն է : Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունվում է, հեշտ է յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու >>: Հովհ. Թումանյան

Մանկավարժական գաղափարը, որով ես առաջնորդվում եմ այն է, որ այսօր հասարակության մեջ ձևավորվում է նախադպրոցական կրթության նոր համակարգի ձևավորում, որը յուրաքանչյուր երեխայի հավասար մեկնարկային հնարավորություն է տալիս դպրոցում լավ սովորելու համար: Փոփոխության էությունը վերաբերում է նախադպրոցական տարիքի երեխաների կրթական գործընթացի մոդելին: Անհրաժեշտ է ոչ թե ուսուցանել, այլ զարգացնել: Զարգացումն առաջնահերթ է: Զարգացնել պետք է երեխայի տարիքին համապատասխան գործունեությամբ՝ խաղով: Խաղը հանդես է գալիս որպես ամենակարևոր գործողություն, որի միջոցով, ես՝ որպս դաստիարակ, լուծում եմ բոլոր կրթական խնդիրները, այդ թվում՝ և ուսուցումը: Վերանայվել են երեխայի կրթության և դաստիարակության կազմակերպման մոտեցումները: Մանկապարտեզում, ավանդական <<դաս–դասարանային >> պարապմունքներից հրաժարվելը, ստիպեց ինձ գնալ երեխաների հետ աշխատանքի նոր ձևերի, որոնք թույլ տվեցին ինձ անցնել պարապմունքի այնպիսի ձևերի, երբ փոքրիկն անգամ չէր ենթադրում , որ ուսուցում է իրականացվում: Եթե նախկինում համարվում էր, որ դաստիարակի հիմնական կրթական ջանքերը կենտրոնացված են պարապմունքի անցկացման վրա, ապա այժմ կրթական ներուժը ճանաչված է դաստիարակ- երեխա համատեղ ցանկացած գործունեությունը:

Փորձում եմ ձևավորել նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական հմտությոունները, որոնք անհրաժեշտ են նրանց հետագա կյանքի համար: Աշխատանքի ձևերի ընտրությունը կատարում եմ ինքնուրույն՝ հաշվի առնելով սաներիս անհատական առանձնահատկությունները, խմբի տեխնիկական հագեցվածությունը, փորձն ու ստեղծագործակն ունակությունները: Այսպես. առավոտյան, երբ սաներս ավելի առույգ են, ուժով լի, անց եմ կացնում դիտումներ, զրույցներ, դիդակտիկ խաղեր, աշխատանքային հանձնարարություններ: Երբ երեխաները հոգնում են, առաջարկում եմ դերային խաղեր,

շարժախաղեր, կարդում եմ գեղարվեստական գրքեր: Օրվա ընթացքում երեխաների տարբեր գործողությունների հերթափոխումը, օգնում է ինձ ապահովել բազմազանություն և հավասարակշռություն՝ պահպանելով խաղի առաջատար դերը: Քանի որ երեխաներն անընդհատ խաղի մեջ են (սա նրանց համար կենսակերպ է), որպես ժամանակակից դաստիարակ, ուսուցումը <<ներառում>> եմ փոքրիկների խաղի մեջ, ինչը ուսումնական պրոցեսն ավելի էֆեկտիվ է դարձնում: Խաղը դարձել է երեխաների կյանքի կազմակերպման բովանդակությունն ու ձևը: Խաղի միջոցով փորձում եմ երեխաների առօրյան լցնել հետաքրքրությամբ, խնդիրներով, գաղափարներով, նպաստում երեխաների հետաքրքրությունների իրականացմանն ու կենսական ակտիվությանը: Իմ մաքնկավարժական փորձը ցույց է տվել, որ նախադպրոցական տարիքում ամեն ինչ կարելի է սովորեցնել խաղի միջոցով: Համոզելը, պատիժը արդյունավետ չեն և պետք է բացառել կրթական համակարգից:

Խաղը նախադպրոցական տարիքի երեխայի կյանքի կազմակերպման ձև է, որտեղ օգտագործում եմ տարբեր մեթոդներ՝ երեխաների անհատականությունը ձևավորելու համար: Ես և դաստիարակ եմ, և խաղի մասնակից, միաժամանակ և սովորեցնում եմ, և խաղում, իսկ երեխաները խաղալով սովորում են: Բոլոր ռեժիմային գործընթացները տեղի են ունենում խաղի տեսքով՝ երեխաների մոտ հետաքրքրություն, ակտիվություն և դրական էմոցիաներ առաջացնելու համար: Այս կերպ խաղը կարող է ներթափանցել երեխայի ողջ կյանք՝ դարձնելով այն իրապես հետաքրքիր ու հետաքրքրաշարժ:

Աշխատանք ծնողների հետ

Շատ կարևոր է նաև ծնողների հետ տարվող աշխատանքը: Անհրաժեշտ է որպեսզի նրանք հստակ գիտակցեն , որ ընտանիքը ի զորու է բազմակողմանի զարգացնել երեխային արդեն նախադպրոցական տարիքում՝ դրա համար ստեղծելով համապատասխան պայմաններ:

Աշխատանքիս ընթացքում օգտագործել եմ ***ծնողների հետ աշխատանքի հետևյալ ձևերը***

- Ծնողական ժողովներ
- Վիկտորինա <<Սովորում ենք խաղալով>>, <<Ապա՝ խաղա>>
- Ծնողներին առաջադրվող հարցաթերթիկներ՝ հետևյալ ուսումնասիրության թեմայով. <<Խաղերն ու խաղալիքները փոքրիկիս կյանքում>>

- Անհատական խորհրդատվություններ և կոնսուլտացիաներ
- Այցելություն տուն. <<Ցույց տուր քո խաղանկյունն ու խաղալիքները>>
- Ծնողական աջակցություն՝ խաղակենտրոնների ձևավորման գործում

Խաղը արդի երեխաների կյանքում

<<Բոլոր մեծահասկները սկզբում երեխաներ էին, քչերն են հիշում դա: Ինչու՞ ենք մենք հազվադեպ վերադառնում մեր մտքում կյանքի այս երջանիկ ժամանակաշրջանին.. Սա մեզ համար կհեշտացնի երեխայի հոգին հասկանալը…>> Ա. Յու. Սեմեյկին

Նախադպրոցական տարիքը երեխայի զարգացման եզակի ու որոշիչ շրջան է, երբ առաջանում են անհատականության հիմքերը, զարգանում է կամքն ու վարքագիծը, ակտիվորեն զարգանում է երևակայությունը, ստեղծագործական միտքը : Բայց պետք է փաստել, որ բոլոր այս կարևոր հատկությունները ձևավորվում են ոչ թե ակտիվ մարզումների, սիստեմատիկ պարապմունքների ընթացքում, այլ երեխայի հիմնական գործունեության՝ խաղի մեջ: Սակայն, եթե համեմատական զուգահեռներ եմ տանում իմ աշխատանքի սկզբնական շրջանի և այժմյան երեխաների ՝ խաղի նկատմաբ ունեցած հետաքրքրությունների մեջ, ապա պատկերը խիստ մտահոգիչ է (աշխատում եմ գրեթե երկու տասնամյակ): Մանկապարտեզում երեխաներն սկսել են ավելի ու ավելի վատ խաղալ, հատկապես կրճատվել են դերային խաղերը, ինչպես քանակով, այնպես էլ՝ որակով:

Նախադպրոցական տարիքի երեխաները գործնականում չգիտեն ավանդական մանկական խաղեր և որ ամենացավալին է՝ չգիտեն ինչպես խաղալ: Որպես հիմնական պատճառ կարող եմ նշել խաղալու ժամնակի բացակայությունը, քանի որ մեր առօրյան գերծանրաբեռնված է: Թեև ես, ինչպես նաև կոլեգաներս, աշխատում ենք հնարավորինս պարապմունքներն անց կացնել խաղի միջոցով, սակայն երեխաների թվաքանակի շատության պատճառով ոչ միշտ է մեզ դա հաջողվում:

Կատարածս ուսումնասիրությունների արդյունքում, կցանկանայի մի ցավոտ երևույթի մասին էլ կիսվել. անգամ երբ երեխաներին հնարավորություն է տրվում ազատ շարժախաղեր խաղալ, նրանք չեն կարողանում իմաստալից և հանգիստ խաղալ, փոխարենը՝ կռվում են, հրում, խփում…

Երեխան մեծանում է մեծահահասակների մեջ, իսկ մեծերը ժամանակ չունեն խաղալու, չգիտեն, թե դա ինչպես անեն: Արդյունքում ՝ խաղն անհետանում է նախադպրոցական տարիքի երեխաների կյանքից և դրա հետ մեկտեղ անհետանում է նաև մանկությունը.. Այստեղ ևս մենք՝ դաստիարակներս ունենք կատարելու ահռելի մեծ աշխատանք, քանի որ այս տարիքում խաղի կրճատումը տխուր ազդեցություն է ունենում երեխայի ընդհանուր մտավոր և անձնական զարգացման վրա: Ինչպես քանիցս նշվեց, հենց խաղի մեջ է ամենաինտենսիվ զարգանում երեխայի մտածողությունը, հույզերը, հաղորդակցությունը, երևակայությունը, գիտակցությունը: Եվ քանի որ նախադպրոցական տարիքը այս կարևոր որակների ձևավորման օպտիմալ շրջանն է, դժվար է պատրանքներ ունենալ, որ այդ բոլոր կարողություններն ինքնըստինքյան կառաջանան ավելի ուշ՝ հասուն տարիքում, մինչդեռ ծնողները, որպես կանոն, առանձնապես չեն մտահոգվում այս խնդրի վրա: Կրկին անձնական ուսումնասիրություններիս արդյունքում եկել եմ այն եզրահանգման, որ կրտսեր և միջին խմբի ծնողների մեծամասնությանը հետաքրքրում է՝ արդյոք իր փոքրիկը մանկապարտեզում տվայալ օրը ի՞նչ է կերել և, քնել է, թե՞ ոչ: Արդեն ավագ խմբում ծնողներին հետաքրքրում է երեխայի դպրոցին պատրաստվածության աստիճանը, ինչը դրսևորվում է ծնողի ցուցումով՝ հաշվել, թիվ ու տառ ճանաչել, երբեմն անգամ՝ որոշ բառեր կարդալ, հեգել և այլն, սակայն երեխաների նման <<պատրաստվածությունը>> շատ դեպքերում, ոչ միայն չի օգնում, այլ խանգարում է փոքրիկներին: Լինում են դեպքեր, երբ երեխաները հրաժարվում են դպրոց հաճախել արդեն մեկ – երկու ամիս անց:

Գլուխ 4.

Համակարգչային խաղերի վնասները

Ամենուրեք համակարգչայնացումը իր հետ բերում է նաև մի շարք բացասական երևույթներ: Արդի ժամանակաշրջանում գրեթե չկան երեխաներ, որոնք պարզապես խաղում են իրար հետ: Շատ դեպքերում երեխաներն անգամ բակ են իջնում սմարթֆոնով և ռեալ խաղերի փոխարեն ՝ խաղում են դրանցով: Իմ ուսումնասիրությունների արդյունքում, եկել եմ այն եզրակացության, որ համակարգչային խաղերը երեխաներին դարձնում են ագրեսիվ, փոքրացնում հետաքրքրությունների շրջանակը և նվազեցնում զգացմունքայնությունը: Երեխաների մի մասի համար սա ընդամենը ժամանակավոր զբաղմունք է և , որոշ ժամանակ անց, նրանք կորցնում են հետաքրքրությունը նման

խաղերի հանդեպ, սակայն մյուս մասը պարզապես դառնում է այս խաղերի <<գերին>> և իր ողջ ժամանակը տրամադրում է դրան:

Ուսումնսիրելով հոգեբան Հ. Հովհաննիսյանի այս թեմային նվիրված հոդվածներից մեկը, բազմաթիվ նմանություններ գտա իմ խմբի սաների և հոդվածում նկարագրվող երևույթների միջև, այն է. համակարգչային խաղերն իրենց գունառատությամբ, հերոսներով, նրանց հաղթանակներով ու պարտություններով ամբողջովին կարող են կլանել երեխաներին: Արդյունքում երեխան դառնում է դյուրագրգիռ, նյարդային ու ագրեսիվ: Իմ խոր համոզմամբ՝ այս ամենը մեծամասամբ հենց ծնողի սխալն է: Վերջիններս, իրենց համար ազատ ժամանկ ստեղծելու նպատակով, երեխաներին տալիս են համակարգիչ, հեռախոս՝ վստահ լինելով , որ երեխան դրանից չի հոգնի: Այսպիսով երեխան ամբողջ ընթացքում լինելով վիրտուալ տիրույթում՝ այդ տիրույթը <<տեղափոխում>> է իրական աշխարհ և կարծում , որ այստեղ ևս թույլատրվում է քանդել, սպանել, խփել, վնասել… Ըստ հոգեբանի համակարգչային խաղերի ամենամեծ վտանգն այն է , որ դրանք շատ արագ կախվածություն են առաջացնում և, արդեն որոշ ժամանակ անց, երեխային անհնար է լինում հեռացնել համակարգչից և հեռախոսից: Իմ պրակտիկայում եղել են դեպքեր, երբ մայրը փոքրիկին պարտեզ է բերել հեռախոսը ձեռքին, ասելով, որ երեխան համաձայնել է գալ միայն այն պայմանով, եթե պարտեզում ևս թույլ տան իր սիրելի խաղը խաղալ…

Ինչպե՞ս պաշտպանել երեխային համակարգչից

Դժվար է , սակայն հնարավոր՝ որոշակի պայմաններում.

1.Եթե ծնողները հասկանում են այս հոբբիի հետևանքները:

2.Եթե հասկացողություն կա, որ համակարգիչը շատ հարմար բան է (կան մի շարք կրթական համակարգչային խաղեր 3 -5 տարեկան երեխաների համար, որոնք սովորեցնում են տառեր ու թվեր, ծանոթացնում են կենդանիների և բույսերի աշխարհին, նպաստում են ձեռքի շարժիչ հմտությունների զարգացմանը, տեսողական հիշողություն են զարգացնում և այլն), իհարկե, բայց այնուամենայնիվ, ավելի լավ է , որ նա մեզ ծառայի, այլ ոչ թե մենք ծառայենք նրան:

3.Եթե կա այլընտրանք. լիարժեք, առողջ, ակտիվ ընտանեկան կյանքի տեսքով, որտեղ նրանք փորձում են ապրել ջերմության, փոխըմբռնման ու հոգևոր միասնության մթնոլորտում:

Համակարգչային խաղերից կախում ունեցող երեխաների ծնողներին խորհուրդ եմ տալիս օրվա մեջ հնարավորինս շատ ժամանակ հատկացնել փոքրիկին, գտնել հետաքրքրությունների այլ աղբյուր, օրինակ՝ տանել պարի խմբակ, մարզվելու կամ պարզապես զբոսանքների տանել: Երեխաներին կարելի է առաջարկել խաղեր՝ բնական նյութերով, պարզ, արդյունավետ գործողություններ՝ մոդելավորում, նկարչություն, ապլիկացիա… որքան ուրախություն կարող է ստանալ երեխան դրանից: Եվ ստեղծագործելու այս բերկրանքը նրան դարձնում է ստեղծագործող: Կապվելով բնության հետ փայտերի, ճյուղերի, կոների, ավազի, կավի միջոցով՝ երեխան ստանում է կյանքի ուժն ու էներգիան՝ այն ինչ նա չի ստանում համակարգչային <<մահացած>> պատկերների հետ շփվելուց: Այստեղ նաև խիստ կարևոր է, որ համակարգչից հեռացնելը չպետք է միանգամից արվի, անհրաժեշտ է երեխային հասկանալի ձևով տանել բացատրական աշխատանք, թե խաղերի վտանգի, թե էկրանի առջև երկար նստելու վտանգի մասին, քանի որ պարզապես արգելելով երեխային խաղալ՝ նրա մեջ կմեծացնենք ագրեսիան և խաղալու ցանկությունը:

Այսպիսով, կատարելով վերոգրյալի եզրակացություն, կարելի է ասել, որ բնավ չհերքելով տված որոշակի օգուտը (այստեղ էական նշանակություն ունի՝ ինչ խաղ խաղալ և որքան ժամանակ տրամադրել այս գործողությանը), համակարգչային որոշ խաղեր իսկապես կարող են առաջացնել.

- Առողջության վատթարացում (ողնաշարի ծռում, տեսողության խնդիրներ, մեծ տարիքում՝ ավելորդ քաշ)
- Ագրեսիվության բարձրացում
- Խաղից կախվածություն
- Սոցիալական մեկուսացում

Հետազոտական մաս

Աշխատանքիս հետազոտական մասն ապահովելու համար կազմել եմ հարցաթերթիկներ, ոմասնակցել են 40 ծնող՝ թիվ ՆՈՒՀ : Արդյունքները ներկայացնում եմ ստորև.

<<Հարգելի ծնողներ, յուրաքանչյուր տարիքային փուլում կա գործունեության առաջատար տեսակ, որը որոշիչ ազդեցություն ունի անհատականության ձևավորման վրա: Նախադպրոցական տարիքում դա **խաղն** է: Խնդրում եմ պատասխանել մի քանի հարցերի՝ մեր աշխատանքն ավելի էֆեկտիվ կազմակերպելու նպատակով>>

(Կից ներկայացնում եմ պատասխանների սխեման):

1. Հաճա՞խ է Ձեր փոքրիկը տանը խաղում մենակ առանց մեծի մասնակցության.
   - Այո
   - Ոչ
   - Երբեմն



2. Գիտե՞ք արդյոք Ձեր երեխայի համար, որ խաղալիքներն են առավել հետաքրքիր:
   - Այո
   - Ոչ
   - Ոչ միշտ



3. Ձեր երեխան ի՞նչ խաղեր է խաղում ավելի հաճախ:
   - Սեղանային
   - Սյուժետադերային
   - Սեփական տարբերակ



4. Խաղում է արդյո՞ք Ձեր երեխան համակարգչային խաղեր:

- Շատ հաճախ
- Երբեք
- Ոչ



5. Իր խաղի այուժեն ընտրելիս երեխան ընտրում է.

- Ինքն իրեն
- Մուլտհերոսի
- Համակարգչային՝ վիրտուալ հերոսի



6. Երեխայի խաղերի մեջ կա՞ն արդյոք այնպիսիք, որոնք Դուք չեք հավանում.

- Այո
- Երբեմն
- Գրեթե բոլորը



7. Կա՞ն արդյոք խաղեր Ձեր մանկությունից, որ խաղում եք Ձեր փոքրիկի հետ

- Այո երբեմն
- Ոչ
- Հաճախակի



8. Ի՞նչ խաղլիքներ եք գնում Ձեր բալիկի համար

- Երեխայի ցանկությամբ
- Զարգացնող
- Սեփական պատասխան



Փորձարարական մաս

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից ծնողները երեխաների հետ գրեթե չեն խաղում, նրանց առաջարկեցի կազմակերպել այնպիսի իրավիճակներ, որը նրանցից հատուկ պատրաստվածություն և ժամանակ չի խլի, բայց և խաղի միջոցով երեխաներին մաթեմատիկական որոշ գիտելիքներ կհաղորդի: Ստորև ներկայացնում եմ աշխատանքիս ընթացքը.

<<Հարգելի հայրիկներ և մայրիկներ, առաջարկում եմ Ձեզ խաղերի օրինակներ, որոնք կարելի է խաղալ թե տանը , թե բակում: Խաղերը վերնագրել եմ >>՝

- << Հաշվում ենք ճանապարհին>>, եթե ունեք մեքենա և գործի բնույթով պայմանավորված երեխայի հետ միասին երկար ժամանակ եք լինում մեքենայում , ապա խաղացեք փոքրիկի հետ – ո՞վ ավելի շատ նշված գույնի մեքենա կհաշվի.

օրինակ մեծահասակը հաշվում է հանդիպած կարմիր մեքենաները, երեխան՝ կանաչները:

- Երթուղային տաքսու մեջ կարելի է հաշվել կանգառները, ուղևորների քանակը, քանի հոգի են մեծահասակ, քանիսը՝ մանուկ, քանիսը բարձրացան, քանիսը՝ իջան կամ քանիսն են տղա, քանիսը՝ աղջիկ:
- <<Կոճակներ>> (համեմատություններ կատարել և հմտություններ զարգացնել)
  Անհրաժեշտ նյութեր՝ տարբեր գույնի, չափի և տեսքի կոճակներ
  Ինչպե՞ս ենք խաղում- Յուրաքանչյուրիս տանը կան կոճակներ: Դրանց օգնությամբ կարելի է հորինել ամենատարբեր խաղեր, օրինակ՝ դասավորել ամենավերևում՝ շրջանաձև կոճակները (գույնը և չափը կարևոր չէ), դրանց տակ՝ քառակուսի կոճակներ: Հաշվել քանակները, հավասա՞ր են , ո՞րն շատ, ո՞րը՝ քիչ:

Այժմ ներկայացնում եմ իմ պարապմունքներից մեկը, որն անց եմ կացրել միջին խմբում.
Թեմա- *<<Թվերը մոլորվել են>>*
Նպատակը- Թվերի ճանաչման ամրապնդում, դիտողականության և հիշողության զարգացում՝ խաղի միջոցով:
Անհրաժեշտ նյութեր –Թվեր, Նունիկ տիկնիկ
Ընթացք –Խաղի սկզբում , գրատախտակին ճիշտ հերթականությամբ դասվորված են թվերը: Առաջարկում եմ փակել աչքերը և այդ ընթացքում թվերից երկուսի տեղերը փոխում եմ: Բացելով աչքերը՝ երեխաները պետք է գուշակեն ՝ ի՞նչն է փոփոխվել և ճիշտ հերթականությամբ դնել: Երեխաներից մեկին ընտրում եմ խաղավար: Երբ արդեն երեխաները հասկանում են խաղի կանոնները, ավելի եմ բարդացնում խաղը. ավելացնում եմ մինչ այդ թվային շարքում չեղած որևէ թիվ, թվերի միջև եղած տարածությունն եմ փոքրացնում.. կարող եմ նաև թվային շարքը թողնել անփոփոխ, բայց հարցնել.
-Ի՞նչը փոխվեց:
Եվ այստեղ ակնկալում եմ, որ տվյալ դեպքում երեխաները պետք է պատասխանեն, որ թվերը <<չեն մոլորվել>>, քանի որ գտնվում են իրենց ճիշտ տեղում:
Խաղի մեջ անընդհատ Նունիկ տիկնիկը հարցեր է հղում փոքրիկներին, երբեմն՝շփոթեցնող, իսկ երեխաները պետք է օգնեն տիկնիկին գտնել ճիշտ լուծումներ:
Ֆիզկուլտ-դադար -<<Որքան շրջան ցույց կտաք
Այնքան անգամ ծափ կտանք>>
Մի քանի անգամ նմանատիպ վարժություններ ենք անում՝ կիրառելով տարբեր թվեր, պատկերներ և նույն քանակի՝ ցատկ, կքանիստ, պտույտ և այլ գործողություն :

Եզրակացություն

Ելնելով աշխատանքում նշված բաժիններից կարելի է եզրակացնել, որ խաղը երեխայի համակողմանի զարգացման համար անկարկնելի խթան է ու ամենահզոր միջոց: Մարդն իր կյանքի բոլոր փուլերում խաղալու ցանկություն ունի , քանզի խաղն ունի թերապևտիկ նշանակություն, խաղի մեջ երեխան արտահայտում է որոշակի էմոցիաներ, հանգստանում է խաղի ընթացքում ու լիցքաթափվում:

Սակայն ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, այսօրվա ծնողները շատ քիչ են ինֆորմացված նախադպրոցական երեխաների խաղային գործունեության մասին, չեն խաղում նրանց հետ՝ խաղը սխալմամբ համարելով զուտ հաճույք և ոչ զարգացնող գործունեություն: Ուսումնասիրությունը հստակ ցույց է տալիս, որ ծնողը գերադասում է երեխային ծանրաբեռնել ավելի <<օգտակար>> բաներով, քան՝ խաղը: Ընտանիքում ստեղծված չէ միջավայր՝ դերային խաղի զարգացման համար: Խաղալիքներ գնելիս առաջնորդվում են դրա մոդայիկ լինելը կամ՝ մատչելիությունը հաշվի առնելով և կամ գնում են այնպիսի խաղալիք, որը կլինի անհատական և կբացառի այլ երեխաների հետ միասին խաղալը:

Նախադպրոցական տարիքում երեխայի կյանում ուրույն տեղ է գրավում համակարգիչը, վիրտուալ խաղերը: Արդեն դպրոցի շեմին երեխան գրեթե անթերի տիրապետում է ժամանակակից գաջեթներին: Ցավոք, վիրտուալ խաղերը փոխարինում են ավանդական խաղերին , ջնջվում է իրական և անիրական աշխարհի միջև եղած սահմանը , իսկ ծնողը անգամ վտանգ էլ չի տեսնում նման պարագայում:

Ուսումնասիրություններիս արդյունքում կարող եմ փաստել. նախադպրոցական ուսումնական հաստատությունում ևս գրեթե ժամանակ չի մնում երեխաների խաղի համար և այստեղ խիստ արժևորվում է այն դաստիարակի աշխատանքը, որն իր ուսումնական պրոցեսն իրականացնում է խաղերի օգնությամբ ու խաղի միջոցով: Մենք՝ դաստիարակներս պետք է այուժետադերային խաղերով հագեցնենք երեխայի առօրյան , քանզի մեծահասկների օրինակը դադարել է լինել փոքրիկների խաղի թեման՝ տեղը զիջելով վիրտուալ, մտացածին կերպարներին:

Մանկական խաղերի և խաղալիքների ժամանակակից արդյունաբերությունը և նաև ընտանեկան կյանքի կարգուկանոնի անհետացումը , հետ է մղում դերային խաղը նախադպրոցական տարիքի երեխաների կյանքից, ինչը բացասական հետևանք է թողնում երեխայի անձի համակողմանի զարգացման վրա: Աշխատանքիս հետազոտական մասում կատարած ուսումնասիրությունը ամբողջությամբ փաստում է այս վարկածը:

Գրականություն

1. Ալեքսանյան Է. <<Նախադպրոցական մանկաավարժություն>> Երևան
2. Գյուլամիրյան. Ջ <<Խաղալով սովորենք>> Երբան-2009, 80էջ
3. Դալլաքյան Ա., Ս. Մարության <<Նախադպրոցական մանկավարժություն>> Երևան
4. Հակոբյան Մ .<<Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում>> հոդված
5. Սուխոմլինսկի Վ. Ա <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>>, Կիև-1969
6. <<3-6տ երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումը այլընտրանքային մոդելներով՝>> Երևան 2018 194 էջ
7. Дошкольник.net
8. Международный образовательный портал MAAM.RU
9. Образовательная социальная сеть nsportal.ru
10. К.Д. Ушинский Челобек как предмет воспитания Москва 1968 777л

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 2

Գլուխ 1 <<Խաղի դերը երեխայի կյանքում>> ---------- 4

Գլուխ 2 <<Խաղերի տեսակները >> ---------- 6

Գլուխ 3 <<Ուսուցում խաղի միջոցով >> ---------- 8

Գլուխ 4 <<Համակարգչային խաղերի տեսակները>> ----------12

Հետազոտական մաս ---------- 14

Փորձարարական մաս ----------17

Եզրակացություն ---------- 19

Բովանդակություն ---------- 21

ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝<< Ավագ ն/դպ տարիքի երեխաներին դպրոցական ուսումնառության նախապատրաստումը>>

Կատարող՝ Հայարփի Ալիխանյան

Ղեկավար՝ Գագիկ Էմինյան

Վանաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3
Գլուխ 1 .Նախադպրոցականին դպրոցի կյանքին և ուսումնառությանը նախապատրաստելու բաղադրիչները---------- 4
1.1 Նախադպրոցականի ֆիզիկական կամ ֆիզոլոգիական նախապատրաստումը դպրոցին:----------5
1.2Նախադպրոցականի հոգեբանական նախապատրաստումը դպրոցին:----------6
1.3 Նախադպրոցականի ինտելեկտուալ նախապատրաստումը դպրոցին----------7
1.4 Նախադպրոցականի սոցիալական նախապատրաստումը դպրոցին----------8
Գլուխ 2. Մանկապարտեզ- ընտանիք համագործակցություն----------9
Հետազոտական մաս----------10
Եզրակացություն----------15
Օգտագործված գրականության ցանկ----------16

Ներածություն

Թեմայի արդիականությունը:Ինչպես գիտենք նախադպրոցական կրթությունը կրթական համակարգի հիմքն է: Ելնելով դպրոց ընդունվող երեխային ներկայացվող արդի պահանջներից՝ անհրաժեշտ է ավագ ն/դպ տարիքում ձևավորել անհրաժեշտ կարողություններ և հմտություններ՝ մանկապարտեզ- դպրոց սահուն անցումն ապահովելու նպատակով:

Ներկայումս, երբ դպրոցներում իրականացվում է տասներկուամյա ուսուցում, և 5-6 տարեկան երեխան արդեն պետք է հաճախի առաջին դասարան, նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների առջև խնդիր է դրված իրենց սաներին նախապատրաստել դպրոցական ուսուցմանը՝ հիմք ընդունելով նախադպրոցական կրթական չափորոշիչը, կրթական համալիր ծրագրերը և ուսումնամեթոդական ձեռնարկները:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

Ուսումնասիրել ավագ ն/դպ տարիքի երեխաների զարգացման բաղադրիչները , նրանց համաչափ զարգացման արդյունավետությունը:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

Նկարագրել ավագ ն/դպ տարիքի երեխաների զարգացման առանձնահատկությունները :

Ներկայացնել 5-6 տարեկան երեխաների՝ դպրոցական պատրաստվածության մակարդակը:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը.

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, 2 գլուխներից , առաջին գլուխը կազմված է 4 ենթագլուխներից, հետազոտական մասից, եզրակացությունից և գրականությունից:

Գլուխ 1. Նախադպրոցականին դպրոցի կյանքին և ուսումնառությանը նախապատրաստելու հիմնախնդիրը:

Նախադպրոցական կրթության առջև դրված երեք հիմնական նպատակներից մեկը նախադպրոցականին դպրոցական ուսումնառությանը նախապատրաստելն է:

Թե ինչ հաջողություններ կգրանցի երեխան դպրոցական ուսումնառության ընթացքում, կախված է նրանից ,թե նա որքանով էր պատրաստ դպրոց գնալուն:Եթե դպրոց գնացող երեխան չունենա պատրաստվածության անհրաժեշտ մակարդակ, ապա նա անկասկած դժվարությունների կբախվի, որոնք հաղթահարելը դժվար կլինի: Երեխային դպրոցական ուսումնառությանը նախապատրաստելը չի ենթադրում աշխատանք միայն ավագ խմբում, քանի որ սա փուլային աշխատանք է՝ սկսած կրտսեր նախադպրոցական տարիքից մինչև ավագ նախադպրոցական տարիք: Որպեսզի ավագ ն/դպ տարիքի երեխան լիովին պատրաստ լինի դպրոցական ուսուցմանը ,նա պետք է համակողմանի և ներդաշնակ զարգացած լինի ,ինչը ենթադրում է ոչ միայն մտավոր, այլև ֆիզիկական , հոգեբանական զարգացում:

Հ. Միտոյանը, անդրադառնալով երեխայի համակողմանի զարգացմանը, գրում է. <<Մանկապարտեզի ամբողջ առօրյան / ձմեռ թե ամառ/ յուրահատուկ ձևով պետք է կազմակերպված լինի գործարար աշխուժությամբ և կենսուրախությամբ: Ստեղծվելու են ամենաբարենպաստ պայմանները երեխաների բազմազան գործունեության և բազմակողմանի զարգացման համար և այդ գործընթացը, իհարկե ուղղություն է ստանում և ղեկավարվում դաստիարակի կողմից>>[2. 69]:

Երբ ասում ենք դպրոցական ուսումնառությանը պատրաստ երեխա, նկատի ենք ունենում նրա ֆիզիկական, մտավոր, հոգեբանական, սոցիալական պատրասվածությունը: Թե ինչ հաջողություններ կգրանցի երեխան դպրոցում, կախված է այս բաղադրիչների զարգացման մակարդակից: Եթե երեխան ունի

նշված բաղադրիչների զարգացման անհրաժեշտ մակարդակ, նրա համար դժվար չի լինի ընկալել հանրակրթական ծրագիրը:

1.1 Նախադպրոցականի ֆիզիկական նախապատրաստումը դպրոցին

Նախադպրոցական կրթության նպատակներից մեկն էլ երեխաների առողջության պահպանումն ու ամրապնդումն է :Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ֆիզիկական կրթությունն իրականացվում է առավոտյան մարմնամարզության, ֆիզկուլտուրայի պարապմունքների , սպորտային միջոցառումների, շարժախաղերի և իհարկե կոփման միջոցով: Այս ամենը նախադպրոցական ուսումնական հաստատությունում պետք է կազմի երեխայի առօրյայի անբաժան մասը: Արդեն ավագ ն/դպ տարիքում ամրապնդվում են երեխայի՝քայլելու, ցատկելու, մագլցելու, նետելու,սողանցելու կարողությունները: Արդյունքում երեխայի մոր ձևավորվում է ճիշտ կեցվածք, ինչը նրան հնարավորություն է տալիս արդեն դպրոցում ճիշտ նստել աշակերտական նստարանին: Ֆիզիկական ակտիվությունը իր դրական ազդեցությունն է ունենում նաև երեխայի մտավոր գործունեության վրա: Շատ կարևոր է , որ դաստիարակը և ծնողը իրենց օրինակով ցույց տան ֆիզիկական դաստիարակության կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Լ. Մանուկյանն անդրադառնալով 5-6 տարեկան երեխաների ֆիզիկական դաստիարակությանը, գրում են. << 5-6 տարեկան երեխաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն իրականացվում են հիմնականում շարժողական նպատակին ռեժիմի պայմաններում, որի հիմքում ընկած են տարբեր ձևերով կազմակերպվող մարմնամարզական միջոցառումները ,վարժությունները,խաղերը, երեխայի ազատ, ինքնուրույն շարժուն գործունեությունը>>: [3. 49]

Շատ կարևոր է, որ արդեն ավագ նախադպրոցական տարիքում երեխան հասկանա կուլտուր- հիգիենիկ ունակութունների պահպանման անհրաժեշտությունը: Հիգիենայի պահպանումը առողջության պահպանման գրավականներից է: Նշենք, որ ինքնասպասարկման կարողությունների կիրառումը ևս պետք է ձևավորել

նախադպրոցական տարիքում: Երեխան միշտ պետք է լինի մաքուր և կոկիկ ,հետևի արտաքին տեսքին:

1.2Նախադպրոցականի հոգեբանական պատրաստությունը դպրոցին

Նախադպրոցական կրթության կարևորագույն խնդիրներից մեկը երեխային հոգեբանորեն դպրոցական ուսումնառությանը նախապատրաստելն է: Գաղտնիք չէ, որ մանկապարտեզում ուսումնական գործունեության հիմքը խաղն է, այսինքն իրականացվում է խաղային գործունեություն : Իսկ դպրոցում խաղային գործունեությունից անցում է կատարվում ուսումնական գործունեության, ինչը հաճախ երեխաները հոգեբանորեն դժվար են հաղթահարում: Այս է պատճառը, որ դպրոցական ուսումնառության սկզբում միանգամից չպետք է բացառել խաղը, այլ անցումը պետք է կատարել աստիճանաբար, ինչը այսօրվա դպրոցներում, ցավոք ,ոչ միշտ է կիրառվում:

Արդեն ավագ ն/դպ տարիքում երեխան գիտակցված է կատարում իր գործողությունները, կարողանում է իր առջև նպատակ դնել և դրան հասնելու համար ուղիներ փնտրել:

Դպրոցում երեխայի առաջադիմությունը կախված է նրանից, թե որքանով է երեխան հոգեբանորեն պատրաստ դպրոցական ուսումնառությանը: Այսինքն պետք է երեխայի մեջ ճիշտ վերաբերմունք սերմանել դպրոցի, ուսման նկատմամբ: Երեխայի վրա հոգեբանական զադեցություն է ունենում այն հանգամանքը, թե իր հասակակիցները և մեծահասակները ինչ վերաբերմունք ունեն դպրոցի նկատմամբ: Հաճախ երեխային գրավում է միայն երևույթի արտաքին կողմը , որ նա պետք է աշակետ դառնա, աշակերտական պայուսակ , գրենական պիտույքներ ունենա:

Արդեն ավագ նախադպրոցական տարիքում, նպատակահարմար է այցելություն կազմակերպել դպրոց, երեխաներին ծանոթացնել դպրոցական առօրյայի հետ:

1.3 Նախադպրոցականի ինտելեկտուալ նախապատրաստումը դպրոցին

Ինչպես հայտնի է, նախադպրոցական տարիքի երեխայի միտքը զարգացնելու լավագույն միջոցը խաղն է: Խաղի միջոցով զարգանում է երեխայի տրամաբանությունը , ուշադրությունը, կենտրոնանալու, արագ կողմնորոշվելու կարողությունները:

Կրտսեր նախադպրոցական տարիքից մինչև ավագ նախադպրոցական տարիք երեխայի մտածողությունը աստիճանաբար զարգանում է: Ինչպես հայտնի է, 3-6 տարեկանը շատ նպաստավոր շրջան է երեխայի մտածողությունը զարգացնելու համար:Այս տարիքում երեխաները հեշտ են ընկալում տրամադրվող նյութը:

Արդեն ավագ նախադպրոցական տարիքում երեխայի մոտ պատկերային մտածողությունից անցում է կատարվում խոսքային մտածողության:

Խորհրդային հոգեբանության և մանկավարժության ականավոր գիտնականներ Լ. Ս. Վիգոտսկին, Ն.Ն. Պոդյակովը, Ա.Վ. Զապառոժեցը ,Լ.Ա. Վենգերը և այլոք, անդրադառնալով նախադպրոցականի մտավոր զարգացմանը, գրում են. << Նախադպրոցականի ինտելեկտուալ հնարավորությունները շատ ավելի բարձր են , քան թվում է առաջին հայացքից: Նախադպրոցականն ընդունակ է յուրացնելու և վերլուծելու երևույթների ինչպես արտաքին ակնառու հատկանիշները , այնպես էլ ներքին կապերն ու պատճառ-հետևանքային հարաբերությունները>>:[1.52]

Երեխայի մտավոր զարգացման համար անհրաժեշտ են նպաստավոր պայմաններ և ճիշտ կազմակերպված մանկավարժական աշխատանք: Արդեն ավագ նախադպրոցական տարիքում երեխան պետք է ունենա նկարագրելու, վերլուծելու, համեմատելու կարողություններ: Շատ կարևոր է , որպեսզի երեխան ձեռք բերած գիտելիքը կարողանա կիրառել առօրյա կյանքում:

Նախադպրոցական կրթության ավարտին երեխան պետք է կարողանա կապակցված խոսք կառուցել, հարցերին տալ ամբողջական պատասխան, ընդհանրացումներ կատարել, ունենա հարուստ բառապաշար, պետք է ճանաչի և ճիշտ արտաբերի հնչյունները, կատարի բառի հնչյունային վերլուծություն:

Շատ կարևոր է նաև տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորումը : Ավագ ն/դպ տարիքում երեխան պետք է ունենա հաշվելու, պարզագույն թվաբանական գործողություններ կատարելու կարողություն, ինչպես նաև տարբեր առարկայական խմբեր համեմատելու , հավասարեցնելու կարողություններ:

Նախադպրոցական կրթության արդյունքում երեխան պետք է ունենա իրեն փոխանցված տեղեկությունը ընկալելու , յուրացնելու և կիրառելու կարողություններ:

Այս ամենից բացի երեխան պետք է կարողանա նաև դաստիարակի կողմից առաջադրված ուսումնական խնդիրը հասկանալու , խնդրի լուծման համար ուղիներ փնտրելու և առաջադրանքը ժամանակին ավարտին հասցնելու կարողություն:

1.4Նախադպրոցականի սոցիալական նախապատրաստումը դպրոցին

Փաստ է, որ այն երեխաները, որոնք հաճախում են մանկապարտեզ, ավելի հեշտ են հարմարվում դպրոցական առօրյային: Դրա պատճառն այն է ,որ երեխան, մանկապարտեզ գնալով , սովորում է օրվա մեծ մասն անցկացնել առանց ծնողների , նոր միջավայրում հարմարվելու փորձ է ձեռք բերում: Մանկապարտեզում շփվելով իր հասակակիցների հետ ՝ երեխայի մոտ ձևավորվում են սոցիալական հմտություններ: Երեխան սովորում է բարեկիրթ վարք դրսևորել, ենթարկվել կանոններին և որ ամենակարևորն է ապրումակցել ընկերոջ հույզերին, Նախադպրոցական կրթությունը ենթադրում է երեխայի մեջ ձևավորել հասակակիցների հետ շփվելու , թիմային աշխատանք կատարելու, դիմացիցի կարծիքը հաշվի առնելու կարողություններ: Նման կարողությունները երեխայի մեջ ձևավորվում են նախադպրոցական կրթության ընթացքում: Շատ կարևոր է , որ երեխան գիտակցի դպրոց գնալու անհրաժեշտությունը :Այս առումով մեծ ազդեցություն ունի ինչպես մեծահասակների, այնպես էլ իր տարեկիցների վերաբերմունքը դպրոցի և ուսման նկատմամբ: Դեռ նախադպրոցական տարիքից

պետք է դրական վերաբերմունք ձևավորել դպրոցի հանդեպ: Դպրոց գնալով՝ երեխան ձեռք է բերում նոր սոցիալական կարգավիճակ , այսինքն դառնում է աշակերտ: Սոցիալապես զարգացած երեխայի համար այս անցումն առավել հեշտ է լինում:

Մանկապրտեզ –ընտանիք համագործակցություն

Կրթադաստիարակչական աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է մանկապարտեզ –ընտանիք համագործակցություն:Գաղտնիք չէ, որ երեխայի ընտանիքի անդամները նրա առաջին ուսուցիչներն են և նրա դաստիարակության հիմքը դրվում է ընտանիքում: Մինչև նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելը երեխաները շատ բան են սովորում ընտանիքում: Երեխաներն իրենց վրա են կրում ընտանիքի ազդեցությունը, այդ պատճառով էլ դաստիարակը պետք է դա հաշվի առնի և սերտորեն համագործակցի ընտանիքների հետ՝ իհարկե հաշվի առնելով ընտանիքներից յուրաքանչյուրի առանձնահատկությունները և յուրովի մոտեցում ցուցաբերի:

Մանկապարտեզ –ընտանիք փոխադարձ վերաբերմունքը ձևավորվում է մանկավարժական կազմի հետ առաջին իսկ հանդիպումից: Թե որքանով ընտանիքները կներգրավվեն երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացում, կախված է այն հանգամանքից ,թե դաստիարակը ինչպես կներկայացնի աշխատանքի սկզբունքները ,ընթացակարգը, նպատակներն ու գործողությունները: Մեծ նշանակություն ունի նաև փոխադարձ հարգալից վերաբերմունքը:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ծնողներին պետք է ընձեռվի հնարավորություն մասնակցելու իրենց երեխաների կրթադաստիարակչական աշխատանքներին: Նրանք պետք է լինեն կրթական հաստատության ցանկալի հյուրերը: Հմուտ դաստիարակը խրախուսում է ծնողների գիտելիքների և փորձի կիրառումը տարբեր նպատակներով: Օրինակ միջոցառումների ,էքսկուրսիաների ժամանակ կարելի է ճգտագործել նրանց ներուժը:

Պետք է ծնողներին նախապես ծանոթացնել կատարվելիք աշխատանքներին, իմանալ նրանց մասնագիտական հնարավորությունները, ինչպես նաև աշխատանքային ծանրաբեռնվածությունը: Օրինակ հարցաթերթիկի միջոցով կարելի է պարզել, թե ինչով և ինչպես է ընտանիքը ցանկանում օգնել դաստիարակին: Ծնողների հետ աշխատանքը պետք է իրականացվի կազմակերպված , որպեսզի այն ձևական բնույթ չկրի և արդյունավետ լինի բոլոր կողմերի համար: Անհրաժեշտ է հստակ պլանավորել ,թե ինչպես պետք է ընտանիքները ներգրավվեն կրթական գործընթացում:

Ծնողներին պարբերաբար պետք է տեղեկացնել ինչպես երեխաների հաջողությունների, ձեռքբերումների, այնպես էլ դժվարությունների մասին : Ծնողը պետք է իմանա, թե ինչ են սովորել երեխաները մանկապարտեզում, ինչպես նաև ծնողներին պետք է տեղյակ պահել, թե ինպես նրանք կարող են տանը շարունակել աշխատանքները:

Դաստիարակը պետք է անհատական զրույցներ ունենա դյվարություններ ունեցող երեխաների ծնողների հետ, անհրաժեշտության դեպքում օգնի ծնողին ցուցումներով:

Հետազոտական մաս

Հետազոտական աշխատանքի շրջանակներում հարցում եմ իրականացրել ավագ ն/դպ տարիքի երեխաների ծնողների շրջանում՝ պարզելու համար ,թե որքանով են ներգրավված իրենց երեխաների ուսումնառության գործընթացում, որքանով են համագործակցում դաստիարակի հետ, ինչպես են վերաբերվում 5-6 տարեկան երեխաների՝ դպրոց հաճախելուն, ըստ իրենց՝ պատրաստ են արդյոք երեխաները այդ տարիքում դպրոցական ուսումնառությանը: Հարցմանը մասնակցեց երեսուն ծնող:

1. Արդյո՞ք 5-6 տարեկան երեխան պատրաստ է դպրոցական ուսումնառությանը:

1. այո 2. ոչ 3. մասամբ



Հարցման արդյունքից պարզ է դառնում ,որ հարցվածների 60% –ը՝ այսինքն 18 ծնող, նշել է ,,մասամբ,, պատասխանը:Սա խոսում է այն մասին,որ ծնողների մեծ մասի կարծիքով 5-6 տարեկան երեխան լիարժեք պատրաստ չէ դպրոցական ուսուցմանը:

2.Կարևորու՞մ եք ՆՈՒՀ -ի դերը երեխայի դպրոցական ուսումնառության պատրաստման գործում:

1. Այո 2.ոչ 3.մասամբ



Ծնողների 89% – ը, այսինքն 27 ծնող, նշել է <<այո>> պատասխանը՝դրանով փաստելով նախադպրոցական կրթության կարևորությունը երեխայի կյանքում:

3. Ձեր երեխան հաճախու՞մ է որևէ լրացուցիչ խմբակ:

1.այո 2 ոչ



Հարցվածների միայն 12 %-՝ այսինքն 4 ծնող է նշել <<այո>> պատասխանը: Սա փաստում է այն մասին ,որ երեխաների մեծ մասը չեն հաճախում լրացուցիչ խմբակներ՝ հնարավորություն չունենալով այլ միջավայրում հասակակիցների հետ շփվելու սոցիալական հմտություն ձեռք բերել:

4.Ներգրավվա՞ծ եք արդյոք երեխայի ուսումնառության գործնթացում:

1. այո 2. ոչ 3. մասամբ



Ծնողների 87 % -ը, նշելով <<այո>> պատասխանը , փաստել են իրենց ներգրավվածությունը երեխայի կրթադաստիարակչական աշխատանքներում, ինչը խոսում է մանկապարտեզ- ընտանիք սերտ համագործակցության մասին:

5.Նշեք ձեր երեխայի նախասիրությունները:

Վերլուծելով հարցի վերաբերյալ ծնողների նշած պատասխանները ՝ կարելի է ենթադրել ,որ ավագ ն/դպ տարիքում երեխաներն ունեն տարբեր նախասիրություններ:

6. Արդյո՞ք պարբերաբար տեղեկություն եք ստանում դաստիարակի կողմից ձեր երեխայի ձեռքբերումների, հաջողությունների մասին:

1. այո 2. ոչ



Ինչպես տեսնում ենք բոլորը նշել են <<այո >>պատասխանը ՝ ևս մեկ անգամ փաստելով ինչպես իրենց ներգրավվածության, այնպես էլ դաստիարակի հետ համագործակցության մասին:

7. Ինչպե՞ս է ձեր երեխան իրեն դրսևորում անծանոթ միջավայրում:

1. հեշտ է ադապտացվում 2. դժվարությամբ է ադապտացվում



Ծնողների 75 %- ը նշում է, որ իրենց երեխան հեշտ է ադապտացվում անծանոթ միջավայրում, այսինքն ունեն սոցիալ- անձնային զարգացման անհրաժեշտ մակարդակ:

Վերլուծելով հարցման ընդհանուր արդյունքները , պարզ է դառնում որ ներկայումս ծնողները բարձր են գնահատում ՆՈՒՀ –ի դերը երեխայի՝ դպրոցական ուսումնառության պատրաստման գործում : Նրանք ակտիվորեն ներգրավված են

կրթական գործընթացում՝ համագործակցելով դաստիարակի հետ և պարբերաբար տեղեկություններ ստանալով իրենց երեխաների հաջողությունների, ձեռքբերումների մասին: Թեև 5-6 տարեկան երեխաների զգալի մասը հեշտ է ադապտացվում անծանոթ միջավայում, սակայն նրանք դեռևս մասամբ են պատրաստ դպրոցական ուսումնառությանը: Դրա պատճառն այն է, որ երեխաների զգալի մասը ,դպրոց գնալով դեռևս 6 տարին չլրացած, դժվարանում են հաղթահարել ուսումնական ծանրաբեռնվածությունը:

Եզրակացություն

Կատարելով հետևյալ հետազոտական աշխատանքը՝ եկա այն եզրակացության, որ ավագ ն/դպ տարիքի երեխաների զարգացումը պետք է լինի համաչափ: Զարգացման բաղադրիչներից մեկի թերացումը բացասաբար է անդրադառնում մյուս բաղադրիչների վրա: Այսինքն երեխայի հոգեբանական ,ֆիզիկական, մտավոր, սոցիալ –անձնային զարգացումը պետք է լինի համաչափ: Օրինակ, եթե երեխան հոգեբանորեն պատրաստ չէ դպրոցական ուսումնառությանը, դա բացասաբար կանդրադառնա նրա մտավոր, ֆիզիկական զարգացման վրա:

Ճիշտ է, ներկայումս 5-6 տարեկան երեխաների զգալի մասը հեշտ է ադապտացվում անծանոթ միջավայրում, սակայն նրանք դեռևս պատրաստ չեն դպրոցական ուսումնառությանը: Դրա հիմնական պատճառն այն է, որ երեխաների համար հոգեբանորեն դժվար է խաղային գործունեությունից անցում կատարել մտավոր գործունեությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դալլաքյան Ա. , Մարության Ս. << Նախադպրոցական մանկավարժություն>>: Երևան-2008. էջ126

2. Միտոյան Հ. <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>> Երևան 2020 էջ144

3. Միտոյան Հ. , Մանուկյան Լ. և ուրիշներ <<Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր>> Երևան ,2008 էջ141

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ ՄԻՐԱԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

Վանաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……..…3
2. Գլուխ 1. Խաղի դերն ու նշանակությունը……...……4
3. Գլուխ 2. Խաղի ծագումը հասարակության պատմության մեջ և խաղային գործունեության առանձնահատկությունները ….....……....…4
4. Գլուխ 3. Խաղերի դասակարգումը, տեսակները…….…….……..6
5. Գլուխ 4. Ստեղծագործական խաղեր
   4.1 Ռեժիսորական խաղերի ընդհանուր բնութագիրը……..……..7
   4.2 Խաղ-թատերացումներ……..……8
   4.3 Շինանյութով խաղ……..……9
   4.4 Կառուցողական խաղ……...……10
   4.5 Կանոններով խաղ……..…..…11
6. Գլուխ 5. Դիդակտիկ խաղերի էությունն ու մանկավարժական նշանակությունը
   5.1 Դիդակտիկ խաղերի առանձնահատկությունները….....……12
   5.2 Կանոններով շարժախաղեր……....……..…...13
7. Գլուխ 6. Խաղալիք, նրա տեսակները
   6.1 Խաղալիքը երեխայի կյանքում: Խաղալիքի դերն ու նշանակությունը.....15
8. Եզրակացություն……19
9. Օգտագործած գրականության ցանկ…….....…..20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:

Խաղը երեխայի կյանքի, նրանց ստեղծագործական ունակությունների զարգացման եվ ինքնուրույնության դաստիարակության միջոց է: Խաղը զարգացնում է ուշադրությունը, հիշողությունն ու երևակայությունը: Իսկ ո՞վ չի սիրում խաղալ: Մարդու ինչի՞ն է պետք խաղը: Նա դրանով ուրախ է ապրում: Խաղն է, որ օգնում է երեխային դառնալ արագաշարժ, ճարպիկ ու չտխրել անգամ ձախողումներից:

Խաղը հենց այն հնարն է, որը հոգեհարազատ է և սիրված երեխաների կողմից: Խաղը մոգական ուժ ունի: Այն ընդունակ է սնել երևակայությունը:

Խաղը մարդկային, մշակութային համակարգի ուրույն ու անբաժանելի մասն է. Այն մարդու հետ քայլում է նրա զարգացման բոլոր ժամանակներում:

Արդիականությունը կայանում է նրանում, որ այն միտված է օգնելու ճիշտ կազմակերպել նախադպրոցական երեխայի ուսուցումն ու դաստիարակությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է.

- Ուսումնասիրել Խաղը որպես նախադպրոցականի զարգացման և ձևավորման միջոց թեմայով գոյություն ունեցող գիտական, գիտամանկավարժական գրականություն, այլոց փորձը և կատարել եզրահանգումներ:

Աշխատանքի խնդիրներն են.

- Նկարագրել խաղը նախադպրոցականի կյանքում թեմայով հիմնախնդիրը արդի փուլում:
- Բացահայտել նախադպրոցական տարիքի երեխաներին ներկայացվող պահանջները:
- Իրականցնել փորձարարական բաց պարապմունքներ նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողության զարգացմանը միտված:

Աշխատանքի կառուցվածքը.

Սույն հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, 6 գլուխներից, 8 ենթագլուխներից, գրականության ցանկից և եզրակացությունից:

Գլուխ1: Խաղի դերն ու նշանակությունը:

Խաղը երեխայի աշխատանքն է, որի ընթացքում նա ձեռք է բերում չափազանց կարևոր հմտություններ: Դաստիարակները երեխայի օրվա խաղային հատվածը պետք է դիտարկեն որպես ուսումնական ծրագրի շատ կարևոր մաս:

Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները: Խաղի ընթացքում երեխաները ձեռք են բերում հմտություններ, որոնք նրանց համար շատ օգտակար են լինում կյանքի ընթացքում ավելի բարդ հմտություններ յուրացնելիս: Խաղի ընթացում երեխան հաջողության զգացում է ունենում, երբ ներքաշվում է իր իսկ ստեղծած առաջադրանքի մեջ: Այդ գործողությունները չպետք է սահմանափակվեն մեծերի կողմից՝ ճիշտ կամ սխալ,լավ կամ վատ գնահատականներով: Երեխաները պետք է խաղան իրական առարկաներով և բնական իրավիճակներում;

Խաղի միջոցով երեխաները սովորում են.

- մարդկանց, կենդանիներին և առարկաներին բնորոշ հատկանիշները,
- զարգացնել իրենց ստեղծագործական կարողությունները,
- զարացնել պրոբլեմներ լուծելու իրենց հմտությունները,
- սոցիալական հմտություններ
- հմտություններ զարգացման բոլոր ոլորտներում
- հաճույք զգալ, ուրախանալ

Նախադպրոցական տարիքում խաղի միջոցով զարգանում են նաև երեխաների սոցիալական շփման հմտությունները: Գործնական, կառուցողական և երևակայական խաղերը հնարավորություն են տալիս երեխաներին համատեղ խաղալ խաղալիքներով և առարկաներով, սովորել տեքստեր և համագործակցել դերային խաղերում, հերթ պահպանել ու հետևել խաղի կանոններին:[2, էջ 122]

Գլուխ 2: Խաղի ծագումը հասարակության պատմության մեջ և խաղային գործունեության առանձնահատկությունները:

2.1 Խաղի ծագման պատմությունը:

Մարդկության գոյության ողջ պատմության ընթացքում մասնագետները, եկել են այն համոզման, որ խաղը մարդկային գործունեության հետաքրքրիր ձևերից է, որը սկիզբ է առնում մանկությունից և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում: Այն հանդիսանում է մարդկային մշակութային համակարգի անբաժանելի մասը:

Մանկապարտեզում ուսուցումն ու դաստիարակումը պետք է տարվի խաղային գործունեությամբ: Երեխան խաղալով ավելի հեծտժժշտ է գիտելիքներ ձեռք բերում:

Խաղը լիարժեք է դարձնում երեխայի կյանքը, բովանդակալից և հավատ է տալիս սեփական ուժերի նկատմամբ:

Ա. Մակարենկոն գրել է. <<Ինչպես երեխան իրեն դրսևորի խաղի ժամանակ, գրեթե նույնպես էլ կդրսևորի աշխատանքում,երբ մեծանա>>:

Խաղն իրենից ներկայացնում է ներքին պահանջմունքներով պայմանավորվապ գործունեություն, որը յուրաքանչյուր երեխայի համար սուբյեկտիվ ներանձնային նշանակություն ունի: Խաղի բացառիկ նշանակությունը կարևորել են անցյալի նշանավոր մանկավարժներ՝ Յ.Ա Կոմենսկին, Ժ.Ժ. Ռուսոն, Ֆ. Ֆրոբելը, Կ.Դ. Ուշինսկին և այլք: Խ. Աբովյանը խորհուրդ էր տալիս մանկավարժներին «չզրկել երեխաներին անմեղ խաղերից«, իսկ Հ. Թումանյանը գտնում էր,որ «խաղը երեխայի բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն ու էությունը«:

Դերային խաղն իր ձևավորման և զարգացման ընթացքում անցնում է մի քանի փուլ. Կայացման սկզբնական շրջանում սյուժետա-դերային խաղերը մենախաղեր են, որովհետև երեխան խաղում է միայնակ, խաղալիքներով: Այսպես նա սովորում է խաղալ և փորձում է իր ուժերը: 2-3 տարեկանում երեխան ակտիվորեն փնտրում է խաղընկերներ, խաղում է այնտեղ, որտեղ կարողանում է հաղորդակցվել այլ երեխաների հետ:

Խաղը երեխայի ճիշտ զարգացման համար բոլոր տվյալներով օժտված յուրահատուկ է դպրոց է:

2.2 Խաղի նշանակությունը, նրա տեղն ու դերը երեխաների դաստիարակության գործում:

Խաղերն առանձնանում են մի քանի առանձնահատկություններով.

- Խաղը երեխայի կողմից շրջապատող կյանքի արտացոլումն է, բայց միևնույն ժամանակ, խաղում խաղտվում է ժամանակն ու տարածությունը, երեխան խոր հավատով է լցված խաղի նկատմամբ:
- Խաղային գործունեությունը ծագում է առարկայական գործունեության հիման վրա:
- Խաղը բնութագրվում է որպես դեր, դերային-խաղային գործունեություն:
- Խաղային գործունեության ժամանակ շատ կարևոր է խոսքը, քանի որ այն ունի լուրջ, կազմակերպող ֆունկցիա, ընկերների հետ փոխըմբռնում է ստեղծում:
- Խաղային գարծունեությունը ձևավորվում և զարգանում է մեծահասակների օգնությամբ: [1, էջ 69]

Այսպիսով՝ կերպարի, խաղային գործունեության և խոսքի միասնականությունը խաղային գարծունեության առանցքն են կազմում, որը նպաստում է սոցիալական միջավայրի արտացոլմանը:

Նախադպրոցական երեխաների խաղերը ներկայանում են հետևյալ առանձնահատկություններով.

- Խաղային գործունեությանը բնորոշ է սյուժեն, որը տարբեր տարիքային խմբերում տարբեր բովանդակություն և կայունություն ունի:
- Խաղային գործունեության նպատակը սոցիալական դերերի յուրացումն է: Խաղային գործունեության հիմնական միավորը դերն է: Խաղի դերերերով է պայմանավորված խաղի էության ու զարգացման ընթացքը:
- Նախադպրոցականի խաղը ստեղծագործական բնույթ է կրում, որը համարվում է նրա համակողմանի զարգացման դաստիարակության արդյունավետ միջոց:

Գլուխ 3: Խաղերի դասակարգումը, տեսակները:

Խաղի տեսակները

- Մտավոր,
- Զգայական,
- Շարժախաղեր,
- Խաղ-վարժություններ,
- Իմիտացիոն,
- Ստեղծագործական,
- Կանոնով խաղեր:

Ժամանակակից դասակարգում

Ստեղծագործական խաղեր

- Սյուժետա-դերային
- Խաղ-թատերացումներ,
- Կառուցողական,
- Ռեժիսորական,
- Խաղ-երևակայություններ:

Նպատակաուղղված զարգացնող կամ կանոնով

- Դիդակտիկ խաղեր,
- Շարժողական խաղեր,
- Զարգացնող խաղեր: [1, էջ 78]

Կանոններով խաղերը լայնորեն կիրառվում են երեխաների դաստիարակոև ուսուցման գորության գործընթացում: Կանոններով խաղերը նախապես մշակվում և

պատրաստի ձևով մատուցվում են երեխաներին: Կանոներով խաղերը յուրահատուկ նշանակություն ունեն երեխայի զարգացման մեջ, նրանք ուսուցանում են և դաստիարակում, կրթում և զարգացնում, նպաստում են փոխնահատանը, ինքնագնահատմանը:

Շարժախաղեր

- Ռիթմիկ խաղիկներ,
- Ազգային խաղ-զվարճանքներ,
- Խաղ-մրցույթներ,
- խաղ-էստաֆետներ,
- իմիտացիոն խաղեր,
- ազգային շարժողական խաղեր:

Գլուխ 4: Ստեղծագործական խաղեր

4.1 Ռեժիսորական խաղերի ընդհանուր բնութագիրը:

Մինչև վերջերս ռեժիսորական խաղերը դասվում էին ստեղծագործ խաղերի թվին: Նման խաղերում երեխան հանդես է գալիս խաղ բեմադրողի դերում: Երեխան է ընտրում թեման, սյուժեն, սցենարը և կարգավորում ընթացքը: Ի տարբերություն սյուժետա-դերային խաղերի, ռեժիսորական խաղերն իրենց մեջ բովանդակում են անհատական գործունեություն, որն ունի մեկ դերակատար: Այն համարվում է միանձնյա խաղ, որովհետև խաղի մյուս մասնակիցները անշունչ առարկաներ են: Երեխայի զարգացման ընթացքում այս խաղերը ծնվում են ավելի շուտ քանի սյուժետա-դերային խաղերը: Ռեժիսորական խաղերի առավելությունը, դաստիարակող հատկությունը կայանում է նրանում, որ խաղը միայնակ կազմակերպելով զարգանում է հետաքրքրությունը, նախաձեռնելու կարողությունը, ինքնուրույնությունը;

Խաղի նպատակն ու արդյունքը երևակայական են, սակայն երեխան լրջությամբ և խոր հավատով է խաղում: Իր առջև դրված նպատակին հասնելու համար, նա պատրաստ է հաղթահարել ցանկացած խոչընդոտ, իսկ այդ այդ ամենին հասնելու համար,նրանից պահանջվում է երևակայություն, մտածողություն, հիշողություն, ակտիվ խոսք: Այս խաղերին բնորոշ են հուզականությունը, ներքին բավարարվածությունը, բարձր տրամադրությունը: Բոլոր ստեղծագործական խաղերի կառուցվածքային միավորը երևակայական խաղային մտաղացումն է, իսկ մյուս միավորը սյուժեն է: Սյուժեին հաջորդում է խաղի բովանդակությունը, որը կախված է երեխայի ունեցած գիտելիքների, պատկերացումների, ինֆորմացիայի պաշարից: Երեխան շատ շուտ կարող է շեղվել խաղի ընթացքից և անցնել մեկ այլ գործողության: Դա

պայմանավորված է հոգեկանի զարգացման աստիճանով և սոցիալական փորձի պակասով:

4.2 Խաղ-թատերացումներ

Այս խաղերի միջոցով երեխան վերարտադրում է իր երազած իրականությունը, ձգտում է նմանվել սիրելի հերոսներին: Նման խաղերում երեխան օգտագործում է բոլոր տեսակի արտահայտչամիջոցները: Նման խաղերի միջոցով ընկալում են չարի ու բարու, գեղեցիկի ու տգեղի գաղափարը, շատ կարևոր մշակութային արժեքներ: Նրանց մոտ ձևավորվում է սեր և նվիրվածություն արվեստին: Այս խաղի միջոցով ձևավորվում են խոսքի արտահայտչական և քերականական կողմերը, զարգանում է ընդհանուր ընկալունակությունը գեղարվեստական խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Խաղ-թատերացումների զարգացման մանկավարժական պայմանները

1. Երեխայի կողմից գեղարվեստական խոսքը լսելու և արձագանքելու ընդունակություն:
2. Բեմական արվեստի նկատմամբ հետաքրքրություն:
3. Տարիքին հարմար գեղարվեստական գրականության ընտրություն:
4. Թատերական հանդերձանքի և համապատասխան պայմանների ապահովում:
5. Խաղ-թատերացումների հրահրում և ղեկավարում:[1, էջ 92]

4.3 Շինանյութով խաղ

Այս խաղերը կառուցողական են, դրանց միջոցով երեխան ձեռք է բերում պրակտիկ գործունեության կարողություններ, հմտություններ: Այս խաղերն իրենց կառուցվածքով ստեղծարար են և նպաստում են մանկական գործունեության նոր ձևերի առաջացմանը, կատարելագործվում են աշխատանքային գործունեության կորողությունները և հմտությունները:

- ✓ Շինանյութով կառուցողական խաղերի բովանդակությունը պայմանավորված է կառուցելու, ստեղծելու ցանկությամբ, արտաքին աշխարհի կառույցները տարբեր նյութերով վերարտադրելու հնարավորությամբ:
- ✓ Այս խաղերն իրենց բնույթով ինքնուրույն են և նպատակաուղղված:
- ✓ Այս խաղերի ստեղծագործական բնույթը բխում է կառուցելու ընթացքում հորինելու և երևակայելու լայն հնարավորությունից:
- ✓ Կարևորագույն տարրը շինանյութն է, որի բազմազանությամբ է պայմանավորված խաղի մտահղացումը և ընթացքի արդյունավետությունը:

Շինանյութով խաղեր

- Կառուցողական խաղեր
- Երեխան ձեռք է բերում աշխատանքային կարողություններ, հմտություններ
- Զարգանում է երեխայի տարածական երևակայությունը, տրամաբանական մտածողությունը,
- Արդյունաբեր գործընթաց է:[3, էջ 135]

4.4 Կառուցողական խաղ

Կառուցողական խաղի ժամանակ երեխաները կառուցում են բնակարաններ, մարզադաշտեր, խանութներ և այլն: Ավագ ն/դ տարիքում կառուցողական խաղերն ավելի բարդ են և երկարատև, ընդլայնվում է նրանց կոնստրուկտիվ մտածողությունը, զարգանում խոսքը:

Այս խաղում իրականացվում են ֆիզիկական գեղագիտական, բարոյական դաստիարակության խնդիրներ:

Կառուցողական խաղում օգտագործում են բնական, օժանդակ կամ հատուկ ստեղծված շինանյութեր:

- Բնական շինանյութով աշխատելու ընթացքում երեխան հնարավորություն ունի բնության բարիքների հետ, ծանոթանում է նյութերին, նրա հատկություններին:
- Օժանդակ կամ հատուկ ստեղծված շինանյութերով խաղերը տարբերվում են բնանյութերով խաղերից: Այս խաղերը պահանջում են երևակայական խաղային տարածք, միջավայրի պատկերացում և կառուցում, տարածական մտածողության զարգացում, համագործակցության լայն հնարավորություն:

Այս խաղերն ունեն կառուցողական հմտությունների ուսուցումը իրականացնող մի քանի եղանակներ.

- Կառույցի նպատակի և պայմանների հիմնավորում,
- Կառույցի նմուշի ցուցադրում, կառուցողական գործողությունների ցուցադրում
- Պրոբլեմային իրադրությունների առաջադրում:

Երեխաների կառուցողական գործունեության զարգացման նպատակով կազմակերպվում է հատուկ ուսուցման մի շարք ձևեր.

- ✓ Կազմակերպվում են նպատակային էքսկուրսիաներ:
- ✓ Մեծահասակների հետ համատեղ գործունեության կազմակերպում:
- ✓ Երեխաների գործողությունների նախապատրաստում:

Գոյություն ունի կառուցողական խաղերի մի քանի հիմնական տեսակներ.

- Կառուցում նմուշով
- Կառուցում առաջադրված թեմայով

- Կառուցում առաջադրված պայմաններով
- Կառուցում սեփական մտահղացմամբ
- Կառուցում մոդելով[3, էջ 141]

4.5 Կանոններով խաղեր

Պատրաստի բովանդակությամբ խաղերն են, որոնց բովանդակությունն ու կանոները մշակվում են մեծերի կողմից:



Կանոններով խաղերին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ.

- Բովանդակությունն ուղղված է մանկավարժության տարբեր խնդիրների իրականացմանը:
- Ունեն հստակ մանկավարժական խնդիրներ և նպատակներ:
- Խաղի ընթացքում լուծվում են կրթադաստիարակչական խնդիրներ:
- Խաղերը ղեկավարվում են ուղղակի եղանակներով՝ սահմանված կանոներով:
- Խաղին բնորոշ են պատրաստի բովանդակությունն ու կանոների հստակությունը նպաստում է դրանց ինքնուրույն կազմակերպմանը:

Կանոներով խաղերն ազգային խաղեր են, խաղիկներ են, որոնք ունեն հզոր դաստիարակչական ազդեցություն նախադպրոցականի մտավոր, ֆիզիկական զարգացման և սուբկուլտուրայի ձևավորման վրա:

Գլուխ 5: Դիդակտիկ խաղերի էությունն ու մանկավարժական նշանակությունը

5.1 Դիդակտիկ խաղերի առանձնահատկությունները

Դիդակտիկ խաղերն ուսուցողական խաղեր են: Դարերի ընթացքում ձևավորվել ու զարգացել է դիդակտիկ խաղերի հարուստ համակարգ:

Դիդակտիկ խաղերը լայն տարածում են գտել ամբողջ աշխարհում: Դիդակտիկ խաղն ունի ուսուցողական և ճանաչողական նշանակություն:

Այն նպաստում է բազմակողմանի զարացմանը, մտածողությանը, ակտիվացնում երեխայի հիշողությունը: Երեխան կարողանում է հաղթահարել իր առջև դրված դժվարությունները, խնդիրները, ճանաչում շրջապատի առարկաները, երևույթները, նրանց կապը և փոխհարաբերությունը:

Խաղի ժամանակ զարգանում են երեխայի մտավոր ունակությունն ու զգայական ընդունակությունը: Դիդակտիկ խաղի աղբյուրը ժողովրդական մանկավարժությունն է, որը ստեղծել է բազմաթիվ ուսուցողական խաղեր, որոնք նպաստում են երեխաներին խոսելու, երգելու ունակությանը, շարժումների զարգացմանը:

Դիդակտիկ խաղերը լինում են

- *Առարկաներով և խաղալիքներով*
- *Խոսքի զարգացման*
- *Սեղանային տպագիր նյութերով*
- *Մաթեմատիկական*
- *Բնագիտական*
- *Երաժշտական* [3, էջ 162]

Արդի ժամանակաշրջանում դիդակտիկայում ինտեգրվել են նաև համակարգչային դիդակտիկ խաղեր: Խաղերը կառուցված են դիդակտիկ խնդիրներից, կանոնից և խաղային գործունեությունից: Խաղն անցկացնելու համար պետք է նախապատրաստել:

- ✓ Նախապատրաստվել խաղի անցկացմանը
- ✓ Մուտք
- ✓ Խաղի անցկացում, անալիզ:

Դաստիարակը երեխաներին նախապատրաստում է խաղին՝ հարստացնելով նրանց գիտելիքները, կյանքի մասին պատկերացումները, շրջապատող առարկաների մասին, որոնք անհրաժեշտ են խաղի ժամանակ:

- ✓ Առարկայով և խաղալիքներով դիդակտիկ խաղերը հիմնականում խոշոր տիկնիկներով խաղերն են, որոնք կենտրոնը խաղալիքն է:

Նման խաղերը տրվում են վաղ հասակից սկսած: Առաջարկվում է մրցույթ <<Ո՞վ ավելի արագ կհավաքի>>, <<Հրաշալի պարկ>>, <<Ի՞նչ կա պարկում>>:

- ✓ Խոսքային դիդակտիկ խաղերի հիմքում ընկած է խոսքը:

Այս խաղերը պահանջում են հավաքագրելու, դասակարգելու ունակություն, որոնց մեծ մասը խաղ-հանելուկներ են:

- ✓ Սեղանային տպագիր նյութերով խաղ

Այս խաղերը վարժեցնում են երեխայի ձեռքերի կոորդինատային աչքաչափը, ճկունությունը, դիմացկունությունը: Սեղանային տպագիր նյութերով խաղի տարատեսակ է կտրտված նկարներով խաղերը:

- ✓ Երաժշտական խաղերը տրվում են խաղ-զվարճալիքների, զբոսանքների ժամանակ:

5.2 Կանոններով շարժախաղեր

Շարժախաղերը հիմնականում ուղղված են երեխաների ֆիզիկական զարգացմանը, նրանց շարժումների՝ քայլքի, վազքի, թռիչքի, մագլցման, նետման, սողացման, թռչելու կարողության ձևավորմանը:

Շարժախաղերի սկզբնաղբյուրը ժողովրդական խաղերն են՝ խաղ-մրցույթ, ազգային խաղ-զվարճանքներ և այլն:

Շարժախաղերին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- Խաղերն իրենց բնույթով թիմային և մրցույթային են:
- Խաղերը նպատակաուղղված են և կազմակերպված:
- Նպաստում են ընկերական մթնոլորտի ստեղծմանը:
- Խաղերի ընթացում ձեռք բերվող հատկությունները անմիջապես դրսևորվում են և փորձարկվում:



[1, էջ 123]

Շարժախաղերի յուրաքանչյուր տեսակ լուծում է տարաբնույթ առողջապահական, դիդակտիկական և կրթական խնդիրներ, որոնք միավորված ներկայացնում են շարժախաղերի դերն ու նշանակությունը երեխայի համակողմանի զարգացման գործում: Նախադպրոցական հիմնարկներում մեծ դեր ունեն շարժախաղերը, որոնց ճիշտ կազմակերպման դեպքում դրական ազդեցություն է լինում երեխաների համակողմանի զարգացման վրա:

Գլուխ 6: *Խաղալիք, նրա տեսակները:*

6.1 Խաղալիքը երեխայի կյանքում: Խաղալիքի դերն ու նշանակությունը:

Խաղալիքներն անհրաժեշտ են երեխային խաղը լիարժեք դարձնելու համար: Խաղալիքն ընդլայնում է երեխայի աշխարհայացքը, հարստացնում գիտելիքները առարկաների, նրանց հատկությունների մասին, դաստիարակում հետաքրքրություն իրականության երևույթների նկատմամբ, նպաստում ընկերասիրական փոխհարաբերություններին, համաձայնեցված գործողությունների ձևավորմանը:

Խաղալիքը երեխայի մանկության արբանյակն է: Այն սովորեցնում է երեխային ապրել և գործել: Խաղալիքի միջոցով են սովորում կատարել իմաստավորված գործողություններ, ստեղծել հարաբերություններ: Խաղալիքի հետ կատարվող գործողությունները նպաստում են ստեղծագործական գործունեության ձևավորմանը:

Խաղալիքների տեսակներն ըստ Ե.Ա. Արկինի

- Ձայնային խաղալիքներ-չխչխկաններ
- Շարժական խաղալիքներ-գնդակ, հոլ
- Ձենք-նետ ու աղեղ, բումերանգ
- Պատկերային խաղալիքներ-տիկնիկներ, կենդանիների պատկերներ
- Պարան, որից տարբեր պատկերներ են պատրաստում

Խաղալիքների ընտրության պահանջները

- Տարիք
- Նյութ
- Անվտանգություն
- Ամրություն
- Նշանակություն
- Որակ
- Արտաքին տեսք[3, էջ 24]

Խաղալիքի ընտրությունն ըստ տարիքի

Մինչև մեկ տարեկան	**1-3 տարեկան**
Չխկչխկաններ	Սպասք
Փափուկ խաղալիքներ	Ծեփամածուկ
Խորանարդեր	Խճանկար

3-6 տարեկան

Կոնստրուկտոր

Գնդակ

Հեծանիվ

Տիկնիկներ

Մեքենաներ

Բիբաբո

1. Խոսք, բառապաշար
2. Մանր մոտորիկա
3. Հաղորդակցական ընդունակություններ

Խաղալիքները լինում են մի քանի տեսակի.

- Կերպարային
- Դիդակտիկ,
- Տեխնիկական,
- Սպորտային
- Երաժշտական
- Առարկայական,
- Թատերական,
- Հետաքրքրաշարժ
- Շինարարական
- Ինքնաշեն

1. Կերպարային խաղալիքների թվին են պատկանում.
    - Տիկնիկները-իրենց անհրաժեշտ իրերով
    - Զինվոր
    - Նավաստի
    - Ռոբոտներ
    - Գազանանոց
2. Դիդակտիկ խաղալիքներ
    - Քանդովի-հավաքովի աշտարակներ
    - Մոզայկաներ
    - Շաշկի
    - Շախմատ
3. Տեխնիկական խաղալիքներ
    - Տարբեր մակնիշի մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ
    - Տրամվայ
    - Հացի, կաթի, շտապ օգնության մեքենաներ
    - Համակարգչային խաղեր
    - Ինքնաթիռներ
    - Տիեզերանավ
4. Սպորտային խաղալիքներ
    - Ռետինե և փչովի գնդակներ
    - Ցանկապատում
    - Բուլավա
    - Բատմիտոն
    - Բիլիարդ

5. Երաժշտական խաղալիքներ
    - Թմբուկ
    - Դաշնամուր
    - Դուդուկ թառ
    - Մետալաֆոն
    - Շվեր
6. Թատերական խաղալիքներ
    - Տիկնիկային թատրոնի դերակատարող տիկնիկներ
    - Կոստյումներ
    - Խաղ դրամատիզացիայի համար
    - Ծաղրածու
    - Տիկնիկներ ստվերային սեղանային թատրոնի համար
7. Շինարարական խաղալիքներ
    - Խոշոր շինարարական նյութեր հատակ հավաքելու համար
    - Խաղալիքներ՝ ավազի, ջրի, ձյան հետ խաղալու համար
    - Կոնստրուկտորային քանդովի-հավաքովի խաղալիքներ
8. Ինքնաշեն խաղալիքներ
    - Օգտագործվում են սյուժետա-դերային խաղերի ժամանակ, դրանք պատրաստում են երեխաները, ծնողները և դաստիարակները
9. Խաղալիք զվարճանքներ
    - Գույնզգույն ձայնային հոլեր
    - Զվարճալի խաղալիքներ
    - Մարդկանց, կենդանիների ծիծաղաշարժ տեսակներով[3, էջ 187]

Երեխայի խաղի համար խաղալիքը հանդիսանում է ինչպես օբյեկտ, այնպես էլ երեխայի դաստիարակության համար մանկավարժական միջոց, ուստի խաղալիքը երեխային պետք է տրամադրվի՝ հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկությունները: Երեխան պետք է սովորի, որ խաղից հետո պետք է հավաքել խաղալիքները: Եթե երեխայի մեջ վաղ հասակից է դրվում այդ հատկությունը, ապա նրա մեջ մշակվում է ուշադիր, խնայողական վերաբերմունք ցանկացած առարկայի նկատմամբ:

Եզրակացություն

Նախադպրոցական տարիքում ուսուցման ընթացքում խաղային տեխնոլոգիաների կիրառումը ամենաարդյունավետ միջոցն է երեխաների կողմից ուսուցման որակը բարձրացնելու համար: Ուստի յուրաքանչյուր մանկավարժ պետք է ստեղծագործ աշխատի: Ամենակարևորն այն է, որ դաստիարակը պետք է ունենա ստեղծագործական գործունեություն, հմտորեն և մեթոդականորեն ճիշտ օգտագործի այս գործիքը՝ նպաստելով յուրաքանչյուր երեխայի հետաքրքրություններին ու ցանկություններին գիտելիքների յուրացմանը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ խաղերի ներմուծումը ուսումնական գործընթաց նպաստում է ճանաչողական հետաքրքրության խորացմանը, կրթական գործունեության մոտիվացիայի բարձրացմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

- Նախադպրոոցական տարիքում ուսուցման գործընթացում կիրառվող դիդակտիկական խաղի շնորհիվ դ դաստիարակը դառնում է երեխայի ավագ ընկերը, խորհրդատուն, ում երեխան ընդունում է որպես մեծ հեղինակություն ունեցող անձնավորություն, որի հետ կարելի է ազատ ու անկաշկանդ հաղորդակցվել:
- Կիրառելով դիդակտիկական խաղերի բացահայտման արդյունավետ միջոցներ՝ ապահովվում է երեխաների բազմակողմանի զարգացումը: Իսկ դա հնարավոր է միայն նախադպրոցական տարիքում ուսումնասիրվող տարբեր առարկաների մասին բավականաչափ պատկերացումների առկայության դեպքում:

Այսպիսով՝ ճիշտ կազմակերպված դիդակտիկ խաղերն իրենց բազմազանությամբ կարող են գրավել երեխաներին, ինչպես նաև առաջացնել ոգեշնչում: Այս վերելքի շնորհիվ երեխաները կարող են զգալիորեն մեծացնել իրենց ճանաչողական հետաքրքրությունը նախադպրոցական տարիքում ուսուցանվող առարկաների նկատմամբ:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ս.Ա. Մարության Ա.Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>>, բուհական դասագիրք, Երևան 2008, 126 էջ:
2. Ռ. Ծառուկյան, Լ. Սմբատյան, Ս. Մանուչարյան, Ա. Գյուրջյան, Մ. Մկրտչյան <<3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպում այլընտրանքային մոդելներով>>, Դաստիարակի ուղեցույց, Երևան 2018, 196 էջ:
3. Д. Б. Эльконин <<Психология игры>>, Москва 1999, стр. 226:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՇԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Խաղային գործունեության առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

ԿԱՏԱՐՈՂ՝ Հասմիկ Բաբաջանյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Լուսինե Միրաբյան

Վանաձոր 2022թ.

Խաղային գործունեության առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Խաղերի ընդհանուր բնութագիրը.....4

1.1. Խաղային գործունեության առանձնահատկությունները ըստ տարիքային փուլերի 6

Գլուխ 2 13

Խաղի տեսակները, ձևերը, կառուցվածքը.....13

2.1. Ժամանակակից խաղերը իմ վերլուծությամբ 21

3. Հետազոտական աշխատանք 23

Եզրակացություն.....26

Գրականության ցանկ 27

Ներածություն

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ խաղը այլևս նախադպրոցականի համար առաջատար գործունեություն չէ, այն ետ է մղվել և փոխարինվել է համակարգչային, հեռախոսային խաղերով, մուլտերով և չկա մարդկային իրական շփում:

Աշխատանքի նպատակն է.

Ուսումնասիրել գիտամանկավարժական, մեթոդական գրականություն, կատարել եզրակացություն:

Աշխատանքի խնդիրներն են.

1. Նկարագրել խաղի ընդհանուր բնութագիրը, նշել տեսակները, կառուցվածքը:
2. Բացահայտել խաղի կարևորությունը, առաջատար գործունեություն լինելը նախադպրոցականի կյանքում:
3. Վերլուծել հետազոտության արդյունքները և կատարել եզրահանգում:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, 2 գլխից, յուրաքանչյուր գլուխն ունի մեկ ենթագլուխ, հետազոտական մասից և եզրակացությունից:

Հետազոտությանը մասնակցել են թվով 25 ծնող և 27 երեխա:

Հարցաթերթերի նմուշները կցված են աշխատանքին:

Գլուխ 1. Խաղերի ընդհանուր բնութագիրը

Խաղը ծնվում է երեխայի հետ և շարունակվում մարդու ողջ կյանքի ընթացքում: Երեխան ամեն ինչ սովորում է խաղի միջոցով, գիտելիք է ստանում, փորձ ձեռք բերում խաղի միջոցով: Խաղալիս երեխան իրեն ազատ է զգում, անկաշկանդ, ինքնահաստատվում է, լավագույնս զարգանում և դրսևորվում են երեխայի ընդունակություններ ու կարողությունները: Խաղալիս զարգանում է երեխայի աշխարհընկալումը, հուզական և կամային ոլորտները, ուշադրությունը, երևակայությունը, հիշողությունը, խոշոր և մանր մոտորիկան, աշխատանքային և ուսումնական գործընթացները: Երեխան սկսում է աշխարհը ճանաչել խաղի միջոցով: Ապահովում է ֆիզիկական և հոգեկան ներդաշնակ զարգացումը: Խաղային գործունեությունը բացառիկ նշանակություն ունի երեխաների կյանքում: Այն կարևորել են ականավոր մանկավարժներ՝ Կոմենսկին, Ռուսոն, Ուշինսկին, հայ մանկավարժներ և գրողներ՝ Խ. Աբովյանը, Թումանյանը, Արղությանը, Բաբայանը և ուրիշներ:

Թումանյանը գտնում է, որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»: Հավաքելով և մշակելով ժողովրդական բանահյուսության հոգևոր գանձերը, Թումանյանը մշակում է երեխաների համար հայրենագիտական խաղեր, վերլուծում դրանց մանկավարժական արժեքը երեխայի միտքը և բարոյականությունը զարգացնելու գործընթացում» [3, էջ 212]:

Խաղի դերն ու նշանակությունը նախադպրոցականի կյանքում ուսումնասիրել են նաև մի շարք հայտնի հոգեբաններ և մանկավարժներ խորհրդային տարիներին՝ Վիգոտսկին, Ռուբինշտեյն, Լեոնտև, Ժուկովսկայա, Ուսովայա և ուրիշներ: Նրանք գտնում էին, որ յուրաքանչյուր խաղացող երեխա առաջին հերթին ջանում է ինքնահաստատվել հասակակիցների միջավայրում և խաղային գործունեության մեջ կան ինքնահաստատվելու բոլոր հնարավորությունները:

Խաղային գործունեության հիմնական առանձնահատկություններն այն են, որ նախադպրոցականը խաղի ընթացքում բավարարում է իր հիմնական պահանջմունքները՝ ակտիվություն, ինքնուրույնություն, հաղորդակցման և մեծահասակների կյանքին անմիջական հաղորդակից լինելու, արտաքին աշխարհը

ճանաչելու և արտացոլելու. «Ինչպես նշում է Ուշինսկին, երեխան խաղի ընթացքում փորձարկում է իր ապագա կյանքը և փորձում սեփական ուժերը…» [3, էջ 325]:

Խաղային գործունեությունը բնական գործունեություն է, որտեղ չկա հարկադրանք, երեխաները ազատ են, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղի ընթացքում բացահայտվում է յուրաքանչյուր խաղացողի առանձնահատկությունները, նրա ստեղծագործելու ունակությունը:

Խաղի մասին կա մանկավարժական և հոգեբանական տարբեր վերլուծություններ և մոտեցումներ:

Մանկավարժական վերլուծություն կատարողները՝ Շիլեր, Վունդտ, Սպենսեր, գտնում են, որ խաղը արվեստի տարատեսակ է և մարդու ավելացած ուժերի դրսևորման ձև:

Կենսաբանական վերլուծության տեսանկյունից խաղը համարվում է գործիք, որի օգնությամբ երեխան ձեռք է բերում իրեն անհրաժեշտ փորձը:

Գիտնականների մեծ մասը հակված է մտածելու, որ խաղը հասարակության զարգացման ընթացքում ձևավորվող գործունեության հատուկ ձև է, որի շնորհիվ երեխան սովորում է կատարել այն ինչ տեսնում է շրջապատում, այսինքն խաղի մեջ արտացոլում է իրական կյանքը: Սրանից էլ եզրակացնում են, որ խաղը սոցիալական բնույթ ունի:

Առաջին խաղերը հայտնվել են դեռևս մարդկությունից առաջ կենդանիների մոտ: Խաղերն ավելի զարգացած են եղել կապիկների մոտ, նրանք խաղում են այնպիսի խաղեր, որոնք են մարդկանց խաղեր, խաղում են նաև ծիսական խաղեր: Մարդկությունը խաղում է դեռ նախնադարյան ժամանակներից: Քաղաքակրթության զարգացման հետ խաղերը դառնում են ավելի դժվար և բազմազան:

Խաղերը կազմակերպվում են խաղալիքներով: Խաղալիքները հայտնի են հնագույն ժամանակներից՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակից: Խաղալիքները եղել են մարդկանց, կենդանիների, աշխատանքային գործիքների, կենցաղային առարկաների տեսքով: Ժամանակին զուգընթաց խաղալինքերի արտադրությունը առավել զարգացել և բազմազան է դարձել:

Ներկայումս խաղը համարվում է՝ նաև որպես նախադպրոցականի ուսուցման փոխգործուն մեթոդ: Այս մեթոդի առավելությունն այն է, որ խաղի ընթացքում առկա է բարձր հուզական մթնոլորտ և հոգեհարազատ է երեխայի համար: Խաղի բոլոր տեսակները ուսուցանող են, սակայն հստակ ուսուցմանն ուղղված են դիդակտիկ խաղերը, որոնց կանդրադառնամ փոքր-ինչ հետո:

Խաղը համարվում է նաև դաստիարակության ձև: Կրուպենսկայան գրել է. «Նախադպրոցական երեխաների համար խաղերը բացառիկ նշանակություն ունեն, խաղը նրանց համար ուսում է, աշխատանք, դաստիարակության լուրջ ձև» [5, էջ 235]:

Խաղը ինքնաբերաբար չի առաջանում երեխայի մոտ, այլ դրան նպաստում են մի շարք գործոններ՝ խաղալիքները, շրջապատից ստացած տպավորությունները, շփումը մեծահասակների հետ: Տարիների հետ երեխայի մեջ ցանկություն է առաջանում ինքնուրույն գործելու, և, մեծահասակները, երեխային տալիս են համապատասխան խաղալիքներ, որոնք էականորեն տարբերվում են կենցաղային առարկաներից: Երեխան այդ խաղալիքներով սովորում է կատարել պարզ գործողություններ՝ նետել, գլորել, դասավորել, իսկ հետագայում նաև ավելի բարդերը: Բոլոր տեսակի խաղերում դաստիարակը պետք է ներկա լինի՝ որոշ խաղերում որպես կազմակերպիչ, որոշներում՝ որպես խաղընկեր, որպեսզի բարձիթողի վիճակ չառաջանա, երեխաները կարողանան և՛ համերաշխ խաղալ, հաշվի նստել միմյանց ցանկությունների հետ, և՛գեղեցիկ հաղորդակցվեն, չօգտագործեն գռեհիկ բառեր, որոնք կբերեն իրենց հետ դրսից: Սակայն դաստիարակն իր ուղղումները պետք է կատարի աննկատ, առանց ընդհատելու և միջամտելու, որպեսզի երեխան չսահմանափակվի, ճնշվածություն չզգա:

1.1. Խաղային գործունեության առանձնահատկությունները ըստ տարիքային փուլերի

Վաղ տարիքում երեխայի խաղային գործունեության զարգացումը կապված է նրա ընդհանուր զարգացման հետ: Երեխաների մտավոր զարգացման համար մեծ նշանակություն ունեն խաղերը: Երեխան վաղ տարիքում սկսում է շոշափել, թափահարել, թխթխկացնել խաղալիքը, սկզբում տարբեր խաղալիքների հետ կատարում է նույն գործողությունը, իսկ հետո աստիճանաբար դրանք բարդանում են՝

մեքենան ձեռքով վարում է, գնդակը գլորում է, տիկնիկին քնեցնում է և այլն: Արդեն մեկուկես տարեկանից սկսած երեխան անցնում է որոշակի հաջորդականության, իրար հետ կապված գործողությունների կատարմանը: Առարկաների հետ գործողությունները վերածվում են սյուժետային խաղերի: Խաղում կարողանում են արտացոլել մեկ անգամ ստացած տպավորությունները: Եթե 2 տարեկան երեխան չի կարողանում խաղի մեջ արտացոլել իր ստացած տպավորությունը, այլ, ընդամենը, կատարում է գործողություն առարկաների հետ, դա խոսում է մտավոր կարողությունների ուշ զարգացման մասին: Խաղեր կազմակեպելիս պետք է ուշադրություն դարձնել երեխաների իմացական և շարժողական ակտիվությանը: Այս տարիքում պետք է հետաքրքրություն առաջացնել խաղալիքների նկատմամբ, բացատրել խաղալիքի նշանակությունը, ցույց տալ, թե ինչպես են օգտագործում այն, օրինակ՝ քնեցնել տիկնիկին, դնել օրորոցը, ծածկել վերմակով: Եթե այս տարիքում դաստիարակը կարողանա հասնել նրան, որ երեխան օգտագործի առարկա փոխարինողներ կամ երևակայական առարկաներ, դա պարզապես հրաշալի արդյունք կլինի:

Երկու տարեկանում երեխան սկսում է խաղալ ուրիշ երեխաների հետ և սովորում է շփվել խմբում: Նա հուզվում է, երբ չի կարողանում անել այն ինչ ցանկանում է և ստիպված է լինում ենթարկվել մեծամասնությանը: Բայց սա օգնում է, որ երեխան սովորի խաղալ խմբում և ապրել համակեցությամբ: Երեխան սկսում է իրեն զգալ որպես ընդհանուր խմբի անդամ, միաժամանակ փորձում է կատարել մեծի դեր, չնայած նրան, որ հասկանում է, որ ինքը դեռ փոքր է:

Ինչպես արդեն նշեցինք խաղը հասարակ զբաղմունք չէ, այլ դինամիկ զարգացման աղբյուր է: Խաղի ժամանակ երեխան շարժվում է, կատարում բազմաթիվ օգտակար շարժումներ՝ վազում, թռչկոտում, կառուցում և այլն:

Խաղերի միջոցով ընդլայնվում է երեխաների պատկերացումները շրջակա միջավայրի մասին, բնության երևույթների, մարդկանց կենցաղի: Խաղի ընթացքում երեխան յուրացնում է կենցաղային աշխատանքի որոշ հմտություններ՝ սրբում է փոշին, արդուկում է. լվանում ափսեները: Սա նպաստում է, որ երեխայի մոտ հարգանք ձևավորվի աշխատանքի նկատմամբ:

Երկու տարեկանում արդեն զարգանում է նաև կապակցված խոսքը, ստեղծագործական ունակությունները:

Նախադպրոցական տարիքի երեխայի ակտիվության, ինքնուրույնության, երևակայության դրսևորման լավագույն միջոցն են ստեղծագործական խաղերը, որն ապահովում է երեխայի անցումը զարգացման ավելի բարդ փուլ:

Խաղերի ընթացքում նախադպրոցականի ստեղծագործական երևակայության զարգացման պայմաններն են՝ հուզական, բարյացակամ մթնոլորտի առկայություն խմբասենյակում, անհրաժեշտ միջավայրի ստեղծում, երեխայի ինքնուրույնության, ազատության ապահովում դաստիարակի ղեկավարման առկայությամբ: Այս տարիքում, դաստիարակը հանդես գալով որպես խաղընկեր, պետք է օգնի երեխաներին ձևավորելու բարյացակամ վերաբերմունք միմյանց նկատմամբ, սովորեցնի խաղալիքներով կատարել տարբեր գործողություններ, փոխարինել խաղալիքն այլ առարկայով և հուշող հարցերի միջոցով նպաստի խաղի զարգացմանը:

Այս տարիքում արդեն առաջ են գալիս սյուժետադերային խաղերը, որոնց ղեկավարումը պետք է նպատակաուղղված լինի խաղի բովանդակության զարգացմանը, դերերի ճշտմանը և երեխաների ընկերասիրական հարաբերությունների ստեղծմանը: Երեխայի մոտ պետք է ձևավորել դերային վարքի պարզ ձևեր՝ մայրիկ, վարորդ, բժիշկ կամ դառնալ թիթեռ և թռչել, դառնալ նապաստակ և ցատկոտել: Սովորեցնել խաղընկերոջը փոխարինել տիկնիկով և նրան դարձնել գործող կերպար: Սովորեցնել նաև կատարել որևէ կենդանու դեր՝ հաչել շան փոխարեն, մլավել կատվի նման և այլն:

Կյանքի երկրորդ տարում առաջատար են նաև դիդակտիկ խաղերը, զարգացնող խաղերը, թատերականացված և կառուցողական խաղերը, շարժախաղերը, այսինքն՝ բնորոշ են խաղի բոլոր տեսակները: Մանկապարտեզում երեխաների սիրած զբաղմունքներից են խաղ-զվարճալիքները, որոնք ապահովում են ուրախ մթնոլորտ, զարգացնում են խոսքը, ուշադրությունը, անկաշկանդ գործելու կարողությունը:

Խաղի ցանկացած տեսակ կազմակերպելիս պետք է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները, զարգացման փուլերը: Երաժշտական, ռիթմիկ զգացողություններ ձևավորելու, ռիթմն ըմբռնելու և շարժումը համապատասխանեցնելու կարողություններ ձևավորելու համար կազմակերպվում են

նաև երաժշտական խաղեր: Ի տարբերություն մյուս խաղերին երեխաները դիդակտիկ խաղերն ստանում են պատրաստի, դրանց բովանդակությունը որևէ խնդրի արագ լուծում գտնելն է: Երեխայից պահանջվում է համեմատել առարկաները, վերլուծել երևույթները և ինքնուրույն եզրակացություն անել: դիդակտիկ խաղերն անց են կացվում դիդակտիկ նյութերով՝ քարտեր, երկրաչափական պատկերներ և տարբեր խաղալիքներ:

Ներկայացնենք մի դիդակտիկ խաղ երկու տարեկան երեխաների համար կազմակերպվող՝ «Գտի՛ր նմանը և բեր»: Այս խաղում դաստիարակը սովորեցնում է ընտրել առարկաները ըստ գույնի, համեմատել դրանք և գտնել նմանները:

Դաստիարակը սեղանին լցնում է գունավոր գնդիկներ, իսկ մյուս մասը պահում իր մոտ: Մի քանի երեխայի տալիս է որոշակի գույնի գնդիկ, ապա առաջարկում է. «Գտի՛ր նմանը և բեր»: Եթե երեխան չի հասկանում առաջադրանքը, ուղղակի բերում է երկրորդը, այս պարագայում դաստիարակը անվանում է գնդիկի գույնը. «Ես քեզ տվեցի կարմիր գնդիկ»: Իսկ երբ ճիշտ է բերում, դաստիարակը խրախուսում է երեխային. «Կեցցես, ճիշտ ես բերել, ցույց տուր քո գնդիկները երեխաներին»: Խաղը կրկնում ենք մի քանի անգամ:

Խաղում ենք տարբեր դիդակտիկ խաղեր՝ «Մենք վարորդներ ենք», «Ով ինչ ձայն է հանում», «Հագցրու տիկնիկին», «Կառուցենք սյուներ», «Բանջարեղեն գնենք տիկնիկի համար» և ուրիշներ:

Կյանքի երրորդ տարում կամ ինչպես ընդունված է ասել կրտսեր 2-րդ խմբում զարգանում է խոսքը, մտածողությունը, իմացական և շարժողական ոլորտները, որոնցից էլ կախված փոխվում են խաղային գործունեության պահանջները: Այս տարիքում ամենակարևոր նվաճումն այն է, որ գործողությունները ձեռք են բերում կանխամտածված բնույթ, երեխան կարողանում է դնել որոշակի նպատակ և խաղը տանել դեպի այդ նպատակի իրագործումը: Շարունակում ենք զարգացնել կողք կողքի խաղալու, միմյանց ցանկությունները հաշվի առնելու կարողությունը, սովորեցնում ենք համագործակցել: Այս տարիքում խաղի առանձնահատկություններից մեկն այն է, որ արտացոլում է շրջապատող միջավայրը, մեծերի գործողությունները, փոխհարաբերությունները: Կրտսեր խմբերում մի շարք տարրական աշխատանքային ունակություններ յուրացվում են տիկնիկներով խաղերի ընթացքում: Դրանցից են

ինքնասպասարկման, հաղորդակցման կուլտուրայի և աշխատանքային ունակությունները: Այս տարիքում ևս դաստիարակն ուղղորդիչի և խաղընկերոջ դերում է: Խաղերում արտացոլվում են երեխաների հույզերը, արտաքին աշխարհի վերաբերյալ նրանց պատկերացումները: 3-4 տարեկան երեխայի խաղի էությունը կարող ենք բնութագրել որպես դեր, քանի որ խաղի սյուժեն կառուցվում է դերային գործողությունների շուրջ:

Այս տարիքում երևակայությունը թույլ է տալիս օգտագործել իրական խաղալիքից շատ տարբեր փոխարինող առարկաներ, երևակայական առարկաներ:

Խաղային գործունեությունն իր բնույթով լինում է ստեղծագործական և կանոնով: Ստեղծագործական խաղերին են պատկանում սյուժետադերային խաղերը, խաղ-թատերականացումները կառուցողական, ռեժիսորական խաղերը: Այս խաղերի մեջ արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումներն արտաքին աշխարհի վերաբերյալ: Իսկ կանոնով խաղերը կազմակերպվում են մեծահասակի կողմից և ունեն ուսուցանող բնույթ, լուծում են դաստիարակչական բազմաթիվ խնդիրներ: Այս խմբին են պատկանում դիդակտիկ խաղերը, շարժախաղերը: Այս տարիքում դիդակտիկ խաղերը ձևավորում են երեխայի բնագիտական կարողությունները, խոսքը, տարրական մաթեմատիկական պատկերացումները, այդպիսի խաղեր են «Գտիր և անվանիր», «Կախարդական պարկ», «Դասավորիր տներում», «Մեծ ու փոքր տնակներ», «Ինչ պակասեց», «Գտիր զույգիդ» և շատ ուրիշներ:

Կյանքի չորրորդ տարում կամ մանկապարտեզի միջին խմբում երեխայի մոտ դրսևորվում են բազմաթիվ երազանքներ, անիրագործելի մտքեր, որոնք երեխան ուզում է բավարարել: Սակայն իր հնարավորությունները չեն բավարարում դրան հասնելու համար, նա ապրում է և՛ ուրախություն, և՛ տխրություն և այս ճանապարհով դառնում է իրական կյանքի մասնակիցը: Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է. այս տարիքում երեխան իրեն զգում է որպես ընդհանուր խմբի անդամ, և նրանք ընդհանուր ջանքերով հասնում են իրենց ուզածին:

Խաղի ընթացքում երեխան նմանակում է մեծահասակներին, տնային գործերը և սրա միջոցով յուրացնում կենցաղային աշխատանքի որոշ հմտություններ՝ սրբում է փոշիները, լվանում է ու արդուկում տիկնիկի շորերը, նմանակում է տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց: Երեխան հասկանում է, որ խանութ խաղալու

համար պետք է համապատասխան միջավայր, մեքենայով տեղափոխվելու համար պատկերացնել այդ մեքենան:

Այս տարիքում ևս բնորոշ են խաղի բոլոր տեսակները:

Ստեղծագործական խաղեր խաղալիս երեխան ինքն է ստեղծում խաղը և իրագործում այն: Երեխան և՛ հավատում է, և՛ կատարում իր հորինած դերը:

Զարգացնող խաղերին այս տարիքում բնորոշ են ոչ միայն գիտելիքի փոխանցումը, այլև երեխաների գիտակցական գործունեությունը, հոգեկան աշխարհի զարգացումը, սոցիալական փորձի փոխանակումը:

Առողջ և համակողմանի զարգացման համար շատ կարևոր են նաև շարժախաղերի կազմակերպումը՝ խաղ ցատկելով, սողանցումով, վազքով, նետումներով, կքանիստերով և այլն:

Ավագ խմբում ևս խաղը պետք է լինի երեխայի գործունեությունը: Խաղն օգնում է երեխային ինքնուրույն կառավարել սեփական հույզերը, զգացմունքները: Խաղային իրադրությունում երեխան տիրապետում է գիտելիքների, որոնք տեղափոխում են նրան ինտերակտիվ գործունեության ոլորտ, երեխան ինքն իրեն տեսնում է ուրիշի աչքերով, ձեռք բերած գիտելիքները օգտագործում է խաղում, նա փորձում է իշխել, ղեկավարել և ենթարկվել ու հաշտվել: Որոշակի կանոնների ենթարկվելը երեխայի համար տհաճ է, ձանձրալի է, բայց եթե դա արվում է խաղի միջոցով, երեխան սիրով ենթարկվում է բոլոր կանոններին: Այս տարիքում ևս դաստիարակը հանդես է գալիս որպես երեխայի խաղընկեր, որպեսզի խաղը պարտադրանքի չվերածվի:

Խաղը համարվում է ավագ նախադպրոցականի բարոյական դատիարակության լավագույն միջոցը: Այս տարիքում ձևավորվում են որոշակի բարոյական պատկերացումներ, սկսում են կանոնավորել փոխհարաբերությունները մեծերի և հասակակիցների հետ: Երեխաների ստացած գիտելիքները խաղերը դարձնում են առավել բարդ ու բազմազան: Երեխան պետք է կարողանա ընկերներին ներգրավել խաղի մեջ կամ գեղեցիկ ձևով մերժել խաղի հրավերը, եթե չի ուզում խաղալ: Պետք է կարողանա պաշտպանել և առաջ տանել սեփական կարծիքը, միևնույն ժամանակ ընդառաջել ընկերոջը:

«5-6 տարեկանների հետ պետք է կազմակերպել խաղեր, որոնք հարստացնում են երեխաների հուզական ոլորտը, զարգացնում միտքը և դաստիարակում են սեր ուսման

նկատմամբ, վերացնում են վախը և բացասական և հուզական ապրումները, մշակում անկաշկանդ գործելու ունակությունը, զարգացնում են ներքին ազատությունը ինքնավերահսկումը» [4, 119]:

Ավագ խմբում նախընտրելի է խաղալ սյուժետադերային խաղեր, որոնց թեման երեխան պետք է ընտրի ինքնուրույն, միջամտել և օգնել միայն ըստ անհրաժեշտության: Այս խաղը կազմակերպելու համար երեխան պետք է կարողանա կատարել նաև կառուցումներ՝ օգտվելով բնական նյութերից (ջուր, ավազ, կավ, ձյուն և այլն):

Կազմակերպվում են նաև հայրենասիրական խաղեր, որոնք տղաներին դարձնում են ավելի առնական: Խաղում են նաև ընտանիք պատկերող խաղեր, որտեղ պետք է երկու սեռերի երեխաներին տալ ճիշտ պատկերացումներ, ընտանիքի, ընտանեկան կյանքի մասին:

Կազմակերպվում են նաև խաղի մյուս տեսակները՝ խաղ-բեմականացումներ (տիկնիկներով, դիմակներով, խամաճիկներով), շարժախաղեր, դիդակտիկ խաղեր, զարգացնող խաղեր, երաժշտական խաղեր, ազգային, ծիսական խաղեր:

«Ինչպես խաղը, այնպես էլ խաղալիքը կարևոր նշանակություն ունեն երեխայի համար: Խաղալիքը մանկության արբանյակն է, խաղային գործունեության «նյութական հիմքը»:

Խաղալիքները բաժանվում են հետևյալ տեսակների՝ կերպարային կամ սյուժետային, դիդակտիկ, առարկայական, սպորտային, երաժշտական, տեխնիկական, թատերական, հետաքրքրաշարժ, ինքնաշեն» [4, 123]:

Դաստիարակը պետք է երեխաներին օգնի ճիշտ ընտրել խաղալիքը՝ խաղը կազմակերպելիս:

Գլուխ 2

Խաղի տեսակները, ձևերը, կառուցվածքը

Խաղային գործունեությունն իր բնույթով լինում են ստեղծագործական և կանոնով: Ստեղծագործական խաղերն են՝ սյուժետային խաղերը, խաղ-թատերաներկայացումները, կառուցողական խաղերը, ռեժիսորական խաղերը: Կանոնով խաղերն են դիդակտիկ խաղերը, շարժախաղերը, որոնք հատուկ կազմակերպվում են մեծահասակների կողմից և նպատակաուղղված են ուսուցանելու, դաստիարակելու և զարգացնելու:

Ռեժիսորական խաղ: Այս խաղերում երեխան հանդես է գալիս բեմադրողի դերում, ինքնակառավարվում է, ընտրում է սցենար և իրականացնում այն՝ կատարելով բոլոր դերերը:

Ռեժիսորական խաղը ստեղծագործական բնույթի խաղ է և շատ է նման սյուժետադերային խաղին: Բայց ի տարբերություն սյուժետադերայինի՝ ռեժիսորական խաղն անհատական բնույթի է, ունի մեկ դերակատար: «Ռեժիսորական խաղը միանձնյա խաղ է, քանի որ մյուս «մասնակիցները» անշունչ առարկաներ են՝ խաղալիքներ, տարբեր իրեր, փոխարինող առարկաներ» [3, 228]:

Ռեժիսորական խաղերը բնորոշ են վաղ և կրտսեր նախադպրոցականներին: Երեխան կարողանում է իր մշակած սցենարը խաղարկել տարբեր ձևերով՝ բարդացնելով այն, բազմաթիվ նոր անշունչ հերոսներ ներգրավելով: Այս խաղերում շատ կարևոր է խոսքի դերը: Խոսքը ռեժիսորական խաղերում դառնում է խաղի հաջողության գրավականը: Խոսքը ռեժիսորական խաղերի ամենագլխավոր միավորն է: Փոխելով խոսքի արտահայտման ձևը, շեշտդրումը, առոգանությունը՝ երեխան հանգիստ փոխում է սեփական դիրքորոշումը և նաև խաղի ընթացքը: Այս խաղերի ընթացքում կարելի է երեխաներին օգնել հուշող հարցերով, նոր խաղալիքներ տրամադրելով: Ռեժիսորական խաղերի զարգացման կորևոր պայմանը խաղային միջավայրի ապահովելն է:

Սյուժետադերային խաղերը նույնպես ստեղծագործական բնույթի են: Այս խաղերում դրսևորվում են նախադպրոցականների ազատության և ինքնուրույնության ձգտումները, ստեղծագործելու ցանկություններն ու կարողությունները, այստեղ կան

լայն հնարավորություններ սեփական պատկերացումներն արտահայտելու համար: Սյուժետադերային խաղի նպատակն ու արդյունքը երևակայական են, բայց երեխան դրանց լուրջ է վերաբերվում և մեծ ջանքեր է գործադրում դրանք իրագործելու համար:

Խաղի ընթացքի, իրագործման համար պահանջվում է հիշողության, խոսքի, մտածողության և երևակայության լարված և ակտիվ աշխատանք: Այս խաղերի սյուժեն հիմնականում արտացոլում է շրջապատող կյանքը, կենցաղը, երեխայի ստացած պատկերացումները կյանքի տարբեր բնագավառներից՝ ընտանիք, մանկապարտեզ, բուժհաստատություն, տրանսպորտով երթևեկություն և այլն: Եվ հետևաբար խաղում են համապատասխան խաղեր՝ «Մանկապարտեզ», «Բժիշկ-բժիշկ», «Վարսավիրանոցում», «Խանութ-խանութ», ինչպես նաև ստեղծագործություններից վերցրած՝ «Մաշենկան», «Այբոլիտը»:

Այս խաղերում երեխան սովորում է կատարել մի շարք գործողություններ՝կատարել գնումներ, հագցնել ջերմաչափել, քնեցնել, կերակրել, պատրաստել ճաշեր, ընդունել հյուրեր և այլն:

Սյուժետադերային խաղը կազմակերպվում է խմբերով, որին մասնակից յուրաքանչյուրը կատարում է իր դերը: Այս խաղերի ղեկավարումն ուղղված է խաղի մտահաղացմանը և բովանդակության զարգացմանը, դերերի ճշտմանը, ընկերական հարաբերությունների ստեղծմանը: Բայց ղեկավարումը պետք է անել որպես խաղընկեր, չառաջացնել պարտադրանք, որպեսզի երեխան դուրս չգա խաղից:

Խաղ-թատերացումներ: «Այս խաղերը երեխայի կողմից նախաձեռնված բեմականացումներ են, խաղ-ներկայացումներ, որոնց միջոցով երեխան փորձում է վերարտադրել իր երազած աշխարհի այն կատարյալ պատկերը, որին նա ներքուստ ձգտում է» [3, 239]:

Խաղ-թատերացումներում յուրաքանչյուրն ունի իր կերպարը և կոնկրետ անելիքը: Թատերական խաղերը զարգացնում են երեխայի խոսքը, գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը և նպաստում է նրա ինքնադրսևորմանը, ինքնարտահայտմանը: Այս խաղերն օգնում են զարգացնել կապակցված խոսքը, ձևավորել սահուն, արտահայտիչ խոսք: Թատերական խաղերի համար շատ կարևոր է զարգացնող միջավայրը, որը պետք է լինի անվնաս, գրավիչ,

բազմազան, որպեսզի երեխան կարողանա հորինել, երևակայել, օրինակ՝ փայտի կտորը դարձնել ձի, կախարդական փայտիկ կամ զենքի որևէ տեսակ:

Խաղ-թատերացումների և սյուժետային խաղերի մեջ կա ընդհանուր գծեր, և դրանք կարող են փոխարինել միմյանց: Օրինակ «Պապն ու շաղգամը» հեքիաթի բեմադրումը կարող է ցանկություն առաջացնել խաղալ «Թատրոն» սյուժետադերային խաղը: Նախադպրոցական տարիքի երեխաներին բնորոշ են նաև տիկնիկներով խաղ-թատերացումները, սեղանային խաղ-թատերացումները՝ ուրվագծային տիկնիկներով: Ժամանակակից թատերացված խաղատեսակ է «բիբակո-թատրոնը», որն իրենից ներկայացնում է խաղ բեմականացում ձեռնոցի սկզբունքով պատրաստված տիկնիկների մասնակցությամբ: [3, 241]

Խաղ-թատերացումների զարգաման համար անհրաժեշտ են երեխաների կողմից գեղարվեստական խոսքը լսելու և արձագանքելու ընդունակություն, տարիքին համապատասխան գեղարվեստական գրականության ընտրության, թատերական հանդերձանքի և համապատասխան պայմանների ապահովում, խաղ-թատերացումների ղեկավարում:

Իրագործում ենք «Պապն ու շաղգամը», «Չարի վերջը», «Կիկոսի մահը», «Անբան Հուռին», «Կարմիր գլխարկը», «Ծիտը», և այլ հեքիաթների բեմադրումը:

Կառուցողական խաղերն իրենց բնույթով ստեղծագործական են, ինքնուրույն և նպատակային: Երեխան գիտի ինչ է ուզում կառուցել և ամեն ջանք գործադրում է իր նպատակին հասնելու համար: Շինարարակառուցողական խաղերի ստեղծագործական բնույթը բխում է կառուցելու ընթացքում երևակայելու, հորինելու լայն հնարավորություններից: Երեխան ազատ է իր ընտրության մեջ, նա կառուցում է և տեսնում արդյունքը: Այս խաղերը պահանջում են կառուցողական ունակություններ, հմտություններ, որոնք երեխայի կողմից ձեռք են բերվում գիտակցաբար ուսուցման պայմաններում:

Շինարարակառուցողական խաղերի կարևոր բաղադրամասը շինանյութն է, որի բազմազանությամբ է պայմանավորված խաղի մտահղացումն ու ընթացքի արդյունավետությունը: Նախադպրոցական տարիքում շինանյութը բաժանում ենք 3 տեսակի՝ բնական (ջուր ավազ, հող, ձյուն, քար, փայտ), օժանդակ (տուփեր, պարկեր, ստվարաթուղթ և այլն) և հատուկ ստեղծված ու արտադրված երեխաների համար

խաղալիք-շինանյութ, կոնստրուկտոր լեգո, փայզլներ: Նախադպրոցական տարիքում առանձնացնում ենք կառուցում կատարելու հինգ հիմնական տեսակ՝ կառուցում նմուշով, առաջադրված թեմայով, առաջադրված պայմաններով, մտահղացմամբ, կառուցում մոդելով:

Կառուցողական գործունեության զարգացմանը նպաստում են մանկավարժական մի շաք պայմաններ՝ կառուցողական և խաղային տարածության և միջավայրի կազմակերպում, ժամանակի և տեղի ճիշտ ընտրություն, հարկ եղած դեպքում օգնության հասնելու ցանկություն, դրական վերաբերմունք, երկար ժամանակ պահանջող ընդհանուր շինությունների կազմակերպում:

Կառուցողական խաղերի ընթացքում գնահատվում և զարգանում են երեխայի անհատական առանձնահատկություններն ու հետաքրքրությունները: Կառուցողական խաղերը նախադպրոցականի ամենասիրելի զբաղմունքներից մեկն է:

Դիդակտիկ խաղերը կանոնով խաղեր են, որոնք կազմակերպվում են դաստիարակի կողմից: Այս խաղերը ուղղված են ուսման և դաստիարակության բազմաթիվ խնդիրներ լուծելուն: Այս խաղերի ընթացքը պատրաստի է, կախված չէ երեխայի մտածելակերպից կամ երևակայությունից: Դիդակտիկ խաղերին բնորոշ են հստակ նպատակաուղղվածությունը, հստակ խնդրի լուծումը: Այս խաղերը ուսուցման խնդիր լուծելուց բացի լուծում են դաստիարակության հետ կապված բազմաթիվ հարցեր: Դիդակտիկ խաղերը նախադպրոցականի համար աշխարհաճանաչման միջոց է, նրանք պատկերացում են կազմում շրջապատի, բնության երևույթների մասին, ծանոթանում են կենացաղին, սովորում են ճանապարհային երթևեկության կանոնները, ձայները, կենցաղային բազմաթիվ իրավիճակների են տիրապետում, հարստանում է բառապաշարը, հղկվում է խոսքը, զարգանում են ուշադրությունն ու հիշողությունը: Դիդակտիկ խաղերի ամենակարևոր հատկանիշներից մեկն այն է, որ երեխան սովորում է իր համար ամենասիրելի զբաղմունքի՝ խաղի միջոցով: Դիդակտիկ խաղի միջոցով երեխան սովորում է առանց հատուկ մտադրության: Այս խաղերի ընթացքում ստացած գիտելիքը կայուն հիմքեր ունի: Դիդակտիկ խաղերը երեխաներին գրավում են ոչ թե, որ նրանք նոր գիտելիքներ են ստանում, այլ նրա համար, որ շփվում են հասակակիցների հետ, մրցում և ձգտում են հաղթել: Այսինքն խաղն իրագործում է

միաժամանակ մի քանի կարևոր խնդիրների լուծում: «Դիդակտիկ ուղղվածությամբ, ուսուցանվող նպատակով և խնդիրներով, դիդակտիկ խաղերը լինում են՝

- խոսքի զարգացման
- երաժշտական
- մաթեմատիկական
- բնագիտական

Ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են ստանում համակարգչային դիդակտիկ խաղերը»: [3, 252]

Դիդակտիկ խաղերն անց են կացվում մի շարք դիդակտիկ պարագաներով՝ նկարներ, քարտեր, մրգերի և բանջարեղենների մուլաժներ, խաղալիքներ, կենդանիների պատկերներ, պաստառներ տարբեր թեմաներով, բնական նյութերով, նվագարկիչներ, մի խոսքով ամեն ինչ:

Խոսքի զարգացման դիդակտիկ խաղերից են՝ «Ի՞նչ է պատմում իր մասին խաղալիքը», «Իմացիր ինչ կա պայուսակում», «Գտիր և անվանիր», «Կռահիր, թե ով է», «Ով է կանչում» և շատ այլ խաղեր:

Ներկայացնեմ խոսքի զարգացմանը նպաստող «Կենդանաբանական այգում» դիդակտիկ խաղը, որը նպաստում է հնչարտասանությանը:

Խաղի ընթացքը-Դատիարակը շրջանաձև նստեցնում է երեխաներին և ասում, «Հիմա ես ձեզ ցույց կտամ, թե ինչ կենդանիներ և թռչուններ են ապրում կենդանաբանական այգում, իսկ դուք փորձեք ասել, թե ինչ ձայներ են հանում նրանք»:

Գայլը ոռնում է՝ ու՜-ու՜-ու՜

Օձը ֆ22ում է՝ ֆը՜222…

Ոզնին խրթխրթացնում է՝ խըրթ, խըրթ

Սոխակը երգում է՝ ա՜-ա՜-ա՜

Շունը՝ հա՜ֆ, հա՜ֆ, հա՜ֆ

Բադը՝ կը՜ռ, կը՜ռ, կը՜ռ

Սագը՝ ղա՜, ղա՜, ղա՜

Եվ այս շարքը կաղ է անվերջ շարունակվել:

Տարրական մաթեմատիկական պատկերացումներ ձևավորող գիտելիքը ստոգող դիդակտիկ խաղերից են՝ «Մեծ և փոքր շրջաններ», «Դասավորիր տներում», «Շատ քիչ»,

«Մեկ և շատ», «Հաշվեփայտիկներով պատկեր ստացիր», «Արջն ու սողունները», «Ինքնաթիռներ», «Տնակներ և ճանապարհներ», «Գնդիկ բոքոնիկը»: Ներկայացնեմ մաթեմատիկական պատկերացումներ զարգացնող դիդակտիկ խաղ, որը հաճախ եմ կազմակերպում իմ խմբի երեխաների հետ՝ խաղ «Գնդիկ բոքոնիկը»:

Խաղի նպատակներն են՝ շարունակել ծանոթացնել երկրաչափական պատկերներից շրջանին, եռանկյանը, քառակուսուն: Զարգացնել ուշադրությունը, հանգիստ և կենտրոնացված խաղալու կարողությունը: Անհրաժեշտ պարագաներ՝ ափսե, անձեռոցիկ տարբեր գույնի, մեծության:

Խաղի ընթացքը- Սեղանին դրված է շրջանաձև մի առարկա, որը ծածկված է:

Դաստիարակը- Ինչպես իմանանք ինչ կա անձեռոցիկի տակ: Երեխաները պատասխանում են, որ պետք է բացեն անձեռոցիկը և տեսնեն առարկան:

Ապա դաստիարակը ցույց է տալիս եկրաչափական պատկերներ՝ շրջան, եռանկյուն, քառակուսի և երեխաները անվանում են դրանք:

Այնուհետև դաստիարակը խաղատախտակին ամրացնում է մեծ դեղի շրջանը և ասում, որ կպատմի «Գնդիկ բոքոնիկ» հեքիաթը:Կար-չկար մի բոքոնիկ և ցույց է տալիս դեղի շրջանը, նա ուզում էր աշխարհ տեսնել, ինչով էր տեսնելու, այո՛ աչքերով և ամրացնում ենք 2 փոքր կապույտ շրջաններ, բայց տեսնելը քիչ է, պետք է նաև լսել, ականջների փոխարեն ամրացնում ենք 2 դեղին քառակուսի: Բլիթը հոտոտելու համար Բոքոնիկին քիթ է պետք, որը կարմիր շրջան է, ապա բերան, որը կարմիր եռանկյուն է: Բոքոնիկն ամբողջացնելուց հետո, հարցնում ենք, որը ինչ պատկեր է, ինչ գույնի է, որն է մեծ, որը փոքր:

Բնագիտական դիդակտիկ խաղերը պատկերացումներն են ձևավորում շրջակա միջավայրի վերաբերյալ, բնության երևույթների, սեփական մարմնի մասերի, ծառ ու ծաղկի, աշխատանքի մասին: Այս խաղերից են՝ «Համից ճանաչիր», «Աշխատելու համար ում ինչ է պետք», «Ու՞մ ձագերն են», «Փոքրիկ ուլիկները վազում են», «Քամի», «Թռչուններն ու իր ձագերը», և այլն:

Ցանկացած դիդակտիկ խաղ ընտրում և կազմակերպում ենք հաշվի առնելով նախադպրոցականի տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունների շջանակը, իմացական ոլորտը: Դիդակտիկ խաղը պետք է ընտրել կապված այն բանի հետ, թե ինչպիսի խնդիր ենք փորձում լուծել, ինչ նպատակի

ենք ուզում հասնել: Խաղի բարդությունը պետք է համապատասխանի երեխայի մտավոր ունակություններին, ոչ բարդ, ոչ հեշտ, քանի որ երկու դեպքում էլ կկորցնի իր հետաքրքրությունը: Նույն խաղը տարբեր տարիքային փուլերում կարող ենք տարբեր կերպ անցկացնել: Խաղը ընտրելիս հաշվի ենք առնում թե երեխան նախնական ինչ գիտելիքների պաշար ունի և որքան կավելանա դրանից խաղին մասնակցելուց հետո: Դիդակտիկ խաղերը կազմակերպվում են ամբողջ խմբի համար:

Երթևեկության կանոնները սովորելու համար խաղում ենք՝ «Գոչյուն, շշնջյուն, լռություն» կամ «Լուսակիր», «Ճիշտ է, ճիշտ չէ», «Թույլատրվում է, արգելվում է», «Գուշակիր՝ ինչո՞վ կտեղափոխես»:

Երաժշտական դիդակտիկ խաղրեից են՝ «Գուշակիր նվագարանը», «Թաշկինակներով խաղ», «Սուրբ Զատիկի խաղ»:

Ներկայացնեմ «Ազգային խաղիկներից» Սուրբ Զատկին նախորդող չորեքշաբթի օրը տունը հիմնովին մաքրել են, ամեն վատ բան «չիք» են արել ու երգել:

Չիք, չիք մուկը չիք,

Չիք, չիք լուն չիք,

Չիք, չիք կարիճը չիք,

Չիք, չիք օձը չիք:

Երաժշտական դիդակտիկական խաղեր են կազմակերպվում նաև ծափերով, ռիթմն ընկալելու և ռիթմին համապատասխան շարժումներ կատարելով:

Այսպիսով դիդակտիկ խաղերը անփոխարինելի դեր ունեն նախադպրոցականի համակողմանի զարգացման, դաստիարակության գործընթացում: Երեխան ենթարկվում է խաղի կանոններին իր ցանկությամբ, առաջանում է մրցակցություն, հաղթելու ձգտում, խաղն ունի իր վերջնական արդյունքը, որը գնահավում է և՛ դաստիարակի կողմից, և՛ խաղի բոլոր մասնակիցների կողմից: Դաստիարակության տեսանկյունից դիդակտիկ խաղերը նպաստում են ակտիվության, ինքնուրույնության և սեփական ուժերի նկատմամբ հավասար ձեռք բերելուն, զսպվածության ձևավորմանը:

Շարժախաղերը կանոնավոր խաղեր են: Այն նպաստում է երեխայի ֆիզիկական զարգացմանը: Շարժախաղերի ընթացքում ձևավորվում է տարածության մեջ կողմնորոշվելու, շարժումները համաձայնեցնելու, խաղի մեջ տարրական կանոնները

պահպանելու ունակություններն ու կանոնները: Շարժախաղի մանկավարժական արժեքն այն է, որ իրականացնում է կրթադաստիարակչական մի շարք խնդիրներ՝ այն ֆիզիկական դաստիարակության արդյունավետ միջոց է, նպաստում է՝ շարժումները կոորդինացնելուն, միմյանց խանգարելուն, երեխայի ինքնագնահատմանը ու փոխգնահատմանը: Այս խաղերի միջոցով երեխայի մոտ զարգանում է նպատակին հասնելու ձգտումը, դժարությունները հաղթահարելու կարողություն:

Այս խաղում ևս դրական միջավայր է ապահովվում: Շարժախաղերը ձևավորում են նաև արագաշարժություն, ճարպկություն, նպաստում են օրգանիզմի կոփմանը և դիմադրողականության բարձրացմանը: Շարժախաղերի միջոցով կատարելագործվում են երեխաների հիմնական շարժումները, օրինակ քայլքը և վազքը: Ներկայացնում եմ «Գտիր քո գույնը» խաղը, որտեղ զարգանում է ուշադրությունը, վարժվում քայլքն ու վազքը, գունճանաչողությունը:

Խաղի ընթացքը- Երեխաները բաժանվում են խմբերի, ամեն խմբում 3-4 հոգի: Յուրքանչյուր խմբին տրվում է դրոշակ՝ կարմիր, կապույտ, դեղին: Երեխաները կանգնում են սենյակի անկյուններում: Դրոշակները դրվում են անկյուններում և, երբ դաստիարակը ազդարարում է «Գնացինք զբոսանքի» երեխաները ցրվում են, իսկ երբ լսում են «Գտիր քո գույնը», երեխաները հավաքվում են իրենց համապատասխան գույնի դրոշակի մոտ: Երբ խաղը յուրացվում է, կատարում ենք վազքով:

Քայլքով և վազքով բազմաթիվ շարժախաղեր կան՝ «Գնացք», «Տրամվայ», «Շնիկը», «Վազեք դրոշակի մոտ», «Մկները և կատուն» և ուրիշներ:

Կան ցատկերով շարժախաղեր՝ «Ուղիղ ճանապարհով», «Բռնի՛ր մոծակը», «Ծիտիկները և կատուն», « Կենգուրուներ ինձ մոտ», «Գետակի վրայով» և ուրիշներ:

Շարժախաղերը նպաստում են առողջ մրցակցության ապահովմանը, որի արդյունքը տեսնում է և դաստիարակը, և երեխաները: Շարժախաղեր ենք կազմակերպում նաև սողանցումով, մագլցումով, նետելով և թռչելով: Այս խաղերը զարգացնում են նաև աչք-ձեռք կոորդինացիան, նպատակակետին խփելու կարողությունը, զարգացնում են մկանային համակարգը: Երեխաների մոտ ձևավորվում է թիմային աշխատանք կատարելը, նրանք հասկանում են, որ յուրաքանչյուրը պատասխանատու է թիմի հաղթանակի համար, զարգանում է փոխգործունեությունը, ընկերասիրությունը:

2.1. Ժամանակակից խաղերը իմ վերլուծությամբ

Ժամանակակից երեխաները չեն խաղում այն խաղերը, որոնք մենք էինք խաղում մեր մանկության շրջանում՝ ֆուտբոլ, պարան, կլաս, ռեզին, հողով և ցեխով տուն տունիկ, յոթ քար: Հիմա ժամանակակից երեխան սիրում է խաղալ խաղասրահներում, լաբիրինթներում, թռչկոտել բատուտի վրա,խաղալ ոչ թե իրական ֆուտբոլ, այլ սեղանի ֆուտբոլ կամ օնլայն ֆուտբոլ: Ժամանակակից երեխան ավելի շատ օնլայն խաղեր է խաղում, իր ժամանակն անց է կացնում համացանցում: Եթե երեխան գտնվում է խաղասրահում կամ խաղերի քաղաքում նա անպայման պետք է դրանով կիսվի իր օնլայն հարթակներում, այլապես ամեն ինչ կորցնում է իր իմաստը: Այսօր անգամ նախադպրոցական տարիքի երեխան չի պատկերացնում իր օրն առանց համացանցի: Երեխայի օրվա մոտ 50-80%-ը անցնում է տանը նստած: Նրանք խաղում են՝ Toka-boka, Minecraft, Roblax, Frifier և այլ խաղեր, սկսած 3 տարեկանից, ավելի փոքրիկն էլ ունեն խաղեր՝ Tom, Три кота, Детские раскраски, Popit և այլն:

Ժամանակակից երեխաներն ունեն նաև ժամանակակից խաղալիքներ՝ սպիներ, փոփիթ, զսպանակաձև խողովակներ, որոնք, իբր թե հակասթրեսային խաղալիքներ են: Կան նաև արյունոտ կերպարով խաղալիքներ՝ Հագի-վագի տարբեր կերպարներով, պարող կակտուս: Ժամանակակից խաղալիքներից են խաղալիք հեռախոսներ, համակարգիչներ, ռոբոտներ, ինքնակառավարման համակարգով մեքենաներ և ինքնաթիռներ, խոսող և քայլող տիկնիկներ, ջրի նկարչական մարկերներ, մագնիսական կոնստրուկտորներ, կինետիկ ավազով խաղեր, մուլտֆիլմերի կեպարային խաղեր՝ «Щенячий патруль»՝ «Շների առաջնորդը», «Մաշան և արջը», մինիոններ, բադիկ Լալա ֆանֆան, փոքրիկ Յոդան կամ մալիշ Յոդան, քոքոմելոն տիկնիկը, տիկնիկներ՝ Քլեոն, Ջեյդը, Սաշան, Յասմինը, Էլզան, դրոն թռչող ափսեների տեսքով, արքայադուստր պոնիի հավաքածուն և այլն: Այս խաղերն ազդում են երեխայի հոգեբանության վրա, նրանք դառնում են ավելի ինքնամփոփ, ագրեսիվ, չեն սիրում շփվել և խաղալ հասակակիցների հետ: Սովորում և կրկնօրինակում են այն պահվածքը, որը բնորոշ է մուլտֆիլմերից իրենց հասած խաղալիքների կերպարներին: Խաթարվում է երեխայի առողջ ապրելակերպը, նա օրվա մեծ մասն ուզում է անց կացնել համացանցում, իսկ եթե խաղում է ժամանակակից կերպարներով դրսևորում է

անկանոն շարժուձև, խոսում է անհասկանալի, խոսքի զարացումը հապաղում է և երեխան աստիճանաբար նմանվում է իր սիրելի մուլտհերոսին: Սա հանգեցնում է տարբեր տիպի հիվանդությունների ձեռքբերման և շեղում է երեխային օրինաչափ զարգացման փուլերից, սկսում է դանդաղ զարգացման փուլ և երեխան հետ է մնում հասակակիցներից:

3. Հետազոտական աշխատանք

Հետազոտություն եմ անց կացրել Դարպասի մանկապարտեզի կրտսեր 2-րդ և ավագ խմբերում, պարզելու համար թե արդյոք խաղ նախադպրոցականի համար մնում է առաջատար գործունեություն մանկապարտեզից դուրս՝ ընտանիքում, հանգստյան օրերին ի՞նչ խաղեր են խաղում, ու՞մ հետ և որքան ժամանակ:

Հետազոտություն իրականացրել եմ հարցաթերթիկի միջոցով, որին մասնակել է 25 ծնող և 27 երեխա:

1. Հանգստյան օրերին ի՞նչ խաղեր է խաղում ձեր երեխան.

ա) խաղալքներով խաղեր

բ) համակարգչային խաղեր

գ) ընդհանրապես չի խաղում



2. Հանգստյան օրերին որքա՞ն ժամանակ է ձեր երեխան խաղում մաքուր օդում:

ա) 1-2 ժամ

բ) նայած եղանակի

գ) ընդհանրապես չի խաղում



3. Օրվա ընթացքում դուք ժամանակ տրամադրու՞մ եք ձեր երեխաների հետ խաղալու համար:

ա) այո

բ) ոչ

գ) երբեմն



4. Որքա՞ն հաճախ եք ձեր երեխային տանում խաղասրահ:

ա) հաճախ

բ) հազվադեպ

գ) ընդհանրապես չեմ տանում



5. Նկատե՞լ եք, որ ձեր երեխան խաղա ոչ իրական կերպարների հետ:

ա) այո

բ) ոչ

գ) երբեմն



Այսպիսով, շատ ծնողների տված պատասխանի, երեխաների մեծ մասը խաղում է խաղալիքներով, շատ է լինում մաքուր օդում և ունեն վառ երևակայություն, որը դրսևորվում է նրանց խաղերում:

Հետազոտություն իրականացրեցի նաև երեխաների հետ, ահա հարցաթերթիկը՝

1. Հանգստյան օրերին ի՞նչ խաղեր եք խաղում

   ա) խաղալիքներով

   բ) հեռախոսով

   գ) չեմ խաղում մուլտֆիլմ եմ նայում



2. Որքա՞ն եք խաղում մաքուր օդում

   ա) շատ

   բ) քիչ

   գ) ընդհանրապես չեմ խաղում



Երեխաների պատասխաններից պարզվում է լրիվ հակառակ պատկեր, նրանք՝ տանը լինելով, օրվա մեծ մասը խաղում են հեռախոսով, մեծամասնությունը մաքուր օդում շատ է լինում, կախված եղանակային պայմաններից, մի մասն էլ ընդհանրապես չի լինում: Բացահայտվեց նաև, որ երեխաները սիրում են խաղալ բնական նյութերով՝ ջուր, հող, ավազ, խմոր, փրփուր և այլն:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով գիտամանկավարժական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ամսագրեր, այլոց փորձը եկա այն եզրակացության, որ խաղը նախադպրոցականի համար առաջատար գործունեություն, ուսուցման մեթոդ է միայն նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Եթե երեխան չի հաճախում մանկապարտեզ կամ հաճախող երեխան տանն է, նրա միակ զբաղմունքը դառնում է հեռախոսով կամ համակարգչով խաղալը: Բակում շատ հազվադեպ կհանդիպենք խաղացող երեխաների, մարդ-մարդ իրական շփումը գնալով վերանում է, տեղափոխում է վիրտուալ աշխարհ, որը շատ ցավալի է: Համացանցը դարձել է երեխայի կյանքի գլխավոր, գերիշխող մասը: Բայց պետք է փաստել, որ այն շատ վատ է ազդում նախադպրոցականի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման վրա, առաջանում են առողջական լուրջ խնդիրներ՝ լեզվական թերություններ, մտավոր զարգացման հապաղումներ, վարքի խանգարումներ: Այսպիսով, դաստիարակը պետք է իր հերթին ևս մեկ պատասխանատվություն վերցնի՝ հնարավորինս փոխել ծնողների մտածելակերպը, տեղեկացնել, թե ինչ կարևորություն ունի իրական խաղը երեխայի առողջ զարգացման համար, և որքան վտանգավոր են համակարգչային խաղերը փոքրիկների համար:

Գրականության ցանկ

1. Առաքելյան Ռ., «Շարժախաղեր», Երևան, 2009, էջ 110:
2. Գյուլամիրյան Ջ., «Խաղալով սովորենք», Երևան, 2009, էջ 80:
3. Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ., «Նախադպրոցական մանկավարժություն», Երևան, 2008թ, էջ 287:
4. Մանուկյան Լ. և այլք «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», Երևան 2007թ., էջ 141:
5. Սիմոնայն Ք. Ն. և այլք, Մեթոդական ցուցումներ «Դաստիարակությունը մանկապարտեզում» ծրագրի վերաբերյալ, Երևան 1968թ., էջ 270:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինքնուրույնության ձևավորումը նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Հասմիկ Բալյան

Ղեկավար՝ Գագիկ Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ-2022

Բովանդակություն

Բովանդակություն ---------- 2

Ներածություն ---------- 3

Գլուխ 1 ---------- 4

Գլուխ 2 ---------- 9

Գլուխ 3 ---------- 12

Եզրակացություն ---------- 17

Գրականություն ---------- 18

Ներածություն

Հետազոտության արդիականությունը: Այն երեխաները, որոնց ինքնուրույնությունը գտնվում է ցածր մակարդակի վրա, դպրոցում պարտականությունների կատարման ժամանակ հանդիպում են որոշակի դժվարությունների, այդ պատճառով ինքնուրույնության սկիզբը պետք է դնել նախադպրոցական տարիքում: Ինքնուրույնությունը ձևավորվում է որպես երեխայի անձնավորության բարոյա-կամային որակ: Փոքր հասակում երեխայի ին քնուրույն աշխատանքային գործունեությունը դեռ շատ սահմանափակէ, այն ինքնասպասարկման պայմաններում է:

Հետազոտության նպատակը:

- Ուսումնասիրել դաստիարակի ուսումնադաստիարակչական գործունեության դերը երեխայի ինքնուրույնության ձևավորման գործում:

Հետազոտության խնդիրները:

- Ուսումնասիրել նախադպրոցական երեխաների նախաձեռնության և ակտիվության նշանակությունը:
- Բացահայտել անձի ինքնուրույնության նախադրյալների զարգացումը վաղ տարիքում:

Գլուխ 1.

Դաստիարակի ուսումնադաստիարակչական գործունեության դերը երեխայի ինքնուրույնության ձևավորման գործում

<<Երեխաների ինքնուրույնությունը հանդիսանում է գիտնականների և մանկավարժների մշտական ուսումնասիրության առարկա: Այս փաստը կապված է աճող սերնդին պատրաստելու և հասարակության ժամանակակից կյանքի պայմաններին հարմարեցնելու խնդրահարույց խնդրի լուծման անհրաժեշտության հետ: Երեխաները մանկապարտեում պետք է սովորեն ինքնուրույն դնել նպատակ, իրականացնել խնդրի ձևակերպում, խնդիրների լուծման տարբերակներ գտնել, ինչպես նաև միջոցներ և ռեսուրսներ գտնել տվյալ խնդրի լուծման համար>>: [1,17]

Դաստիարակը մանկապարտեզում մասնակցում է երեխայի կյանքին, բավարարում նրա օրգանական պահանջմունքները, նրա օգնությամբ երեխան շարժվում է տարածության մեջ, որը երեխային հնարավորություն է տալիս տեսնելու, շփվելու մեծ թվով առարկաների հետ, ծավալելու տարբեր գործողություններ: Այս ամենը իրագործելու համար, անհրաժեշտ է երեխաների հետ տարվող պլանաչափ, կանոնավոր, դաստիրակչական աշխատանք: Չունենալով ինքնուրույն ընտելացման հնարավություն՝ երեխաները դա կատարում են մեծահասակի օգնությամբ: Դաստիարակը օգտագուրծում է տարբեր հնարներ և միջոցներ, երեխայի ինքնուրույնության ոլորտի ընդլայման և զարգացման համար: Դաստիարակը մասնակցելով երեխայի ինքնուրույնության դաստիարակությանը, միշտ պետք է հաշվի առնի նրանց անհատական և տարիքային առանձնահատկությունները: Դաստիարակը վաղ տարիքային խմբում օգտագործելով աշխատանքի անհատական ձևը՝ հանձնարարությունը, ցույց է տալիս և բացահայտում երեխային, թե ինչպես և ինչպիսի հաջորդականությամբ պետք է կատարել տվյալ աշխատանքը, որպեսզի անհրաժեշտ արդյունքի հասնել: Մանրամասն ցուցադրումը և յուրաքանչյուր գործողության ճշգրիտ բացահայտումը ապահովում են տվյալ աշխատանքի ճիշտ ընկալումը և հետագա վերարտադրումը: Ձևավորելով տարրական գործողություններ, հիմնվում եմ երեխաների ակտիվության, ինքնուրույն գործունեության և մեծահասակի աշխատանքը ընդօրինակելու վրա: Իմ խնդիրն է պահպանել և նպաստել երեխայի «ես ինքս» արտահայտությանը, նաև սովորեցնել երեխաներին նպատակադրված

գործունեության:

Վաղ տարիքում մեծակասակը մեծ ակտիվություն է ցուցաբերում երեխաների ինքնուրույնության դաստիարակության գործում՝ անմիջական օգնություն ցուցաբերելով: Ինքնուրույնությունը ենթարկվում է մեծահասակների պահանջներին և, միևնույն ժամանակ, երեխայի սեփական նախաձեռնությանը: Որքան շատ է երեխան սովորում կարքի կանոնները, այնքան ավելի շատ հնարավորություններ ունի դրանք ինքնուրույն օգտագործելու նոր կենսապայմաններում:[3,65] Օրինակ՝ երբ երեխան ցանկանում է իր ափսեն տանել խոհանոց առանց գցելու, ես նրան օգնում եմ՝ բռնելով ափսեի մի ծայրից: Գործն ավարտելուց հետո երեխան շատ է ուրախանում, քանի որ իր անմիջական մասնակցությունն է ցուցաբերում այդ գործին և դրանով նրա մեջ ձևավորվում են և զարգանում ինքնուրույնության տարրերը: Երեխան բավականություն է զգում, որ այդ աշխատանքը կատարեց մեծահասակի հետ և որ ստացավ անհրաժեշտ արդյունք: Գնալով, աստիճանաբար երեխաները տիրապետում են ինքնուրույն գործունեության կատարմանը և մենք կարող ենք սահամափակվել միայն օգնություն ցուցաբերելով այն դեպքում, երբ երեխան դժվար աշխատանք է կատարում: Դրանից հետո կարող ենք օգտագործել այլ միջոց՝ հիշեցումը: Բերենք հետևյալ օրինակը՝ ես խմբում հիշեցրեցի Արամին, որ աթոռակը մի փոքր բարձրացնի, սեղանի տակը դնելուց առաջ: Այդ դեպքում այդքան աղմուկ չի լինի, ինչպես միշտ: Ապա հանձնարարեցի մյուս աթոռակը նունյպես նույն ձևով տեղադրել: Այս ձևով կարգավորվեց և ամրապնդվեց երեխայի ինքնուրույն գործունեության ճիշտ ձևը: Պարապմունքի ժամանակ երեխաներին ծանոթացնում եմ բնական նյութերի (ջուր, ավազ, ձյուն) և դրանց հետ տարվող աշխատանքին: Միջին նախադպրոցական տարիքի երեխաներին սովորեցնում եմ խնամել և՛ խմբասենյակի, և՛ մանկապարտեզի բակի բույսերը: Սկզբում սովորեցնում եմ ճիշտ բռնել ցնցուղը, տարբերել չոր և խոնավ հողը, զգալ ջրելու անհրաժեշտությունը: Ապա մաքրել բույսերի վրայի փոշին: Այստեղ երեխաների ուշադրությունը կենտրոնացնում եմ բույսերի նկատմամբ հոգատար վերաբերմունքի վրա: Ապա հանձանարարում եմ երեխաներին հիշել կատարած գործողությունների հաջորդականությունը և յուրաքանչյուր երեխայի հնարավություն տալիս ջրել և մաքրել բույսերը՝ իմ ղեկավարությամբ: Երախաներին դուր է գալիս այս ինքնուրույն աշխատանքը, որովհետև իրենք իրենց զգում են անհրաժեշտ բնությանը, հպարտանում են, որ կարող են օգտակար լինել բույսերին: Ավազ խմբում երեխաներն

արդեն խմբասենյակ մտնելով, ինքնուրույն, առանց հիշեցման ստուգում են սենյակային բույսերը և անհրաժեշտության դեպքում՝ ջրում: Բակում բույսերն այնպես պետք է տեղադրված լինեն, որ երեխաների համար հեշտ լինի դրանք խնամել: Կենդանիների մասին խնամքը նույնպես կատարվում է մեծահասակի ղեկավարությամբ և նրա անմիջական մասնակցությամբ: Դաստիարակի աշխատանքում մեծ տեղ է գրավում փորձը: Դա ուղղված է այնպես, որ երեխաները ինքնուրույն հետևեն, ճանաչեն, փնտրեն երևույթների պատճառները, ինքնուրույն հասնեն ցանկալի արդյունքի, որ երեխաներն զգան իրենց նվաճումների ուրախությունն, իսկ սա շատ կարևոր պայման է ինքնուրույն գործունեության ձևավորման և զարգացման համար:

Երեխային ինքնուրույնության մղելով՝ անհրաժեշտ է, որ նա տեսնի գործունեության նպատակը և արդյունքը: Սկզբում նպատակը երեխաների առջև դրվում է մեծահասակի կողմից: Նպատակը դնելիս՝ մեծահասակը պետք հաշվի առնի երեխաների հնարավորությունները: 2-3տ. երեխաները հաճախ իրենց առջև այնպիսի նպատակներ են դնում, որոնք չեն կարոց իրագործել: Եվ, երբ երեխան չի կարողանում ինքնուրույն կատարել այդ աշխատանքը, նրա մոտ հիասթափություն է առաջանում: Ուստի պետք է լինել հետևողական և երեխային հանձնարարություն տալ իր ուժերին համապատասխան: Իսկ եթե երեխան ինքն է ընտրում դժվարին աշխատանքը ինքնուրույն կատարելը, պետք է նրան հնարավորություն տալ կրկին փորձել չստացվող պահերը և միջամտել միայն այն ժամանակ, երբ երեխան չի կարողանում հաղթահարել որոշ խոչընդոտներ:

Միջին և ավագ նախադպրոցականները ծանոթ իրադրություններում սովորաբար սովորում են ինքնուրույն նպատակ դնել: Օրինակ՝ ես (դաստիարակը), երեխաների ուշադրությունը կենտրոնացնելով սենյակի անկարգության վրա, հնարավորություն եմ տալիս երեխաներին ինքնուրույն մտածել, թե ինչպես կարգի բերել սենյակը: Բայց, իհարկե, չպետք է գերագնահատել երեխաների հնարավորությունները: Փորձերը ցույց են տվել, որ երեխաները անծանոթ իրավիճակում սպասում են, որ իրենց հանձնարարեն այս կամ այն կատարել: Օրինակ՝ իմ այն հարցին, թե ինչ պետք է անել զբոսանքի գնալուց առաջ, երեխաները պատասխանում են , որ պետք հավաքել խաղալիքները, դասավորել աթոռակները և այլն: Եվ այս ամենը երեխաները առանց իմ միջամտության, ինքնուրույն կատարեցին, որովհետև երեխաները այդ պրոցեսը միշտ

կատարում են զբոսանքից առաջ և նրանցից յուրաքանչյուրը գիտի իր պարտականությունները: Բայց մյուս անգամ, երբ ես հանձնարարեցի հավաքել խաղահրապարակի խաղալիքները, նրանք չկարողացան դրանք ինքնուրույն տեղավորել, որովհետև այս անգամ ուրիշ տեղ և այլ ձևով պետք էր կատարել: Այստեղ օգնության եմ գալիս ես՝ (դաստիարակը): Այս դեպքում պետք է հիշել նաև այն, որ օրեցօր կրկնվող նույն գործողությունները ամրապնդում են այս կամ այն գործը կատարելու ձևը, բայց միշտ չեն տանում ինքնուրույնության զարգացմանը: Տիրապետելով որևէ գործողության՝ երախան կորցնում է իր հետաքրքրությունը այդ գործի հանդեպ, որովհետև դա իրենից ավելորդ ճիգեր չի պահանջում և նա շատ հանգիստ է վերաբերվում այս փաստին, որ այդ աշխատանքը իր փոխարեն կատարում են այլ երեխաներ կամ հենց մեծահասակը: Ուստի, պետք է սովորեցնել երեխաներին պարզ գործողությունները ինքնուրույն կատարելով աստիճանաբար գնալ դեպի բարդը: 6-7տ. երեխաների ինքնուրույնությունը ձևավորվում և արգանում է է ավելի շատ այն դեպքում, երբ նրանք իրենց ինքնուրույն գործունեության արդյունքում ստանում են նյութական, տեսանելի արդյունք, օրինակ թղթից որևէ իր պատրաստելիս, խորանարդիկնորվ տուն կառուցելիս և այլն:

Վաղ տարիքի երեխաների համար ինքնուրույն կատարած աշխատանքի արդյունքը առաջին հերթին կապվում է մեծահասակի գնահատականի հետ, որովհետև այն մեծ ազդեցություն է ունենում երեխայի վրա, բարձրացնում որևէ բան ինքնուրույն և էլ ավելի արդյունավետ կատարելու ցանկությունը: Շատ կարևոր է, որ երեխան գիտակցի ինքնուրույն գործունեության արդյունքում իր նվաճումները: Այդ նվաճումները մեծահասակը պետք է նշի, երեխայի գործողությունների արագությունը, հնարամտությունը, առանց շեղվելու և ինքնուրույն մինչև վերջ աշխատանքը հասցնելու և առավել լավ արդյունք ստանալու համար:

Դաստիարակը պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծի մանկական ինքնուրույն աշխատանքի համար՝ պետք է ապահովել տեղը, ժամանակը օրվա ռեժիմում, ընտրել, ձեռք բերել երեխաների ուժերին համապատասխան կահավորանք, դրանք տեղադրել երեխաների համար հարմար տեղերում, պահպանել աշխատանքի առողջապահական պահանջները՝ խմբասենյակի մաքրություն, թարմ օդ, բավարար լուսավորություն, հետևել, որ յուրաքանչյուր երեխա իր ինքնուրույն գործունեության ժամանակ կատարի ճիշտ շարժումներ:

Այս տարիքում պետք է խորապես ձևավորել և զարգացնել երեխայի ինքնուրույնությունը գործունեության բոլոր ձևերում: Ինքնուրույնությունը ձևավորվում է որպես երեխայի անձնավորության բարոյա-կամային որակ: Փոքր հասակում երեխայի ինքնուրույն աշխատանքային գործունեությունը դեռ շատ սահմանափակ է, այն ինքնասպասարկման սահմաններում է:

Կրուպեսկայան նշում է ինքնասպասարկման անհրաժեշտության նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխայի համար. Դա կայանում է նրանում, որ երեխան մեծահասակին ազատում է իրեն սպասարկելու աշխատանքից: Իսկ ինչպես գրում է Ա.Ս. Մակարենկոն «Մենք լավ գիտենք, թե որքան ուրախ ու երջանիկ են ապրում այն մարդիկ, ովքեր շատ բաներ են կարողանում անել, որոնց ամեն ինչ հաջողվում է, ովքեր ցանկացած իրադրությունում իրենց չեն կորցնում: Եվ ընդհակառակն, մեզ մոտ միշտ կարեկցանք են առաջացնում այն մարդիկ, ովքեր չեն կարողանում սպասարկել նույնիսկ իրենց, և միշտ կամ դայակի, կամ ընկերների, կամ ծնողների անհրաժեշտություն ն են զգում: Իսկ եթե նրանց ոչ ոք չի օգնում, նրանք այդպես էլ ապրում են անփույթ ու անխնամք»:

Գլուխ 2.

Նախադպրոցական երեխաների նախաձեռնության և ակտիվության նշանակությունը

Երեխաների ինքնուրույնության ձևավորման և զարգացման գործում առաջատար դերը մանկապարտեզում պատկանում է դաստիարակին: Նա մանրամասն ցուցադրում է և բացատրում յուրաքանչյուր գործողությունը, ապա երեխաների հետ միասին կրկնում դրանց հաջորդականությունը և հանձնարարում կատարել ինքնուրույն: Երեխայի ձգտումը կատարել որևէ բան ինքնուրույն կարևոր պայման է հանդիսանում նրա անձնավորության ձևավորման գործում: Երեխայի ինքնուրույն գործելու առաջին փորձերը ձևավորվում են անձնավորության այնպիսի որակներ, ինչպիսիք են ինքնուրույնությունը, նպատակաուղղվածությունը, ակտիվությունը, նախաձեռնությունը: Ինքնուրույնությունն ուղղված է ներքին ազատության, գործողությունների ազատ ընտրության ձևավորմանը: Նրանում է կայանում պատասխանատվության հիմքը:[6,67] Սա այն կարևոր պայմանն է, առանց որի անհնար է պատկերացնել երեխայի հոգեկանի զարգացումը և բազմակողմնակի դաստիարակությունը: Մեծահասակը պետք է անընդհատ խրախուսի երեխայի ակտիվությունը, նախաձեռնությունը, ստեղծի այնպիսի պայմաններ, որ երեխաները իրենց նախաձեռնությամբ, իրենց ակտիվությամբ հասնեն իրենց ցանկալի նպատակին: Երեխայի ակտիվությունը կարող է արտահայտվել երեխայի գործունեության տարբեր ձևերում (խաղ, աշխատանք, պարապմունք), կարող է արտահայտվել երեխայի հետաքրքրություններում և կենցաղում:

Երեխայի ակտիվությունը կապված է մեծահասակի գործողությունների ընդօրինակման հետ: Այս գործողությունները նրանք ակտիվորեն վերարտադրում են իրենց խաղերում, կենցաղում: Սա արտահայտվում է նաև նրանով, որ երեխաները ցանկանում են օգտակար աշխատանք կատարել:

Երեխայի նախաձեռնությունը, ակտիվությունը կարող է արտահայտվել տարբեր պարապմունքներում՝ ծեփի, ապլիկացիայի, նկարչության և այլն, և բարձրացնել ինքնուրույնությունը: Այստեղ նախադպրոցականի ստեղծագործական գործունեությունը և անսահման երևակայությունը նրան հնարավորություն են տալիս

ինքնուրույն գործունեության մեջ և բավականություն ստանալ դրանց արդյունքով: Պարապմունքների և խաղերի միջև եղած ժամանակ երեխաներին հնարավորություն տալ գործելու սեփական նախաձեռնությամբ: Սա շատ է բարձրացնում նրանց ակտիվությունը և նպաստում ինքնուրույն գործելուն: Հիմնվելով նրանց գիտելիքների, փորձի, կարողությունների և ընդունակությունների վրա՝ նրանք ցանկացած դեպքում կարող են ինքնուրույն ծեփել, կարել, կատարել ապլիկացիոն աշխատանք: Նրանք ինքնուրույն կարող են օգտվել տարբեր նյութերից և օգտագործել որևէ գործունեության մեջ: Հատկապես մեծ է երեխայի ակտիվությունը նկարչության մեջ, որովհետև նկարչությունը երեխաների ամենասիրած ինքնուրույն ստեղծագործական գործունեության ձևն է:

Իրենց նախաձեռնությամբ երեխաները կարող են դիտել որևէ նկար, կամ բակում մի ծառ և դա վերարտադրել թղթի վրա: Սա ունի որոշ դժվարություններ, որովհետև երեխան պետք է այնպես վերարտադրի նկարում, որ այն ոչ միայն ինքը հասկանա, այլ նաև մյուս երեխաները և մեծահասակը: Հատկապես մեծանում է երեխաների ակտիվությունը, երբ, ես նրանց ուշադրությունը հրավիրում եմ աշնան ծառերի վրա, նրանց բազմագույն տերևների վրա և ասում, որ երեխաները կարող են դրանք ցանկացած գույնով ներկել: Երեխաները ակտիվ փոխանցում են մատիտները, յուրաքանչյուրը տետրում նկարելուց հետո ցույց են տալիս ինձ: Ես երեխաներին հնարավորություն են տալիս օգտագործել ցանկացած գույն, նույնիսկ եթե դա չի համապատասխանում իրականությանը: Երեխան այստեղ մտցնում է որևէ ինքնուրույն տարր և դրանով իսկ տարբերվում մնացած երեխաներից: Իրենց նախաձեռնությամբ երեխաները կարող են ունկնդրել երեա;տություն նկարչության ժամանակ, որը բարձրացնում է նրանց տրամադրությունը և նպաստում ցանկալի արդյունք ստանալուն:

Համատեղ աշխատանքում երեխաները մտերմանում են, ակտիվ օգնում են միմյանց, նպաստում համընդհանուր գործին: Այս օրինակը ցույց է տալիս, որ երեխաների նախաձեռնությունն ու ակտիվությունը նպաստում է աշխատանքն ինքնուրույն պլանավորելու ունակությանը: Սա խոսում է նախադպրոցականի ինքնուրույնության զարգացման բարձր մակարդակի մասին, որն արտահայտվում է նրա գործունեության տարբեր ձևերում: Իմ խնդիրն է ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ երեխաները ինքնուրույն, իրենց նախաձեռնությամբ պլանավորեն իրենց

գործունեությունը:

Պետք է հիշել, որ երեխաների նախաձեռնությամբ կատարված ամեն մի գործ նպաստում է նրա ակտիվությանը, բարձրացնում միմիյանց օգնելու ցանկությունը, հետաքրքրությունը և դրական լիցքեր հաղորդում նրանց:

Գլուխ 3. Անձի ինքնուրույնության նախադրյալների զարգացումը վաղ տարիքում

Ինչպես ասում են փորձագետները, մանկավարժներն ու հոգեբանները, ինքնուրույնությունը հոգեվիճակ է , որը պարունակում է ունակություն՝ իր առջև խնդիր դնել և առանց այլոց օգնության , կատարել գործողություններ ՝ նպատակին հասնելու համար: [5,50]

Մենք խոսեցինք, որինքնուրույնության ձևավորումը կարևոր պայման է երեխայի անձնավորության ձևավորման և բազմակողմանի դաստիարակության համար: Ինքնուրույնությունը ձևավորվում է որպես անձնավորության բարոյա-կամային որակ: Վաղ տարիքի երեխան իր գործունեության մեջ ակտիվորեն ինքնուրույնության ձգտում է արտահայտում: Այդ պատճառով վաղ տարիքում նպատակահարմար նախադրյալներ են ստեղծվում երեխայի ինքնուրույնության ձևավորման և զարգացման համար: Զարգացող ինքնուրույնությունը ապահովում է երեխայի բարոյա-կամային որակների ձևավորումը, բարձրացնում հասակակիցների և մեծահասակների հետ փոխհարաբերությունների ակտիվությունը: Ինքնուրույնության ոչ լիարժեք ձևավորումը, տանում է մանկան կամակորության, համառության մեծացման և զարգացնում երեխայի՝ միշտ շրջապատի օգնությանը դիմելու սովորությանը: Իսկ ինքնուրույնության ճիշտ զարգացումը անհրաժեշտ է այնպիսի հատկանիշների ձևավորման համար, ինչպիսիք են փոխօգնություն և հոգատարություն շրջապատի նկատմամբ: Վաղ տարիքի երեխաների ինքնուրրույնությունը ձևավորվում է գործունեության տարբեր ձևերում և դրա զարգացման համար գնալով բարդանում են ինքնուրույնության ոլորտի ներկայացվող պահանջները: Դա արտահայտվում է այն բոլոր գործողություններում, որոնք երեխան կատարում է առանց մեծահասակի օգնության: Աստիճանաբար երեխայի ինքնուրույնության զարգացման մակարդակը գնալով բարձրանում է գործունեության տարբեր ձևերում (խաղ, աշխատանք, պարապմունք), դրանց կազմակերպման և պլանավորման մեջ:

Իհարկե, ինքնուրույնության ձևավորման համար շատ կարևոր է մեծահասակի դերը, որն անմիջական ներգործությամբ, միջամտությամբ նպաստում է այդ պրոցեսին: Ինքնուրույնության ձևավորման համար անհրաժեշտ է հատուկ պայմաններ ստեղծել երեխայի ինքնուրույնությունը ակտիվացնելու համար, հետաքրքրություն առաջացնել

ինքնուրույն գործունեության համար, դաստիարակել նախաձեռնություն, նպատակասլացություն, աշխատանքի մինչև վերջ հասցնելու կարողություն: Այսպիսով, վաղ տարիքը նպաստավոր շրջան է երեխայի ինքնուրույնության ձևավորման համար:

Երեխայի ինքնուրույնությունը արտահայտվում է այն ժամանակ, երբ 2-3 ամսական երեխային փորի վրա պառկեցնելը տալիս է այն արդյունքը, որ երեխան ձեռք է բերում գլուխը ինքնուրույն բարձրացնելու և պահելու կարողությունը: Այնուհետև զարգանում են որևէ առարկա բռնելու կարողությունը, ապա չորեքթաթ շրջապատում ինքնուրույն շարժվելու ունակությունը, որի ժամանակ ծանոթանում են շատ առարկաների հետ: Այստեղ դրվում են ինքնուրույն քայլելու նախադրյալները: 9-12-րդ ամիսներին երեխան սովորում է ինքնուրույն քայլել, որը կարևոր դեր է խաղում երեխայի հոգեկան զարգացման գործում: Երեխայի I ինքնուրույն քայլերը հատուկ ուշադրության են արժանի: Սովորաբար հարազատներից որևէ մեկը երեխային դրդում է կատարելու առաջին քայլերը: Պետք է միշտ հիշել, որ երեխայի I քայլերը կապված են բարձր հուզականության հետ: Մեծահասակի ուշադրությունը, խրախուսանքը ոգևորում են երեխային և տրամադրում ինքնուրույն շարժվելու: Տիրապետել քայլին միայն չի նշանակում առանց մեծահասակի օգնության, ինքնուրույն տեղափոխվել տարածության մեջ, այլ նաև վազել, ցատկել, մագլցել, բարձրանալ և իջնել աստիճաններով և այլն: Այսպիսով, քայլը և ուղղահայաց դիրքը կարևոր դեր են խաղում երեխայի հետաքրքրության և ճանաչողության զարգացման գործում, նպաստում երեխայի ինքնուրույնության ոլորտի ընդլայնմանը, որովհետև տարածության մեջ ուղղություն գրաված երեխան արդեն կարող է հասնել իր նպատակին ինքնուրույն, առանց մեծահասկի օգնության:

Վաղ տարիքի երեխաները բավականին ակտիվ ինքնուրույնություն են ցուցաբերում ինքնասպասարկման ոլորտում: Այստեղ անհրաժեշտ է լուրջ և համառ աշխատանք՝ երեխաների ինքնասպասարկման տարրական գործողություններ սովորեցնելու համար: Ինքնասպասարկման ժամանակ երեխայի առջև դրվում է կոնկրետ նպատակ, որի անհրաժեշտությունը հասկանալի է երեխային:

Հաշվի առնելով երեխաների հնարավորությունները՝ անհրաժեշտ է սիստեմատիկաբար և հետևողականորեն սովորեցնել երեխաներին և գործնականում կիրառել այդ գործողությունները այնքան ժամանակ, մինչև յուրաքանչյուր երեխա

կարողանա ինքնուրույն սպասարկել իրեն, հետևել իր արտաքին տեսքին: Սկզբում սա կրում է մեծահասակին ընդօրինակման բնույթ:

Հետագայում էլ անհարժեշտ է մեծ ուշադրություն երեխայի ինքնուրույն գործողությունների նկատմամբ:

Յուրաքանչյուր գործողության յուրացում պահանջում է մեծահասակի կողմից մանրամասն ցուցադրում և բացատրում: Այդ ժամանակ որոշիչ նշանակություն ունի երեխայի ակտիվությունը: Եթե չկա երեխայի ակտիվությունը, նախաձեռնությունը, ապա ինչքան էլ բացատրեն, ցուցադրեն, այն անարդյունք կլինի: Ինքնուրույն լվացվելը, ուտելը, հագնվելը և նման այլ գործողություններ միանգամից չեն ձևավորվում ու զարգանում: Հայտնի է թե ինչպես կոշիկը, որը պետք է հագնել, դառնում է մեքենա, իսկ գդալը՝ դառնում է նավակ: Անհարժեշտ է այս խաղային տարրը օգտագործելով սովորեցնել կանոնավոր լվացվել, հագնվել, ուտել և այլն: Նախ, պետք է հասնել այն բանին, որ երեխաները սիրով գնան լվացվելու: Երեխայի լվացվելու ժամանակ մեծահասակը պետք է խրախուսի երեխայի ինքնուրույն գործողությունները: Բերենք հետևյալ օրինակը՝.

Զբոսանքից հետո ցույց եմ տալիս և օգնում մի երեխայի լվանալ ձեռքերը, միևնույն ժամանակ հնարավորություն եմ տալիս կատարելու մի քանի ինքնուրույն գործողություններ և խրախուսում եմ կատարողներին: Երեխայի ինքնուրույն շարժումները ուղեկցում եմ հետևյալ խոսքերով՝ «թրջիր ձեռքերդ», «վերցրու օճառը» և այլն: Իմ խնդիրն է երեխաների մեջ ամենից առաջ այդ ընթացքի հետ կապված հաճելի զգացում և դրան ակտիվ մասնակցելու ցանկություն առաջացնել: Ապա սովորեցնում եմ սրբիչով լավ սրբվել, օգտվել միայն սեփական սրբիչից և հետո կախել իր տեղը: Այստեղ շատ կարևոր է ոչ միայն սովորեցնել ինքնասպասարկմանը, այլ նաև ստուգել, թե երեխաները ինչպես են դա կատարում: Ես պետք է միշտ հետաքրքրվեմ երեխայի ինքնուրույն գործունեության արդյունքով, այլապես երեխաները արագ կորցնում են հետաքրքրությունը դրա նկատմամբ: Պետք է հիշել նաև, որ օբյեկտիվ գնահատականը օգնում է նպաստել երեխաների՝ ամեն ինչ ինքնուրույն կատարելու ցանկությունը: Օրինակ՝ ես ասում եմ Լիլիթին. «Ի՞նչ լավ է Լիլիթ, որ ոչ միայն ինքդ սրբվեցիր, այլ նաև օգնեցիր Յանային սրբել ձեռքերը, որովհետև նա մի քիչ դժվարանում էր»: Ես, այսպիսով, բարձրացրեցի Լիլիթի ակտիվությունը՝ նման ինքնուրույն և օգտակար աշխատանք կատարելու համար: Ինքնուրույն գործունեության նկատմամբ

երեխաների հետաքրքրությունը բարձրանում է, երբ օգտագործվում են խաղեր, խաղալիքներ (տիկնիկին հագցնել, ուտեցնել): Մենք խաղալիքների միջոցով կարող ենք արտահայտել երեխաների կյանքից վերցրած գործողություններ: Երեխաները նայում են թե, «ինչ են անում» տիկնիկները, կենդանիները և ինքնուրույն դրանք կատարում: Մեծ ազդեցություն ունեն գեղարվեստական գրականությունը, փոքրիկ երգերը, ոտանավորները: Ուտելու պրոցեսում սովորեցնում եմ ինքնուրույն ուտել, ճիշտ օգտվել գդալից, բաժակից: Հաշվի առնելով, որ երեխաները նոր են վարժվում ինքնուրույն ուտելուն և նրանց շարժումները դեռևս քիչ են համաձայնեցված, այդ պատճառով ուտելու ժամանակ նրանցից չպետք է պահանջել լիակատար կարգուկանոն: Ուտելուց հետո երեխաները պետք է անձեռոցիկով մաքրեն բերանը և ձեռքերը:

Վաղ տարիքում երեխաների ինքնուրույն հանվելու և հագնվելու գործողությունը երկար ժամանակ է պահանջում: Երեխաներին հագցնելիս մենք սկզբնական շրջանում զրուցում ենք նրանց հետ, տալիս որևէ հագուստի անունը, որպեսզի երեխայի մեջ ցանկություն առաջանա ինքնուրույն հագնվելու և հանվելու: Պետք է սովորեցնել՝ սկզբում ինչը հագնել, ինչպես հագնել և հանվել: Այս ամենը սովորելով՝ երեխայի մոտ ցանկություն է առաջանում ակտիվ մասնակցելու ինքնուրույն հագնվելուն:

«Ես ինքս». – ասում է երեխան, թեև իրականում նա դեռ չի կարող ինքնուրույն լիովին հագնվել, հանվել: Սակայն ինքնուրույն գործելու ցանկությունը շատ մեծ նշանակություն ունի հետագա ինքնուրույնությունը զարգացնելու համար: Երեխան լսում է մեծահասակին և աստիճանաբար կրկնումգ ործողությունները: Որոշ երեխաներ, որոնք լուռ ձևով են հագնվում, այդ գործողությանը մասնակցելու ձգտում չառաջացնելով, սպասում են, թե մեծահասակը երբ կհագցնի իրենց և ոչ մի փորձ չեն անում ինքնուրույն կատարելու այդ գործողությունը: Որպեսզի երեխաները սովորեն հաջորդականորեն հագնվել ու հանվել, մեծ ինքնուրույնություն ցուցաբերել, ես սովորեցնում եմ իմ օրինակով կամ որոշ նկարների ցուցադրումով: Շատ կարևոր է միշտ խրախուսել և գնահատել երեխաների հաջողությունները: Այսպիսով, երեխաներին աստիճանաբար ինքնուրույնության սովորեցնելն արտահայտվում է նրանում, որ սկզբում այն աշխատանքը, որը երեխայի համար մեծ դժվարություն էր ներկայացնում, նա այդ անում էր մեծահասակի հետ միասին՝ ստանալով որոշակի բացատրություն: Եվ վերջապես, նա սկսում է ինքնուրույն կատարել առանձին

գործողություններ, իսկ հետագայում նա ինքնուրույն կատարում է ողջ աշխատանքը, իհարկե մեծահասակի ղեկավարությամբ: Վաղ տարիքում ձևավորված ինքնուրույնությունը նպաստում է երեխային հետագայում ադապտացվելու կյանքի դժվարին պայմաններին, հաջողության հասնելու գործունեության տարբեր ձևերում, ընդլայնելու ճանաչողության ոլորտը, շփվելու շրջապատի հետ, որը բարձրացնում է երեխայի մակարդակը զարգացման նոր աստիճանի վրա:

Երեխան իր նախասիրություններին համապատասխան, դաստիրակի ուղղորդմաբ, ստանում է ազատ ընտրության հնարավորություն՝ զբաղվելու գործունեության տարբեր ձևերով, որոնք կնպաստեն նաև ստեղծագործական ակտիվության զարգացմանը: Անհրաժեշտ է խթանել երեխաների ինքնուրույն գործունեությունը, ֆիզկուլտուրայի մարզագույքի և սարքավորումների օգտագործումով կազմակերպել տարբեր շարժախաղեր, մարզախաղեր և վարժություններ:

«Սովորեցրու ինձ ինքնուրույն սովորել»

Այն հիմնականում կենտրոնանում է նախադպրոցական տարիքի վրա, քանի որ մեծ մանկավարժը գիտեր՝ ամենակարևորը արժեքներն են, իսկ դրանք ձևավորվում են շատ վաղ տարիքում: Մեթոդոլոգիայի հիմքում սովորողի ազատություններն ու ինքնուրույնությունն են, ինչպես նաև հարգանքը երեխայի անհատականության նկատմամբ: Մոնտեսորիի ուսմունքը ունի երկու հիմնական սկզբունք.

1. Երեխաները հոգեբանորեն ինքնազարգանում են՝ միջավայրի հետ փոխազդեցության արդյունքում:
2. Նրանք ունեն զարգացման բնածին ուղի, բնական ձգտում դեպի գիտելիքը: Պարզապես պետք է ստեղծել միջավայր և տալ ազատություն, այդ դեպքում երեխաներն ինքնաբերաբար կսովորեն ու կզարգանան:

Մարիա Մոնտեսորին գտնում էր, որ կյանքի համար կարևոր երևույթ հանդիսացող ինքնասպասարկման հմտություններն ավելի արագ են զարգանում, երբ երեխան վաղ տարիքից սկսած շրջապատված է լինում հարմարեցված միջավայրով:

Եզրակացություն

Հաշվի առնելով մեր կողմից իրականացված ուսումնասիրված թեման, կարող ենք եզրակացնել, որ երեխայի ինքնուրույնությունը, դրա ձևավորման ու զարգացման գործոնը վաղ տարիքից, մինչև ավագ նախադպրոցական տարիք: Ինքնուրույնությունը ձևավորում է երեխայի կամքը, կամային որակները՝ նպատակասլացություն, հաստատակամություն, վճռականություն: Մենք գիտենք, որ կամքն է առաջ գալիս նպատակների ընտրության և իրականացման ժամանակ, որի համար անհրաժեշտ է որոշակի կամքի ուժ և վճռականություն: Ավագ նախադպրոցական տարիքի երեխայի համար ինքնուրույնությունը լիովին համարում ենք կամային որակ, որովհետև երեխան իր առջև դնում է որոշակի նպատակ և կամային ճիգ է գործադրում այդ նպատակին հասնելու համար: Նախադպրոցական տարիքում ճիշտ ձևավորված և զարգացած ինքնուրույնությունը կարևոր դեր է խաղում երեխայի կյանքում: Ինքնուրույնությունը հնարավորություն է տալիս երեխային բազմապիսի փոխհարաբերություններ հաստատել և՛ մեծահասակի, և՛ հասակակիցների հետ: Նախադպրոցական տարիքում ինքնուրույնության զարգացման շնորհիվ երեխաները տիրապետում են ինքնակառավարմանը, որը շատ կարևոր առաջընթաց է երեխայի անձնավորության որակների մեջ: Այս թեման շատ կարևոր է յուրաքանչյուր դաստիարակի և ծնողի համար: Եվ ես աշխատում եմ հետևել թեմայի պահանջներին, դաստիարակում եմ նման որակներ իմ սաների մեջ, որովհետև փոքր հասակում արմատավորված դրական հատկանիշները պահպանվում են և՛ նախադպրոցական տարիքում, և՛ դպրոցական տարիքում, և՛ ողջ կյանքի ընթացքում: Մենք միշտ հպարտանում ենք մեր շրջապատում վստահ, վճռական մարդկանցով, ցանկանում նմանվել նրանց, իսկ այս ամենի հիմքը դրվում է նախադպրոցական տարիրքում:

Գրականություն

1. Լոգինովա Վ. Ի, Սամորկովա Պ. Գ., Նախադպրոցական մանկավարժություն, 1983թ., 288 էջ:
2. Լյուբլինսկայա Ա.Ա. <<Երեխաների հոգեբանություն>> Ս.Պետերբուրգ 1971
3. «Մանկապարտեզի երեխաների դաստիարակության և ուսուցման տիպային ծրագիր», Երևան, 1986:
4. Միկլեևա Ն.Վ <<Մի քանի խոսք երեխաների ինքնուրույնության զարգացման և աջակցության մասին>> Մոսկվա 2008
5. Նեչաեվա Վ. Գ., Նախադպրոցականների դաստիարակությունը աշխատանքի մեջ, Մոսկվա, 1983թ. 208էջ:
6. Սոկոլով <<Փոքրիկ աստիճաններ դեպի մեծ աշխարհի>> Մոսկվա 2008 122էջ

ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ **«Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը»**

Դաստիարակ ՝ Հասմիկ Գոռի Հակոբյան

Ղեկավար՝ Գագիկ Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3
2. Գլուխ 1. Հայրենաճանաչողություն հասկացությունը և դաստիարակումը.....5
3. Գլուխ 2. Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենաճանաչողության դաստիարակության խնդիրներն ու բովանդակությունը.....6
4. Գլուխ 3. Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենաճանաչողության դաստիարակության մեթոդները.....7
5. Եզրակացություն 14
6. Օգտագործած գրականության ցանկ.....15

Բավական չէ հիացիկ վերաբերմունք,
Անգամ պաշտամունք ունենալ դեպի
անցյալ սերունդը–պետք է գերազանցել նրան:
Հենց սա է հարգանքի այն պսակը, որ
Յուրաքանչյուր հետնորդ պարտավոր է
դնել նախնյաց հիշատակների կոթողին:
Գարեգին Նժդեհ

Ներածություն

Թեմայի արդիականությունը.

Բոլորս մեր հայրենի բնության մի փոքրիկ մասն ենք կազմում: Ժառանգելով մեծ պատմությամբ հայրենիք՝պարտավոր ենք կրթել մի սերունդ,որ կզգա մեծ պատասխանատվություն իր մշակույթի, իր հայրենի բնության,հողի,թփի,քարի,ամեն մի գողտրիկ անկյան համար՝սկսած իր շեմքից,մինչև հայրենիքի հեռավոր վայրերը:

21-րդ դարում կարծես կտրվել է կապը կրտսեր և ավագ սերունդների միջև:

Երեխայի դաստիարակության գործում ժողովրդական սովորույթներից, արմատներից հեռանալը,բերում է բարոյահոգեբանական անկման: Այդ պատճառով, նախադպրոցականի հայրենաճանաչողությունը պահանջում է արմատական փոփոխություններ: Հայրենիքի նկատմամբ սերը ամենահզոր զգացմունքներից մեկն է, առանց որի մարդը թերի է:

Կապվի մարդը հայրենի հողին, թե կհեռանա իր արմատներից,կախված է նրա դաստիարակությունից: Դրա համար կարևոր է,որ երեխան արդեն իսկ նախադպրոցական տարիքից ունենա պատասխանատվություն սեփական երկրի և նրա ապագայի հանդեպ:

Մենք սկսում ենք նոր շունչ տալ ազգային տոներին և ժողովրդական սովորույթներին, որոնցում մարդիկ թողել են իրենց ամենաարժեքավոր ձեռքբերումները:

Ծանոթացնելով երեխաներին ժողովրդական ավանդույթներին, սովորույթներին նպաստում ենք նրանց ինքնաճանաչողության ամրապնդմանը:

Անհատն այնքանով է տեր կանգնում իր հայրենիքին,որքանով ճանաչում է այն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել հայրենաճանաչողության ձևավորման էությունն ու բովանդակությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Հետազոտական աշխատանքի խնդիրները՝

- Ուսումնասիրել մասնագիտական գրականություն:
- Ուսումնասիրել զարգացած այլ մանկապարտեզների աշխատանքի համակարգը:
- Հիմնավորել հայրենաճանաչողության դաստիարակության կարևորությունը:
- Հայրենասիրական թեմաների միջոցառումների միջոցով բացահայտել հայրենասիրական դաստիարակության կարևորությունը:

1. Հայրենաճանաչողություն հասկացությունը և դաստիարակումը

Հայրենաճանաչողությունը առաջին հերթին սկսվում է սեփական երկրի պատմության իմացությամբ: Այն սովորեցնում է մեզ սիրել ու ծանաչել մեր մշակույթը, պատմությունը,սովորությունները,ազգն ու հայրենիքը:[15]

Հայրենաճանաչողությունը կամ հայրենիքի հանդեպ սիրո ընկալումը բնութագրվում է բազմաթիվ ձևերով: Հայրենաճանաչողության մասին բազմաթիվ աշխատություններ ունեն հայտնի մանկավարժներ, և անդրադառնում են դրան տարբեր շրջանակներում:

Հայրենաճանաչողությունը դա սերն է հայրենիքի,մայրենի լեզվի,մշակոիյթի,սովորույթների հանդեպ, անմնացորդ սերը հայրենիքին և այն պաշտպանելու պատրաստակամությունը:

Հայրենաճանաչողությունը համարվում է բարոյական դաստիարակության ամբողջականությունը,ներառյալ հայրենիքի հանդեպ սերը,ակտիվ աշխատանքը հանուն հայրենիքի բարորության,հոգատար վերաբերմունք հայրենի բնության նկատմամբ,պատմամշակութային հուշարձանների նկատմամբ,հայրենիքի պատիվն ու արժանապտվությունը պահելու ցանկություն,այն պաշտպանելու պատրաստակամություն,քաջություն,անձնազոհություն:[2;161]

Հայրենաճանաչողության դաստիարակումը կարևոր ուղղություն է,որը պետք է ընկծ լինի երեխայի դաստիարակության գործում:

Հայրենաճանաչողության վերաբերյալ մանկավարժական հետազոտությունները բազմաթիվ են:

Մակարենկոն օրինակ նշում է, որ հայրենասիրությունը ոչ միայն հերոսական արարքներն են, այլ նաև աշխատանք է՝ ի բարօրություն հայրենի երկրի:[16]

Չափազանց կարևոր է այն փաստը, որ հայրենաճանաչողության դաստիարակության գործընթացը պետք է սկսել նախադպրոցական տարիքից,քանի որ այդ տարիքից է դրվում երեխայի բարոյահոգեբանական դաստիարակության հիմքերը: երեխայի մոտ սկսվում զարգանալ այն զգացմունքները,որոնք կապված են հայրենի երկրի ու ժողովրդի հետ:

Այս երևույթի արմատները գտնվում են ազգային երգի,երաժշտության,ազգային խաղերի,հոգևոր դաստիարակության գործընթացում և այն միջավայրում,որտեղ ապրում է երեխան:

Այսպիսով հայրենաճանաչողության դաստիարակություն ասելով հասկանում ենք մեծահասակների և երեխայի համատեղ գործունեությունը,որը ուղղված է երեխայի բարոյական որակների ձևավորմանը,ծանոթացումը մշակութային արժեքներին,հայրենի բնությանը,հայրենի երկրին, կրոնին:

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենաճանաչողության նպատակն է՝ձևավորել պահանջմունք՝կատարել հայրենանվեր գործեր,դաստիարակել այնպիսի զգացումներ, ինչպիսիք են՝կարեկցանք,սեր,համակրանք,հարգանք:

2. **Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենաճանաչողության դաստիարակության խնդիրներն ու բովանդակությունը:**

Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենաճանաչողությանն ուղղված աշխատանքը իր մեջ ներառում է՝

- Սեր՝ուղղված ընտանիքին,մանկապարտեզին,փողոցին,քաղաքին,
- Հոգատարություն հայրենի բնության,շրջապատող աշխարհի նկատմամբ
- Սեր և հետաքրքրություն հայկական սովորույթների ու ավանդույթների նկատմամբ,
- Տարրական գիտելիքներ մարդու իրավունքների մասին,
- Գիտելիքներ Հայաստանի քաղաքների,տեսարժան վայրերի,պատմամշակութային վայրերի և կոթողների մասին,
- Գիտելիքներ պետական խորհրդանիշների մասին:

Նշված խնդիրների լուծումները իրականացվում է երեխաների գործունեության բոլոր տեսակներում՝պարապմունքների,խաղերի,առօրյա կյանքում,քանի որ դրանք երեխայի մեջ դաստիարակում են ոչ միայն հայրենասիրական զգացումներ,այլև ձևավորում են նրա հարաբերությունները մեծահասակների և հասակակիցների հետ:

Աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու մշակութային փոփոխություններն անմիջական կերպով ազդում են մարդկային կյանքի տարբեր ոլորտների վրա: Ազգային դիմագիծը պահպանելու համար հարկավոր է զգուշորեն մոտենալ հոգևոր ու

մշակութային ավանդույթներին, որոնց միջոցով հնարավոր է հասարակության մեջ կայունություն պահպանել և հաջողկերպով դիմակայել ժամանակակից մարտահրավերներին:[14]

Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենաճանաչողություն դաստիարակության գործին պետք է լծվեն թե եկեղեցին, թե պետությունը, թե ծնողներն ու մանկավարժները:

Այս առումով կարող ենք հիշատակել ազգային –եկեղեցական տոներ, որոնք կանոնավոր կերպով անցկացվում են մանկապարտեզում նախատեսված թե ծրագրով, թե ծրագրից դուրս, ինչը ևս մեծ ազդեցություն է թողնում երեխայի հայրենաճանաչողության դաստիարակության գործընթացում:

Երեխայի դաստիարակությամբ և կրթությամբ պետք է զբաղվել դեռ վաղ տարիքից, ինչպես փոքր ծառը որ ուղղությամբ թեքված լինի, այդպես էլ մինչև վերջ կաճի, այդպես էլ երեխան է՝ ինչին որ սովորեցնեն դրան էլ կհակվի մինչև կյանքի վերջը:

Այստեղ կարևոր եմ համարում մեջբերել Ուշինսկու խոսքերը՝

Ազգային դաստիարակությունը պետք է լուսավորվի եկեղեցով, իսկ դպրոցը պետք է լինի եկեղեցու նախադուռը:[16]

Երեխայի բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը մանկավարժական բարդ գործընթաց է:Այն հիմնված է բարոյահոգեբանական զգացումների վրա:

Հայրենասիրական զգացումը երեխայի մեջ ձևավորվում է ընտանիքում,մանկապարտեզում,դպրոցում,ձևավորվում է մեծահասակների հետ փոխհարաբերություններում:

Հայրենաճանաչողությունը սկսվում է երեխայի շրջապատող աշխարհից.և չնայած այդ ամենը խորապես չեն գիտակցվում նրա կողմից, բայց դա մեծ դեր է խաղում, երեխայի որպես հայրենասեր անձի ձևավորման գործում

3. Նախադպրոցական տարիքի երեխաներին հայրենաճանաճողության դաստիարակության մեթոդները:

Սկսելով հայրենաճանաչողության դաստիարակության ուղղությամբ աշխատանքը՝ դաստիարակը պետք է լավ իմանա իր քաղաքի մշակութային, սոցիալական,

տնտեսական առանձնահատկությունները: Նա պետք է իմանա, թե ինչի մասին պատմի երեխաներին՝ առանձնացնելով միայն տվյալ տարածքին բնորոշ նշանները, մատչելի կերպով ցույց տալ իր հայրենի քաղաքի, գյուղի կապը ողջ երկրի հետ:

Նախադպրոցականը շրջապատող իրականությունն ընկալում է հուզականորեն, հետևաբար նրա հայրենասիրությունը դրսևորվում է իր երկրի հանդեպ հիացմունքի զգացումով, հենց այդ զգացմունքները պետք է արթնանան երեխաներին իրենց փոքրիկ հայրենիքին և մեծ հայրենի երկրին ծանոթացնելու գործընթացում: Այս գործում ահռելի դեր կարող է խաղալ ժողովրդական բանահյուսությունը՝ ժողովրդի ստեղծագործական գործունեությունը, որը փոխանցվում է սերնդեսերունդ:

ժողովրդական արվեստ՝ երգեր, հեքիաթներ, լեգենդներ, էպոսներ, ասացվածքներ, հանելուկներ, մանկական ոտանավորներ, դրամատիկական գործեր, պարեր, ինչպես նաև կերպարվեստի և դեկորատիվ արվեստի գործեր:

Բանահյուսությունը ժողովրդի գանձարանն է, երեխայի ողջ կյանքի բնական ուղեկիցը, այն հստակ է և հասանելի նախադպրոցական տարիքի երեխաների համար, զարգացնում է մտավոր աշխատանքը, օգնում է ընդլայնել մտահորիզոնը և հասկանալ խոսքի գեղեցկությունը:

Յուրաքանչյուր ազգ ունի իր հեքիաթները, և դրանք բոլորը սերնդեսերունդ փոխանցում են բարոյական հիմնական արժեքները՝ բարություն, ընկերություն, փոխօգնություն, աշխատասիրություն:

Այսպիսով, բանավոր ժողովրդական արվեստի ստեղծագործությունը ոչ միայն սեր է ձևավորում իր ժողովրդի ավանդույթների նկատմամբ, այլև նպաստում է անհատի զարգացմանը հայրենասիրական ոգով:

Շրջակա միջավայրը էական նշանակություն ունի երեխաների մեջ հայրենի հողի նկատմամբ հետաքրքրություն և սեր դաստիարակելու համար: Երեխան աստիճանաբար ծանոթանում է մանկապարտեզին, իր փողոցին, քաղաքին, այնուհետև երկրին, մայրաքաղաքին ու խորհրդանիշներին:

Դաստիարակի խնդիրն է երեխայի ստացած տպավորություններից ընտրել իր համար առավել հասանելին՝ բնությունը և կենդանիների աշխարհը տանը (մանկապարտեզ, հայրենի հող); մարդկանց աշխատանքը, ավանդույթները, սոցիալական իրադարձությունները և այլն: Ավելին, այն դրվագները, որոնց վրա հրավիրվում է

երեխաների ուշադրությունը, պետք է լինեն վառ, փոխաբերական, կոնկրետ և հետաքրքրություն առաջացնող: Ուստի հայրենի հողի հանդեպ սեր դաստիարակելու գործը սկսելով՝ դաստիարակը ինքը պետք է լավ իմանա դա: Նա պետք է մտածի, թե ինչն է ավելի նպատակահարմար ցույց տալ և պատմել երեխաներին՝ առանձնացնելով հատկապես տվյալ տարածքի կամ տարածաշրջանին ամենաբնորոշը:

Հայրենիք... Պետք է երեխային ցույց տալ, որ հայրենի քաղաքը հայտնի է իր պատմությամբ, ավանդույթներով, տեսարժան վայրերով, հուշարձաններով, լավագույն մարդկանցով:

Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական դաստիարակությունը և սոցիալական զարգացումը կապված են հայրենի երկրի մշակույթի, նրա անցյալի, ներկայի, պատմական իրադարձությունների, հայ ֆիդայիների, ազգային հերոսների մասին նախնական պատկերացումների ձևավորման հետ:

Այն ուղղորդված է հայ ժողովրդի մշակույթի, ժառանգության հանդեպ հարգանքի ձևավորմանը: Հայրենի երկրի վերաբերյալ զրույցները, ավանդապատումները, ոտանավորները, երգերը նպաստում են երեխաների քաղաքացիական դաստիարակությանը, ազգային ավանդույթների ընկալմանը:[1;34]

Նախադպրոցական տարիքի երեխան պետք է իմանա իր քաղաքի անունը, իր փողոցը, դրան հարող փողոցները, ինչպես նաև ում պատվին են դրանք անվանակոչվել: Նրան բացատրում են, որ յուրաքանչյուր մարդ ունի տուն և քաղաք, որտեղ ծնվել և ապրում է:

Սա իրականացվումէ էքսկուրսիաների ժամանակ քաղաքում, բնության գրկում, մեծահասակների աշխատանքի դիտումներ կատարելիս, որտեղ յուրաքանչյուր երեխա սկսում է գիտակցել, որ աշխատանքը միավորում է մարդկանց, նրանցից պահանջում է համախմբվածություն, փոխօգնություն և գիտելիքներ հայրենիքի մասին:

Հայրենաճանաչողության դաստիարակության մեջ մեծ նշանակություն ունի մեծերի օրինակը: Ընտանիքի ավագ անդամների (պապերի և տատիկների, պատերազմի մասնակիցների, նրանց առաջնագծում և աշխատանքային սխրանքների) կյանքից կոնկրետ փաստերի հիման վրա անհրաժեշտ է երեխաների մեջ սերմանել այնպիսի կարևոր հասկացություններ, ինչպիսիք են «պարտքը հայրենիքի հանդեպ», «սեր հայրենիքի հանդեպ», «թշնամու ատելություն», «աշխատանքային սխրանք» և այլն:

Կարևոր է երեխային հասցնել այն ըմբռնմանը, որ մենք հաղթեցինք, քանի որ սիրում ենք մեր Հայրենիքը, Հայրենիքը հարգում է իր հերոսներին, ովքեր իրենց կյանքը տվել են հանուն մարդկանց երջանկության: Նրանց անունները հավերժացել են քաղաքների, փողոցների, հրապարակների անուններով, նրանց պատվին կանգնեցվել են հուշարձաններ:

Այս աշխատանքի շարունակությունը երեխաների ծանոթությունն է այլ քաղաքների, մեր Հայրենիքի մայրաքաղաքի հետ, պետության օրհներգի, դրոշի և զինանշանի հետ:

Այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ բարոյական և հայրենասիրական դաստիարակության առաջարկվող համակարգը կարող է փոփոխվել՝ կախված կոնկրետ պայմաններից:

Սխալ է կարծել, թե սեր սերմանելով ընտանիքի հանդեպ՝ մենք արդեն սեր ենք սերմանում հայրենիքի հանդեպ: Ցավոք, լինում են դեպքեր, երբ սեփական տան հանդեպ նվիրվածությունը համակցված է երկրի ճակատագրի նկատմամբ անտարբերության, երբեմն նույնիսկ դավաճանության հետ: Ուստի կարևոր է, որ երեխաները հնարավորինս շուտ տեսնեն իրենց ընտանիքի «քաղաքացիական դեմքը»:

Օրինակ՝ երեխաներին իրենց քաղաքը սիրել դաստիարակելիս պետք է նրանց հասկացնել, որ իրենց քաղաքը Հայրենիքի մի մասն է, քանի որ բոլոր տեղերում՝ մեծ ու փոքր, շատ ընդհանրություններ կան.

- ամենուր մարդիկ աշխատում են բոլորի համար (ուսուցիչները սովորեցնում են երեխաներին, բժիշկները բուժում են հիվանդներին, աշխատողները մեքենաներ են պատրաստում և այլն);
-Ավանդույթները պահպանվում են ամենուր. Հայրենիքը հիշում է այն հերոսներին, ովքեր պաշտպանել են այն թշնամիներից.
- տարբեր ազգությունների մարդիկ ապրում են ամենուր, աշխատում են միասին և օգնում միմյանց.
- մարդիկ պահպանում և պաշտպանում են բնությունը.
- կան ընդհանուր մասնագիտական և պետական տոներ և այլն:

Հայրենիքի հանդեպ սիրո դաստիարակությունը, հայրենիքի հանդեպ հպարտությունը պետք է զուգակցվի այլ ժողովուրդների մշակույթի, յուրաքանչյուր մարդու նկատմամբ

անհատապես, անկախ մաշկի գույնից և կրոնից, բարյացակամ վերաբերմունք ձևավորելու հետ:

Մինչև նախադպրոցական տարիքի ավարտը երեխան պետք է իմանա. մեր երկիրը բնակեցված է տարբեր ազգերի մարդկանցով. յուրաքանչյուր ազգ ունի իր լեզուն, սովորույթներն ու ավանդույթները, արվեստն ու ճարտարապետությունը. յուրաքանչյուր ազգ տաղանդավոր է և հարուստ արհեստավորներով, երաժիշտներով, արվեստագետներով և այլն:

Այսպիսով, բարոյական և հայրենասիրական դաստիարակության խնդիրները լուծելիս յուրաքանչյուր դաստիարակ պետք է իր աշխատանքը կառուցի երեխաների և առանձնահատկություններին համապատասխան՝ հաշվի առնելով հետևյալ սկզբունքները.

-գիտելիքների ընտրություն, որն առավել արդիական է տվյալ տարիքի երեխայի համար,

- մանկավարժական գործընթացի շարունակականությունն ու հաջորդականությունը.

-անհատական մոտեցում յուրաքանչյուր երեխայի նկատմամբ, նրա հոգեբանական բնութագրերի, կարողությունների և հետաքրքրությունների առավելագույն հաշվառում.

- գործունեության տարբեր տեսակների՝ ինտելեկտուալ, հուզական և տարիքային առանձնահատկություններին համապատասխան.

- գործունեության մոտեցում;

- երեխաների գործունեության վրա հիմնված վերապատրաստման զարգացող բնույթ.

Թեմատիկ պլանավորումը նպաստում է երեխաների կողմից իրենց երկրի, հայրենի հողի, բնակավայրի մասին գիտելիքների արդյունավետ և համակարգված յուրացմանը: Ընդ որում, թեմաները կրկնվում են յուրաքանչյուր խմբում: Փոխվում է միայն բովանդակությունը, ճանաչողական նյութի ծավալն ու բարդությունը, հետեւաբար՝ ուսումնասիրության տեւողությունը: Առանձին թեմաները նախընտրելի են, որպեսզի համընկնեն կոնկրետ իրադարձությունների և տոների հետ Թեմատիկ դասերը երեխաների բարոյական և հայրենասիրական դաստիարակության հիմնական ձևն են: Կարեւոր է, որ դրանք բարձրացնեն երեխաների մտավոր ակտիվությունը: Պետք է երեխաներին սովորեցնել ինքնուրույն վերլուծել այն, ինչ տեսնում են, կատարել ընդհանրացումներ, եզրակացություններ: ,,Կարող եք առաջարկել պատասխանը գտնել նկարազարդումներից, հարցնել ձեր ծնողներին և այլն,,:

Պետք է ընդգծել, որ նախադպրոցական տարիքի երեխային բնորոշ են կարճ հետաքրքրությունները, անկայուն ուշադրությունը, հոգնածությունը: Ուստի նույն թեմային կրկնվելը միայն նպաստում է երեխաների ուշադրության զարգացմանը և մեկ թեմայի նկատմամբ հետաքրքրության երկար ժամանակ պահպանմանը: Բացի այդ, անհրաժեշտ է համատեղել դպարապմունքները մեկ թեմայում ոչ միայն մայրենի լեզվով, այլև բնությանը, երաժշտությանը, արվեստի գործունեությանը ծանոթացնելուն (օրինակ՝ «Իմ քաղաքը», «Մեր մայրաքաղաքը՝ Երևանը»):

Երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելը պահանջում է խաղային տեխնիկայի լայն կիրառում, որոնք կարևոր են ինչպես երեխաների ճանաչողական ակտիվությունը բարձրացնելու, այնպես էլ պարապունքի համար հուզական մթնոլորտ ստեղծելու համար: Երեխաների գիտելիքները միավորող թեմայով աշխատանքի արդյունքները կարելի է ներկայացնել ընդհանուր տոների, ընտանեկան ժամանցի ժամանակ:

Հարկ է ընդգծել, որ երեխաներին առօրյա կյանքին, ավանդույթներին, առանձին պատմական պահերին ծանոթացնելու դժվարությունները պայմանավորված են նրանով, որ նախադպրոցական տարիքի երեխաներին բնորոշ է տեսողական-փոխաբերական մտածողությունը: Ուստի անհրաժեշտ է օգտագործել ոչ միայն գեղարվեստական գրականություն, նկարազարդումներ, այլ նաև «կենդանի» տեսողական առարկաներ և նյութեր (ազգային տարազներ, հնաոճ կահույք, սպասք, գործիքներ և այլն): «Առօրյա կյանքը» չափազանց արդյունավետ է երեխաներին հեքիաթներին, ժողովրդական արհեստներին, կենցաղային հնաոճ իրերին ծանոթացնելու համար:

Դրա համար ցանկալի է այցելությունները թանգարաններ, ինչպես նաև մանկապարտեզում հատուկ հարմարությունների կազմակերպումը: Այստեղ է երեխան առաջին անգամ հնարավորություն ստանում ներգրրավվել իր հայրենիքի պատմության մեջ: Բացի այդ, խաղի միջոցով ընդլայնվում են տեղեկատվություն տալու հնարավորությունները՝ (հեքիաթների հերոսների միջոցով և այլն):

Երեխաների բարոյական և հայրենասիրական դաստիարակության ոչ պակաս կարևոր պայմանը ծնողների հետ սերտ հարաբերություններն են: Սեփական ընտանիքի պատմությանը շոշափելը երեխայի մոտ ուժեղ հույզեր է առաջացնում, ստիպում է

կարեկցել, ուշադիր լինել անցյալի հիշողության, պատմական դրվագների, իրադարձությունների նկատմամբ: Այս հարցում ծնողների հետ համագործակցությունը նպաստում է ավանդույթների նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքին, ընտանեկան կայուն կապերի պահպանմանը: «Ձեր ընտանիքում և ձեր ղեկավարությամբ ապագա քաղաքացի է ձևավորվում : Այն ամենը, ինչ տեղի է ունենում երկրում, պետք է ձեր հոգով և ձեր մտքով հասնի երեխաներին», - ասում է Ա.Ս. Մակարենկոն պետք է օգտագործվի, երբ դաստիարակը աշխատում է ինչպես երեխաների, այնպես էլ նրանց ծնողների հետ: [16]:

Ներկայումս այս աշխատանքը տեղին է և հատկապես դժվար, այն պահանջում է մեծ նրբանկատություն և համբերություն, քանի որ երիտասարդ ընտանիքներում հայրենասիրություն և քաղաքացիություն դաստիարակելու հարցերը կարևոր չեն համարվում և հաճախ միայն տարակուսանք են առաջացնում:

Երեխաների բարոյական և հայրենասիրական դաստիարակությանը մեջ ընտանիքի ներգրավելու համար դաստիարակը պետք է ունենա առանձնահատուկ մոտեցում, ուշադրություն և զգայունություն յուրաքանչյուր երեխայի նկատմամբ: Հարկ է նշել, որ ներկայումս մարդիկ հետաքրքրված են իրենց տոհմաբանությամբ, տարբեր սերունդների մեջ ազգային, մասնագիտական արմատների և ծագման ուսումնասիրությամբ: Հետևաբար, նրանց տոհմերի ընտանեկան ուսումնասիրությունը կօգնի երեխաներին սկսել հասկանալ շատ կարևոր և խորը դրույթներ.

- յուրաքանչյուրի արմատները գտնվում են ընտանիքի, նրանց ժողովրդի պատմության և ավանդույթների, տարածաշրջանի և երկրի անցյալի մեջ.
- ընտանիքը հասարակության բջիջն է, ազգային ավանդույթների պահապանը.
- ընտանիքի երջանկությունը - ժողովրդի, հասարակության, պետության երջանկությունն ու բարեկեցությունն է:

Մեծ նշանակություն ունեն ընտանեկան էքսկուրսիաները մարզով, քաղաքով կամ գյուղով: Նման Լավ է, երբ նախադպրոցական հաստատության և ծնողների համատեղ աշխատանքը ներառում է տարբեր միջոցառումներ, որենք անց են կացվում մանկապարտեզում՝ տոներ՝ Ամանոր, Սուրբ Ծնունդ, Զատիկ և ազգային այլ տոներ,որը իհարկե, երեխաներին ծանոթացնում է իր ժողովրդի պատմությանը, սեր է դաստիարակում հայրենիքի հանդեպ:

Եզրակացություն

Երեխաների մոտ հայրենասիրական զգացմունքների դաստիարակման ուղղությամբ նպատակաուղղված աշխատանքը սկսվում է նախադպրոցական տարիքից, երբ տեղի է ունենում անձի իրական ձևավորումը, նրա բարոյական հիմքի զարգացումը: Նախադպրոցական տարիքը հարազատ վայրերի նկատմամբ սիրո զարգացման, հայրենասիրության սկզբունքների դաստիարակման զգայուն շրջան է, երեխաները կուտակում են բարոյական վարքի առաջին փորձը, այն դառնում է ավելի ու ավելի գիտակցված և կազմակերպված. ընկալումները ընդլայնվում են, բարոյական զգացմունքները՝ խորանում:

Երեխաներին ժողովրդական մշակույթին ծանոթացնելը նրանց հայրենասիրական զգացմունքները ձևավորելու և ոգեղենությունը զարգացնելու միջոց է: Այդ իսկ պատճառով հայրենի մշակույթը, ինչպես հայրն ու մայրը, պետք է դառնա երեխայի հոգու անբաժանելի մասը, անհատականություն կերտող սկիզբը:

Եթե փոքր տարիքից երեխաներին ծանոթացնեք իրենց հայրենի մշակույթով, բանավոր ժողովրդական արվեստի գործերով, հայրենի խոսքի հետ, ապա դա կնպաստի նախադպրոցական տարիքի երեխաների հոգևոր, բարոյական, հայրենասիրական դաստիարակությանը և ապագայում նրանք կկարողանան պահպանել բոլորը.Հայաստանի մշակութային արժեքները ապրում են՝ աշխարհին տալով հսկայական տաղանդներ, որոնք հիացել են և կշարունակեն հիանալ Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Այն ամենը, ինչ շրջապատում է երեխային, կրթական առումով համարժեք չէ: Ուստի շատ կարևոր է,ու մանկավարժության տեսակետից մեթեդիկաների ընտրությունը ճիշտ կատարվի:

Յուրաքանչյուր դաստիարակ, ծնող, յուրաքանչյուր ոք, ով առնչվում է երեխաների դաստիարակությանը, պետք է իմանա և միշտ հիշի, թե ում է դաստիարակում. Հայրենիք և ժողովուրդ, որոնց մեջ նա ապրում է: Ի վերջո, մարդը կարող է երջանիկ լինել միայն սիրո մեջ, առաջին հերթին, երբ սիրում է իրեն: Ատելությունը կամ

անհարգալից վերաբերմունքը հայրենի հողի նկատմամբ մեր երեխաներին կդատապարտեն ցավալի թերիմացության, աննպատակ գոյության կամ թշնամական գործողությունների:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկաններ) կրթական համալիր ծրագիր, Երևան 2007, էջ 141
2. Մարության Ս.Ա. ,Ա.Դալլաքյան,Նախադպրոցական մանկավարժություն.Ե.2008
3. Նախադպրոցական մանկավարժություն: Է.Ա.Ալեքսանդրյանի խմբագրությամբ:Երևան,1992
4. Ներսիսյան Լ.Ս. Կրթություն և գեղագիտություն.Երևան,2002. 157 էջ
5. Վարդումյան Ս.,Հարությունյան Լ.,Ջաղինյան Ն.,Վարելլա Գ Ժամանակակից մանկավարժության մոտեցումներ,տեսություններ,մեթոդներ,գնահատում/Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար/,Երևան,2003, էջ 407
6. Алексеева М.М., Яшина В.И. Социализация дошкольников. - М.: Академия, 1999. -159
7. Алешина, Н. В. Патриотическое воспитание дошкольников / Н. В. Алешина. - М. : Просвещение, 2008. - 67 с
8. Алябьева, Е. А. Нравственно-этические беседы и игры с дошкольниками Е. А. Алябьева. - М. : Вече, 2003. 128 с
9. Бородич А.М. Методика социализации детей. - М.: Просвещение, 1981. -255 с
10. Ватаман, В. П. Воспитание детей на традициях народной культуры , метод. пособие / В. П. Ватаман. - М. : Просвещение, 2008. - 213 с
11. Лутовинов В.И. Гражданско-патриотическое воспитание сегодня // Педагогика 2006, 58 с.
12. Маханева, М. Д. Нравственно-патриотическое воспитание дошкольников / М. Д. Маханева. - М. : ТЦ Сфера, 2009. 145 с
13. Новицкая М.Ю. Наследие. Патриотическое воспитание в детском саду - М.: Линка-Пресс, 2003. 200 с

14. http://www.surbzoravor.am/
15. www.mskh.am
16. https://nsportal.ru/detskii-sad/vospitatelnaya-rabota/2015/08/03/patrioticheskoe-vospitanie-doshkolnikov-iz-opyta-raboty

ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակության միջոց

Դաստիարակ՝ Հերիքնազ Մելքոնյան

Ղեկավար՝ Գագիկ Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ-2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3

Գլուխ 1 . Դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակության միջոց ------ 5

1.1 Դիդակտիկ խաղերն ու դրանց առանձնահատկությունները ---------- 5

1.2 Նախադպրոցական երեխայի զգայական դաստիարակության

առանձնահատկությունները ---------- 9

Գլուխ **2**. Դիդակտիկ խաղերի օգտագործման առանձնահատկությունը

երեխայի զգայական դաստիարակության մեջ ---------- 11

Փորձարարական մաս ---------- 13

Եզրակացություն ---------- 17

Գրականության ցանկ ---------- 18

Հավելված ---------- 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Խաղը նրա՝ մանուկ մարդու բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, դա նրա մեթոդն է: Եվ ամեն բան ինչ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունվում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու>>:

Հ. Թումանյան

Թեմայի արդիականությունը: Խաղը հատուկ գործունեություն է, որը ծաղկում է մանկության տարիներին և ուղեկցում մարդուն իր ողջ կյանքի ընթացքում: Նախադպրոցական տարիքի երեխաների հիմնական գործունեությունը խաղն է, որի ընթացքում զարգանում է երեխայի հոգևոր և ֆիզիկական ուժը, նրա ուշադրությունը, ճարպկությունը, հիշողությունը, կարգապահությունը, երևակայությունը և այլն: Նախադպրոցական տարիքում որոշիչ է խաղերի միջոցով առարկաների հատկություններին ծանոթությունը: Հենց այս տարիքն է առավել բարենպաստ զգայական օրգանների գործունեության բարելավման և մեզ շրջապատող աշխարհի մասին գաղափարներ կուտակելու համար: Նախադպրոցական տարիքի երեխաների զգայական զարգացումը լիարժեք և որակյալ դաստիարակության կարևորագույն պահերից մեկն է: Զգայական դաստիարակությունն օգտագործվում է նաև որպես հետաձգված զարգացող խնդիր ունեցող երեխաների բուժման մեթոդներից մեկը: Այստեղ կարևոր դեր են ստանձնում դիդակտիկ խաղերը: Դիդակտիկ խաղերը

կարևոր են նրանով, որ նրանք երեխային սովորեցնում են հեշտ և հասկանալի ձևով, զարգանում են երեխաների ֆիզիկական և մտավոր ունակությունները՝ տարբեր առարկաների ու նյութերի հետ աշխատելու միջոցով զարգացնում են խոսքը, ձևավորում են երեխայի գաղափարները ճիշտ վարքի վերաբերյալ, հետաքրքրություն են առաջացնում աշխատանքի, ուսուցման նկատմամբ։
Այս թեմայով կան շատ ուսումնասիրություններ՝ կատարված Պ. Սակուլինայի, Է. Տիխեևայի, Մ. Մոնտեսորիի և այլոց կողմից։ Այնուամենայնիվ, այսօր անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել նախադպրոցական տարիքում դիդակտիկ խաղերի դերը զգայական դաստիարակության գործում, քանի որ զգայական զարգացումը երեխայի համակողմանի զարգացման կարևոր ոլորտներից մեկն է։

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել դիդակտիկ խաղերիի զգայական դաստիարակության էությունը և փորձարկել դիդակտիկ խաղերը որպես նախադպրոցական տարիքի երեխաների զգայական զարգացման գործոն։

Հետազոտության խնդիրներն են.

- ուսումնասիրել դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակության միջոց թեմայով գիտական, մանկավարժական գրականություն
- նկարագրել դիդակտիկ խաղերը և զգայական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում
- իրականացնել հետազոտություն դիդակտիկ խաղերի արդյունավետությունը որոշելու համար։

Գլուխ 1. Դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակության միջոց

1.1.Դիդակտիկ խաղերն ու դրանց առանձնահատկությունները

Նախադպրոցական հասակի երեխաների ուսուցման և դաստիարակության լավագույն միջոց են դիդակտիկ խաղերը։ Երեխաների դաստիարակության և ուսուցման համար դիդակտիկ խաղերի լայն կիրառման ավանդույթը զարգացել է գիտնականների աշխատություններում։ Դասական մանկավարժության մեջ երեխաների դաստիարակությունը և ուսուցումը խաղի հետ համատեղելու գաղափարը պատկանում է մանկապարտեզների հիմնադիր Ֆրիդրիխ Ֆրեբելին։ Նա մշակեց և նկարագրեց դիդակտիկ խաղերի համակարգ, որն ուղղված է երեխայի գիտակցության և գործունեության զարգացմանը։ Ֆ. Ֆրեբելի դիդակտիկ խաղերի համակարգը մանկապարտեզում մանուկների հետ դաստիարակության և կրթական աշխատանքի հիմքն է։

Մ. Մոնտեսորին ստեղծել է հետաքրքիր դիդակտիկ նյութեր՝ զգայական կրթության համար։։ Այդ նյութերը (խորանարդներ, ստեղնաշարեր, թվային ձողեր, ճարմանդներով շրջանակներ և այլն) դասավորված էին այնպես, որ երեխան ինքնուրույն հայտնաբերի և ուղղի իր սխալները՝ միաժամանակ զարգացնելով կամք և համբերություն, ինքնակարգապահություն և դիտողություն, գիտելիքներ ձեռք բերելով և այլն։

Է. Տիխևան նշում է, որ դիդակտիկ խաղերի արդյունավետությունը մանուկների դաստիարակության և ուսուցման գործում ուղղակիորեն կախված է երեխայի շահերից։ Է.Ի. Տիխևային են պատկանում մի շարք դիդակտիկ խաղեր, որոնք ստեղծվել են՝ նպատակ ունենալով երեխաներին սովորեցնել գույնը, ձևը, չափը

և տարրական մաթեմատիկական հասկացությունների ձևավորումը: Հեղինակը խաղերի համար ստեղծել է կայուն դիդակտիկ նյութ, որը հիմնականում ուղղված է երեխաների մոտ զգայական օրգանների զարգացմանը:

Դիդակտիկ խաղերը նպաստում են ճանաչողական գործունեության զարգացմանը, մտավոր գործողություններին, որոնք ուսման հիմքն են: Դիդակտիկ խաղերի բովանդակությունը միշտ որևէ մտավոր խնդրի իրականացումն է, ուստի և դրանք հիմնականում անց են կացվում դաստիարակի ղեկավարությամբ՝ հստակ կազմակերպված պարապմունքների միջոցով: Պարապմունքների խաղային բնույթը լարում է երեխաների ուշադրությունը, շարժում է նրանց հետաքրքրությունը ու հենց այդ խաղի ընթացքում լուծվում է ուսուցողական խնդիրը: Դիդակտիկ խաղերի համար բնորոշ է ուսուցման առաջադրանքի առկայությունը, որը հագեցած է երեխաների համար զվարճալի տեսքով:

Երեխային խաղը գրավում է ոչ թե ուսուցողական առաջադրանքը, այլ ակտիվ լինելու, արդյունքի հասնելու, հաղթելու հնարավորությամբ: Բայց, եթե երեխան գիտելիքներ չի ձեռք բերել, նա չի կարողանա հաջողությամբ կատարել խաղային գործողություններ, հասնել արդյունքի: Օրինակ <<Գույների աշխարհում>> դիդակտիկ խաղում յուրաքանչյուր խաղացող խաղադաշտում պետք է տեղադրի որոշակի գույնի առարկաներ: Խաղը դաստիարակին թույլ է տալիս պարզել՝ արդյոք երեխան սովորե՞լ է տարբերակել գույները:

Այսպիսով, դիդակտիկ խաղին ակտիվ մասնակցությունը կախված է նրանից, թե երեխան որքան է յուրացրել անցած նյութը: Սա խրախուսում է նրան լինել ավելի ուշադիր, օգնում է նրան հիշել, սովորում է դասակարգել և այլն: Խաղի ընթացքում պետք է տիրի զգայական այնպիսի մթնոլորտ, որը կնպաստի երեխայի ապրումակցական խառնվածքի, այն է՝ հոգատարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացողության, պատրաստակամության, արդարացիության ձևավորմանը: Խաղը, երեխային դարձնելով գործուն սուբյեկտ, նպաստում է վախկոտ, անվստահ երեխաների անհատական աճին ու զարգացմանը:

Դիդակտիկ խաղերն ունեն **խնդիր, գործողություն, հստակ կանոններ և արդյունք:**



Յուրաքանչյուր դիդակտիկ խաղում կա սահմանված **խնդիր**, որը հաճախ արտահայտված է լինում խաղի անվան մեջ, օրինակ՝ <<Հագցրու տիկնիկին>>: Դիդակտիկ խաղերի խնդիրները բազմազան են՝ խմբավորել, համեմատել, առանձնացնել ըստ հատկանիշների և այլն: Երեխային հետաքրքրում է խաղային հնարը, նպատակին շուտ և ճիշտ հասնելը, իսկ ուսուցողական խնդիրը լուծվում է անկախ նրա գիտակցությունից ու կամքից: **Սա է դիդակտիկ խաղի ամենամեծ առավելությունը:**

Գործողությունը դիդակտիկ խաղի ամենաէական մասն է: Առանց գործողության հնարավոր չէ խոսել խաղի մասին: Դիդակտիկ խաղերում գործողությունը ճիշտ և հստակ որոշված է: Այն խաղի խնդրի հաջող լուծման համար պետք է բավարարի երկու կարևոր պահանջների՝ ենթարկվի խնդրին և կատարի ուսուցողական դեր: Պետք է լինի գրավիչ և զբաղեցնող՝ ընդհուպ մինչև խաղի վերջը:

Կանոնները ուղղված են խաղի խնդրի կատարմանը։ Խաղի կանոնին վերագրվում է ոչ միայն այն, ինչը երեխաները պետք է կատարեն, այլև այն, ինչը չպետք է անեն։ Դա էլ երեխաներից պահանջում է կամքի ուժ և որոշակի կարգապահություն։ **Խաղի արդյունքը** դիդակտիկ խաղի եզրափակումն է, որը պետք է գնահատել թե դաստիարակի և թե երեխաների տեսանկյունից։ Դաստիարակի համար կարևոր է, որ երեխան կատարի խաղի խնդիրը, կանոնը, իրականացնի գործողությունը և ստանա անհրաժեշտ արդյունքը։ **Դիդակտիկ խաղերը կարող են կիրառվել տարբեր նպատակներով.**

- որպես նոր գիտելիքների հաղորդման միջոց,
- վարժությունների և գիտելիքների ամրապնդման միջոց,
- գիտելիքների ստուգման միջոց,
- որպես պրակտիկ գործունեություն,
- ճանաչողական գործունեության ակտիվացման միջոց։
- որպես անհատական գործունեություն։[3, էջ 6]

Դիդակտիկ խաղերն ունեն իրենց տարատեսակները.

- առարկաներով ու խաղալիքներով
- խոսքային /հոմանիշներով ու հականիշներով/
- սեղանային տպագիր նյութերով
- երաժշտական դիդակտիկ խաղեր

Դաստիարակը երեխաներին նախապատրաստում է խաղին՝ հարստացնելով երեխաների պատկերացումները շրջապատող առարկաների, երևույթների մասին, որոնք անհրաժեշտ են խաղային խնդիրները լուծելու համար։ **Առարկաներով ու խաղալիքներով դիդակտիկ խաղերը** հիմնականում խոշոր տիկնիկներոց առաջարկվող խաղերն են։ Օրինակ <<Տիկնիկն արթնացել է>>, <<Տիկնիկը լողանում է>>, <<Հրաշալի պարկ>>, <<Ով ավելի արագ կհավաքի>> և այլ խաղեր։ Նման դիդակտիկ խաղերը տրվում են վաղ հասակից սկսած, երեխան դիտում է, ծանոթանում է ձևին, գույնին և այլն։

Խոսքային դիդակտիկ խաղերի հիմքում ընկած է խոսքը: Այս խաղերի մեծ մասը խաղ-հանելուկներ են: Օրինակ <<Գուշակիր>>, <<Նման է, նման չէ>>: Այս խաղերում երեխան պետք է կարողանա համեմատել առարկաները, նկատել տարբերությունը և կատարել ճիշտ եզրահանգումներ: Խոսքի զարգացման շրջանում նոր նյութն ամրապնդվում է դիդակտիկ խաղերի միջոցով: **Սեղանային տպագիր նյութերով խաղերը** վարժեցնում են երեխայի աչքաչափը, ճկունությունը: Այս խաղերի միջոցով երեխաները ճանաչում են առարկայի պատկերը և սովորում ճիշտ անվանել դրանք: Սեղանային տպագիր նյութերով խաղի տարատեսակ է կտրտված նկարներով խաղերը: Փոքրիկների խմբում նկարի կտրտվածքը երկու մասից է, իսկ միջին խմբում՝ 6-8, ավագ խմբում՝ 8-16 մաս: **Երաժշտական խաղերը** տրվում են խաղ-զվարճալիքների, զբոսանքների ժամանակ:

Լ.Սմբատյանը անդրադառնալով խաղի իրականացմանը գրում է. <<Եթե մանկավարժը խաղն անցկացնում է ժպիտով, կատակով, սիրով, փոխադարձ ուրախությամբ, մանկական աչքերի զվարթությամբ, զգացմունքների անկեղծությամբ, ապա այն անպայման կակտիվացնի երեխաների լեզվամտածողությունը և մարդասիրական դրսևորումները>>:[3, էջ 9]



1.2 Նախադպրոցական երեխայի զգայական դաստիարակության առանձնահատկությունները

Մարդու կողմից շրջապատող աշխարհի ճանաչումը սկսվում է զգայությունների ընկալումից: Նախադպրոցական տարիքն է առավել բարենպաստ զգայական օրգանների գործունեության բարելավման և մեր շրջապատի աշխարհի մասին գաղափարներ կուտակելու համար: Հայտնի գիտնականներ Ֆ. Ֆրոբելը, Մ.

Մոնտեսորին, Է. Ի. Տիխեևան և այլոք կարծում են, որ զգայական կրթությունը, որն ուղղված է երեխաների լիարժեք զգայական զարգացումն ապահովելուն, նախադպրոցական կրթության հիմնական ուղղություններից մեկն է: Ըստ Մոնտեսորիի, հատուկ ընտրված դիդակտիկ նյութերի օգտագործումը վարժեցնում է երեխայի զգայական օրգանները, ինչի շնորհիվ երեխան յուրացնում է առարկաների հատկությունները և փորձում կատարել ինքնուրույն մտածական գործողություններ: Մոնտեսորիի հիմնած մանկան տներում իրագործվում էր դաստիարակության յուրահատուկ համակարգ, որն ուղղված էր երեխաների ինքնադաստիարակությանը: Նա ժխտում էր երեխաների գործունեության կոլեկտիվ ձևերը, արդյունքում երեխաները ձեռք էին բերում առանձին, մեկուսացված գործելու ցանկություն:

Ղազարոս Աղայանը սերտ կապի մեջ է տեսնում փորձը, զգայարանները և միտքը, որոնց փոխազդեցության արդյունքում երեխան սկսում է զարգանալ:

Այսպիսով, հայ և արտասահմանյան ուսուցիչներն ու հոգեբանները զգայական զարգացման և դաստիարակության խնդիրները շատ կարևոր են համարում նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման և մարդու հետագա լիարժեք զարգացման համար:

Երեխայի զգայական զարգացումը նրա ընկալման զարգացումն ու օբյեկտների արտաքին հատկությունների մասին գաղափարների ձևավորումն է: Զգայական դաստիարակության ընթացքում երեխան սովորում է այնպիսի հասկացությունների ինչպիսիք են.

- Առարկայի գույնը և որակը
- Չափը և ձևը
- Համ ու հոտ
- Ձայն երաժշտություն

Զգայական կրթության հիմքը առարկաների և երևույթների արտաքին հատկությունների և չափերի, տարածության և ժամանակի վերաբերյալ նրա գիտելիքների և հմտությունների կատարելագործումն է: Երեխան սկսում է պատշաճ կերպով ընկալել ձևերն ու չափերը, տարածությունները, տարբերել գույները,

գնահատել քաշը և ջերմաստիճանը, զարգացնել ականջը երաժշտության համար: Զգայությունները և ըմբռնումները ինտենսիվ կերպով զարգանում են արդեն վաղ ու նախադպրոցական տարիքում: Զգայական դաստիարակությունը երեխաների մտավոր, ֆիզիկական, աշխատանքային դաստիարակության հիմքն է կազմում: Մտածողությունն ու խոսքը իրենց հերթին նպաստում են զգայական դաստիարակության զարգացմանը:

ԳԼՈՒԽ 2. Դիդակտիկ խաղերի օգտագործման առանձնահատկությունը երեխայի զգայական դաստիարակության մեջ

Դիդակտիկական խաղի կարևորությունն այն է, որ այն զարգացնում է երեխաների մեջ անկախություն և մտածողության ու խոսքի ակտիվություն: Խաղերը նպաստում են նախադպրոցական տարիքում զգայարանների զարգացմանը, գաղափարների ձևավորմանը, գիտելիքների ձուլմանը: Կարևոր է հասկանալ, որ դիդակտիկ խաղը ոչ միայն գիտելիքների և հմտությունների ձուլման ձև է, այլև նպաստում է երեխայի ընդհանուր զարգացմանը, ծառայում է նրա ձևավորմանը:

Զգայական առաջադրանքների իրականացման համար կարևոր պայման է դաստիարակի կողմից խաղերի իմացությունը և այդ խաղերին երեխաների համակարգված ուսուցումը, նրանց տարիքի համար մատչելի և հետաքրքրաշարժ խաղերի ինքնուրույն խաղացման ունակության զարգացումը: Զգայական ինտեգրված գործունեության մեջ պատվավոր և անհրաժեշտ տեղ են գրավում երեխաների և դաստիարակների համատեղ փորձերը (սոսինձով, խմորով, ջրով, ներկերով և այլն), որոնք երեխաների մոտ զարգացնում են հետաքրքրություն՝ զանազան նյութերի հետ աշխատելու, սկսված աշխատանքները ավարտին հասցնելու գործում: Մանկավարժները պետք է երեխաներին ներգրավեն կառուցողական գործունեության մեջ: Խաղի փոխազդեցության գործընթացում երեխաները ձեռք են բերում շրջապատող առարկաներն ու խաղալիքները համեմատելու, դրանք ընդհանրացնելու, ամենապարզ կապերը գտնելու ունակություններ: Նրանք տիրապետում են շինարարական նյութի հետ

աշխատելու տեխնիկային՝ միմյանց վերևում դնել աղյուսներ կամ խորանարդներ, դրանք մի շարքով դնել ինքնաթիռում, կատարել պարզ երկաստիճան հարկեր… Միևնույն ժամանակ, դաստիարակները պետք է ցույց տան տարբեր տարբերակներ աշտարակներ, տներ, կահույք և այլն կառուցելու համար: Միշտ խաղան այդ նյութերի հետ՝ դրանով իսկ աջակցելով շինարարական խաղեր խաղալու ցանկության առաջացմանը, երեխաների մոտ ձևավորեն հարատև զգայական փորձ:

Դիդակտիկ խաղի անցկացումը ներառում է.

- Երեխաներին ներկայացնելով խաղի բովանդակությունը, դիդակտիկ նյութը:
- Խաղի ընթացքի և կանոնների բացատրություն (ինչն է կարելի, ինչը չի կարելի):
- Խաղի գործողությունների ցուցադրում, որի գործընթացում մանկավարժը երեխաներին սովորեցնում է ճիշտ գործողություններ կատարել՝ ապացուցելով, որ հակառակ դեպքում խաղը չի հանգեցնի ցանկալի արդյունքի:
- Խաղի մեջ դաստիարակի դերի որոշումը, նրա՝ որպես խաղացողի, երկրպագուի կամ մրցավարի մասնակցությունը: Մասնակցելով խաղին, ուսուցիչը ուղղորդում է խաղացողների գործողությունները (խորհուրդ, հարց, հիշեցում):
- Ամփոփելով խաղը, մանկավարժն ընդգծում է, որ դեպի հաղթանակի ուղին հնարավոր է միայն հաղթահարել դժվարությունները, ուշադրությունը և կարգապահությունը:

Խաղի վերջում ուսուցիչը երեխաներին հարցնում է, թե արդյոք նրանք հավանում են խաղը և խոստանում, որ հաջորդ անգամ նոր խաղ խաղալու դեպքում, այն նույնպես հետաքրքիր կլինի:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

2022թ. սեպտեմբեր ամսից սկսած կրտսեր առաջին խմբում կիրառել եմ տարաբնույթ դիդակտիկ խաղեր։ Նպատակն այդ տարիքային խմբի երեխաների մոտ առկա խոսքի զարգացման և շփման թերացումների շտկումն է։ Արդյունքում երեխաներն ավելի լավ են հաղորդակցվում։ Դիցուք ներկայացնեմ այդ խաղերից մի քանիսը։

ԹԶՈՒԿ

Խաղի նպատակը՝ Զարգացնել մատների մանր մկանները, պատկերային մտածողությունը, կոորդինացիան, շոշափելով առարկաները տարբերելու կարողությունը։

Խաղի կահավորումը՝ Պատրաստել տարբեր փոքր առարկաներով լցված պարկ։

Խաղի ընթացքը՝ Նախ անվանել խաղալիքները և լցնել դրանք պարկի մեջ։ Երեխաները հերթով մոտենալով պարկին՝ պետք է անվանեն որևէ առարկա և ձեռքը մտցնելով պարկի մեջ՝ փորձեն շոշափելով գտնել և դուրս բերել այն։[1, էջ 52]

Համից ճանաչիր

Խաղի նպատակը՝ երեխաներին սովորեցնել համից ճանաչել միրգն ու բանջարեղենը։

Խաղի ընթացքը՝ Սեղանի վրա, ափսեի մեջ դրված են մրգերի և բանջարեղենի կտորներ։ Դաստիարակը երեխաների հետ միասին անվանում է, թե ինչ մրգերի ու բանջարեղենի կտորներ են դրված ափսեի մեջ։ Այնուհետև խնդիր է դրվում <<համից ճանաչել>> դրանք։

Երեխաների մեկ խումբ փակում է աչքերը, մյուսները հյուրասիրում են, երրորդները ստուգում են, թե ճիշտ են, արդյոք, գուշակել երեխաները, թե ինչով են իրենց հյուրասիրել։ Հետո դերերը փոխվում են։[3, էջ 34]

ԳՈՒՅՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Խաղի նպատակը՝ զարգացնել գույների տարբերակումը, տեսողական ուշադրությունը, կենտրոնացվածությունը, խմբավորելու ունակությունը: Բարձրացնել երեխայի գունազգացողությունը:

Խաղի կահավորումը՝ Տարայի մեջ լցնել տարբեր գույների գնդակներ, հատակին դնել այդ գույների տարաներ:

Խաղի ընթացքը՝ Երեխան վերցնում է որևէ գույնի գնդակ ու գցում համապատասխան գույնի տարայի մեջ: Կարելի է նաև խառնել այդ տարաների մեջ գտնվող գնդակները, իսկ երեխաները ուղղեն դրանք:

Հետազոտական աշխատանքը կատարելիս օգտվել եմ հարցաթերթիկների մեթոդից/տես՛ հավելված 1/: Հարցումս իրականացրել եմ Չարենցավան համայնքի Բջնիի մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի 15 ծնողների հետ, պարզելու համար, թե արդյոք արդյունավետ են եղել իմ կիրառած դիդակտիկ խաղերը երեխայի զարգացման գործում:

Ստորև ներկայացնում եմ իմ հետազոտական աշխատանքի արդյունքը։

Հարց 1 Ի՞նչպիսի խաղեր է սիրում խաղալ ձեր երեխան։



Ծնողների 53%-ը պատասխանել է դիդակտիկ խաղեր, ինչից պարզ է դառնում, որ երեխաների մեծ մասը հետաքրքրված է դիդակտիկ խաղերով։

Հարց 2 Մանկապարտեզ հաճախելու ընթացքում փոխվե՞լ է արդյոք ձեր երեխայի վարքը։



60% -ի մոտ փոխվել է վարքը, 33%-ի մոտ՝ մասամբ։

Հարց 3 Նախորդ 4 ամիսների ընթացքում զարգացե՞լ է ձեր երեխայի խոսքը։



73% -ի մոտ խոսքը զարգացել է, 27% -ի մոտ մասամբ է զարգացել։

Հարց 4 Ի՞նչ եք կարծում, ձեր երեխայի մոտ ձևավորվե՞լ են շփման հմտություններ։



67% -ը պատասխանել է այո, 33% -ը՝ մասամբ։

Ելնելով արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ դիդակտիկ խաղերի կիրառումը տվել է իր դրական արդյունքները։ Երեխաները դարձել են ավելի շփվող, զարգացել է խոսքը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով իրականացրած հետազոտական աշխատանքի և հարցման արդյունքում պարզեցի, որ դիդակտիկ խաղերը շատ մեծ դեր ունեն երեխայի զգայական դաստիարակության գործում: Զգայական դաստիարակությունը իրականացվում է երեխայի գործունեության բոլոր ձևերի օգտագործման և հատուկ ուսուցման պայմաններում, որի արդյունավետությունը պայմանավորված է երեխայի ակտիվությամբ ու դաստիարակի ուսուցանող ներգործությամբ: Այդ գործում դաստիարակին օգնության են գալիս դիդակտիկ խաղերը:

Խաղը կարևոր է ինչպես երեխային ապագային պատրաստելու, այնպես էլ նրա կյանքը երջանիկ ու լիարժեք դարձնելու համար: Այդ պատճառով պետք է մանկապարտեզում ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները բազմազան խաղերի համար:

Երեխաները սովորում են ապրել՝ խաղալով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Բալայան Ա., 100 խաղ դպրոցականների համար. Երևան 2006թ, էջ 77
2) Նախաշավիղ 8.2012. Երևան 2012թ, էջ 64
3) Սմբատյան Լ., Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում. Երևան 2014, էջ 151
4) https://ecco-catalog.ru/hy/lichnostnyjj-rost/sensornoe-razvitie-malyshei-chto-eto-takoe-nemnozhko-pro/
5) https://forum.armedu.am/forum/
6) https://thestrip.ru/hy/smoky-eyes/didakticheskaya-igra-e-rol-v-razvitii-doshkolnikov-nastolno-pechatnye/
7) https://hungry-bags.ru/

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարցաթերթիկ ծնողների համար

Հարգելի՛ ծնող, խնդրում ենք արտահայտել անկեղծ կարծիք, դիդակտիկ խաղերի դերը թեմայի վերաբերյալ, քանի որ հարցաթերթը անանուն է:

Հարց 1 Ի՞նչպիսի խաղեր է սիրում խաղալ ձեր երեխան:

ա) դիդակտիկ խաղեր /Առարկաներով, խաղալիքներով, քարտերով ուսուցողական խաղեր/

բ) շարժախաղեր

գ) համակարգչային խաղեր

Հարց 2 Մանկապարտեզ հաճախելու ընթացքում փոխվե՞լ է արդյոք Ձեր երեխայի վարքը:

ա) այո

բ) ոչ

գ) մասամբ

Հարց 3 Նախորդ 4 ամիսների ընթացքում զարգացե՞լ է երեխայի խոսքը:

ա) այո

բ) ոչ

գ)մասամբ

Հարց 4 Ի՞նչ եք կարծում ձևավորվել է շփման հմտություններ:

ա) այո

բ) ոչ

գ) մասամբ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Էկոլոգիական կրթության հիմունքները նախադպրոցական տարիքում»

ԿԱՏԱՐՈՂ՝ Հերմինե Դալլաքյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Էմինյան

Վանաձոր 2022

Բովանդակություն

Ներածություն----------3
1. Գլուխ 1. ----------6
2. Գլուխ 2.----------9
3. Գլուխ 3. ----------11
3.1----------13
Եզրակացություն----------17
Օգտագործված գրականության ցանկ----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Աճող սերնդի էկոլոգիական կրթության ու դաստիարակության առկա վիճակը Հայաստանում խիստ մտածողության տեղիք է տալիս: Էկոլոգիական կրթության առումով պետք է այնպես արվի, որ այն չսահմանափակվի միայն սովորողների ձևական տեղեկատվության հաղորդմամբ: Էկոլոգիական կրթությունը մեր երկրում պետք է համարվի կրթության մեջ կարևոր ուղղություն այն պատճառով, որ Հայաստանի Հանրապետությունը դժվա թե կարելի լինի համարել էկոլոգիապես բարվոք միջավայր:

Թեման համարում եմ արդիական քանի որ ՀՀ-ում վերջին տարիներին մեծ արագությամբ կրճատվեցին անտառային մակերեսները, ոչնչացվեցին քաղաքային այգիները՝ իրենց տեղը զիջելով բարձրահարկ շենքերի և սրճարանների:

Իսկ մենք գիտենք, որ մատաղ սերնդի աճի ու զարգացման գործում մեծ նշանակություն ունի մաքուր օդը, էկոլոգիապես մաքուր սնունդը: Սակայն այս ամենն ի չիք են դառնում ժամանակակից վարքերի ու բարքերի շորհիվ:

Բացի մաքուր օդում ապրելուց ու արարելուց երեխաները պետք է սնվեն էկոլոգիապես մաքուր սննդով,ինչը մեր ժամանակներում և տարածաշրջանում շատ դժվար է, քանի որ Լոռու մարզում է գտնվում Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը, ինչպես նաև Ալավերդու պղնձի գործարանը: Այդ իսկ պատճառով հարկ եմ համարում թեման համարել արդիական:

Էկոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմի և շրջակա միջավայրի փոխազդեցությունները և դրանց օրինաչափությունները: Գայանե Մարտիրոսյանն անդրադառնալով էկոլոգիական կրթությանը գրում է,որ հասարակության զարգացման տարբեր դարաշրջաններում մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա տարբեր բնույթ է կրել: Անցյալում մարդն իր գործունեությամբ հաճախ է ունեցել բացասական ազդեցություն բնության առանձին տարրերի վրա, սակայն բնակչության սակավության հետևանքով կրել է մասնակի բնույթ: Ներկայումս այն ավելի շատ է դրսևորվում: Այդ իսկ պատճառով էկոլոգիական խնդիրներն այժմ գտնվում են ամբողջ հասարակության, կառավորությունների և միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Հարկավոր է

ծավալել գործունեություն՝ բնության ամբողջականությունը պահպանելու ուղղությամբ: Պահպանելով բնությունը՝ մենք պահպանում ենք մեզ և մեր սերունդների շահերը: [4;79]

21-րդ դարում մարդկությունը կանգնած է էկոլոգիական աղետի առջև: Մարդկանց անպատասխանատու քայլերի ու գործողությունների հետևանքով առաջ են գալիս այնպիսի հետևանքներ, որոնք խախտում են մարդկային հասարակության և բնության փոխհարաբերությունները:

Այսօր մեծ ուշադրություն է դարձվում էկոլոգիական կրթությանը և դաստիարակությանը, որը հնարավորություն կտա մատաղ սերնդի ներկայացուցիչներին մտահոգվելու և անհանգստանալուէկոլոգիական համամարդկային հիմնահարցերով, կբարձրացնի պատասխանատվությունը շրջակա միջավայրի նկատմամբ և դրա պահպանության ուղղությամբ կմղի կոնկրետ գործողությունների:

Էկոլոգիայի զարգացման առաջընթացից է կախված մարդու գոյությունը երկիր մոլորակի վրա: Էկոլոգիական դաստիարակության հիմքը դրվում է նախադպրոցական տարիքից, որը շարունակվում է նաև դպրոցում: Գ. Մարտիրոսյանն անդրադառնալով էկոլոգիական կրթությանը իր՝ «Նախադպրոցահասակ երեխաների էկոլոգիական դաստիարակության նպատակներն ու խնդիրները» գրքում գրում է,որ 4-5 տարեկան երեխաների էկոլոգիական կրթության իրականացման համար առաջնորդվում ենք՝ «ճանաչի'ր, սիրի'ր, պահպանի’ր» կարգախոսով[61;200]: Էկոլոգիական կրթությունը նախադպրոցական տարիքի երեխաներին հնարավորություն կտա ստանալու ճանաչողական գիտելիքներ իր և շրջակա միջավայրի մասին, սեր կարթնացնի այն ամենի նկատմամբ, ինչ շրջապատում է երեխային: Էկոլոգիական կրթությունստանալով երեխան կկառուցի իր սեփական «աշխարհը», պատկերացում կկազմի այն ամենի մասին, ինչ շրջապատում է իրեն: Երեխայի մոտ կձևավորվի այն պատկերացումը, որ ինքը բնության մի մասնիկն է, և իր գործողություններով է պայմանավորված մարդկային գոյությունը երկիր մոլորակի վրա: Նրաց մոտ բնության նկատամաբ պատասխանատու և հոգատար վերբերմունք ձևավորելու նպատակով

պետք է ուսուցանել և սերմանել տարբեր բնաճանչողական և բնապահպանական գիտեիքներ և կարողություններ:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել պրակտիկ գործունեությանը՝ օրինակ շաբաթօրյակ, ծառատունկ, որոնց ժամանակ երեխաները ձեռք են բերում էկոլոգիական կարողություններ և հմտություններ, իսկ դրանց կիրառման արդյունքում ձեռք են բերում միմյանց հետ աշխատելու հմտություններ, ձեռք են բերում փորձ՝ որն էլ հետագայում նպաստում է նրան, որ երեխաները գիտելիքներ են ունենում բնական այս կամ այն երևույթի նկատմամբ:

Հետազոտության նպատակը՝ էկոլոգիական դաստիարակության իրականացման արդյունավետ ձևերի մշակումն է:

Հետազոտության խնդիրները:

1. Բացահայտել նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթության դաստիարակության առկա վիճակը:
2. Ներկայացնել էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ պայմաններ:

Գլուխ 1. ՀՀ օրենքը ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին

ՀՀ-ում բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու մարդու սահմանադրական իրավունքի և կարևորության պետական խնդրի՝ էկոլոգիական ապահովման նպատակով շրջակա բնական միջավայրի պահպանության գործում յուրաքանչյուրի սահմանդրական պարտականությունների իրականացումը պահանջում է քաղաքացիների էկոլոգիական բարձր կուլտուրա, որը ձեռք է բերվում էկոլոգիական անընդմեջ կրթության ընթացքում:

Նշված օրենքի համաձայն՝ էկոլոգիական անընդմեջ կրթության համակարգը ՀՀ-ի միասնական կրթական համակարգի բաղադրիչն է: Այն պետական կրթական չափորոշիչների, կրթական հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, դասընթացների, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջությունն է:

Էկոլոգիայի անընդմեջ կրթությունը ներառում է հետևյալ մակարդակները՝

ա) նախադպրոցական էկոլոգիական կրթություն և դաստիարակություն (էկոլոգիական կրթություն ընտանիքում և նախադպրոցական հաստատություններում)

բ) միջնակարգ էկոլոգիական կրթություն

գ) միջին մասնագիտական էկոլոգիական կրթություն

դ) բարձրագույն մասնագիտկան էկոլոգիական կրթություն

ե) հետբուհական էկոլոգիական կրթություն

զ) հասարակության լայն խավերի էկոլոգիական կրթություն և դաստիարակություն, այդ թվում՝ զինված ուժերում:

ՀՀ ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին օրենքը սահմանում է, որ՝

Էկոլոգիական կրթությունը անընդմեջ գործընթաց է նպատակաուղղված անձին և ազգաբնակչությանը էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, էկոլոգիական դաստիարակությանը, էկոլոգիական կուլտուրայի արմատավորմանը,

բնապահպանության և բնօգտագործման բնագավառում նրանց ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը, ունակությունների դրսևորմանը և վարքագծի ձևավորմանը:

Էկոլոգիական դաստիարակություն՝ էկոլոգիական կուլտուրայի հիմքն ու անբաժանելի մասն է, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ և համակարգված գործընթաց:

Էկոլոգիական գիտելիք՝ հասարակության իմացության այն ոլորտն է, որը նպատակաուղղված է շրջահայաց բնօգտագործմանն ու մարդու առողջության համար անվտանգ շրջակա բնական միջավայրի ապահովմանը:

Էկոլոգիական գիտելիքների նվազագույն՝ հասարակության ամեն մի անձին անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալը, որը ծառայում է անվնաս ու սակավաթափոն արտադրության, բնական պաշարների և էներգիայի խնայողության, տնտեսական և այլ գործունեության, ինչպես նաև շրջակա միջավայրի վերականգման և դրա նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորման նպատակին:

Էկոլոգիական կուլտուրա՝ մարդու և բնության ներդաշնակ փոխներգործունեության վերաբերյալ հայրենական և համաշխարհային փորձն է, որը նպաստում է առողջ ապրելակերպին, սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, երկրի և յուրաքանչյուր անձի էկոլոգիական անվտանգությանը:

Նախադպրոցական ծրագրի էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը նպատակ ունի երեխայի մեջ ձևավորելու ճանաչողական, բնապահպանական գիտելքիներ, էկոլոգիական գիտացություն, հուզական, հոգատար և մարդասիրական վերաբերմունք՝ բնության, շրջակա միջավայրի նկատմամբ, բնության հետ հաղորդակցվելու ունակության, էկոլոգիական կուլտուրա:

Ծրագրի էկոլոգիական դաստիարակության բաժնի խնդիր է՝ մանկավարժական ներգործունեությամբ երեխայի մեջ ձևավորել ճանաչողական ունակություններ բուսական ու կենդանական աշխարհի, բնության սեզոնային երևույթների, անկենդան բնության վերաբերյալ, տալ պատկերացումներ դրանց փոխկապակցության մասին, մշակել շրջապատի նկատմամբ հոգատար և գիտակցական վերաբերմունք, ձևավորել բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման սովորույթներ և հմտություններ:

Ձևավորել գիտելիքներ թռչունների և կենդանիների վերաբերյալ, սեր դաստիարակել շրջակա միջավայրի նկատմամբ՝ խնամքով վերաբերվել բուսականությանը, զգուշությամբ շրջանցել թփերն ու ծաղիկները, չվնասել ծառերը:

Անկենդան բնություն: Սովորել տարբերել և անվանել տարվա եղանակները, նկատել սեզոնային փոփոխությունները: Ծանոթացնել շրջապատող բնաշխարհի որոշ տարրերի՝ ջրի, ձյան, սառույցի, ավազի,կավի, քարի հատկություններին: Ծանոթացնել շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությանն ու փոխկապակցվածությանը:

Էկոլոգիական դաստիարակություն: Ձևավորել վարքագծի ճիշտ դրսևորում շրջակա միջավայրի նկատմամբ:

Էկոլոգիական կուլտուրա: Ձևավորել որոշակի գիտելիքներ իր անձի սոցիալական դերի, հասակակիցների և մեծահասակների հարաբերությունների վերաբերյալ: Արթնացնել հետաքրքրություն, սեր և հոգատար վերաբերմունք բույսերի, կենդանիների և շրջակա միջավայրի նկատմամբ՝ կարևորելով դրանց դերը իրենց կյանքում: Ձևավորել բնության գեղեցկությունը նկատելու, դրանցով հիանալու, ինչու չէ նաև պահպանելու ունակություններ:

Նախադպրոցական տարիքում երեխան պետք է իմանա, որ բույսերն ու կենդանիները կենդանի էակներ են. նրանք շնչում են, ջուր են խմում և ամենակարևորը՝ վնասվելիս ցավ են զգում այնպես, ինչպես՝ մարդիկ: Ծառի կամ ծաղկի վնասված, կոտրված ճյուղերը լաց են լինում և օգնություն խնդրում:

Մի խոսքով, նախադպրոցական տարիքում երեխայի մոտ պետք է շարունակել ձևավորել ճիշտ վարքագիծ և խնայողական վերաբերմունք բնության գրկում և շրջակա միջավայրում:

Էկոլոգիական միջավայրի ձևավորում: Էկոլոգիական դաստիարակության գործընթացի շարունակության տարիքային և միջին խմբերում շատ կարևոր է, և դրա ուսումնասիրումն ու իմացությունը բարենպաստ պայմաններ կստեղծի ավագ նախադպրոցական տարիքում, ինչպես նաև տարրական դասարաններում: Էկոլոգիական կրթության խնդիրները նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրականացվում են հմուտ մասնագետների կողմից: Քանի որ

վաղվա օրվա մեր ապագան երեխաներն են, պետք է ոչ մի ջանք չխնայել և իրազեկել, սովորեցնել և օգնել երեխաների, որպեսզի հասնեն դրական արդյունքի:

Գլուխ2.Զգայական ընկալումների դերը էկոլոգիական դաստիարակության իրականացման խնդրում

ՆՈՒՀ-ում էկոլոգիական դաստիարակության կազմակերպման համար արդյունավետ մեթոդներ են համարվում դիտումները և փորձերը, որոնց կիրառումը հարստացնում է երեխաների փորձը, ապահովում կապը ձեռք բերված գիտելիքի և նրանց հետագա գործունեության միջև: Դիտումները և փորձերը կօգնեն ավելի հետաքրքիր և բովանդակալից կազմակերպելու էկոլոգիական պարապմունքները միջին և ավագ խմբվերում:

Նախադպրոցական հաստատության խմբասենյակներում դաստիարակը պետք է ստեղծի այնպիսի միջավայր, որտեղ կլինեն համապատասխան նյութերը երեխաների համար: Որպես գործընթաց՝ էկոլոգիան ընդգրկում է հետազոտումները, դիտարկումները և փորձարարությունները: Շատ կարևոր է, որ երեխաները մասնակցեն այս գործընթացներին, քանի որ ձեռք կբերեն հմտություններ, որոնք կիրառելի են և շատ օգտակար ուսումնառության այլ ոլորտներում և հետագա ողջ կյանքում:

Էկոլոգիային չպետք է վերաբերվել որպես առանձին առարկայի: Այն այս կամ այն կերպ կապված է այլ առարկայի հետ: Մինչև պարապմունքի սկսվելը դաստիարակը պոտք է ստեղծի այնպիսի պայմաններ, որ ապահովված լինի նաև երեխաների անվտանգությունը:

Օրինակ՝ եթե երեխաները դիտումներ են կատարել աշնանը, ուսումնասիրել են տերևաթափը, կարող ենք տերևները հավաքել և օգտագործել ֆիզկուլտուրայի ժամանակ՝ ցատկելով տերևներից պատրաստված կույտի վրայով: Սակայն դաստիարակը պետք է համոզվի, արդյոք վտանգավոր իրեր չկան թաքնված տերևների մեջ:

Այս պարապմունքի ժամանակ կարելի է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ տերևները դրանք հումուս (պարարտանյութ) են ծառերի համար,

այն կարելի է հավաքել և լցնել ծառերի արմատների մոտ, որպեսզի աշնանը ստանանք էկոլոգիապես մաքուր միրգ:

Աշնանը երեխաները կարող են այցելել մրգատու այգի դիտումներ կատարել, ինչու չէ նաև մրգեր հավաքել: Այդ մրգերը նրանք կարող են օգտագործել խոհարարության և մաթեմատիկայի պարապմունքների ժամանակ:

Նախադպրոցական տարիքի երեխաներին հստակ պատկերացում տալ նաև ջրի և նրա նշանակության մասին: Քանի որ Հայաստանում ջրային ռեսուրսները քիչ են, պետք է խնայողաբար օգտագործել և ամենակարևորն է չաղտոտել ջրամբարները, գետերը և լճերը, որոնք հաճախ նմանվում են աղբավայրերի:

Ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ ինչքան մաքուր լինի ջուրը, այնքան էկոլոգիապես մաքուր կլինի մեր սնունդը, որը մենք ստանում ենք այգիներից, բանջարանոցներից: Տեղեկություն տալ նաև քիմիական պարարտանյութերի և օրգանական պարարտանյութերի մասին: Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ձևավորել այն միտքը, որ ավելի լավ է սնվել օրգանական սնունդով, քան այն սննդով, որոնք ունեն քիմիական հավելումներ: Նշել նաև, որ ամենավտանգավոր հիվանդություններն առաջանում են անառողջ սնունդ ուտելու հետևանքով:

Երեխայի աշխարհայացքը սկսվում է բնաճանաչողությամբ: 5-6 տարեկանում արդեն պետք է սկսել ծանոթացումը կենդանի և անկենդան բնության փոխհարաբերություններին, բնության մեջ կենդանի օրգանիզմների փոխազդեցությունը և փոխադարձ կապերին՝ նպաստելով երեխայի կողմից այս կամ այն բանի ըմբռնմանը, որ երկիրը մեր ընդհանուր տունն է:

Նախադպրոցականի էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնական ուղին այդ գործընթացի պլանավորումն ու ծրագրավորումն է: Նախադպրոցական տարիքում երեխաներին տրվող էկոլոգիական գիտելիքների ծավալը հնարավորություն կտա հասկանալու բնության մեջ իրենց ճիշտ դրսևորելու անհրաժեշտությունը:

Էկոլոգիական գիտելիքների համակարգի բովանդակությունը պետք է բացատրվի նախադպրոցականին յուրահատուկ գործունեության ձևերով՝ խաղերով, աշխատանքով, էքսկուրսիաներով և գործնական այլ պարապմունքներով: Դրանք պետք է լինեն շարունակական, որովհետև մենք անընդհատ բախվում ենք այդ խնդրի

հետ: Կատարելով իր տարիքին և ուժերի համապատասխան աշխատանքներ, օրինակ՝ սերմեր ցանել, ծաղիկ աճեցնել, ջրել, փխրեցնել, երեխան ձեռք է բերում աշխատասիրություն, սեր դեպի բնություն: Քանի որ երեխաներն են կերտում իրենց վաղվա ապագան, հարկավոր է նրանց մեջ սերմանել այն ամենը, որ տարիներ անց գոնե նրանք չկանգնեն այն իրականության առաջ, ինչը որ մենք:

Ռուս գրականագետ Կ. Լ. Զելինսկին էկոլոգիայի մասին արդարացի մեջբերում ունի. «Բնության մեջ մարդու վարքագիծը նրա հոգու հայելին է»:[4;20]

Բոլորն էլ սիրում են զբոսնել բնության գրկում,հիանալ նրա գեղեկոթյամբ,սակայն կարող ենք հանդիպել այնպիսի տեսարանի, որն ստվերում կթողնի բնության գեղեցկությունը: Մենք փորձում ենք պահպանել այն, սակայն մտածում, որ մարդիկ էլի աղբ են թափելու: Եթե ամեն մեկն իր փոքրիկ ներդրումն ունենա բնության պահպանման գործում, մոլորակը կարող ենք մաքուր պահել մեր ժառանգների համար:

Գլուխ3.Էկոլոգիական դաստիարակության և կրթության սկզբունքները

Մարդկության գիտատեխնիկական նվաճումները վիթխարի են, և հասկանալի է, որ դեպի տեխնիկական առաջընթաց տանող յուրաքանչուր քայլ պետք է ուղեկցվի բնության վրա մարդու բացասական ազդեցությունը կանխելու խելամիտ զգուշավորությամբ:

Բավականին ուշացմամբ մարդկությունը լրջորեն սկսեց խորհել էկոլոգիական անվտանգության մասին: Յուրաքանչյուրի առողջությունը հասարակության կեսասոցիալական բարդ էվոլուցիայի հետևանք է: Այդ պատճառով էլ բժշկական միջոցառումները ի վիճակի չեն ապահովելու հասարակության անդամների առողջությունն ամբողջապես: Այդ հարցերի երաշխիքը պայմանավորված է նաև ասարակության սոցիալական, արտադրական-տնտեսական կառուցվածքի գիտական կազմակերպմամբ, աշխատանքի ու հանգստի,ապրելակերպի պայմանների բարելավմամբ, մարդկանց հոգևոր և ֆիզիկական դաստիարակությամբ, կուլտուրական զարգացմամբ:

Այդ խնդիրների լուծումը հնարավոր է, եթե բնության և մարդու փոխազդեցությունը նպատակամղվի բնական միջավայրի կատարելագործմանը: Խոսքը ոչ միայն բնության պահպանման, այլ նաև մարդ-բնություն կապի հետագա կատարելագործման մասին է:

Անձի էկոլոգիական դաստիարակության սկզբնական փուլերն ենըտանքը, նախադպրոցականհաստատությունները և դպրեցը՝ իրենց երով, քանի որ դրան միջոցով է առաջին հերթի սկսվում ապագա լիարժեք քաղաքացու ձևավորումը:

Լա'վ է, հուսալի' է սկիզբը ուրեմն՝ հետագա ընթացքն էլ բարհաջող կլինի:

Այո, որպեսզի մարդը սովորի իրեն դիտել որպես բնության մասնիկ, պետք է նրա մեջ էկոլոգիական կուլտուրան ձևավորել մանկուց: Այս հարցում հատկապես կարևորվում է ընդօրինակման՝ որպես դեպի ենթագիտակցության տանող «ուղիղ ճանապարհի» դերը: Ասվածը, առաջին հերթին, վերաբերվում է մեզ՝ դաստիարակներիս, մանկավարժներիս, քանի որ երեխաների համար հենց մենք ենք ընդօրինակման կերպար:

3.1 Նախադպրոցական նախագծեր ուղղված էկոլոգիական կրթությանը

Քանի որ նախադպրոցական տարիքում ուսուցանելու համար ավելի արդյունավետ են հետաքրքիր նախագծեր, էկոլոգիական կրթության և դաստիարակության ընթացքում կարելի է նախաձեռնել և իրականացնել հետևյալ նախագծերը:

Խաղային նախագծեր՝ կենդանիներին, բույսերին և թռչուններին նվիրված զանազան խաղեր, որոնց հիմքում լինի էկոլոգիական և բնաճանաչությունը: Երեխաները ստանում են վայրի և ընտանի կենդանիների, թռչունների պատկերներ: Նրանց հանձնարարվում է.

1. Առանձնացնել վայրի և ընտանի կենդանիներին:
2. Առանձնացնել այն կենդանիներին, որոնք գտնվում են մարդկանց ուշադրության կենտրոնում՝ արգելանոցներում կամ գտնվում են «Կարմիր գրքում»:
3. Առանձնացնել այն կենդանիներին, որոնք վտանգ են ներկայացնում մարդկանց համար:
4. Տարբերել վայրի և ընտանի թռչուններին
5. Տարբերել չվող և ձմեռող թռչուններին:
6. Առանձնացնել սենյակային բույսերի նկարները պարտեզում աճող բույսերից:
7. Մրգատու և ոչ մրգատու ծառերի տարբերում՞:

Հասարակական նախագծեր՝ այստեղ ուսումնասիրում են հասարակության շրջանում արտացոլվող խնդիրները, ինչ անել, որ օդը մաքուր լինի.

1. աճեցնել բազմաթվ բույսեր ու ծառեր, որովհետև դրանք կլանում են ածխաթթու գազ և մեզ տալիս են թթվածին:
2. Տանը գտնվելիս հաճախ օդափոխել սենյակը:
3. Փողոցում գտնվելիս հեռու մնալ ավտոմեքենաներից, որը և վտանգավոր է կյանքի համար և նրա արձակծ գազերը ախտոտում են միջավայրը:
4. Մրգատու ծառերը բուժել, փխրեցնել և ջրել ժամանակին:

Պատմողական նախագծեր՝ դրանք կլինեն հեքիաթների, պատմվածքների, բեմականացման կամ բանաստեղծության ձևով, օրինակ՝

Մի՛ կոտրատիր իմ ճյուղերը,
Որդիներն են նրանք իմ հեզ,
Ես այնպես եմ սիրում նրանց
Ինչպես մայրդ սիրում է քեզ:

Տերև անգամ եթե պոկես,
Սիրտս ցավից կմղկտա,
Թե որ դու ինձ չպահպանես,
Պատրաստի ծառ քեզ ո՞վ կտա:

Թեմային համապատասխան մեջբերում է Պատվական Խաչատրյանի «Ծառի խնդրանքը» բանաստեղծությունը

Կառուցողական նախագծեր՝ քանի որ ուսուցումը պահանջում է շարունակական գործունէություն, ավելի նպատակահարմար է կառուցողական նախագծերի ժամանակ կատարել դիտարկումներ և փորձեր՝ մասնակից դարձնելով նաև ծնողներին: Քանի որ ծնողները պետք է համագործակցեն մանկապարտեզի հետ, ընդգրկվեն օգտագործվող և ավանդութային աշխատանքի ձևերում ու միջոցառումներում, օրինակ դառնան երեխաների համար, կազմակերպել շաբաթօրյակներ, ծառատունկներ, ինչպես նաև ծավալել այլ օգտակար գործունեություններ:

Աշխատանքիս ընթացքում հարցումներ եմ իրականացրել Հաղպատ գյուղում՝ մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողների շրջանակում, նպատակ ունենալով պարզել մարդկաց տեղեկացված լինելը բնության տարբեր տարրերի պահպանման ու վերականգնման մասին:

Հարցմանը մասնակցել են 15 ծնող:

Հարցաշարս կազմված է 4 հարցից:

1. Ի՞նչու են պետք էկոլոգիական գիտելիքները:

   5 ծնող պատասխանել է, որ էկոլոգիական գիտելիքները պետք են որպեսզի չվնասենք բնությունը:

   10 ծնող՝ որպեսզի տեղեկացված լինենք բնությանը մարդկային գործունեության բացասական ազդեցությունից պաշտպանելու համար:

   Հարցմանը մասնակցած ծնողները գիտակցում են, որ էկոլոգիական գիտելիքներն ուղղված են բնության տարբեր տարրերի պահպանմանն ու վերականգնամանը:

2. Ինչպես է մարդն ազդում շրջակա միջավայի վրա:

   5 ծնող պատասխանել է, որ ծառահատումներ են իրականացնում

   5ծնող պատասխանել է, որ աղբ են թափում

   5-ը՝ քաղաքների և գյուղերի մոտ գործարաններ են կառուցում

   Ծնողների կարծիքով վերջին տարիներին մարդիկ շատ են վնասել բնությունը, բայց այժմ փորձում են ամեն ինչ վերականգնելու համար: Հարցման ժամանակ ծնողները բանավեճի բռնվեցին և ի վերջո եկան այն եզրահանգման, որ վերջին երկու տարվա ընթացքում ծառահատումներ չեն իրականացվում, աղբահանությունը կատարվում է պատշաճ կերպով, իսկ գործարանները և հանքավայրերը չեն աշխատում: Սակայն փաստեցին, որ ցավոք այս իրավիճակն ամնուր չէ:

3. Ինչպե՞ս կառավարել մարդու միջամտությունը բնության վրա:

   10 հոգի պատասխանել է, որ հարկավոր է մանկապարտեզներում և դպրոցերում տալ համապատասխան կրթություն:

   3 հոգի պատասխանել է ,որ անհրաժեշտ է պետության ուշադրությունը այս ամենի վրա:

2 հոգին՝ հարկավոր է ճիշտ դաստիարակություն ծնողներ կողմից:

Այո, կարծում եմ, որ առաջինը պետք է սկսել հենց ճիշտ կրթությունից: Սակայն միայն կրթությունը բավական չէ: Անհրաժեշտ է հետաքրքրություն մտցնել էկոլոգիական հիմնախնդիրների հանդեպ: Այս պարագայում մեծ դեր ունի նաև պետությունը, քանի որ պետական մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին՝ ծառատունկ, շաբաթօրյակ. մասնակցում են նաև ծնողները, ովքեր օրինակ են իրեց երեխաների համար: Մեր հետազոտություններից պարզ է դարձել, որ մակապարտեզ-ծնող, դպրոց-ծնող համագործակցությունն ավելի արդյունավետ է եղել:

4. Մասնակցել եք արդյոք բնության պահպանմանն ուղղված ինչ-որ միջոցառումների:

   5 հոգի պատասխանել է՝ ոչ

   10 հոգին՝ միայն համայնքի կողմից կազմակերպված համապատասխան ծառատունկի:

   Ծնողները ցավոք նշեցին, որ սեփական նախաձեռնությամբ ոչինչ չեն արել, սակայն պատրաստ են մասնակցելու տարաբնույթ միջոցառումների, որոնք ուղղված են էկոլոգիական աղետալի վիճակից դուրս գալու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ կատարած դիտարկումների արդյունքում եկա հետևյալ եզրահանգմանը.

1. Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ նախադպրոցական տարիքում ավելի արդյունավետ է բնապահպանական վարքագծի ձևավորումը: Այս տարիքում անձն ավելի մեծ հետաքրքրությամբ է հետևում էկոլոգիական իրավիճակներին,և կարող է գիտակցել այն վտանգները,որոնք առաջանում են բնության հանդեպ անփույթ վերաբերմունքի հետևանքով:
2. Մեր դիտարկումները փաստում են, որ բնապահպանական միջոցառումները և նախագծերը մեծ դեր ունեն նախադպրոցականների աշխարհաճանաչության ձևավորման գործում: Դրանց իրականացումը նպաստում է բնական միջավայրի կատարելագործմանը և էկոլոգիական կուտուրայի ձևավորմանը:
3. Կատարելով հետազոտություն ծնողների շրջանում՝ եկանք այն եզրակացության, որ նրանք գիտեն իրենց դերը բնության պահպանության հարցում և պատրաստ են մասնակցել և իրականացնել ցանկացած նախագծեր և աշխատանքներ շրջակա միջավայր պահպանման համար:

Օգտագործված գականության ցանկ

1. Դաստիարակի ուղեցուց «3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով» Երևան 2018-էջ 200
2. Թեմային համապատասխան մեջբերում է Պատվական Խաչատրյանի «Ծառի խնդրանքը» բանաստեղծությունը
3. Հովսեփյան Արմեն, Մարուխյան Ոստանիկ- «Անձի էկոլոգիական կուլտուրան»- «Ավրիկ2005»-էջ 354
4. Մարտիրոսյան Գայանե-«Էկոլոգական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում»-Երևան 2007թ-էջ 79
5. Մարտիրոսյան Գ. «Նախադպրոցահասակ երեխաների էկոլոգիական դաստիարակության նպատակներն ու խնդիրները»-2001թ [7,8;56-67]
6. Նախաշավիղ 2001թ –(7,8)
7. Методические материалы, В помощь руководителям детского чтения «Экология» - Красный Сулин 2012-(4;20)
8. https://www.arlis.am/

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Խաղը ն/դ առաջատար գործունեություն

ԿԱՏԱՐՈՂ ՝ Մանան Խաչատրյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն……3

2.Ն/դ տարիքի հոգեբանական առանձնահատկությունները…….4

3 .Խաղը որպես ն/դ առաջատար գործունեություն……6

4.Խաղերի դասակարգումը ……11

5. Բաց դասի օրինակ……12

6. Եզրակցություն……13

7.Գրականության ցանկ……14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր տարիք մտավոր զարգացման որակապես հատուկ փուլ է և բնութագրվում է բազմաթիվ փոփոխություններով, որոնք միասին կազմում են երեխայի անհատականության կառուցվածքի յուրահատկությունը նրա զարգացման տվյալ փուլում (Լ.Ս. Վիգոտսկի):

Նախադպրոցական տարիքում խաղը համարվում է առաջատար գործունեություն: Այն նպաստում է ն/դ տարիքի երեխաների հոգեկան գործընթացների զարգացմանը, սոցիալիզացիային և ձևավորում է հաղորդակցման հմտություններ:

Տվյալ հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ներկայացնել խաղի դերը երեխայի կյանքում,որպես առաջատար գործունեություն: Տվյալ նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել խաղի դերը և նշանակությունը նախադպրոցականի զարգացման գործում
- Ուսումնասիրել խաղի տեսակները

1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադպրոցական տարիքը համապատասխանում է երեխաների 3-ից 6/7 տարեկանը: Շատ երեխաներ այս տարիքում հաճախում են մանկապարտեզ, որն իրենց համար համարվում է երկրորդային սոցիալիզացիայի միջավայր և որտեղ իրենք մեծ բացահայտումներ են անում: Պատահական չէ, որ երեխաները հենց այս տարիքում են մանկապարտեզ գնում: 3 տարեկանից երեխաները դառնում են ավելի ինքնուրույն, սովորում են որոշ ժամանակ հեռու լինել մայրիկից, հասակակիցների հետ շփման և նոր փոփոխությունների պահանջ են ունենում :

Նախադպրոցական տարիքում դրվում են երեխայի ինքնուրույնության ձևավորման հիմքերը: Զարգանում են միմյանց հետ սերտորեն կապված հուզական (էմոցիոնալ), դրդապատճառային (մոտիվացիոն) ոլորտները, ձևավորվում է ինքնագիտակցությունը:

Սա այն տարիքն է, երբ երեխան աստիճանաբար փորձում է դրսևորել սեփական «Ես»-ը և ինքնուրույն դառնա և փորձում է դուրս գալ ծնողների վերահսկողությունից:

Այս տաիրքում երեխան, մտնելով նոր սոցիալական միջավայր՝ մանկապարտեզ, նոր տեսակի հարաբեությունների փորձ է ձեռք բերում:

Նոր փորձի ու գիտելիքների ձեռքբերմանը մեծապես նպաստում է երեխայի խաղը: Երեխաները սկսում են խաղալ դերայուժետային խաղեր, որոնցում ստանձնում են մեծահասակների դերեր, օրինակ «Տուն-տունիկ», «Բժիշկ-բժիշկ» և այլն: Այս խաղերի միջոցով երեխաները կարծես ծանոթանում են «մեծերի աշխարհին», սովորում են այլ մարդկանց տեսանկյունից նայել տարբեր իրավիճակների, փորձարկում են վարքի տարբեր ձևեր :

Այս տարիքին, ընդհանուր առմամբ, բնորոշ է հանգիստ հուզականությունը, չնչին առիթներով ուժեղ, աֆեկտիվ բռնկումների բացակայությունը: Այս հարաբերական կայուն և հանգիստ հուզական ֆոնը պայմանավորված է երեխայի պատկերացումների դինամիկայով, որն առավել ազատ է ու հանգիստ:

Վաղ տարիքում երեխայի հուզական կյանքի ընթացքը որոշվում էր կոնկրետ ընկալվող իրավիճակով (երեխան կարողանում էր ձեռք բերել իրեն հետաքրքրող խաղալիքը, թե՝ ոչ, կարողանում էր գլուխ հանել իրեն հետաքրքրող առարկաներից, թե՝ ոչ, մեծահասակը նրան օգնում էր, թե՝ ոչ):

Իսկ ահա նախադպրոցական տարիքում պատկերացումների ձևավորումը հնարավորություն է տալիս երեխային կտրվել, շեղվել կոնկրետ անմիջական իրավիճակից, նրանում առաջանում է այդ իրավիճակի հետ չառնչվող ապրումներ և բոպեական դժվարություններն այդքան սուր չեն ընկալվում՝ կորցնելով իրենց սկզբնական նշանակությունը: Բուն նախադպրոցական տարիքում երեխայի ցանկությունները միահյուսվում են նրա պատկերացումների հետ, որի շնորհիվ մղումները վերակառուցվում են: Տեղի է ունենում ընկալվող իրավիճակում գտնվող առարկաներին ուղղված ցանկություններից անցում առարկաների պատկերացումների հետ կապված ցանկությունների, որոնք գտնվում են իդեալական մակարդակում :

Երեխայի գործողություններն արդեն անմիջականորեն կապված չեն նրան գրավող առարկաների հետ, այլ կապվում են առարկայի ցանկալի արդյունքի, ապագայում այն ձեռք բերելու հնարավորության մասին պատկերացումների հետ :

Պատկերացումների հետ կապված էմոցիաները, հույզերը հնարավորություն են տալիս կանխագուշակել երեխայի գործողությունների արդյունքները, նրա ցանկությունների բավարարումը: Էմոցիոնալ կանխագուշակման մեխանիզմը բավականին հանգամանալից ուսումնասիրել և ներկայացրել է հոգեբան Զապորոժեցը: Նա ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում աֆեկտի ֆունկցիոնալ տեղը երեխայի վարքի ընդհանուր կառուցվածքում:

Հուզական գործընթացներն իրենց մեջ ընդգրկում են նաև ընկալման, պատկերային մտածողության և երևակայության բարձր ձևեր:

Նախադպրոցականի մեջ հույզերն առաջանում են ոչ միայն կոնկրետ գործողության արդյունքի հետևանքով, այլև այն առիթով, թե ինչ է լինելու ապագայում, որոշ ժամանակ հետո:Նախադպրոցական տարիքում փոխվում և ընդարձակվում են նաև էմոցիոնալ գործընթացների բովանդակությունն ու կազմը: Նրանցում ի հայտ են գալիս հույզեր և զգացմունքներ: Հատկապես հարկավոր է նշել էմփաթիայի զգացումը (ուրիշին ապրումակցելու, կարեկցելու զգացումը), առանց որի հնարավոր չէ երեխաների համատեղ գործունեությունն ու շփումը :

2. ԽԱՂԸ ՈՐՊԵՍ Ն/Դ ՏԱՐԻՔԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքում առաջ են գալիս մի շարք պահանջմունքներ,որոնք կարևոր են և ազդում են երեխայի ընդհանուր զարգացման վրա։ Այս տարիի երեխաների մոտ դրսևորվում են անիրագործելի երազանքներ։ Երեխան ցանկանում է դա անմիջապես բավարարել։ Նա փորձում է գործել մեծի պես սակայն իր հնարավորությունները դա թույլ չի տալիս։ Խաղի միջոցով երեխան փորձում է ընդօրինակել մեծերի գործունեությունը և նմանօրինակ ճանապարհով նա դառնում է կյանքի մասնակից։ [1,էջ 110]

Խաղը երեխայի համար սոցիալական ուղի է։ Երեխաների իրենց հասակակիցների հետ շփվում են հենց խաղի ժամանակ։ Նրանց միացնում են ընդհանուր նպատակը, հետաքրքրությունները և ապրումները։Երեխան սկսում է իրեն զգալ որպես խմբի անդամ, արդարացիորեն գնահատել իր ընկերների արարքներն ու գործողություններն։ Լ.Ս. Վիգոտսկու կարծիքով երեխան կորցնում է զարգացման բազում հնարավորություններ։[1,էջ 110]

Խաղի ընթացքում երեխաները նմանակելով մեծահասակների տնային գործերը յուրացնում են կենցաղային աշխատանքի որոշակի հմտություններ. սրբում են կահույքի փոշիները,մաքրում տան հատակը, լվանում տիկնիկի սպիտակեղենը։

Խաղի միջոցով մեծանում է երեխաների հետաքրքրությունը՝ տարբեր մասնագիտությունների նկատմամբ, և ձևավոնվում է հարգանք աշխատանքի հանդեպ։

Խաղի մեջ մտավոր ակտիվությունը միշտ կապված է երևակայության հետ.երեխան պետք է իր համար դեր գտնի ,պատկերացնի, թե ինչպես է վարվում այն մարդը,ում ցանկանում է ընդօրինակել։Երևակայությունն այն ժամանակ է ի հայտ գալիս երբ երեխան փնտրում է իր մտադրություններն իրագործելու միջոցներ։Այսպես խաղի միջոցով զարգանում են երեխայի ստեղծագործական ունակությունները։

Խաղի ընթացքում երեխաների մոտ ձևավորվում է կենտրոնանալու,ինքնուրույն մտածելու, ուշադրություն զարգացնելու, գիտելիքի ձգտումը։ Տարված լինելով խաղով՝ երեխաները չեն նկատում, որ սովորում են, նոր բաներ են հիշում, կողմնորոշվում անսովոր իրավիճակներում, համալրում են գաղափարների, հասկացությունների պաշարը և զարգացնում երևակայությունը։

Պիաժեն մատնանշում է մանկական գաղափարների և հասկացությունների ձևավորման նպատակաուղղված սոցիալական գործընթացները,ինչպես նաև ակտիվ ուսուցումը։

Խաղի միջոցով երեխաները տիրապետում են ակտիվ ուսուցման բոլոր տարրերին։

Խաղալիս երեխաներն անկաշկանդ են փորձարկում են բանավոր խոսքն առանց վախենալու սխալներից։[1,էջ142]

Այս տարիքում առաջատարը խաղային գործունեությունն է, և ոչ թե նրա համար, որ այն առավել հաճախ է կրկնվում երեխայի զարգացման այս փուլում,հակառակը, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխան օրվա ընթացքում մոտավորապես երեք ժամ է տրամադրում։

Խաղի զարգացմամբ տեղի են ունենում փոփոխություններ երեխաների հոգեկանում և զարգանում են այնպիսի գործընթացներ, որոնք համապատասխանում են զարգացման, նոր առավել բարձր աստիճանի։

Խաղը կարևոր դեր ունի նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման, դաստիարակության, աշխարհընկալման գործում։ Խաղի բովանդակությունը ճիշտ օգտագործելու դեպքում դաստիարակը կարող է հասնել երեխայի մեջ դրական և կարևոր որակների ձևավորմանը և դրանց հետագա զարգացմանը։

Խաղը համարվում է նախադպրոցական տարիքի առաջատար գործունեության տեսակ։ Այն նպաստում է սոցիալական հմտությունների ձևավորմանը։ Սյուժետադերային խաղը բաղկացած է երեխաների կողմից մեծահասակների գործողությունների և նրանց միջև փոխհարաբերությունների վերարտադրումից։ Այսինքն՝ խաղում երեխան մոդելավորում է մեծերի աշխարհը, նրանց հարաբերությունները։ Դերային խաղն առաջանում է վաղ և նախադպրոցական տարիքի սահմանին և իր գագաթնակետին է հասնում նախադպրոցական մանկության կեսին։ Բացի այս տեսակի խաղերից, նախադպրոցականը տիրապետում է կանոններով (դիդակտիկ և շարժական) խաղերին, որոնք նպաստում են երեխայի ինտելեկտուալ զարգացմանը, մանր և խոշոր մոտորիկայի ձևավորմանը։ Խաղն ազդում է մտավոր զարգացման բոլոր ասպեկտների վրա, ինչը բազմիցս շեշտվել է ինչպես ուսուցիչների, այնպես էլ հոգեբանների կողմից :

Այսպիսով, Ա.Ս. Մակարենկոն գրել է. «Խաղը կարևոր է երեխայի կյանքում, այն ունի նույն նշանակությունը, ինչ մեծահասակն ունի գործունեություն, աշխատանք, ծառայություն։

Խաղային գործունեությունն առաջանում է օբյեկտիվ գործողությունների յուրացման ընթացքում, այսինքն՝ խաղը ծնվում է օբյեկտիվ գործունեության մեջ՝ որպես առարկայի խաղային դրսևորման ձև: Երևակայական իրավիճակի տարրերով խաղին նախորդում է խաղի երկու փուլ՝ ներածական և նկարագրական: Սկզբում խաղալիքների հետ գործողությունները, ինչպես ցանկացած այլ առարկայի հետ, մանիպուլյատիվ բնույթ ունեն: Մոտիվը դրվում է խաղալիքի միջոցով: Երեխան տեղափոխվում է երկրորդ փուլ, երբ նա կամ մեծահասակի օգնությամբ հայտնաբերում է նրա որոշ հատկություններ խաղալիքում: Աստիճանաբար երեխաները սովորում են գործել տարբեր խաղալիքներով՝ կապված իրենց ֆիզիկական հատկությունների հետ (մի առարկա դնել մյուսի մեջ, գլորել, շարժել, թակել, հարվածել մեկը մյուսին ձայն լսելու համար և այլն): Նման առարկայական գործունեության շարժառիթը խաղային գործունեության զարգացնող ազդեցությունն է ներկայացնում :

Խաղի միանշանակ սահմանում մինչ այժմ գոյություն չունի: Առավել հաճախ օգտագործվում է Էրիքսոնի տված սահմանումը. «Խաղը էգոյի գործառույթ է, սոմատիկ և սոցիալական գործընթացների հետ ինքնության, ես-ի /the self /սինխրոնիզացման փորձ»: Խաղը ազատ է իռռացիոնալ պոռթկումներից, մեղքի զգացմունքից: Խաղն իր էությամբ

1. մոտիվացնող է,
2. ընտվում է ազատ,
3. կոնկրետ չի,
4. ենթադրում է ակտիվ ներգրավվածություն,
5. հաճույք է պատճառում

Սակայն խաղի այս սահմանումը կորցնում է իր ակտուալությունը, քանի որ երեխայի հետ աշխատանքի գործընթացում երեխայի խաղը իմպուլսիվ է, իռռացիոնալ և կպչուն: Վիննիկոտտը նկատում է, որ խաղը հոգեկան ակտիվության գործուն ձև է, որը թույլ է տալիս կառավարել օբյեկտները: Նա սահմանեց ֆանտազիայի և խաղի միջև եղած տարբերությունները: Առաջինը օբյեկտիվ իարականության հետ ոչ մի կապ չունի, որտեղ պահանջմունքների բավարարումը իլյուզիվ է: Իսկ խաղը ընթանում է մի տարածության մեջ, որը գտնվում է ներքին և արտաքին իրականության միջև, դրա համար էլ զարգացնում է երկու ոլորտների հետ փոխգործակցելու ընդունակությունը:

Ըստ Վիննիկոտտի, խաղային գործունեությունն ընթանում է խաղի երկու ոլորտների միավորման տեղում: Ոլորտներից մեկը մասնագետն է, մյուսը՝ երեխան:

Երեխաներին հասկանալու համար նրանց պետք է դիտարկել զարգացման տեսանկյունից: Նրանց աշխարհն իրապես գոյություն ունի, որի մասին նրանք պատմում են խաղի մեջ: Ի տարբերություն մեծահասակների, որոնց համար շփման բնական միջոցը լեզուն է, երեխաների համար խաղն է:

Երեխաների հետ հոգեթերապևտիկ աշխատանքը և խաղի կիրառումը նրանում սկսվում է փոքրիկ Հանսի կլինիկական դեպքով՝ նկարագրված Զ. Ֆրեյդի կողմից 1909 թվականին: Տղայի բուժումը կայանում էր այն խորհուրդներում (ինչպես հակազդել երեխայի վարքին), որոնք պետք է կատարեր նրա հայրը՝ հետևելով նրա խաղին: Ֆրեյդից հետո, թերևս, Թերմինա Հագ-Հելմուտն (Hug-Hellmuth) է դառնում առաջին թերապևտը, ով հաստատում է, որ խաղը իրապես պատասխանատու պահ է երեխայի հետ հոգեվերլուծական աշխատանքում: Նա առաջինն է, ով թերապիայի ընթացքում երեխային խաղալիք է առաջարկում, որպեսզի վերջինս ինքնարտահայտվի :

Հագ-Հելմուտը մասնագետների ուշադրությանը ներկայացրեց այն փաստը, որ հոգեվերլուծության այն զինանոցը, որը կիրառվում է մեծահասակների հետ, բոլորովին պիտանի չէ երեխաների հետ աշխատելիս: Ի տարբերություն մեծահասակների՝ երեխաներին բոլորովին հետաքրքիր չէ ուսումնասիրել սեփական անցյալը կամ քննարկել սեփական զարգացման փուլերը: Նրանք շատ հաճախ նաև հրաժարվում են ազատ զուգորդություններ կատարելուց: Հետևաբար, երեխաների հետ աշխատող շատ մասնագետները նախընտրեցին անուղղակի հաղորդակցումը դիտման միջոցով :

1919 թ. Մելանի Քլեյնը (Klein) սկսեց կիրառել խաղը որպես վերլուծության միջոց 6 տարեկանից ցածր երեխաների հետ աշխատելիս: Նա գտնում էր, որ մանկական խաղը ևս ուղղորդվում է թաքնված դրդապատճառներով և ազատ զուգորդություններով: Խաղը, փաստորեն, փոխարինում է խոսքային ազատ զուգորդություններին և հնարավորություն տալիս ներթափանցել երեխայի անգիտակցական ոլորտ: Մելանի

Կլայնը առաջին անգամ առանձնացրեց անհրաժեշտ խաղային նյութերը, որոնց կազմի մեջ մտնում էին հասարակ խաղալիքներ. փոքրիկ փայտե տղամարդիկ և կանայք, ավտոմեքենաներ, անիվներով սայլեր, գնացքներ, ինքնաթիռներ, կենդանիներ, տներ, գնդակներ, թուղթ, մատիտ, մկրատ, կավիճներ, պարան, պլաստիլին: Այսպիսի խաղալիքների փոքր չափսերը և նրանց բազմաբնույթ քանակությունը թույլ են տալիս երեխային արտահայտել իր ֆանտազիաները և նախկին փորձը: Նա կարևորում էր, որ խաղալիքները

չլինեն մեխանիկական, մարդկային ֆիգուրաները չխորհրդանշեն կոնկրետ մասնագիտություն կամ զբաղմունք, ինչպես նաև կարևորում էր, որ խաղալիքների պարզությանը համապատասխանի խաղային սենյակի պարզությունը: Խաղալիքների պարզությունը երեխային թույլ է տալիս օգտագործել դրանք տարբեր իրավիճակներում :

Այսպիսով, Մելանի Կլայնը առաջինն էր, որ առանձնացրեց հատուկ պահանջներ խաղային նյութերի և խաղասենյակի նկատմամբ, կարևորելով նրանց պարզությունը: Նույն ժամանակահատվածում Աննա Ֆրեյդը (A. Freud) ևս սկսում է օգտագործել խաղը՝ երեխայի հետ կապ հաստատելու նպատակով: Ի տարբերություն Քլեյնի՝ նա կարևորում էր երեխայի և մասնագետի միջև հուզական կապի հաստատումը, որից հետո միայն խաղի կամ նկարի ետևում անգիտակցական դրդապատճառների մեկնաբանությունը: Քլեյնը և Աննա Ֆրեյդը համակարծիք էին, որ չափազանց կարևոր է երեխայի անցյալի բացահայտումը և «ես»-ի ուժեղացումը, որի համար անփոխարինելի միջոց է խաղը:

Դեյվիդ Լևին այն համոզմունքն էր, որ խաղը երեխաներին տալիս է արձագանքելու հնարավորություն: Այս տեսության շրջանակներում Լևինը ստեղծում, մոդելավորում է այնպիսի իրավիճակ, որպեսզի հատուկ, նպատակային ընտրված խաղալիքները օգնեն երեխային վերականգնել իր մոտ տագնապ առաջացրած հակազդումը: Երեխային թույլ է տրվում ազատ խաղալ, ծանոթանալ մասնագետին և սենյակային պայմաններին: Հետո մասնագետը օգտագործում է հատուկ ընտրված խաղային նյութեր, որպեսզի ճիշտ պահին երեխայի խաղի մեջ ներմուծի սթրեսածին իրավիճակը: Տրավմա առաջացնող իրավիճակի վերաստեղծումը թույլ է տալիս երեխային ազատվել ցավից, լարվածությունից :

Թույլ տալով, որ երեխան նախորդ փորձը խաղալով ավարտին հասցնի, ինքը կառավարի խաղի ընթացքը՝ մենք երեխային տալիս ենք տուժողի պասսիվ դերից ակտիվ դերի անցնելու հնարավորություն: Այս ուղղության մեջ խաղասենյակում իրականացվում են խաղային ակտիվության 3 ձևեր.

1. ազատում ագրեսիվ վարքից (երեխան նետում է առարկաները, պայթեցնում փուչիկները) կամ դրսևորում մանկամիտ վարքի ձևեր (մատը ծծակի փոխարեն օգտագործել),

2. ազատում բացասական զգացմունքներից ստանդարտեցված իրավիճակներում (քրոջ կամ եղբոր նկատմամբ խանդի զգացման խթանում՝ մոր կրծքին տիկնիկ մոտեցնելու միջոցով),

3. ազատում զգացմունքներից՝ խաղի մեջ երեխայի կյանքի սթրեսային փորձի վերստեղծման միջոցով :

Լեվին առանձնացնում է հետևյալ պահանջները խաղի ընթացքում առավելագույն արդյունքի հասնելու համար։

1. Արտահայտված սիմպտոմի առկայություն, որին նախորդում է կոնկրետ իրադարձություն։

2. Պրոբլեմը չպետք է առկա լինի երկար ժամանակ, քանի որ այդ դեպքում այն ազդում է փոխհարաբերությունների ամբողջ համակարգի վրա, երբեմն նաև երեխայի ինտելեկտուլ մակարդակի վրա։

3. Կարևոր է, որ պրոբլեմ առաջացնող իրավիճակը լինի անցյալում և գոյություն չունենա աշխատանքների հետ զուգահեռ։

Օ. Ռանկի աշխատություններում առավել շատ կարևորություն է տրված ոչ թե երեխայի կյանքի և անգիտակցականի ուսումնասիրությանը, այլ երեխա-մասնագետ հարաբերությունների զարգացմանը «հիմա և այստեղ»։ Ալլենը և Թաֆթը հատկապես կարևորում էին երեխային վերաբերվել ինչպես անձնավորության, որը ունի ներքին ուժ և կարողություն՝ փոխելու սեփական վարքը։ Հետևաբար երեխաներին տրվում է ինչպես ազատ ընտրելու (խաղալ կամ չխաղալ), այնպես էլ սեփական գործունեությունը կառավարելու հնարավորություն :

Այս ուղղության գաղափարական մեխն այն է, որ երեխաները աստիճանաբար գալիս են այն գիտակցմանը, որ իրենք առանձին անհատներ են՝ սեփական ցանկություններով, և որ կարող են ապրել յուրահատուկ որակներով այլ մարդկանց հետ համատեղ։ Այս մոտեցման մեջ երեխան սեփական աճի գործընթացի պատասխանատվությունը վերցնում է իր վրա, իսկ մասնագետն իր ուշադրությունը կենտրոնացնում է երեխայի դժվարությունների վրա։ Երեխաների հետ խաղային շտկողական աշխատանքներում հաջողությամբ կիրառվում են ոչ դիրեկտիվ աշխատանքի սկզբունքները (օր.՝ անհատի՝ աճի բնական ձգտումը, սեփական զարգացումը կառավարելու անհատի կարողությունը)։ Ոչ դիրեկտիվ խաղի նպատակը կայանում է երեխայի ինքնաճանաչման և ինքնակառավարման մեջ։

Մասնագետն իր տրամադրության տակ ունի լավ կահավորված խաղասենյակ և երեխային տրվում է հնարավորություն խաղալ այնպես, ինչպես ինքն է ուզում, կամ էլ՝ ոչինչ չանել :

3. ԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Առանձնացնում են խաղի տարբեր տեսակներ և դասակարգումներ:

1. Ստեղծագործական խաղեր: Ստեղծագործական խաղի նպատակն է՝ ն/դ տարիքի երեխայի մոտ սոցիալական ամենատարբեր դերերի զարգացում:

2. Ռեժիսորական խաղեր: Ռեժիսուրական խաղի նպատակն է՝ զարգացնել ն/դ տարիքի երեխաների տեղծագործականությունը և ֆանտազիան::

3. Կառուցողական խաղեր: Կառուցողական խաղերի նպատակը ն/դ տարիքում վեճերի, կոնֆլիկտների դեպքում կոնստրուկտիվ լուծումներ սովորեցնելն է:

4. Խաղ-բեմականացումներ: Խաղ բեմականացումների նպատակը ն/դ տարիքի երեխային արվեստի, մշակույթի հետ ծանոթացնում է և հաղորդակցման եզրերի ստեղծումն է:

5. Կանոններով խաղեր: Կանոններով խաղերի նպատակը երեխաների մոտ կարգ ու կանոնի հաստատմանը հետևելն է, խմբային կանոնները պահպանելն է:

6. Շարժախաղեր: Շարժախաղերի նպատակը դրական հույզերի առաջացումն է, ակտիվացումը, խմբային համագործակցության ստեղծումը:

7. Սյուժետային և ոչ սյուժետային խաղեր: Տվյալ խաղերի դեպքում հաճախ փոքրածավալ թեմաներ են ընտրվում գեղարվեստական գրքերից, ռադիո և հեռուստատեսային հաղորդումներից, մանկական ու ժողովրդական հեքիաթներից: Այնուհետև մասնակիցներին բաժանվում են դերերը :

Այսպիսով, երեխաների, մանավանդ նախադպրոցականների մտավոր դաստիարակության գործուն միջոցներից են դիդակտիկ խաղերը, որոնց նպատակն է նոր գիտելիքներ հաղորդել առարկաների, նրանց դասակարգման, նշանակության, հատկությունների, աշխատանքի տեսակների, բնության երևույթների և այլնի մասին:

Բաց դասի օրինակ

2022թ. նոյեմբերի 27-ին Մեծ Այրումի ՆՈՒՀ ՀՈՒԱԿ-ում տեղի ունեցավ <<Բարի գալուստ Ոսկե աշուն>>բաց պարապմունք դաս միջոցառումը:Միջոցաջմանը ներկա էին գտնվում մանկապարտեզի կոլեկտիվը և մանկապարտեզի բոլոր երեխաների ծնողները:

Միջոցաջումը շատ հետաքրքիր էր և բազմաբովանդակ ուղղված էր երեխաների աշնան մասին գիտելիքների զարգացմանը:

Խաղերի և բեմադրման միջոցով փորձեցինք մեր գիտելիքները ստուգել աշնուն եղանակի վերաբերյալ:Բեմադրման միջոցով ցոիյց տվեցինք, թե ինչպես են առաջանում տարվա եղանակները: Երեխաներից մեկը Արեգակն էր, մյուսը՝ Երկիր Մոլորակը,երբ Երկիր Մոլորակը պտտվում էր Արեգակի շուրջը առաջանում էր որևէ եղանակ և առաջ էր գալիս այն երեխան, որի ձեռքին տվյալ եղանակին բնորոշ նկար կար:

Փորձեցինք խաղի միջոցով մեր գիտելիքները ստուգել մրգերի և բանջարեղենների մասին: Դաստիարակը ասում էր որևէ մրգի կամ բանջարեղենի անուն: Երեխաները ձեռքերով պետք է ցույց տային, թե որտեղ է այն աճում: Օրինակ, եթե ծառի վրա է ՝ ձեռքերը բարձրացնում էին վերև, եթե հողի տակ է՝ ձեռքերի ափերը ներքևում էին պահում,իսկ եթե հողի վրա է՝ ձեռքերի ափերը բացում էին և պարզում առաջ:

Բաց պարապմունք միջոցառման ավարտին և ծնողները, և մանկապարտեզի կոլեկտիվը հիացած էին երեխաների գիտելիքներով:

Եզրակացություն

Ելնելով հետազոտական աշխատանքի բովանդակությունից, կարելի է եզրակացնել,որ երեխաների խոսքի ձևավորման առաջին նախապայմանը ճիշտ ընտրված խաղն է: Խաղի միջոցով ձևավորված խոսքը ավելի մատչելի է : Այն երեխաները,ովքեր ավելի շատ են խաղում ստեղծագործական խաղեր , նրանց խոսքը ավելի շուտ է ձևավորվում: Խաղի միջոցով երեխաները արտահայտում են իրենց հույզերը և ապրումները:

Խաղի միջոցով դաստիարակը կարողանում են երեխաների հետ ուսուցողական պարապմունք անցկացնել և հասնել իր առջև դրված նպատակին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիր։2-3 տարեկաններ/Հ. Միտոյան ,Ս.Մարության,Լ.Սմբատյան,Հ.Մինասյան,Գ.Մարտիրոսյան և ուրիշ։Կրթության ազգային ինստիտուտ,2012։

2.Մանկապարտեզի միջին խմբի 4-5 տարեկանների կրթական համալիր ծրագիր /Հ. Միտոյան և ուրիշ։ՀՀ ԿԳՆ 2011, 168 էջ։

3. Լալա Սմբատյան, Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում։

4. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումըայլընտրանքային մոդելներով, դաստիարակի ուղեցույց։

5. https://podarilove.ru/hy/

ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ << Բարոյական դաստիարակությունն ընտանիքում>>

Դաստիարակ ՝ Մարգարիտա Հակոբյան

Ղեկավար՝ Գագիկ Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….....3

Գլուխ1. Բարոյական դաստիարակության վերաբերյալ տեսական մոտեցումները…….6

1.1 Բարոյական դաստիարակության էությունը……8

Գլուխ2. Բարոյական դաստիարակության խնդիրները ընտանիքում……...……10

2.1 Ընտանիքում երեխայի բարոյական կերպարի ձևավորման հիմնական ուղիներն ու պայմանները……14

Փորձարարական մաս ……..……17

Եզրակացություն……19

Գրականության ցանկ……20

Ներածություն

Թեմայի արդիականությունը. Արդի ժամանակաշրջանի կարևորագույն խնդիրներից մեկը դա բարոյական նորմերի ճիշտ արժևորումն է, և դաստիարակության գործընթացում դրանց կիրառումը: Ներկա ժամանակաշրջանում ընտանիքը, որպես բարոյական դաստիարակության գլխավոր օղակ, չափազանց ցածր մակարդակում է գտնվում: Այսօր երեխաները գտնվում են տեխնոլոգիական այնպիսի հզոր ուժերի ազդեցության ներքո, որի բացասական հետևանքները ակնհայտ են: Հեռուստատեսությունը, համակարգչային խաղերը, հեռախոսները, որոնցում առկա են դաժանության և բռնությունների տեսարաններ, որոնք ներկայումս գերակշռող մաս են հանդիսանում, լուրջ հետևանքներ են թողնում երեխաների բարոյականային որակների ձևավորման վրա, որի արդյունքում քայքայվում է երեխաների հոգեկան աշխարհը:

Մեր ժամանակների բաժին ընկած բարդությունների բեռը շատ ծանր է. ընտանիք- երեխա- հասարակություն: Հասարակության բարոյական առողջությունը կախված է նրանից, թե որքան բարոյական, բարի և պարկեշտ կլինեն մեր երեխաները:Բարոյական արժեքներով դաստիարակված երեխաները լինում են ավելի բարեկիրթ, մինչդեռ բարոյական արժեքներից զուրկ անձը հասարակության համար անտանելի բեռ է: Բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: Այն կազմակերպվում և ղեկավարվում է մեծահասակների կողմից: Նախադպրոցական տարիքում երեխան չափազանց զգայուն է ցանկացած ներգործության նկատմամբ, նա սպունգի նման ընկալում է սոցիալական միջավայրի ներգործությունը՝ ընդօրինակելով մեծահասակներին: Բարոյական որակների ձևավորման ընթացքում երեխան ձեռք է բերում այնպիսի կարևոր հատկանիշներ, ինչպիսիք են՝ բարոյական գիտակցություն, բարոյական վերաբերմունք արտաքին աշխարհի նկատմամբ և բարոյական վարքագիծ: Այս հատկանիշների շնորհիվ է, որ երեխան կարողանում է կառուցել բարոյական սկզբունքներով արժևորված

հարաբերությունների համակարգ, որն ուղղված է սոցիալական զգացմունքների ձևավորմանը:

Աշխատանքի նպատակն է.

1. Ուսումնասիրել և բացահայտել ծնողների մանկավարժական վարպետության առանձնահատկությունները, որոնք նպաստում են ընտանեկան ավանդույթների, բարոյական սկզբունքների, ընտանիքում երեխաների բարոյական համոզմունքների պահպանմանը, ամրապնդմանն ու ընդլայնմանը

Աշխատանքի խնդիրներն են.

1. Ուսումնասիրել ընտանիքում երեխաների բարոյական դաստիարակության վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցումները:
2. Առանձնացնել այն ընտանեկան պայմանները, ընտանեկան մթնոլորտը և այն միջոցները, որոնք կնպաստեն ընտանիքում բարոյապես զարգացած անձի ձևավորմանը:

Ժամանակակից աշխարհում երեխան շրջապատված է իր ինտելեկտի և զգացմունքների վրա դրական և բացասական ազդեցության բազմաթիվ ուժեղ աղբյուրներով: Երեխայի համար կարևոր է իմանալ բարոյական սկզբունքները և շրջապատի մարդկանց համար այդ սկզբունքների խախտման հետևանքները, որի վերաբերյալ պարտավոր է ծնողը հատուկ աշխատանքներ տանել:

Բարոյական դաստիարակության հաջող իրականացման ընթացքում է, որ երեխաները ձեռք են բերում բարոյական արժեքների վերաբերյալ պատկերացումներ, ձևավորվում է նրանց բարոյական գիտակցությունը:

Ընտանիքն է հանդիսանում երեխաների բարոյական դաստիարակության գլխավոր օղակը: Այն ամենը, ինչը երեխան ձեռք է բերում ընտանիքում մանկության տարիներին, պահպանվում է նրա ամբողջ կյանքի ընթացքում: Ընտանիքի կարևորությունը դաստիարակության գործընթացում պայմանավորված է նրանով, որ երեխան իր կյանքի կարևորագույն հատվածը անց է կացնում այդտեղ, և տևողության առումով իր ազդեցությամբ կրթական հաստատություններից ոչ մեկը չի կարող համեմատվել ընտանիքի հետ: Ընտանիքը դաստիարակության մեջ կարող է հանդես գալ և' որպես դրական, և' բացասական գործոն: Դրական ազդեցությունն այն է, որ ոչ ոք, բացի ընտանիքում նրա ամենամոտ մարդկանցից՝ մայրիկ, հայրիկ, տատիկ, պապիկ, երեխային ավելի լավ չեն վերաբերվում, այդչափ չեն սիրում, և ոչ էլ այդքան

հոգ են տանում: Եվ միևնույն ժամանակ, ոչ մի այլ սոցիալական հաստատություն չի կարող այդքան վնաս հասցնել երեխայի դաստիարակության գործընթացում, որքան դա կարող է անել ընտանիքը: Եվ ելնելով իր աշխատանքի առանձնահատկություններից, մանկավարժը բախվում է ընտանիքի և հասարակության խնդիրներին: Եվ արդյունքում իրականացնում է երկուստեք աշխատանք՝ երեխաների և նրանց ընտանիքի անդամների հետ, զինելով նրանց հոգեբանական և մանկավարժական գիտելիքներով, ցույց տալով երեխաների բարոյական դաստիարակության վերաբերյալ ուղիներ:

Բարոյական դաստիարակությունը սերտորեն կապված է դաստիարակության մյուս բաղադրամասերի հետ և մեծ դեր է խաղում երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար:

Յուրաքանչյուր անձի արժեքային համակարգի ձևավորման հիմքում դրվում է ճշմարտությունը և սերը: Ի սկզբանե երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի և ազգի նկատմամբ, իսկ ժամանակի ընթացքում պետք է աստիճանաբար այդ սերը մեծացնել և ավելացնել:

Գլուխ I

Բարոյական դաստիարակության վերաբերյալ տեսական մոտեցումները

Այն հարցին, թե ընտանիքը երեխայի բարոյական զարգացման գործընթացում ինչպիսի ազդեցություն է ունենում, փորձել են պատասխանել դեռևս հին ժամանակաշրջանի ականավոր գիտնականներ, մանկավարժներ, հոգեբաններ: Դաստիարակության այս ձևը ամենից կարևորվել է այն առումով, որ ընտանեկան դաստիարակությունը անքակտելիորեն կապված է պետական- հասարակական կյանքի հետ: Սակայն պետք է փաստել նաև, որ այս հարցի շուրջ տեսակետները երբեմն հակասել են միմյանց, և նույնիսկ բախումների պատճառ են հանդիսացել:

Նախադպրոցականների բարոյական դաստիարակության բովանդակությանն անդրադառնալով շատ մանկավարժներ այդ հասկացությունը պատկերացնում են ոչ այնքան որպես անձի զարգացմանը միտված՝ փոխկապակցված բաղադրամասերի, գործընթացների և ռազմավարությունների համակարգ:

Գիտական- մանկավարժների գերակշռող մասը կարևորում է ընտանեկան դաստիարակության նշանակությունը երեխայի անձնավորության ձևավորման և զարգացման գործում:

Անցյալի ականավոր մանկավարժներ՝ Յ. Ա. Կոմենսկին, Ի. Գ. Պեստալոցցին, Ռ. Օուենը և գրեթե բոլոր հայ մանկավարժները ընտանիքը դիտել են, որպես <<միկրոտիեզերք>>, որը առավելագույնս նպաստում է երեխայի պահանջմունքների բավարարմանն ու հնարավորությունների բացահայտմանը, նրանց զարգացմանն ու դաստիարակությանը:[1,էջ216]

Ընտանեկան դաստիարակության մասին Ս. Արղությանը գրում է. «Առօրյա ընտանեկան կյանքը հարուստ նյութ է տալիս երեխայի զարգացման համար, մարդու մանկության առաջին տպավորությունը հոգու մեջ թողնում են անջնջելի հետք: Մարդու բարոյականության ստեղծողը, ձևողը, գլխավորապես ընտանիքն է»:[1, էջ357]

Ուշինսկին դաստիարակությունը բնորոշում է որպես ներդաշնակորեն զարգացած անձնավորության ձևավորմանը նպատակաուղղված գիտակցական պրոցես: Դաստիարակության տարբեր կողմերի շարքում նա գլխավոր տեղը

հատկացնում է բարոյական դաստիարակությանը, քանի որ, ըստ նրա, բարոյական դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի մարդասիրություն, ազնվություն և ուղղամտություն, աշխատասիրություն, կարջապահություն և պատասխանատվության զգացում, որը զուգակցում է համեստության հետ: Դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի ամուր բնավորություն և կամք, տոկունություն: [4, էջ87]

Սենեկան ասում էր.<< Սկզբում սովորիր բարի բարքեր, նոր միայն իմաստություն>>: Բարոյական զարգացումից զուրկ մարդը, շրջապատի, հասարակության համար անտանելի <<բեռ>> է: Կ. Դ. Ուշինսկին բարոյական զարգացումն ավելի բարձր էր գնահատում, քան մտավոր զարգացումը: Իր հոդվածներից մեկում նա գրում է , որ բուսական աշխարհի մասին իմացությունը չի կարող Գոգոլի չինովնիկներին ուղղել, հասարակության համար նրանց դարձնել պիտանի մարդիկ: Ընդհանրացնելով վերը շարադրվածները, կարելի է ասել, որ բարոյական դաստիարակության վերջնական նպատակը մարդուց իսկական մարդու կատարելատիպի ձևավորումն է ,այնպիսի մարդու, որին Շեքսպիրը կասեր<< Ի՞նչ հրաշալի է մարդը, հրաշքների հրաշքը…>>:[2, էջ360]

Ըստ էության կարելի է փաստել, որ օրինապաշտ ընտանիքներում երեխաները առավել կարգապահ են լինում: Իհարկե, արատավորված ընտանիքում, հեղինակազրկված ծնողը չի կարող դրական ազդեցություն ունենալ իր երեխաների բարոյական դաստիարակության վրա: Անկասկած, ընտանիքում տիրող հարաբերությունները, հոգեբանական և բարոյական ընդհանուր մթնոլորտը իր անխուսափելի դրոշմն է թողնում երեխաների վարքի ու հոգեբանության ձևավորման վրա:

Մարդու կյանքում նախադպրոցական տարիքը այն շրջանն է, երբ դրվում են բարոյական զգացմունքների, գնահատումների և ապա բարոյական հասկացությունների նախնական հիմքերը: Երեխան սովորում է գնահատել ինչպես ուրիշի, այնպես էլ իր վատ և լավ արարքը: Այդ գնահատումների հիմքի վրա երեխայի մոտ ծագում են ապրումներ, որոնք հետագայում ընդհանրացվում են բարոյական դրական սովորույթների ձևով:

Բարոյական դաստիարակության մանկավարժական պայմանները բխում են ներկա ժամանակաշրջանի երեխաների պահանջներից, որոնք պայմանավորված են

նրանց փոխհարաբերությունների նպատակաուղղվածությամբ և բնույթով, որոնք ձևավորվում են հասակակիցների միջավայրում:

Երեխայի բարոյական դաստիարակությունն ավելի բարդ պրոցես է, քան նրա մտավոր դաստիարակությունն, որովհետև եթե մտավոր դաստիարակության որոշակի մեթոդիկա ունենք, ապա բարոյական դաստիարակության հարցում կան շատ խնդիրներ, որոնք պետք է ստանան իրենց լուծումը: Ավելի բարդ է վարքի դրական ունակությունների պակասը հաղթահարելը, այն էլ այն դեպքում, երբ դրանք արդեն կրում են բացասական բնույթ, այսինքն խոսքն արդեն ծագած բացասական սովորույթների հաղթահարման մասին է:[3, էջ3]

1.1 Բարոյական դաստիարակության էությունը

Անձի բարոյական դաստիարակության հիմնական էությունը դա վերջինիս բարոյական դաստիարակությունն ու զարգացումն է: Բարոյական զարգացման համար շարժառիթներ կարող են հանդիսանալ վերջինիս կողմից իրականացվող շփումները, հաղորդակցությունները, որոնք էլ իրենց հերթին մեծ ազդեցություն են ունենում նրա գործողությունների վրա: Երեխաների բարոյական դաստիարակությունն ու զարգացումը էապես կախված է այն հանրությունից, որտեղ նա մեծանում է: Եվ ցանկացած շեղումների պայմաններում՝ անկայուն բարոյահոգեբանական մթնոլորտ, ընտանեկան անառողջ մթնոլորտ, ապա երեխայի բարոյական զարգացումը կայուն լինել չի կարող:

Կարելի է ասել , որ մարդու մասին դատում են նրա արաքներին համարժեք՝ արարքը գործողություն է, և մարդու արարքն արտահայտվում է ինչ-որ գործողություններում: Սակայն գործողությունը դեռևս արարք չէ, քանի որ գործողության իմաստը, որը նրա ներքին կողմն է, մեզ հայտնի չէ: Հայտնի է միայն արտաքին կողմը: Եվ այսպես ՝ գործողությունն արարք է համարվում այն ժամանակ, երբ հայտնի է դառնում տվյալ գործողության ներքին կողմը կամ իմաստը: Այսպիսով,արարքն այն գործողությունն է, որի արտաքին և ներքին իմաստները բացահայտվում են: Արարքը կապված է նպատակի, դրդապատճառների, պայմանների հետ: Հեգելն ասում էր. << Մարդը ոչ այլ ինչ է, քան արաքների ամբողջ շարք>>: Արարքը ոչ միայն վարքի, վարքագծի, վարքի կուլտուրայի հիմքն է, այլև անձի բնավորության գծերի հիմքը:[2, էջ359]

Ինչ է իրենից ներկայացնում բարոյական դաստիարակությունը: Վ. Ա. Սուխոմլինսկին փաստում է, որ դաստիարակությունը, դա երեխայի անընդհատ հարստացումն է գիտելիքներով, հմտություններով, փորձով, դա մտքի զարգացումն է և բարու ու չարի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը, պատրաստությունն այն ամենի դեմ պայքարին, ինչը հակասում է հասարակության մեջ ընդունված բարոյական սկզբունքներին: Նա նշում է, որ դաստիարակությունը դա բարոյական կյանքի ուսուցումն է, այսինքն բարոյական միջոցների ուսուցումը: Դաստիարակելով երեխաներին, մենք սովորեցնում ենք նրանց հասնել իրենց նպատակներին իրենց հաշվին՝ օգտագործելով միայն բարոյական միջոցներ: Ըստ Սուխոմլինսկու՝ կորցնելով հույսը, որ հնարավոր է կրթել բառերով, ծնողներն կիրառում են բռնություն, ի՞նչպես կանխել անախորժությունները, ինչպես ապահովել, որ խոսքը դաստիարակի, որ << երեխայի հոգու ջութակի վրա լարեր լինեն, ոչ թե պարաններ>>: Վաղ մանկության տարիներին անձը պետք է անցնի նուրբ, ջերմ մարդկային հարաբերությունների մեծ դպրոց: Այս հարաբերությունները ընտանիքի ամենակարևոր բարոյական հարստությունն է:[5, էջ20]

Բարոյական դաստիարակությունը անընդհատ իրականացվող գործընթաց է, որն ուղղված է երեխաների բարոյական հատկությունների ձևավորմանն, և այդ գործընթացի հաջող իրականացման ընթացքում երեխաները ձեռք են բերում բարոյական արժեքների վերաբերյալ պատկերացումներ, և ի վերջո ձևավորվում է նրանց բարոյական գիտակցությունը: Անձի բարոյական գիտակցությունը, բարոյական աշխարհը իր մեջ կարող է ներառել երեք մակարդակ՝ շարժառիթային խրախուսական, հուզական –զգայական, մտավոր կամ իրատեսական:

Այս մակարդակներից յուրաքանչյուրը բաղկացած է տարրերից, որոնք կազմում են մարդու բարոյական աշխարհի էությունը: Շարժառիթային- խրախուսական մակարդակը պարունակում է գործողությունների դրդապատճառներ, բարոյական կարիքներ և համոզմունքներ: Բարոյական դաստիարակությունը միայն այն դեպքում է իրատեսական, երբ այն իր մեջ ներառում է խրախուսում, երբ երեխան ինքն է ակտիվ իր բարոյական զարգացման մեջ, այսինքն՝ երբ ինքն է ցանկանում լավը լինել: Այս մակարդակն ամենակարևորն է, այստեղ է, որ մարդու վարքագծի ակունքները արմատավորվում, հաստատվում են մարդկանց և հասարակության կողմից, բերելով բարիք կամ չարիք:

Հուզական- զգայական մակարդակը բաղկացած է բարոյական զգացմունքներից և հույզերից: Զգացմունքները ինչպես գիտենք լինում են դրական (ուրախություն, երախտագիտություն, քնքշություն, սեր, հիացմունք և այլն), և բացասական(զայրույթ, նախանձ, ատելություն և այլն): Զգացմունքները պետք է մշակել՝կրթել: Իրատեսական – մտավոր մակարդակը պարունակում է բարոյական գիտելիքներ՝ կյանքի իմաստի վերաբերյալ, բարու, չարի, արժանապատվության և այլն: Երեխաների մեջ պետք է դաստիարակել նրանց բարոյական աշխարհի բոլոր տարրերը: Բոլորն էլ կարևոր են: Վ. Ա. Սուխոմլինսկին գրում է, որ իրական մարդ դառնում է միայն նա, ում հոգու մեջ առաջանում է վեհ ցանկություններ,որոնք խթանում են վարքագիծը: Երեխայի բարոյական պահանջների լավագույն միջոց է բարոյական կարիքները: Ընդհանուր առմամբ բարոյական վերաբերմունքը կարելի է բնութագրել, որպես սեր մարդկանց և բնության հանդեպ: Կարելի է փաստել նաև, որ մարդու բարոյական աշխարհի կենտրոնական հասկացություններից մեկը խիղճն է: Խղճի ձևավորումը պետք է սկսել ամոթի զգացումի դաստիարակմամբ:Անձի բարոյական կարիքները սերտորեն կապված են բարոյական զգացմունքների հետ, որոնք հանդիսանում են անձի վարքագծի դրդապատճառներ: Բարոյական պահանջների ձևավորումը, ծնողների հիմնական խնդիրն է, բայց նախ ծնողները պետք է գիտակցեն այս առաջադրանքի կարևորությունը, զարգացնեն այդ բարոյական արժեքները սեփական անձի մեջ, քանի որ մարդկային կյանքի ընթացքում կատարելությունը շարունակական գործընթաց է: Ծնողները, ովքեր ցանկանում են մեծացնել իրենց երեխաներին ոչ թե ինքնաբուխ, այլ գիտակցաբար, պետք է երեխայի դաստիարակության վերլուծությանը զուգընթաց կատարեն իրենց անձի վերլուծություն, սեփական անձի առանձնահատկությունների վերլուծությամբ: Ծնողները պետք է իմանան, թե ինչպես, ինչ մեթոդներով պետք է ձևավորել երեխաների բարոյական կարիքները:

Գլուխ II

Բարոյական դաստիարակության խնդիրներն ընտանիքում

Անձի ձևավորման գործընթացում ամենից դժվարը բարոյական գիտակցության ձևավորումն է. Բարոյական գաղափարներ, համոզմունքներ, որով էլ սկսում է առաջնորդվել երեխան: Ընտանիքի կրթական ներուժը որոշվում է մի շարք գործոններով՝ երեխաների անվտանգությամբ, ծնողների մշակութային և կրթական մակարդակով, ընտանիքի բարոյահոգեբանական արժեքներով, երեխաների վստահությամբ ծնողների նկատմամբ:

Բարոյական վարքագիծը, լինելով բարոյականության հիմնական չափանիշը, դրսևորվում է հասարակական հարաբերություններում: Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական դաստիարակության առաջատար խնդիրը մարդասիրական հարաբերությունների դաստիարակումն է: Երեխան ընտանիքում է ձեռք բերում առաջին սոցիալական փորձը, հարմարվում և մուտք գործում սոցիալական իրականություն, հետևյալ ուղիներով. նույնացման եղանակով, երբ սիրելով և հարգելով ծնողներին ընդօրինակում է նրանց և կյանքում կողմնորոշվում ծնողների վարքագծային մոդելներով, կրկնօրինակում է նրանց գործունեության ձևերը: Հաջորդ մեխանիզմն է ամրագրումը՝ ընտանիքի արժեքային պատկերացումների ամրապնդումը նույնաոճ վարքի տեսակի ընտրությամբ: Հետագայում, նույնիսկ սեփական վարքագծային նորմեր մշակելիս, երեխան ձգտում է չդավաճանել ընտանիքի բարոյական կոդեքսին, ընտանիքում ընդունված վարքի ձևերին: Երրորդ ուղին փոխըմբռնումն է, որի նպատակը երեխայի ինքնագիտակցության ձևավորումն է: Երեխայի ներքին աշխարհին ավելի լավ, քան ծնողները, որևէ մեկը ծանոթ լինել, հետևաբար օգնել չի կարող:

Երեխան ամենից առաջ մեծահասակներից ընդօրինակում է իրեն պահելու, խոսելու, մարդկանց հետ շփվելու արտաքին ձևերը: Երեխան առավելապես կրկնօրինակում է ծնողներին: Ծնողական սերն ու հոգատարությունը կենսական անհրաժեշտություն են երեխայի գոյապահպանման համար: Մյուս կողմից ընտանիքում ծնողների անտարբերությունն ու եսասիրությունը, ծնողական սիրո բացակայությունը երեխաների մոտ առաջացնում են ատելություն, արհամարանք, դժվարեցնելով նրանց շփումները: Երեխայի դաստիարակության գործընթացում

ծնողը պետք է հաշվի առնի նրա առանձնահատկությունները: Այդ գործընթացը խելացի, ճիշտ, սահուն կազմակերպելու համար: Երեխաները հաճախակի ականատես են լինում ներընտանեկան վեճերի, տարաձայնությունների, որոնք կարող են թունավորել երեխաներին թե' հոգեպես, և թե' ֆիզիկապես: Հետևապես, ընտանիքի բարոյական առողջ մթնոլորտը պահպանելու համար ծնողներից պահանջվում է պատասխանատվություն թե' իրենց խոսքի, թե' իրենց գործի, և թե' արարքների նկատմամբ: Ծնողները սովորաբար երեխայից պահանջում են լինել այնպիսին, ինչպիսին իրենք են ծրագրել, որի դրական միտումների պարագայում ևս ոտնահարվում է երեխայի իրավունքները, ճնշվում է նրա կամքը, արգելակվում նախաձեռնությունը: Վ.Ա. Սուխոմլինսկին կոչ էր անում ծնողներին ընդունել երեխաների սխալվելու իրավունքը, չպատժել, այլ ուղղորդել նրանց, և մշտապես հիշել, որ երեխան ինքնաճանաչման, ինքնահաստատման բարդ ճանապարհին է:

Ժամանակակից ընտանիքները առընչվում են բարոյական դաստիարակության և սոցիալականացման մի շարք դժվարությունների հետ,որոնք ենթակա են շտկման կամ մանկապարտեզի մանկավարժական գործընթացի միջոցով, կամ ընտանիքի կրթական հաստատությունների հետ համագործակցության պայմաններում:

Ժամանակակից ընտանիքներում կարելի է առանձնացնել մի շարք խնդիրներ, որի արդյունքում տուժում են երեխաները, և նրանց բարոյական արժեքների ձևավորման գործընթացը խաթարվում է: Այդ խնդիրներից կարելի է առանձնացնել մի քանիսը, օրինակ՝ ընտանիքի կազմի փոփոխություններ, սոցիալական դերերի խառնաշփոթ, դաստիարակության ոճերի բախումներ, արժեքների վերաիմաստավորում, կոնֆլիկտային իրադրությունների զգալի աճ, ընտանեկան մթնոլորտի ընդհանուր լարվածություն: Թվարկվածները կարելի է համարել բարոյական դաստիարակության այն կարևոր խնդիրները ընտանիքում, որի պատճառով չի զարգանում, կամ թերի է զարգանում երեխաների արժեքային համակարգը:

Բարոյական դաստիարակության համակարգի միասնական բաղադրիչներից են՝բարոյական գիտակցության ձևավորումը, բարոյական զգացումների, հմտությունների ու սովորույթների, բարոյական վարքագծի ձևավորումը:

Հարկ է նշել, որ բարոյական դաստիարակության գործընթացը չի կարող իրացվել երեխայի անձի սոցիալական զարգացումից դուրս: Քաղաքացիության, աշխատասիրության դաստիարակումը, բարոյական վարքագծի ձևավորումը

հնարավոր է միայն, եթե երեխաները ակտիվորեն ներգրավվում են մեծերի և հասակակիցների հետ փոխհարաբերություններում, սովորում են գնահատել և ճանաչել իրենք իրենց: Այս տարիքում իրենց հասակակիցների հետ ունեցած հարաբերություններում նրանք պետք է ցուցաբերեն բարյացկամություն, հոգատարություն, փոխօգնության պատրաստակամություն:[1,էջ 34]

Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների դաստիարակչական ներուժով, դաստիարակող մեծահասակների մանկավարժական վարպետությամբ:

Նախադպրոցական տարիքում, բարոյական դաստիարակությունն իրականացվում է որոշակի միջոցներով: Արդյունավետ կիրառվում են գեղարվեստական միջոցները, որոնք նպաստում են երեխայի բարոյականության զարգացմանը գեղագիտական շեշտադրումներով: Գեղարվեստական միջոցներից հարկ է առանձնացնել մանկական գեղարվեստական գրականությունը: Հեքիաթների հերոսների գործողությունները մեծ հուզականությամբ են ընկալվում երեխաների կողմից և խորը հետք թողնում նրանց բարոյական զգացմունքների և պատկերացումների վրա:

Բարոյական դաստիարակության գործընթացում անգնահատելի է բնության դերը, այն դրական հուզական լիցքավորումը, որը ստանում է երեխան բնության հետ շփման ընթացքում: Բարոյական դաստիարակության միջոց է նաև երեխաների ինքնուրույն գործունեությունը, որոնք են՝ խաղային, աշխատանքային, կառուցողական, կերպարվեստային, ուսումնական: Սակայն մանկավարժներից ոմանք առաջնությունը տալիս են մեծահասակների և հասակակիցների հետ հաղորդակցմանը:

Շրջապատող մթնոլորտը ևս բարոյականության հզոր միջոց է, այն սոցիալական միջավայրը, որտեղ երեխան ապրում և մեծանում է: Սիրո և փոխադարձ հարգանքի միջավայրում է, որ խթանում են բարոյական դաստիարակության գործընթացին և նպաստում սոցիալական զգացմունքների զարգացմանը: Կարելի է նշել, որ բարոյական որակների ձևավորման ընթացքում է երեխան ձեռք բերում երեք կարևորագույն հատկանիշներ՝ բարոյական գիտակցություն, բարոյական վարքագիծ, բարոյական վերաբերմունք արտաքին աշխարհի նկատմամբ: Նշված հատկանիշներն

արժևորված հարաբերությունների հիմքն են հանդիսանում, որն ուղղված է սոցիալական զգացմունքների ձևավորմանը:

2.1 Ընտանիքում երեխայի բարոյական կերպարի ձևավորման հիմնական ուղիներն ու պայմանները

Անձի՝ որպես բարձրագույն արժեքի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը, այդ թվում նաև վարքի մշակույթի ձևավորումը, անհնար է ապահովել առանց տվյալ ժողովրդի հոգևոր ավանդույթների վրա հենվելու: Ուստի բնական է, որ մանկավարժությունն իր ջանքերը կենտրոնացնում է այն նպատակի վրա, թե ինչպես մարմնավորել հասարակության, ինչպես նաև անձի բարոյական արժեքները: Այս առումով խիստ կարևոր է յուրաքանչյուր երեխայի և մանկական կոլեկտիվի առօրյան կազմակերպել այնպես, որպեսզի մանուկների, ինչպես ասում են՝ մեր կյանքի ապագայի մեջ ձևավորվեն ոչ թե ինքնանպատակ՝ կյանքից կտրված գիտելիքներ, սովորույթներ, այլ յուրաքանչյուրի <<ես>> կերպարը լավագույնս իրացնելու հմտություններ: Այսինքն՝ այսօրվա երեխան պետք է կարողանա ինքնուրույն կայացնել <<բարոյական>> որոշումներ և դրսևորել համապատասխան գործելու պատրաստակամություն, բարոյականության օրինակներին իր վարքով նմանվելու պահանջմունք:[6,էջ42]

Կարելի է առանձնացնել բարոյական կերպարի ձևավորման մի շարք պայմաններ և ուղիներ. սիրո մթնոլորտ,որից զրկված ցանկացած երեխա ի վիճակի չէ հարգել իր հարազատներին, ընկերներին, Հայրենիքը, և առ հասարակ բարիք անել մարդկանց: Սիրո և հոգատար վերաբերմունքի մթնոլորտը ընտանիքում, միմյանց նկատմամբ հարգանքը մեծ ազդեցություն է ունենում երեխայի ներաշխարհի վրա, հնարավորություն է տալիս դրսևորել սեփական զգացմունքները, ձևավորում է վերջինիս բարոյական կարիքները: Մյուսը դա անկեղծության մթնոլորտն է, այսինքն ծնողները երբեք չպետք է ստեն իրենց երեխաներին, հատկապես նրանց համար կյանքի կարևորագույն որոշակի փուլերում: Ծնողի կողմից թույլատրած ցանկացած սուտ, ցանկացած խաբեություն երեխան նկատում է ծայրահեղ սրությամբ և արագությամբ՝ ընկնելով շփոթմունքի և կասկածների մեջ: Եթե երեխային որևէ բան չենք ցանկանում ասել, ապա ամենից լավ տարբերակը լռելն է, կամ ուղղակի

հրաժարվել պատասխանից, քան հորինել անհեթեթություն և հետագայում խճճվել դրանց մեջ :

Որպեսզի խոսքը դաստիարակի, այն պետք է հետք թողնի երեխայի մտքերի և հոգու վրա, և այդ պատճառով անհրաժեշտ է խորանալ բառերի իմաստի մեջ: Երեխաների հետ զրույցի ժամանակ անհրաժեշտ է ստույգ իմանալ ինչ ասել և ինչպես ասել: Երեխայի հետ զրույցի ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, թե մենք ինչպես ենք նրա հետ խոսում, ինչ տոնայնությամբ: Եվ ընդհանուր առմամբ և' վայրը, և' ժամանակը , և' զրույցի թեման շատ կարևոր են: Ընտանեկան դաստիարակության մեջ մեծ սխալը դա նախատինքներն են: Ոմանք նախատում են իրենց երեխային, որ նա իր տարիքին համապատասխան գործողություններ չի կատարում, մյուսները թերագնահատում են և' տարիքը, և' ֆիզիկական ուժը: Ճիշտ են այն ծնողները, որոնք երեխայի մեջ հպարտության զգացում են առաջացնում, ուրախացնում նրանց, վստահություն ներշնչում հաջողության հասնելու հնարավորության նկատմամբ: Դաստիարակության բնագավառում պետք է բացառել պատիժը: Այն դաստիարակչական ուժ ունի այն դեպքում, երբ այն համոզում է, ստիպում մտածել սեփական վարքի, մարդկանց նկատմամբ վերաբերմունքի մասին: Սակայն պատիժը չպետք է վիրավորի անձի արժանապատվությունը, առաջացնի անհավատություն սեփական ուժերի նկատմամբ: Չպետք է անընդհատ հանդես գալ քննադատողի կարգավիճակում: Ցանկացած պարագայում պետք է կարողանակ չվիրավորել երեխային, տալ արդարամիտ գնահատական նրա կատարածին: Շատ կարևոր է, որ երեխան բացի խստությունից զգա նաև հոգատարություն մեծահասակի կողմից: Դաստիարակության գործընթացում կարևորվում է նաև արգելքը: Այն կանխում է վարքի բազմաթիվ թերություններ, սովորեցնում է երեխաներին ողջամիտ լինել սեփական ցանկությունների նկատմամբ: Անհրաժեշտ է դաստիարակել զգացմունքները: Զգացմունքներ կարելի է առաջացնել ոչ թե արհեստականորեն, այլ անկեղծ անհանգստությամբ: Մշտապես հետևելով մեծահասակների աշխատանքին, երեխան դա կիրառում խաղի մեջ, այնուհետև նա ինքն է ընդգրկվում աշխատանքային գործընթացում, որպես օգնական, և որպես անկախ կատարող: Ծնողները պետք է կարողանան պաշտպանել երեխային անբարոյական մարդկանց հետ շփումներից: Մեծահասակները, ովքեր սիրում են իրենց երեխաներին, և նրանց

միայն բարին են ցանկանում, պետք է խստորեն վերահսկեն սեփական քայլերը, որպեսզի երեխաների համար անբարոյական վարքագծի օրինակ չծառայեն:
Ծնողները պետք է ուշադրություն դարձնեն ընտանեկան հարաբերությունների անաղարտությանը, և այս առումով խուսափեն չափազանց զգայական սիրուց երեխաների նկատմամբ, կարողանան վերահսկել իրենց հույզերը, զգացմունքները, արարքները:

Հոգեբանական տեսանկյունից ծնողական վերաբերմունքը երեխաների հանդեպ մանկավարժական դիրքորոշումն է, որը ներառում է հուզական և վարքային տարրեր: Մանկության տարիներին դաստիարակված բարոյական սկզբունքները ամրապնդվում են և հետագայում կարգավորում են երեխայի վարքը: Բարոյական անձնավորության ձևավորումը նախադպրոցական տարիքում է սկսվում: Այսպիսով, ժամանակին և ճիշտ ձևով իրականացվող դաստիարակությունը խանգարում է կուտակել բացասական փորձ, խոչընդոտում է վարքի անցանկալի սովորությունների զարգացմանը, որը անբարենպաստ ազդեցություն կարող է ունենալ երեխայի բարոյական հատկությունների ձևավորման վրա:

Փորձարարական մաս

Երեխաների հուզական դժվարությունների հաղթահարման, բարոյակամային որակների ձևավորման ու զարգացման համար երեխաների հետ իրականացվեց << Բարի հրաշագործներ>> խաղը: Որի նպատակն էր ձևավորել և զարգացնել փոխօգնություն, կարեկցանք, պարտականության զգացումներ, և այլ բարոյական որակներ, օգնել երեխաներին դրսևորելու իրենց հույզերը և հասկանալու դիմացինի հուզական վիճակը:

Ընթացքը՝ Երեխաները շրջան կազմած լսեցին հեքիաթ չար կախարդի մասին , որը կախարդում էր ցանկացած երեխայի ՝ չարամիտ բառերով անվանարկելով նրան: Կախարդված երեխաները դադարում էին ժպտալ և բարի լինել, և նրանց կախարդանքից ազատելու համար անհրաժեշտ էր միայն բարի, քնքուշ անվանումներ տալ նրանց: Խաղին հատկապես ընդգրկված էին ագրեսիվ, ամաչկոտ, մեկուսի, անտարբեր, անվստահ երեխաները: Խաղի արդյունքում զարգացավ երեխաների ուշադրությունը, հոգատարությունը, պատրաստակամությունը, արդարացիությունը և այլն:

Կիրառված խաղային մեթոդը շատ բարենպաստ պայմաններ ապահովեց երեխաների ինքնադրսևորման համար, զարգացավ նրանց բարոյակամային որակները:

Վերջում հնչեցվեց նաև սուտասելուկ, որը ևս բարոյակամային որակներ է ձևավորում երեխաների մոտ, և որքան էլ տարօրինակ է՝ սուտ խոսելու սովորույթը կարելի է կանխել հենց ստի միջոցով: Սուտասելուկին անմիջապես հակադրվում է ճիշտը, այն դաստիարակչական և ճանաչողական մեծ արժեք ունի:

<< Աշխատանքը բարեբեր ծույլին պատիվ չբերեց,
Ինչ որ արեց, չստացվեց, ու չորս կողմից փնովվեց,
-Ինչ ես անում գործն ու բան , ծուլությունն է գովական>>:

Խաղը իր նպատակին ծառայեց, որի ավարտին երեխաները խոստացան օգտագործել միայն բարի բառեր, կատարեն միայն լավ արարքներ, միմյանց նկատմամբ լինեն կարեկցող և հոգատար, ցանկացած իրավիճակում օգնել իրենց ընկերներին և իհարկե երբեք սուտ չխոսեն:

Եզրակացություն

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ երեխաների դաստիարակության մեջ ընտանիքի դերը անգնահատելի է, որը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի մշակույթի կրողն է, այլև փոխանցողը: Ընտանեկան սովորույթներն ու ավանդույթները օգնում են հայեցի դաստիարակություն տալ երեխային՝ նրա մեջ ձևավորելով ազգային ինքնագիտակցության ոգի: Ընտանիքում է, որ երեխան առաջին անգամ ծանոթանում է բարոյական արժեքներին, յուրացնում հասարակական վարքագծային նորմերը: Եվ պետք է նշել, որ մեր հասարակության բարոյական առողջությունը կախված է նրանից, թե որքան բարոյական և պարկեշտ կլինեն մեր երեխաները:

Ուսումնասիրելով տարբեր ժամանակաշրջանում տարբեր հեղինակների մոտեցումները բարոյական դաստիարակության վերաբերյալ կարելի է եզրակացնել, որ չնայած որոշակի հակասությունների, վերջիններիս տեսակետները համընկնում են այն առումով, որ նրանք բոլորը գտնում էին, որ երեխաների դաստիարակության նպատակը և շարժառիթը դա երջանիկ, լիարժեք, ստողծագործական, բարոյական ունակություններով օժտված անձի ձևավորումն է: Եվ այդպիսի կյանքի ստեղծմանն էլ պետք է ուղղված լինի ընտանեկան դաստիարակությունը: Բարոյական դաստիարակության մանկավարժական պայմանները բխում են երեխաների պահանջներից, որոնք պայմանավորված են նրանց փոխհարաբերությունների նպատակաուղղվածությամբ և բնույթով, որոնք ձևավորվում են հասակակիցների միջավայրում:

Ելնելով վերոգրյալից, կարելի է եզրակացնել , որ անկախ նրանից, թե ինչ դժվարություններ և մտահոգություններ են հաղթահարում ժամանակակից ընտանիքները, անհրաժեշտ և կարևոր պայման է կյանքի առաջին տարիներին երեխաների բարոյական դաստիարակությունը, որի շնորհիվ հնարավոր է կանխել և հաղթահարել նրանց վարքագծում բացասական դրսևորումները և մեծացնել մեր երկրի արժանի քաղաքացիներ, և այս հարցը արդիական է մնում բոլոր ժամանակներում:

Եվ ուրեմն ցանկացած ընտանիք պետք է կարողանա վերահսկել իր գործողությունները, վարվելաձևը, քանի որ պատասխանատու է իր սերունդների առջև:Յուրաքանչյուր մանկավարժի խնդիրն է տեղեկացնել ծնողներին, որ իրենց

մանկավարժական գրագիտությունը կախված է հենց իրենցից, իրենց ցանկությունից հասնել անհատականության ձևավորման, գտնել ուղիներ դրանց իրականացման համար:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Ա., << Մանկավարժություն>>, Մանկավարժ 2005, էջ 455:
2. Կոնդակչյան Ժ., Մաթևոսյան Լ., <<Երեխաների դաստիարակությունը մանկապարտեզում>>, Երևան 1976,էջ 308:
3. Ղույումչյան Գ., <<Կրթական համալիր ծրագիր մանկապարտեզի ավագ խմբում>>, Երևան 2007,էջ 141:
4. Сухомлинский В. А., << Родительская педагогика>>, онлайн книга, стр. 20:
5. Ушннский К. Д., << О воспитании детей и юношества>>, Москва 2022, стр. 211:
6. Նախաշավիղ, 5.2014, էջ 64:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱ ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՄՈՅԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԼՈՒՍԻԿ ՄԻՐԱԲՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....էջ 3

ԳԼՈՒԽ 1.ԽԱՂԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ…….....էջ 3

ԳԼՈՒԽ1.1.ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.....էջ 5

1.2.ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ...էջ 8

ԳԼՈՒԽ 2.ԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ.....էջ 9

2.1.ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԽԱՂԵՐ .....էջ 10

2.2.ԿԱՆՈՆՆԵՐՈՎ ԽԱՂԵՐ.....էջ 11

ԳԼՈՒԽ 3.ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ .....էջ 15

ԵԶՐԱԿԱՑՈԹՅՈՒՆ.....էջ 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....էջ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը կայանում է նրանում,որ նախադպրոցական տարիքը կյանքի ամենակարևոր շրջաններից է երեխայի զարգացման համար,այն կախված է նրան շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից,որոնցից են ընտանիքը ,մանակապարտեզը, ընկերները:Երեխայի կյանքում խաղը անբաժանելի մաս է,այն նրանց համար առաջատար գործունեություն է,որի ընթացքում սովորում են,կառուցում,բուժում,հաղթահարում դժվարություններ,ձեռք են բերում կամային ուժեղ հատկություններ:

Աշխատանքի նպատակը:Ուսումնասիրել խաղը որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն,ինչպես նաև այս թեմայի վերաբերյալ անվանի մանկավարժների տեսությունները,կատարել ուսումնասիրություն և դրանց հիման վրա իրականացնելլ փորձարարական մաս:

Աշխատանքի խնդիրները

- Նկարագրել խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում:
- Բացահայտել խաղային գործունեության սկզբունքները և առանձնահատկությունները:
- Ծանոթանալ խաղերի դասակարգմանն ու տեսակներին:

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Բոլորին է հայտնի,որ խաղի դերը շատ մեծ է նախադպրոցական տարիքի երեխաների կյանքում:Խաղը երեխայի ձեռքում նման է մի բանալիի,որը երեխան վերցրել է իր ձեռքը և փորձում է բացել տարբեր դռներ,որպեսզի հասկանա ինչեր կան այնտեղ թաքնված:Առանց խաղի չենք կարող պատկերացնել երեխայի զարգացումը,քանի որ նրանք աշխարհը սկսում են ճանաչել հենց խաղերի միջոցով:Խաղը գործունեության այն հետաքրքրիր ձևերից է ,որը սկսվում է մանկությունից և ուղեկցում ողջ կյանքի ընթացքում:

Այսօր նախադպրոցական հաստատություններում երեխաներն ունեն բազմաթիվ զբաղմունքներ,սակայն խաղային գործունեությունը համարվում է հիմնական,քանի որ ուսուցումը հիմնականում կատարվում է խաղերի միջոցով,քանի

որ գիտելիքն այդպես ավելի հեշտ է յուրացվում:Խաղի բովանդակությունը ճիշտ վարելու դեպքում դաստիարակը կարող է հասնել երեխայի մեջ դրական և կարևոր որակներ ձևավորելուն և դրա զարգացմանը:

Խաղային գործունության բացառիկ մանկավարժական նշանակությունը նախադպրոցահասակ երեխաների կյանքում կարևորել են անցյալի ականավոր մանակավարժներ՝ Յ.Ա.Կոմենսկին,Ժ.Ժ.Ռուսոն, Կ.Դ.Ուշինսկին,ինչպես նաև խոշորագույն հայ մանկավարժներ և գրողներ՝ Խ.Աբովյանը,Ղ.Աղայանը, Հ.Թումանյանը և այլոք:Մեծն Թումանյանը գտնում էր,որ <<խաղը երեխայի բնական,օրգանական պահանջն է,նրա լրջությունը,նրա էությունը>>: Հավաքելով և մշակելով ժողովրդական բանահյուսության հոգևոր գանձերը, Թումանյանը երեխաների համար մշակում է հայրենագիտական խաղեր և վերլուծում դրանց մանկավարժական արժեքը, երեխայի միտքը և բարոյականությունը զարգացնելու գործընթացը:Նրա կողմից մշակված խաղերի մեծ մասը տարբերակված ձևով առ այսօր օգտագործվում է նախադպրոցական դիդակտիկայում:Դրանցից են՝ <<Գույների խաղը>>,<<Աստղերի խաղը>>,<<Տառերի խաղը>>, <<Հայակական առածների լոտո>> և այլ օրինակներ :[2,էջ 95]

Նախադպրոցական տարիքի երեխաները քիչ թե շատ կարողանում են ճանաչել տարբեր երևույթների,առարկաների նմանությունը և տարբերությունը,նրանց առանձնահատկություններից ելնելով: Երեխաների համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր,որտեղ կզարգանան նրանց անձնային հատկանիշները:Այդ հատկանիշներից են՝ ինքնուրույնությունը,ինչ-որ նոր բան սովորելու ցանկությունը,հետաքրքրասիրությունը: Սրանք հիմք կլինեն երեխայի ես-ի հետագա ամրացմանն ու կայունացմանը:Խաղերի ընթացքում երեխաներն ունենում են հնարավորություն՝ զննելու,տուգելու,մտքեր զարգացնելու և այդ ամենով փոխանակվելու: Խաղերի շնորհիվ զարգանում է նրանց աշխարհընկալումը,նրանք փորձում են արտահայտել իրենց զգացմունքները:Այս տարիքի երեխաների մոտ դեռ փոքր տարիքից պետք է զարգացնել համարձակ ստեղծագործելու կարողությունն և երևակայությունը,ուշադրությունն ու մտածողությունը:Քանի որ այս տարիքում երեխաները հիմնականում ընկալում են զգայարանների միջոցով,ուստի պետք է կազմակերպել այնպիսի խաղեր,որոնք կլինեն տեսողական,զգայական և դիդակտիկ:

Նախադպրոցահասակ երեխաների օրվա ընթացքում կազմակերպվող խաղերի առկայությունը չափազանց կարևոր է,քանի որ նրանց մոտ մեծ է շարժվելու պահանջմուքը,այդ իսկ պատճառով պետք է կազմակերպել տարբեր տեսակի շարժական խաղեր:Խաղը փոխգործուն է,երեխան պետք է փոխգործի որևէ իրի կամ մարդու հետ:

Խաղերն իրականացվում են ազատ և ոչ հարկադիր:Խաղին երեխան պետք է իր ցանկությամբ մասնակցի և անկախ նրանից գործողությունը ինքն է ընտրել թե դաստիարակն է առաջարկել,նա դա պետք է անի ազատ:Խաղի ընթացքում երեխաները կլանվում են գործողությունների մեջ,բավարարում են իրենց պահանջմունքները,հետաքրքրությունները, խաղից ելնելով կատարում են վերլուծություններ և հետևություններ,մի խոսքով այն նրանց համար դառնում է հետաքրքիր և հրաշալի աշխարհ:

ԳԼՈՒԽ 1.1. ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայտնի է,որ երեխայի զարգացման ցուցանիշներից մեկն ինքնուրույն ճանաչողական գործունեություն ծավալելու կարողությունն է:Այն նպաստում է ապագայում առանց դժվարությունների ցանկացած իրավիճակներում կողմնորոշվելուն,ձեռքբերածը փոփոխվող պայմաններում,ոչ ստանդարտ իրավիճակներում կիրառելուն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել(Բուես Լ.Պ.,Նովիկովա Լ.Ի.,Պետրովսկի Վ.Ա.)որ ճանաչողական ինքնուրույն գործունեություն ծավալելու ունակության ձևավորման, զարգացման վրա ազդում են ինչպես տարերայնորեն ու հատուկ նպատակային կազմակերպված,այնպես էլ բնական և սոցիալական գործոններ:Բացառիկ ազդեցություն է ունենում նաև այն միջավայրը,ուր գտնվում է երեխան և ուր նա իրեն դրսևորում է որպես ազատ,ինքնուրույն անձ՝ համագործակցելով այդ միջավայրի հետ:Այսպիսի գործունեության ծավալման ամենաարդյունավետ միջոցը խաղն է:

<<…խաղային արդյունավետ միջավայրի կազմակերպման հիմքում դրվում են հետևյալ սկզբունքները:

- Զգացմունքային հարմարավետության սկզբունք,որը յուրաքանչյուր երեխայի համար ապահովում է զգացմունքային ջերմություն,բարյացկամություն է

ստեղծում տարբեր տարիքի երեխաների հարաբերություններում,սատարում է նրանց գործունեությանը:

- Ակտիվության սկզբունք,որի առկայությամբ խաղային գործունեության տեսակների ընտրության և դրանց կազմակերպմանը մասնակցելու ճանապարհով խթանվում է երեխաների ակտիվ վարքը:
- Բացության, ընդարձակության սկզբունքի հաշվառումը երեխաների պահանջմունքներով, հետաքրքրություններով, հմտություններով, նրանց զարգացման մակարդակով պայմանավորված նոր խաղերի ընտրությունն ու անցկացումն է ,որոնք խաղային գործունեությանը տալիս են գիտելիքների,զգացմունքերի առավել լայն ընդգրկունություն:
- Անհատականության սկզբունքը միջավայրը դարձնում է անձնակողմնորոշված, երեխայակենտրոն: Այսպիսի միջավայրում յուրաքանչյուր երեխա ստեղծում է իր անկյունը,ստանում է [1,էջ 6]
- առավելագույն չափով ինքնադրսևորվելու,իր կողմից ստեղծված առարկայական խաղային միջավայրի շնորհիվ ձեռքբերումները ցույց տալու հնարավորություն:
- Երեխաների համախմբում առկա տարիքային հաշվառման սկզբունքը երեխա-երեխա հաղորդակցման համակարգում ապահովուում է առաջատարության գերակշռությունը և դրա օգտագործումը միայն անհրաժեշտության դեպքում <<երեխա-մեծ>> հարաբերության համակարգում,տարբեր տարիքի երեխաների ՝ միմյանց վրա փոխազ -դեցություն ունենալու և ունակության զարգացում:
- Ճկունության,շարժունության սկզբունքի հաշվառումը ստեղծում է միջավայրի առարկաների ազատ ձևափոխման,խմբային սենյակներում բազմագործառույթ խաղային նյութերի օգտագործման ,ինչպես նաև մեծերի և երեխաների զարգացնող հարաբերությունների դիրքորոշման մեջ ճկունության հնարավորություններ:
- Տեղեկացվածության սկզբունքի պահպանումը յուրաքանչյուր երեխայի տալիս է ազատ գործողությունների առվելագույն հնարավորություն՝ միջավայրն ապահովելով այնպիսի միջոցներով,որոնք երեխաներին կտան խաղերի հիման վրա կատարելագործվելու հնարավորություն:

- Ակտիվության սկզբունք,որի առկայությամբ խաղային գործունեության տեսակների ընտրության և դրանց կազմակերպմանը մասնակցելու ճանապարհով խթանվում է երեխաների ակտիվ վարքը:
- Բացության,ընդարձակության սկզբունքի հաշվառումը երեխաների պահանջմունքներով, հետաքրքրություններով,հմտություններով ,նրանց զարգացման մակարդակով պայմանավորված նոր խաղերի ընտրությունն ու անցկացումն է,որոնք խաղային գործունեությանը տալիս են գիտելիքների,զգացմունքների ավելի լայն ընդգրկունություն:
- Անհատականության սկզբունքը միջավայրը դարձնում է անձնակողմնորոշված, երեխայակենտրոն: Այսպիսի միջավայրում յուրաքանչյուր երեխա ստեղծում է իր անկյունը,ստանում է
- առավելագույն չափով ինքնադրսևորվելու,իր կողմից ստեղծված առարկայական-խաղային միջավայրի շնորհիվ ձեռքբերումները ցույց տալու հնարավորություն:
- Երեխաների համախմբում առկա տարիքային տարբերության հաշվառման սկզբունքը երեխա-երեխա հաղորդակցման համակարգում ապահովում է առաջատարության գերակշռությունը և դրա օգտագործումը միայն անհրաժեշտության դեպքում՝ <<երեխա-մեծ>> հարաբերության համակարգում,տարբեր տարիքի երեխաների՝ միմյանց վրա փոխազդեցություն ունենալու ցանկության և ունակության զարգացում,միջավայրի հագեցումմն ինչպես նախադպրոցականներին,այնպես էլ կրտսեր դպրոցականներին հետաքրքրիր և մատչելի առարկայական բովանդակությամբ:
- Ճկունության,շարժունության սկզբունքի հաշվառումը ստեղծվում է միջավայրի առարկաների ազատ ձևափոխման,խմբային սենյակներում բազմագործառույթ խաղային նյութերի օգտագործման,ինչպես նաև մեծերի և երեխաների զարգացնող հարաբերությունների դիրքորոշման մեջ ճկունության հնարավորություններ:
- Տեղեկացվածության սկզբունքի պահպանումը յուրաքանչյուր երեխայի տալիս է ազատ գործողությունների առավելագույն հնարավորություն՝ միջավայրն ապահովելով այնպիսի միջոցներով,որոնք երեխաներին կտան խաաղերի հիման վրա կատարելագործվելու հնարավորություն:[1,էջ 7]

ԳԼՈՒԽ 1.2.ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Խաղային գործունեության ընթացքում բավարարվում են նախադպրոցականի հիմնական պահամնջմունքները՝ ակտիվություն և ինքնուրույնություն,հաղորդակցվելու,աշխարհը ճանաչելու և սեփական ուժերը փորձելու գործունեություն:
2. Զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները,զարգանում է երևակայությունը,որը դրսևորվում է խաղի ընթացքում:
3. Խաղի ընթացքում ձեռք է բերվում՝ նպատակ,պլանավորում,արդյունքի հասնելու ձգտման հատկություններ:
4. Խաղային գործունեության մեջ չկա պարտադրանք,ճնշում և երեխաների համար առկա է բնական միջավայր:Նրանք ազատ և ինքնուրույն են,ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ:
5. Խաղը ստեղծագործական գործունեություն է,քանի որ նպաստում է երեխաների ընդունակությունների բացահայտմանն ու զարգացմանը:Նրանք սկսում են ինքնահաստատվել և լավագույնս ներկայանալ:
6. Խաղն իմացական գործունեություն է:Խաղի ընթացքում ձեռքբերված գիտելիքները շատ ավելի արժեքավոր են,կայուն,յուրացված և ամրապնդված:
7. 7.Խաղն իր բնույթով ուղղված է երեխայի անձնային որակների ձևավորմանը: [2, էջ 96]

ԳԼՈՒԽ 2.ԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ



ԳԼՈՒԽ 2.1.ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ստեղծագործական խաղերը զարգացնում և նպաստում են երեխաների մտքի ու հմտությունների զարգացմանը,դրանց շնորհիվ սովորում են ավելի լավ ձևավորել իրենց զգացմունքները և համերաշխ խաղալ խմբում,այսպիսով ինչու չէ նաև նախապատրաստվում են հասուն կյանքին:

Ռեժիսորական խաղի ընթացքում երեխաները հանդես են գալիս որպես խաղի բեմադրող:Նրանք են ընտրում խաղի ընթացքը,սյուժեն,ընտրում են դերերն ու մասնակիցներին և վարում խաղի ընթացքը:Խաղը տարվում է երեխայի կողմից,քանի որ մյուս <<մասնակիցները>> նրա կողմից ընտրված անշունչ խաղալիքներ են,տարբեր իրեր են և փոխարինող առարկաներ:Ռեժիսորական խաղի հիմնական առանձնահատկությունը նրանում է,որ խաղն ունի 1 դերակատար,որի <<խաղընկերները>> չունեն ցանկություններ,պահանջներ և դա երեխային հնարավորություն է տալիս ղեկավարելու միանձնյա,գործելու և որոշելու բոլորի փոխարեն:Խաղի ընթացքում նախապատրաստվում է հասկակիցների հետ հաղորդակցմանը,բավարարվում են եսակենտրոն հակումները:Խաղը մանկավարժից պահաջում է լինել նրբանկատ և խուսափել ղեկավարման ընթացքում ցուցումներից և հրահանգումներից,փոխարենը նրանց օգնելու համար կարելի է տալ հուշող հարցեր,անել հետաքրքիր առաջարկներ,ինչը կխթանի խաղի ընթացքին:

Թատերական խաղերը իրականացվում են խաղ-ներկայացումներով,որի ընթացքում նրանք վերարտադրում և ներկայացնում են իրենց պատկերացրած աշխարհը,ցանկանում են նմանվել հերոսներին:

Խաղ բեմականացումները երեխաների համար հաճելի են իրենց պարզությամբ,բովանդակությամբ և հուզականությամբ:Բեմականացման խաղերը երեխաները մեծ հաճույքով են խաղում,որը երեխաներին հնարավորություն է տալիս արտահայտվել իրենց պատկերացումներով՝ բարու և չարի,գեղեցիկի և տգեղի մասին:Խաղի ժամանակ նրանք հնարավորություն են ունենում ստեղծագործելու:

Թատերական խաղերում երեխան լինում է տարբեր դերերում՝ դերասան,նկարիչ,բեմադրող և այլն:Խաղի միջոցով նրանք տեսնում և գնահատում են արվեստը,մշակութային արժեքները,նրանց մոտ ձևավորվում է սեր և նվիրվածություն՝ արվեստի նկատմամբ,ինչը շատ կարևոր է,քանի որ մանկության

տարիքում ձևավորված վերաբերմունքը դեպի արվեստը պահպանվում է ողջ կյանքում:Խաղի ընթացքում զարգանում է նաև խոսքը:Նախադպրոցական հաստատություններում կիրառվում են տիկնիկներով,դիմակներով և սեղանային խաղ-ներկայացումները:

Կառուցողական խաղերը ստեղծարար են,նպաստում են մանկական գործունեության նոր ձևերի առաջացմանը,զարգանում է երեխայի տարածական երևակայությունն ու տրամաբանական մտածողությունը:Խաղի ընթացքում երեխան կարծես հանդես է գալիս շինարարի դերում և զբաղվում է ստեղծարար գործունեությամբ,որի արդյունքը տեսանելի է դառնում թե՛ իր,թե՛ մեծահասկաների համար:Խաղի առավելությունը նրանում է,որ երեխայից պահանջվում է երևակայություն,տարածական մտածողություն,խաղացողների համագործակցային եզրերի հաստատում:

Կառուցողական խաղերում իրականացվում են ֆիզիկական,գեղագիտական, բարոյական դաստիարակության խնդիրներ:Երեխան ոչ միայն ծանոթանում է շինարարի և ճարտարապետի աշխատանքին,այլև ցանկանում է կառուցել առավել գեղեցիկ,օգնել ընկերոջը,աշխատանքը ցանկանում է դարձնել ավելի զարմանալի,որի համար ներդնում է ուժ ու մտքի լարում:

Կառուցողական խաղերի տեսակներն են՝

- Կառուցում նմուշով
- Կառուցում առաջադրված պայմաններով
- Կառուցում առաջադրված թեմայով
- Կառուցում սեփական մտահղացմամբ
- Կառուցում մոդելով [4,էջ 141]

Այս խաղում ձեռք բերված կառուցողկան հմտություններն ու կարողությունները հետագայում օգտագործվում են և՛ ուսուցման ընթացքում,և՛ աշխատանքի և թե կենցաղային գործողություններ կատարելիս,զարգանում է երեխայի աշխատասիրությունը,հետաքրքրասիրությունը:

ԳԼՈՒԽ 2.2.ԿԱՆՈՆՆԵՐՈՎ ԽԱՂԵՐ

Կանոններով խաղերն ունեն պատրաստի բովանդակություն,որոնց կանոններն ու բովանդակությունը մշակվում են մեծերի կողմից:Այս խաղերը բաժանվում են 2 մեծ խմբի՝ դիդակտիկ և շարժախաղեր:

Կանոններով խաղերի

- Բովանդակությունը ուղղված է մանկավարժական տարբեր խնդիրների իրականացմանը
- Խաղի ընթացքում լուծվում են կրթադաստիարակչական խնդիրներ
- Ղեկավարվում են ուղղակի եղանակներով՝ սահմանված կանոններով
- Ունեն հատուկ մանկավարժական խնդիրներ և նպատակներ
- Խաղերի բնորոշ են պատրաստի բովանդակությունն ու կանոնների հստակությունը նպաստում է դրանց ինքնուրույն կազմակերպմանը:

Դիդակտիկ խաղերը ուսուցողական խաղեր են,որոնց հիմնական պահանջներն են՝

- Ուսուցողական խնդիրների առկայություն-յուրաքանչյուր դիդակտիկ խաղի միջոցով երեխաները պետք է ձեռք բերեն որոշակի գիտելիքներ,ունակություններ,հմտություններ:
- Դաստիարակչական նշանակություն-որոշվում է երեխաների անձնային որակների վրաա խաղի թողած մանկավարժահոգեբանական ազդեցություններով:
- Զարգացնող նշանակություն-երեխայի անձի զարգացմանը նպաստող գործոններով:
- Խաղային գործողությունները իրականացնում են երեխաները՝ առաջնորդվելով խաղի խնդիրներով,որոնցով որոշվում են այդ գործողությունների բնույթը,հաջորդականությունը ու ընթացքը, և դառնում երեխաների խաղերի նպատակները:
- Խաղի ընթացքի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ են դիդակտիկ նյութեր և պարագաներ:
- Ուսումնական գործունեությունը խաղի ժամանակ պետք է համարվի երկրորդական և հավասար բաշխվի խաղի ընթացքում:

Դիդակտիկ խաղերն ունեն 5 տարատեսակներ՝

1. Առարկաներով և խաղալիքներով-հիմնականում տիկնիկներով խաղերն են ,որի նյութական կենտրոնը խաղալիքն է:Օրինակ՝ <<Տիկնիկը արթնացել է ,ճաշում է…>> և այլն:
2. Խոսքային դիդակտիկ խաղեր-մեծ մասը խաղ հանելուկներն են,որոնք պահանջում են հավաքագրել,դասակարգել:

3. Սեղանային տպագիր նյութերով-վարժեցնում են երեխայի ճկունությունը,աչքաչափը, ուշադրությունը:Այդ խաղերից են՝ կտրտված նկարներով խաղերը:
4. Երաժշտական դիդակտիկ խաղեր-կատարվում են խաղ-զվարճալիքների ,զբոսանքների ժամանակ:
5. Մաթեմատիկական խաղեր

Դիդակտիկ խաղերն անցկացնելու համար պետք է՝

- Նախապատրաստվել խաղի անցկացմանը
- Մուտք
- Խաղի անցկացում

Այսպիսով դիդակտիկ խաղերի ղեկավարման հիմնական իմաստը դիդակտիկական խնդիրների ,ճանաչողական բովանդակության որոշումն է,խաղերի միջոցով դիդակտիկ խնդիրների իրականացումն է:

Շարժախաղեր

Խաղային գործունեության այնպիսի ձև են,որտեղ կարևորվում է շարժման դերը.դրանք կազմված են տարբեր բնույթի շարժումներից(քայլք,մագլցում,ցատկ,վազք և այլն):Շարժախաղերը ազդում են երեխաների բնավորության մեջ դրական գծերի,բարոյական որակների,գեղագիտական զգացումների ձևավորման վրա (ընկերասիրություն,համաձայնություն,վճռականություն,գեղեցիկը տեսնելու ունակություն՝ խաղում, շրջապատում,ընկերական փոխհարաբերություններում):Այս խաղերում ակտիվ շարժուն գործունեությունը մարզում է երեխայի նյարդային համակարգը:Շարժախաղերը իրենց բովանդակությամբ և ձևով մատչելի են բոլոր տարիքի երեխաների համար:Խաղի ընթացքում նրանք իրենց պահում են բնական,առանց լարվածության,անկեղծորեն դրսևորում են իրենց բնավորության դրական և բացասական գծերը:

Տարբերակվում են շարժուն խաղերի 3 հիմնական տեսակներ,իրենց ենթատեսակներով:

1. Անհատական-ստեղծվում,կազմակերպվում և վարվում են 1 երեխայի կողմից:
2. Ազատ կամ կամային-խաղում են ըստ խաղի սյուժեի դերերի բաշխման

3. Կոլեկտիվ կամ խմբային-խաղերին միաժամանակ մասնակցում են կոնկրետ թվով խաղացողներ:Այս ձևն առավել տարածված է երեխաների մեջ և առանձնանում է մեծ բազմազանությամբ:[3,էջ7]

Կոլեկտիվ խաղերը լինում են թիմային և ոչ թիմային:

- Ոչ թիմային խաղերն անցկացվում են խաղավարով և առանց խաղավարի:Խաղի ժամանակ խաղում են պայմանավորված խաղի կանոններով,խմբի ներսում կանոնների հետևման անհատական մոտեցմամբ:
- Թիմային խաղերը լինում են ֆիզիկական փոխազդեցությամբ և առանց ֆիզիկական շփման:Առաջինի դեպքում հակամարտող թիմերում մասնակիցները անհատական պայքարում են թիմի համար՝ միմյանց օգնելով:Երկրորդի դեպքում տեղի է ունենում համատեղ պայքարի ցուցաբերում՝ թիմի համար ֆիզիկական փոխօգնության և նեցուկ լինելու ձևով:[3,էջ8]

Երաժշտական շարժուն խաղեր

Այս խաղերում օգտագործվում են 2 տեսակի երաժշտություններ.

- Առաջինը կախված է շարժախաղի սյուժետային կողմի երաժշտական ձևակերպման վրա,ինչպես օրինակ հեքիաթի ժանրը:
- Հիմնված է երաժշտության օգտագործման վրա,այսինքն այն օգտագործում են որպես երաժշտական ֆոն՝ շարժախաղերի բովանդակության համար,որի նպատակն է բարձրացնել զգացմունքայնությունը:[3,էջ9]
- Երաժշտական շարժախաղերը նպաստում են ՝
- Երեխաների ուշադրության կենտրոնացման զարգացմանը
- Ճիշտ և արագ հակազդելու հմտությունների զարգացմանը
- Սովորեցնում են լսել և տարբերակել բազմազան երաժշտական և ոչ երաժշտական ձայները,ինչը կնպաստի երեխաների երաժշտականության և երաշտության նկատմամաբ ընկալունակության զարգացմանը:

Այսպիսով՝ յուրաքանչյուր շարժախաղի անցկացման համար պետք է հաշվի առնել երեխայի անհատական առանձնահատկությունները:Խաղերի ընտրությունը պետք է պայմանավորված լինի երեխաների ֆիզիկական և մտավոր ունակություններով, անհատական մոտեցում ցուցաբերվի բոլոր առումներով,չմոռանալով նաև խաղի անցկացման տեղային պայմանները:

Բոլոր տարիքի երեխաների համար խաղը մեծ պահանջմունք է ,որի մեջ շատ կարևոր է նաև շարժուն խաղերը,քանի որ այս խաղերը նույնպես նպաստում են են երեխաների անհատականության բազմակողմանի զարգացմանը:Շարժախաղերի և մեթոդների ճիշտ կիրառումը կնպաստի երեխայի անհատական ունակությունների բացահայտմանը,նրանք կդաստիարակվեն առողջ,կենսախինդ և կլինեն ակտիվ:

ԳԼՈՒԽ 3.ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Այս հատվածում կներկայացնեմ ավագ խմբում իմ անցկացրած խաղերի օրինակներ:

Օրինակ 1.Պարկի մեջ տեղավորելով տարբեր տիպի խաղալիքներ,հերթով մոտենում ենք կանգնած կամ աթոռներին նստած երեխաներին: Խնդրում աչքերը փակ ձեռքը մտցնել պարկի մեջ և ընտրել մեկ խաղալիք,այնուհետև գուշակել թե ինչ է վերցրել:Խաղի ընթացքում երեխաները անհամբերությամբ սպասում են,թե երբ պետք է լինի իրենց խաղի հերթը:Խաղացողները մեծ ոգևորությամբ են փորձում գուշակել իրենց ընտրած խաղալիքի անվանումը:Այնուհետև գուշակելուց հետո հանում է և ստուգում ճիշտ է հասկացել թե ոչ:Խաղը բացի խմբում ստեղծված խորհրդավոր և միաժամանակ ակտիվ մթնոլորտից բացի երեխաների մոտ զարգացնում է ուշադրությունը,խոսքը,հիշողությունը և օգնում է տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելուն:

Օրինակ 2.Փոքր ինչ մեծ տարաների մեջ լցնում ենք ջուր,այնուհետև դրանցից յուրաքանչյուրի մեջ լցնում ենք 10-ական շշերի կափարիչներին:Խաղալու են հրավիրվում 2 երեխա,նրանցից յուրաքանչյուրին տալիս ենք 2-ական փայտիկ և բացատրում խաղի կանոնները:Խաղը կհաղթի նա,ով ավելի արագ փայտիկների միջոցով դուրս կհանի կափարիչները՝ ջրով լցված տարայից:Խաղի մեկնարկը տալուց անմիջապես հետո երեխաները սկսում են ջանքեր գործադրել և մեկը մյուսից արագ ու արդյունավետ գործել,իսկ այդ ընթացքում խաղը դիտող ընկերները հերթով վանկարկում են իրենց խաղացող ընկերների անունները՝ քաջալերելով նրանց:Խաղի մրցակցային է և այս խաղի ընթացքում երեխաների ձեռք են բերում՝ արագաշարժություն,նպատակասլացություն,զարգանում է ձեռքերի մոտորիկան, ուշադրությունը,դառնում են նախաձեռնող և իրականացնող:

Օրինակ 3.Թղթի վրա նկարում ենք երկրաչափական պատկերներ,այնուհետև սեղանին դնում ենք նաև ոսպի հատիկներ:Երեխան պետք է ոսպի հատիկները ճիշտ ուղղությամբ և ուշադիր շարի պատկերվածի գծերի վրայով:Խաղը կարելի է կատարել և զույգով և անհատական:Երեխաների մոտ այս խաղի շնորհիվ զարգանում է ուշադրությունը,մատերի մոտորիկան,տեսողությունը,նպատակասլացությունն ու կառուցողական հմտությունը:

Օրինակ 4.Գրատախտակի վրա նկարում ենք առարկաներ,որոնցից 1 կամ մի քանի մասը բացակայում է:Երեխաներից յուրաքանչյուրը իր հերթին պետք է հասկանա,թե որ մասերն են բաց թողնված պատկերներում:Նույն խաղը տարվում է նաև մի փոքր այլ կերպ,երեխաներին առաջարկում ենք ինքնուրույն ավելացնել պատկերի վրա բացակայող հատվածը:Խաղի ընթացքում ակտիվանում է երեխայի բառապաշարը,զարգանում է ուշադրությունը,տեսողությունը,մտածողությունը,ձեռք են բերում նկարչական հմտություններ:

Օրինակ 5.Սեղանի վր դրվում է տարբեր խաղալիքներ և տալիս ենք 1 րեպե ժամանակ,որպեսզի նա կարողանա մտապահել դրված խաղալիքները:Ժամանակը լրանալուց հետո երեխային շրջվում է,իսկ այդ ընթացքում մենք 1 խաղալիք պահում ենք,երեխան պետք նայելով կռահի,թե որ խաղալիքն է պակասում:Մյուս երեխաները շատ մեծ ուշադրությամբ սպասում են,թե արդյոք կկարողանա կռահել իրենց ընկերը:Երեխաների մոտ զարգանում է տեսողական հիշողությունը,ուշադրությունը:

Օրինակ 6.Ըստ խմբում ներկա երեխաների թվի,բաժանում ենք երկու թիմի:Աթոռները թիմերի համապատասխան քանակով իրար հետևից զուգահեռ շարում ենք,ամեն երեխա զբաղեցնում է իր տեղը,առջի երկու խաղացողներին տրվում է 1-ական փուչիկ կամ գնդակ:Խաղը մեկնարկելուն պես պետք է առանց շրջվելու ձեռքը բռնած փուչիկը պետք է զգույշ և միևնույն ժամանակ արագ փոխանցեն ետևի նստած խաղացողին,մինչև վերջ,այնուհետև վերջում նստած երեխան առաջ է փոխանցում և փուչիկը վերադառնում է առջևում նստած երեխային:Խաղը հաղթում է այն թիմը,որը ավելի արագ է փոխանցում և ավարտում խաղը:Սա իմ խմբի երեխաների կողմից սիրված խաղերից է,որը նրանք խաղում են շատ ակտիվ ու ուրախ տրամադրությամբ:Խաղի ընթացքում ձևավորվում է թիմի անդամների մեջ փոխօգնություն,հաղորդակցություն,զարգանում է ուշադրությունը,տեսողությունը:

Օրինակ 7.Դրվում է երաժշտություն և դրան համապատասխան ծափեր ու սեղանի վրա զարկեր ենք անում և երաժշտությունը կրկին միացնելուց հետո՝ երեխան պետք է կրկնի նույն շարժումները:Խաղը զարգացնում է ուշադրությունը,տեսողությունը, ռիթմի զգացողությունը և ձեռքերի մոտորիկան:

Օրինակ 8.Այս խաղի համար մեզ պետք են՝ 2 օղակ,2 զամբյուղ,2 փուչիկ և փոքրիկ գնդակներ:Խաղին մասնակցում են 2 երեխա:Օղակները դնում ենք գետնին,դրանց մոտ դնում ենք որոշակի քանակությամբ գնդակները,իսկ օղակից դուրս դրվում է զամբյուղը:Երեխաներից յուրաքանչյուրը մտնում են 1 օղակի մեջ,վերցնելով փուչիկները:Խաղի մեկնարկից հետո ամեն մեկն իր փուչիկը թռցնում է օդ և այդ ընթացքում 1 գնդակ դնում զամբյուղի մեջ:Վերջում հաղթում է նա,ով ավելի արագ կարողացավ գնդակները տեղափոխել զամբյուղ:Խաղը զարգացնում է ուշադրությունը,տեսողությունը,կատարվում են հավասարակշռված շարժումներ:

Օրինակ 9.Խաղը տարվում է տպված խաղաքարտերով ,որոնցից յուրաքանչյուրի վրա պատկերված են առարկաներ,կենդանիներ և այլ պատկերներ:Խաղում են երկուսով,քարտերը շարվում են սեղանի վրա շրջված հակառակ կողմի վրա,երեխաներից մեկը ընտրում է որևէ քարտ,իսկ խաղընկերը վերցնում է և տեսնելով պատկերը փորձում է որոշակի հուշումներով,հարցերով, նկարագրություններով ներկայացնել նկարը:Քարտը ընտրած երեխան պետք է գուշակի:Խաղը զարգացնում է տրամաբանությունը,ուշադրությունը,միտքը, խոսքը:

Օրինակ10.Խաղը կազմակերպելու համար նախապես պատրաստվում են 6 գույնի 5-6-ական թղթեր,և այդ գույներով որևէ խորանարդիկ:Թղթերը փակցվում են հատակին՝ յուրաքանչյուր գույնը մեկ շարքում:Խաղին մասնակցում են 6 երեխաներ և ամեն մեկը կանգնում է մեկ գույնի մոտ:Խաղավարը կարող է լինել խմբի երեխաներից 1-ը,նա խորանարդիկը օդ է գցում և որ գույնը կողմով ընկնում է այդ գույնի թղթի մոտ կանգնած երեխան 1 ցատկ է կատարում:Խաղը հաղթում է նա,ում գույնն ավելի շատ է ընկնում և առաջ է գալիս:Խաղի ընթացքում երեխաների մոտ ձևավորվում է համբերատարություն,համագործակցություն:

Փորձարարական մասը կատարվել է ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի <<Ամալյա Կարապետյանի անվան թիվ 7 մսուր մանկապարտեզում>>:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ուսումնասիրելով խաղը որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն,ուսմնասիրելով տարբեր մանկավարժների կողմից գրված նյութերը, կատարելով փորձարարական աշխատանքներ,գալիս ենք այն եզրակացությանը,որ խաղի մեջ երեխան նախ զարգանում է որպես մարդ:Այն նպաստում է երեխայի շփման,հաղորդակցման ունակությունների զարգացմանը,խաղի շնորհիվ ձեռք են բերում ինքնավստահություն,իրար օգնելու կարողություն,զարգանում է երևակայությունը,կամային հիշողությունը,ուշադրությունը,ինչպես նաև նրանք խաղի ընթացքում նաև սովորում են,իսկ վաղ հասակում եղած տպավորություններն ու գիտելիքները դեռ երկար ժամանակ մնում է նրանց հիշողության մեջ:Վաղ հասակում ձևավորված հմտություններից էլ հետագայում կախված կլինի նրանց կրթական և աշխատանքնային գործունեության հաջողությունը, մարդկանց նկատմամաբ նրանց վերաբերմունքը:Ակնհայտ են խաղային գործունեության ձևերը երեխայի գործունեության այլ ձևերի նկատմամբ,այն երեխայի դաստիարակության և զարգացման լավագույն միջոցն է,այդ իսկ պատճառով պետք է դառնա նրանց կյանքի և գործունեության հիմնական ձևը:

«Մարդիկ կան, ըստ ամենայնի թմրած, լքված ու խորտակված մարդիկ, որ խաղը հասարակ բան են կարծում և իրենց մեռելությունը լրջություն են անվանում:

Էդպես չի, կենդանի, ապրող մարդը: Նա ոչ թե միայն խաղի պահանջ է զգում, այլ պարզ տեսնում ու նկատում է,որ են ժամանակ,երբ մենք ծանր նստած մեծ մեծ բաներ ենք խոսում,խաղն ու նրա նման փոքրիկ համարված բաները իրենց վճռական գործն են տեսնում ,կյանք,հոգի,լեզու՝ մարդ են ստեղծում:

Առաջադեմ ազգերի մեջ խաղին ահագին նշանակություն են տալիս,և խաղում են ամենքը՝ մեծից մինչև փոքրը: Նրանք լավ գիտեն,որ խաղը մի հեշտ ու հաճելի միջոց է,որ նպաստում է մարդու թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր, թե՛ հոգևոր-բարոյական զարգացմանը»: Հովհ.Թումանյան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Գյուլամիրյան Ջուլիետա <<Խաղալով սովորենք>>, Երևան 2009,80 էջ

2.Դալլաքյան Ա.Մ.,Մարության Ս.Ա. <<Նախադպրոցական մանկավարժություն>> բուհական դասագիրք, Երևան 2008,126 էջ:

3.https://www.google.am/url?esrc=s&q=&rct=j&sa=U&url=https://mariatamrazyan.files.wordpress.com/2014/06/d5a4d5abd5bad5acd5b8d5b4d5a1d5b5d5abd5b6-d5b6d5a1d5add5a1d5a3d5abd5ae.docx&ved=2ahUKEwjx8r3o8vn7AhUrQvEDHXAQC8QQFnoECAEQAg&usg=AOvVaw07rIHDBTTPMzRBMubbyfTD

4.https://nelikopoxosyan.files.wordpress.com/2019/05/d586d5a1d5add5a1d5a4d5bad680d5b8d681d5a1d5afd5a1d5b6-d5b4d5a1d5b6d5afd5a1d5bed5a1d680d5aad5b8d682d5a9d5b5d5b8d682d5b6.-d5b1d5a5d5bcd5b6d5a1d680d5af-1.pdf

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ, ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐՄԱՆ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էկոլոգիական կրթության կարևորությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում

Կատարող՝ **Մարիանա Սանթոյան**
Ղեկավար՝ **մ.գ.թ. Լուսինե Միրաբյան**

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

Գլուխ 1 Էկոլոգիական կրթության ձևավորումը նախադպրոցական ուսումնական հաստատություններում..... 5

Գլուխ 2 Նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթության ձևերն ու մեթոդները 11

Փորձարարական աշխատանք՝ աշխատանք ծնողների հետ 15

Եզրակացություն 18

Գրականության ցանկ 19

Հավելված 1

Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Էկոլոգիական դաստիարակությունը շատ կարևոր է մոլորակի և մարդկության համար: Հասարակությունը կանգնած է աղետի առաջ, քանի որ բնությունը գնալով մահանում է, աղտոտվում է տարբեր արդյունաբերական և տնտեսական թափոնների արդյունքում՝ մարդկությանը սպառնացող մի շարք հիվանդությունների պատճառ դառնալով: Այս խնդիրները հաշվի առնելով՝ դրա լուծումը պետք է սկսել վաղ տարիքից, քանի որ բնության նկատմամբ վերաբերմունքը, էկոլոգիական պատկերացումները պետք է ձևավորել դեռ նախադպրոցական հասակից, և շարունակել ողջ կյանքի ընթացքում:

Նախադպրոցական տարիքի երեխաների բնապահպանական կրթության խնդիրներն այսօր բարձր մակարդակի վրա են, որոնց գնալով ավելի մեծ ուշադրություն են դարձնում: Այս խնդիրը պայմանավորված է նրանով, որ երեխաները, շրջապատված զվարճանքի բազմազանությամբ, գնալով ավելի քիչ են ուշադրություն դարձնում շրջակա բնությանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման ոլորտներին և էկոլոգիական կրթությանն առնչվող տեսական և մեթոդական գրականությունը, ցույց տալ էկոլոգիական դաստիարակության կարևորությունը նախադպրոցական տարիքում:

Այս նպատակից բխում են մի շարք խնդիրներ՝

1. նկարագրել նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական մտածողության, գիտակցության հիմնարար սկզբունքների և էկոլոգիական մշակույթի նախնական գիտելիքների ձեռք բերման հիմնախնդիրները,
2. բացահայտել էկոլոգիական կրթության կազմակերպումը սահուն իրականացնելու համար ժամանակակից լուծումներ՝ կիրառելով ավանդական և ժամանակակից մեթոդներ: Ներկայացնել, թե ինչպես են ավանդական և ոչ ավանդական մեթոդները (խաղերը, էքսկուրսիաները, ծնողների հետ փոխկապակցված աշխատանքները) նպաստում էկոլոգիական դաստիարակությանը զարգացմանը,

3. իրականացնել մասնագիտական փորձարարական աշխատանք նախադպրոցական տարիքի երեխաների ծնողների հետ՝ բացահայտելու համար ծնողների էկոլոգիական գիտելիքների մակարդակը, ներգրավվածությունը ու ազդեցությունը էկոլոգիական դաստիարակության գործընթացում:

Երեխաների մոտ էկոլոգիական մշակույթի հիմքերի ձևավորման խնդիրները հաջողությամբ լուծելու համար կարևորում ենք հետևյալ ոլորտները.

- առարկայական զարգացնող միջավայրի ստեղծում,
- երեխաների և դաստիարակի համատեղ գործունեություն,
- երեխաների ինքնուրույն գործունեություն,
- աշխատանք ծնողների հետ:

Հետազոտական աշխատանքը ներառում է ներածություն, երկու գլուխներ, փորձարարական աշխատանք, եզրակացություն և գրականության ցանկ:

Գլուխ 1 Էկոլոգիական կրթության ձևավորումը նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Ներկայումս բնության և մարդու փոխազդեցությունը հանգեցրել են գլոբալ բնապահպանական խնդիրների: Եթե մարդիկ մոտ ապագայում չսովորեն հոգ տանել բնության մասին, ապա իրենք իրենց կկործանեն: Եվ որպեսզի դա տեղի չունենա, անհրաժեշտ է էկոլոգիական կրթությունը սկսել նախադպրոցական տարիքից, քանի որ հենց նախադպրոցական տարիքից է երեխայի մոտ ձևավորում էկոլոգիական մտածողությանը, գիտակցության հիմնարար սկզբունքները և էկոլոգիական մշակույթի սկզբնական տարրերը[2, 88 էջ]:

Այդ նպատակով առաջարկում ենք նախադպրոցական տարիքի երեխաների հետ կազմակերպել զրույցներ՝ հետևյալ թեմաներով.

- Մարդիկ և շրջակա միջավայրը
- Ես և բնությունը
- Ինչպե՞ս եմ օգտագործում բնության բարիքները
- Ի՞նչ կլինի ինձ հետ, եթե ոչնչացվեն շրջապատի կենդանիներն ու բույսերը
- Ես ի՞նչ կարող եմ անել շրջակա միջավայրի վիճակի բարելավման համար և այլն:

Երեխաների հիշողությունը, ինչպես սպունգը, ունակ է կլանել մեծահասակների կողմից տրված ցանկացած նյութ: Այս առումով երեխաների մեջ մանկուց պետք է սեր ձևավորել բնության և, ընդհանրապես, էկոլոգիայի նկատմամբ: Վաղ տարիքում երեխան ավելի զգացմունքային է ու տպավորիչ: Ստանալով ցանկացած նյութ՝ նրանց մոտ ձևավորվում է որոշակի աշխարհայացք, դրվում է բնության մեջ վարքագծի մշակույթի հիմնական հիմքը, և պատկերացումները կյանքի տարբեր ձևերի մասին[1, 25 էջ]:

Բնապահպանական կրթության գործընթացում դրվում են բնության հետ փոխգործակցության հիմքերը: Մեծահասակների օգնությամբ երեխաները սովորում են ճանաչել նրա գեղեցկությունը՝ որպես ընդհանուր արժեք[4, 5էջ]:

Էկոլոգիական դաստիարակության մանկավարժական խնդիրները վերաբերում են՝

- **ուսուցմանը** (մարդու, բնության և հասարակության միջև փոխադարձ կապի իմացության տիրապետում, էկոլոգիական հիմնախնդիրների լուծման գործնական ունակությունների ձևավորում),
- **դաստիարակությանը** (արժեքային կողմնորոշում, դիրքորոշում, պահանջմունք, շրջակա միջավայրի պահպանման ակտիվ գործունեության սովորույթի մշակում),
- **զարգացմանը** (էկոլոգիական իրավիճակների վերլուծության ընդունակություն) [1, 386էջ]:

Տասնամյակներ շարունակ վայրի բնությունը ճանաչվել է որպես նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության մանկավարժական գործընթացի կենսական գործոն[4, 5էջ]: Այս տարիքային կատեգորիայի երեխաները շրջակա միջավայրին ծանոթանում են բուսական և կենդանական աշխարհի հետ հաղորդակցվելու միջոցով: Խորանալով բնության և բնական երևույթների բազմազանության մեջ՝ նրանք աստիճանաբար գիտակցում են դրա արժեքը մարդու համար, ինչը նախադպրոցականների մոտ արթնացնում է պատասխանատվության զգացում շրջակա միջավայրի վիճակի համար:

Օրինակ՝ կրտսեր խմբում բուսական և կենդանական աշխարհի հետ ծանոթացումը իրականացրել ենք խաղի միջոցով:

Խմբասենյակում փակցրել ենք սպիտակ պաստառ, կողքին դրված գունավոր մատիտներ, կենդանիների, բույսերի, բնության երևույթների պատկերներ: Պաստառի կենտրոնում նկարված է երեխա:

Երեխաներին ներկայացրեցինք, որ այս երեխան դուք եք: Յուրաքանչյուրդ պետք է նկարեք կամ փակցնեք ձեր կյանքի համար կենսական նշանակություն ունեցող առարկաներ, երևույթներ, իրեր պատկերող նկարներ: Վերջում դրանք սլաքով կմիացնենք միմյանց:

Այս խաղի նպատակն է հնարավորություն ընձեռել երեխաներին գտնելու, ճանաչելու մարդու և նրա շրջակա միջավայրի միջև գոյություն ունեցող կապը, կյանքի գոյության համար կենսական նշանակություն ունեցող գործոններն ու երևույթները: Վերջում երեխաների ուշադրությունը կենտրոնացնելով պաստառի

վրա, ցուցադրում ենք կարևոր գործոնները, երևույթները՝ նպաստելով երեխաների մեջ հոգատարության և բնության հանդեպ ճիշտ վերաբերմունք:



Այս ոլորտում տարեկան աշխատանքը պլանավորելիս մեր առջև դնում ենք հատուկ նպատակ, որն արտացոլում է երեխաների մոտ կենդանական և բուսական աշխարհի գաղափարի ձևավորումը, էկոլոգիապես գրագետ վարքագիծը.

Դրա իրականացման համար մշակել ենք մի շարք ուսումնական առաջադրանքներ.

- *Խաղային գործունեության միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների մեջ սկզբնական բնապահպանական գիտելիքներ սերմանել*[4, 7էջ]*:*

Կրտսեր խմբում «Ընտանի և վայրի կենդանիներ» թեման ուսումնասիրելու ժամանակ խաղում ենք «Ո՞վ ինչ ձայն է հանում» խաղը: Խաղի համար անհրաժեշտ են ընտանի և վայրի կենդանիների նկարներ կամ խաղալիքներ, երկու խաղալիք բեռնատար ավտոմեքենա: Երեխաներին նստեցնում ենք կիսաշրջանաձև և ներկայացնում. որ իրենց հյուր են եկել մի շարք կենդանիներ, դուք գիտեք, որ կան վայրի կենդանիներ, որոնք սնվում են ընտանի կենդանիներով: Եկեք ձայներով տարբերակենք և առանձին մեքենաների մեջ տեղավորենք ընտանի և վայրի կենդանիներին:

Խաղի նպատակն է տարբերակել կենդանիների ձայները, ինչպես նաև վայրի և ընտանի կենդանիներին:

Հերթով ցուցադրում ենք կենդանիներին և ասում,

- Ձեզ հյուր է եկել գառնուկը: (Երեխաները սկսում են մկկալ գառնուկի նման:) Ո՞ր մեքենան պետք է նստեցնել գգառնուկին, որպեսզի գայլուկը չուտի: Հաջորդ հյուրը գայլուկն է (սկսում են ոռնալ գայլի պես): Գայլուկը ո՞ր մեքենան պետք է նստի: Հիմա ասեք, որտեղ են ապրում գառնուկը և գայլուկը:

-Գայլուկը ապրում է անտառում, իսկ գառնուկը տատիկի մոտ:

Այսպես շարունակաբար գալիս են բոլոր կենդանիները և երեխաները նրանց նմանակելով՝ ողջունում են և տեղավորում իրենց համապատասխան մեքենաների մեջ: Խաղի վերջում, երբ բոլոր կենդանիները տեղավորված են մեքենաների մեջ, վայրի կենդանիների մեքենան ուղևորվում է դեպի անտառ, իսկ ընտանի կենդանիների մեքենան՝ գյուղ՝ տատիկի մոտ:

- *Նախադպրոցականների բնապահպանական կրթության, ստեղծագործական, սոցիալական, ճանաչողական գործունեություն զարգացում՝ ոչ ավանդական մեթոդների կիրառման միջոցով*[4, 7էջ]*:*

Բացի պարապմունքների ստանդարտ տեսակներից, կարելի է նշել մի շարք ոչ ավանդական մեթոդներ, որոնք ուղղակիորեն տարբերվում են միմյանցից դիդակտիկ առաջադրանքներով, կառուցման տրամաբանությամբ, կազմակերպման և անցկացման ընթացքով, օրինակ էքսկուրսիաներ և այլն: Նախադպրոցական տարիքի երեխաների բնապահպանական կրթության բաժնում իրականացվող այս տեսակի աշխատանքը թույլ է տալիս դաստիարակներին ձևավորել գիտելիքներ բնության մասին՝ որոշակի համակարգով և հաջորդականությամբ՝ հաշվի առնելով երեխաների տարիքը և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և միջավայրը:

«Բնությունը և մարդը» թեմայի շրջանակներում կարելի է կազմակերպել էքսկուրսիա: Էքսկուրսիա պլանավորելիս՝ մանկավարժը պետք է մշակի որոշակի սցենար: Անհրաժեշտ է ծնողներին նույնպես ներգրավել էքսկուրսիների մեջ, այն ավելի է կմոտեցնի մեծահասակներին և երեխաներին: Էքսկուրսիայի կազմակերպման նպատակն է ծանոթացնել երեխաներին, որ անտառում աճում են շատ ծառեր, թփեր, խոտեր, կան բազմատեսակ կենդանիներ: Անտառը շատ մեծ

օգուտ է տալիս թե՛ բնությանը,թե՛ մարդուն: Նա ոչ միայն շինանյութ ու վառելանյութ է տալիս, այլև մաքրում է օդը, թուլացնում է քամու ուժը, պակասեցնում է փոշին: Ծառերի և թփերի արմատներն ամրացնում են հողը, չեն թողնում, որ անձրևները լվանան տանեն բուսահողը: Անտառն ապաստան է թռչունների և կենդանիների համար: Ամենակարևորը, երեխաների գիտակցական մակարդակին պետք է հասցնել այն, որ պետք է պահպանել անտառը, չկոտրել ծառերի առողջ ճյուղերը, չվնասել ծառերի կեղևը, չաղտոտել անտառը: Այս նպատակով մեզ հետ նախապես վերցրել են տնկի՝ կազմակերպում ենք ծառատունկ: Համատեղ ջանքերով՝ տնկում ենք մեր տնկին, արտասանելով Հ, Հայրապետյանի «Ծառատունկ» ստեղծագործությունը:

Փոս ենք փորում, Ծառ ենք տնկում
Ուրախ երգով ու կանչով,
Որ մեծանա Ու ճյուղեր տա,
Ծածկվի սիրուն կանաչով:
Ու երբ ամռան Արևը գա
Իր շողերով շողշողուն,
Ծառը սիրով Հանգիստ կտա
Մեզ իր անուշ ստվերում:

Էքսկուրսիայի ընթացքում կարելի է քննարկել էկոլոգիային վերաբերող հետևյալ հարցերը.

1. Ինչպե՞ս մեզ դրսևորել բնության մեջ:
2. Ինչպե՞ս ծանոթանալ բնության պաշարներին:
3. Ինչո՞ւ են մեր պահպանության և պաշտպանության կարիքն զգում կենդանիները:
4. Ինչո՞ւ է ստեղծված Կարմիր գիրքը և այլն:

Այսպիսով, երեխաների մեջ ձևավորում են տարրական գիտելիքների համակարգ, զարգացնում են հիմնական ճանաչողական գործընթացներն ու կարողությունները:

Նախադպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության ոլորտներն են՝

1. բնաճանաչողական ընդունակությունների, իմացական հետաքրքրությունների ձևավորումը,
2. բնության երևույթների, բուսական ու կենդանական աշխարհի փոխկապակցվածության վերաբերյալ պատկերացումների, հասկացությունների և գիտելիքների ձևավորումը,
3. բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման դրդապատճառների սովորույթների ու հմտությունների ձևավորումը,
4. կենդանի բնության նկատմամբ ապրումակցման զգացման ձևավորումը,
5. միմյանց նկատմամբ հանդուրժողականության, հարգանքիունակության ձևավ ավորումը[4, 5էջ]:

Երեք տարեկանից երեխաներին ծանոթացնում ենք եղանակների ու բնական երեւույթների հետ: Այս նյութը նույնպես երեխաների կողմից ուսումնասիրվում է աստիճանաբար՝ տարբեր մեթոդների միջոցով՝ զվարճանք, հանելուկներ, տարբեր խաղեր, նկարազարդումներ, դիդակտիկ խաղեր, լուսանկարներ, մուլտֆիլմեր և ուսումնական շնորհանդեսներ և այլն: Այն նպաստում է բնական երևույթների անմիջական ընկալման ընթացքում ձեռք բերված երեխաների ներկայացվածության ակտիվ ուսումնասիրմանը, համախմբմանը և պարզաբանմանը:

Նախադպրոցական տարիքի երեխաներին շրջակա բնության առավել վառ և հաճախ հանդիպող երևույթներն, տարվա եղանակներինև մարդկանց կյանքում տեղի ունեցող փոփոխություններին ծանոթացումը իրականացնում ենք բնության օրացույցի միջոցով: Բնության օրացույցի վրա ամենօրյա նշումներն ու աշխատանքները հնարավորություն են տալիս ծանոթանալ տարվա եղանակներին, ամիսներին, շաբաթվա օրերին և եղանակային փոփոխություններն:

Խմբում ստեղծվել է առարկայական միջավայր՝ բնության անկյուն, որտեղ կան տարբեր բույսեր: Երեխաներին վստահելով բույսերի խնամքը՝ մեր նպատակն է ամրապնդել բնության նկատմամբ խնամքի և հարգանքի հմտություններ: Այս աշխատանքի արդյունքում երեխաները սկսում են ձևավորել էկոլոգիական միջավայրի, բնական ռեսուրսների վրա ազդելու անձնական փորձ, ձևավորվում է գործնական գիտելիքներ:

Գլուխ 2 Նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթության ձևերն ու մեթոդները

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում բնապահպանական թեմայով պարապմունքներին երեխաները մասնակցում են մեծ ակտիվությամբ և հետաքրքրությամբ: Պարապմունքների ընթացքում երեխաները շփվում են կենդանի էակների, բույսերի հետ, մոտիկից ուսումնասիրում, կատարում հետևություններ, տեսնում արդյունքը: Այդ նպատակով մանկավարժների կողմից կիրառում են այնպիսի մեթոդներ, որը կապահովի նյութի յուրացման մատչելիությունը:

Մեթոդը բնապահպանական կրթության տեսանկյունից, դաստիարակի և երեխաների համատեղ գործունեության միջոց է, որի ընթացքում իրականացվում է բնապահպանական գիտելիքների, հմտությունների և կարողությունների, ինչպես նաև արտաքին աշխարհի նկատմամբ վերաբերմունքի ձևավորում[3, 25էջ]:

Նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունը ներառում է ոչ միայն տարբեր մեթոդների, այլև աշխատանքի տարբեր ձևերի կիրառում: Մանկավարժական գործունեության մեջ կիրառվում են հետևյալ ձևերը՝

1. ֆրոնտալ,
2. խմբակային,
3. անհատական[3, 35էջ]:

Երեխաների բնապահպանական դաստիարակության հիմնական մեթոդը դիտումն է, որի օգնությամբ երեխան ոչ միայն սովորում է բնության առարկաների արտաքին տեսքը (գույն, կառուցվածք, հոտ և այլն), այլև ձեռք են բերում տարբեր հմտություններ (աշխատանք բույսերի հետ, կենդանիների խնամքի և այլն):

Նախադպրոցականի ուսուցման գործընթացում ակտիվ կիրառվում են ուսուցման գործնական մեթոդները (վարժությունները, փորձերը, փորձարարությունը (հետազոտումը), մոդելավորումը) [3, 38էջ]:

Օրինակ՝ «Կենդանիներ» թեման ուսումնասիրելիս, կարելի է առաջարկել «Որ կենդանին ի՞նչ է ուտում» կամ «Գտի՛ր մայրիկին» վարժությունները: Փորձերի մեթոդը կարելի է կիրառել Սուրբ Զատիկից 2 շաբաթ առաջ: երեխաների հետ միասին փորձում ենք տոնի համար խոտ աճեցնել, նրանք ամեն օր ջրում են այն և հետաքրքրությամբ հետևում են աճման ընթացքին: Աշխատանքը միտված է

երեխաներին ներկայացնել, որ նույն ձևով աճում են նաև բույսերը և ծաղիկները, անձրև է գալիս, հողը կլանում է ջուրը, բույսերն ու ծաղիկները սնվում են և մեծանում:

Հեքիաթի մոդելավորումը նույնպես կարող է նպաստել էկոլոգիական կրթությանը: Հեքիաթը ընթերցվում է և բաժանվում է տրամաբանական մասերի, դրանց երեխան տալիս է անուններ՝ վերնագրում է, որից հետո փորձում է նկարել յուրաքանչյուր մասի ընդհանուր իմաստը: Արդյունքում, ստացվում է պայմանական նկարների հաջորդականություն՝ պիկտոգրամ կամ հեքիաթի ապերցեպտիվ սխեմա:

Նախադպրոցական տարիքի երեխաները, հատկապես կրտսեր խմբում, շատ են սիրում հարցեր տալ: Բնության մասին զրույցները հետաքրքրություն են առաջացնում երեխայի մեջ բնության հանդեպ: Գործնական աշխատանքի ընթացքում իրենց հարցերի պատասխանը ստանալիս նրանք հրճվանք և ուրախություն են ապրում: Իսկ բնության մասին ճիշտ հարցադրումները օգնում են երեխաներին լսածը ավելի լավ հասկանալ և կիրառել: Օրինակ՝ Ինչի՞ համար են կենդանիները, ինչպե՞ս պետք է խնամել կենդանիներին, ինչո՞ւ չի կարելի վնասել ծառերը, խոտերն ու ծաղիկները և այլն:

Տարիքային այս խմբի երեխաները սիրում են նաև նկարչություն և հիմնականում նկարում են այն ինչ շատ են սիրում: Բնության բաղադրիչները ներկայացնելիս՝ ծաղիկներ, խոտ, թռչուններ, անձրև, կենդանիներ և այլն, նրանք ավելի են մոտենում բնությանը, մեծանում է հետաքրքրությունը բնության հանդեպ: Նկարչության միջոցով իրենք իրենց պատկերացումն ու երևակայությունն են զարգացնում բնության մասին:

Խաղը որպես էկոլոգիական կրթության մեթոդ

Զարգացման հրաշալի մեթոդ է խաղի յուրաքանչյուր տեսակ:

Նախադպրոցական դիդակտիկայում կիրառվում են ժամանակակից խաղային և ակտիվ ուսուցման մեթոդներ:

Հետազոտական աշխատանքում էկոլոգիական կրթության գործում կարևոր տեղ է գրավում խաղը, այդ պատճառով այն համարում ենք կրթության հիմնական ձևերից մեկը: Խաղային մեթոդների առավելությունները կայանում է նրանում, որ

դրանք ապահովում են խաղային մթնոլորտի բարձր հուզականությունը՝ երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով:

Դիդակտիկ խաղերը կատարում են հետևյալ կարևորագույն գործառույթները.

- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը,
- նպաստում են գիտելիքների ամրապնդմանը, գործածմանը և կատարելագործմանը[4, 16էջ]:

Բնապահպանական կրթության վերաբերյալ աշխատանքի շրջանակներում օգտագործվել են ինչպես ավանդական, այնպես էլ հեղինակային դիդակտիկ խաղեր՝ բնապահպանական տարբեր բովանդակությամբ:

1. Էկոլոգիական գաղափարները հարստացնելու խաղեր.

- *Բնության առարկաների և երևույթների բազմազանության վերաբերյալ խաղեր*՝ խանութ «Մրգեր և բանջարեղեններ», «Ի՞նչ թռչուն է», «Ի՞նչ ծառի տերև է», «Կախարդական պարկը», «Անվանիր ինձ», «Կախարդական ծաղիկը» և այլն:

- *բնության հարաբերությունների մասին* ՝ «Կախարդական շրջան», «Ավարտի՛ր նախադասությունը», «Մի՛ սխալվիր», «Գորտ՝ ճամփորդ», «Ո՞վ, ի՞նչ, ինչի՞ց և ինչպե՞ս», «Ո՞վ է ծառի հետ ընկեր», «Տարվա ո՞ր եղանակն է», «Ճամփորդություն», «Գուշակիր, թե ի՞նչ կենդանի ես դու», «Խորհրդավոր ճանապարհ», «Ընտրիր ճիշտ ուղին», «Բնության պատկերներ»:

- *Մարդը որպես բնության մաս*՝ «Մի՛ սխալվիր», «Ո՞վ և ինչն է փայտ պատրաստում», «Ի՞նչ են աճեցրել մարդիկ», «Բնությունն ու մարդը»:

- բնության մեջ վարքագծի մասին՝ «Ուղևորություն դեպի բնության աշխարհ», «Էկոլոգիական ուղի», «Գուշակիր կանոնը», «Ընտրիր ճիշտ ուղին», «Կանաչ ուսապարկ»:

2. Բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք ձևավորող խաղեր

- *բնության գեղագիտական ընկալման զարգացման համար.* «Ո՞վ է օգնում պահպանել ծաղիկների գեղեցկությունը», «Ուղևորություն դեպի անտառ»:

- *բնության մեջ ձևավորել վարքագծի բարոյական և գնահատող փորձ*՝ «Բնություն և մարդ», «Անսովոր ճամփորդություն», «Կանաչ քաղաք» [4, 19-23էջ]:

Խաղերում երեխաները պարզաբանում են, համախմբում, ընդլայնում իրենց պատկերացումները առարկաների և բնության երևույթների, բույսերի և

կենդանիների մասին: Շատ խաղեր երեխաներին տանում են ընդհանրացման և դասակարգման:

Դիդակտիկ խաղերը տերևներով, սերմերով, ծաղիկներով, մրգերով, բանջարեղենով, ձևավորում են պատկերացումներ առարկաների հատկությունների և որակների մասին, ձևավորվում են դրանք ուսումնասիրելու կարողություն, երեխաները տիրապետում են զգայական չափանիշներին: Դիդակտիկ խաղերը երեխաներին հնարավորություն են տալիս ծանոթանալ բնության առարկաների հետ, համեմատել դրանք և նկատել անհատական արտաքին հատկանիշների փոփոխությունները: Նման խաղեր կարելի է խաղալ ինչպես ամբողջ խմբով, այնպես էլ առանձին՝ տարիքը հաշվի առնելով՝ բարդացնել խաղի կանոնները: Բարդությունը ներառում է գիտելիքների ընդլայնում և մտավոր գործողությունների զարգացում[4, 17էջ]:

Շարժական խաղերը բազմազան են բովանդակությամբ և կազմակերպման ձևերով: Նրանք ունեն սյուժե, ինչպես նաև դերեր և կանոններ, որոնք սերտորեն կապված են սյուժեի հետ, նրանցում խաղային գործողությունները կատարվում են դերով և կանոններով՝ տրված պահանջներին համապատասխան:

Հետաքրքիր խաղային մեթոդ է երևակայական իրադրությունների խաղարկումը, որի ընթացքում երեխայի գիտելիքները և կարողությունները ձեռք են բերվում պարտադրված դերային գործողությունների միջոցով[4, 48էջ]:

Ուսուցման խաղային մեթոդները խաղային հնարների բազմազանության հաշվին ունեն տարբերակված կիրառության լայն հնարավորություններ և հաջողությամբ օգտագործվում են նախադպրոցականին բոլոր ուղղություններով զարգացնելու ընթացքում:

Փորձարարական աշխատանք. աշխատանք ծնողների հետ

Էկոլոգիապես գրագետ քաղաքացի դաստիարակելու համար նախադպրոցական ուսումնական հաստատության շրջանակներում աշխատանքը բավարար չէ: Պետք է ճիշտ կազմակերպել մանկապարտեզի և ընտանիքի փոխգործակցության աշխատանքը, որպեսզի տանը շարունակվի բնապահպանական կրթության ձևավորման գործընթացը:

Ինչպես նշեցինք առաջին գլխում, երեխաների հետ իրականացվող էկոլոգիական դաստիարակության կարևորագույն բաղադրիչներից մեկը ծնողների հետ տարվող աշխատանքն է: Ծնողի հետ իրականացվող աշխատանքը կօգնի, որ նրանք յուրացնեն երեխայի էկոլոգիական մտածելակերպի, վարքագծի ձևավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետ ձևերն ու մեթոդները: Այն իրականացվում է ծնողական ժողովների, զրույցների, կլոր սեղանի, բանավեճերի, խորհրդատվությունների միջոցով:

Ընտանիքում և նախադպրոցական հաստատությունում աշխատանքի ավանդական ձևերի հետ միասին ակտիվորեն օգտագործվում են նորարարական մեթոդներ և աշխատանքի ձևեր.

1. Տարբեր թեմատիկ ցուցահանդեսներ, օրինակ՝ «Պահպանի՛ր բնությունը» նկարների ցուցահանդես, «Մենք կփրկենք բնությունը», «Կենդանիներ», «Բնության գեղեցկությունը», «Մենք կենդանաբանական այգում ենք»:

2. Դաստիարակների, ծնողների և երեխաների համատեղ բնապահպանական գործողություններ, օրինակ՝ «Բարության ծառ» ակցիան, «Էկոլոգիական ճանապարհը մանկապարտեզի տարածքում»:

Մինչ ծնողների հետ որևէ աշխատանք պլանավորելը, կազմել ենք հարցաշար՝ ուսումնասիրելու համար ծնողների զարգացվածությունը, հետաքրքրվածությունը թեմայի նկատմամբ, արդյոք տեղեկացված են ինչ բնապահպանական խնդիրներ կան և այլն:

Այդ նպատակով ծնողներին ներկայացվել է հարցաշար (հավելված 1): Վերլուծելով արդյունքները ունեցանք հետևյալ պատկերը: Ծնողների մեծամասնությունը տիրապետում էին, թե ինչ է ուսումնասիրում էկոլոգիան, սակայն քչերն էին տեղեկացված բնապահպանական խնդիրներին: Բնության մեջ

վարքագծի կանոնների հետ ծանոթացումը գրեթե բոլոր ծնողները կողմ էին և այն համարում էին առաջնային խնդիր: Ծնողներից քչերն էին իրենց երեխաների հետ զբոսնում բնության գրկում, պատճառաբանելով, որ ունեն ժամանակի խնդիր, և որ այդ բացը հաճախ լրացնում է մանկապարտեզը, ինչը գովելի է: Ծնողների մեծ մասն առաջարկեց ավելի հաճախ կազմակերպել էքսկուրսիաներ բնության գրկում, բուսաբանական այգում և այլն:

Հարցման արդյունքում կատարված որոշակի պատկերի շուրջ կազմեցինք խորհուրդների ցանկ, որը ներկայացվեց ծնողներին, այն նպատակաուղղված էր երեխաների բնապահպանական դաստիարակությանը, բնապահպանական մտածելակերպի և վարքագծի ձևավորման հարցերին:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին, թե ինչպես նկարչության, երաժշտության, հեքիաթների, թատրոնի, զբոսանքների միջոցով երեխաներին ծանոթացնել բնության երևույթներին, երեխաների մեջ սեր արթնացնել բնության, շրջակա միջավայրի, ինչու չէ, նաև հայրենիքի նկամամբ: Եթե երեխաները անտարբեր են, անփույթ վերաբերմունք ունեն բույսերի կամ կենդնիների նկատմամբ կարելի է առաջարկել ծնողներին ընտրել որևէ խնամքի օբյեկտ ՝ պահել ձկնիկ, աճեցնել ծաղիկներ, պահել որևէ ընտանի կենդանի, կրիա, ոզնի, և երեխաների հետ կազմակերպել դրանց խնամքը:

Ծնողների հետ զրուցներ ենք ունեցել նաև հետևյալ թեմաների շուրջ՝ «Թող ծաղկեն ծաղիկները», «Անտառի բնակիչները», «Խնայեք ջուրը», «Մաքուր պահենք շրջակա միջավայրը», «Ծնողի մասնակցությունը երեխայի էկոլոգիական դաստիարակության գործընթացին», և այլն:

Այսպիսով, բնության մեջ կատարվող աշխատանքներին երեխաների ներգրավվածության վերաբերյալ ծնողների իրազեկությունը հնարավորություն կընձեռն երեխաներին ընդգրկելու այնպիսի աշխատանքներում, ինչպիսիք են ծաղկի սերմեր ցանելը, ծաղիկներ մշակելը, ընտանի կենդանիներ պահելը: Կատարելով իր տարիքին համապատասխան աշխատանք, երեխան ձեռք կբերի աշխատասիրություն, հոգատարություն, պատրաստակամություն, սեր դեպի բնություն, կենդանական և բուսական աշխարհ:

Հարցումն իրեկանացվել է Մարգահովիտի ՆՈՒՀ-ում՝ կրտսեր խմբի 28 երեխաների ծնողների հետ:



4. Հաճա՞խ եք զբոսնում երեխաների հետ: Եթե այո, ապա որտեղ: Ո՞րն է նպատակը:



Եզրակացություն

Բնության հետ շփումը դրական է ազդում մարդու վրա, նրան դարձնում ավելի բարի, մեղմ, նրա մեջ արթնացնում լավագույն զգացմունքները: Այդ նպատակով կարևորում ենք բնապահպանական կրթությունն սկսել վաղ տարիքից:

Անկախ նրանից, թե նախադպրոցական կրթության ինչ ծրագրերով է դաստիարակն աշխատում՝ օգտագործելով տարբեր մեթոդներ և աշխատանքի ձևեր, նա պետք է զարգացնի երեխայի էկոլոգիական աշխարհայացքը, սերմանի պատասխանատվության զգացում բնության վիճակի համար, օգնի գիտակցել բնապահպանական գործունեությանը անձնական մասնակցության անհրաժեշտությունը:

Պարապմունքների, զբոսանքի, հատուկ դիտարկումների, փորձերի, աշխատանքի մի շարք այլ ձևերի մտածված կազմակերպումը զարգացնում է երեխաների մտածողությունը, բնական երևույթների գունեղ բազմազանությունը տեսնելու և զգալու, շրջապատող աշխարհում մեծ և փոքր փոփոխությունները նկատելու կարողությունը:

Բնության մեջ կատարվող աշխատանքներին երեխաների ներգրավվածության վերաբերյալ ծնողների իրազեկությունը հնարավորություն են ընձեռում երեխաներին ընդգրկելու այնպիսի աշխատանքներում, ինչպիսիք են ծաղկի սերմեր ցանելը, ծաղիկներ մշակելը, ընտանի կենդանիներ պահելը: Կատարելով իր տարիքին համապատասխան աշխատանք, երեխան ձեռք կբերի աշխատասիրություն, հոգատարություն, պատրաստակամություն, սեր դեպի բնություն, կենդանական և բուսական աշխարհ:

Մեծահասակի ազդեցության տակ մտածելով բնության մասին՝ նախադպրոցականը հարստացնում է իր գիտելիքները, զգացմունքները, ձևավորում է կենդանի էակների նկատմամբ ճիշտ վերաբերմունք, ստեղծագործելու, ոչ թե ոչնչացնելու ցանկություն:

Այսպիսով. նախադպրոցական տարիքի երեխաների բնապահպանական կրթության վերաբերյալ համակարգված աշխատանքը ցույց կտա իր արդյունքները, և մենք կմեծացնենք գիտակից քաղաքացիների սերունդ, ովքեր կհասկանան իրենց տեղն ու դերը բնության մեջ:

Գրականության ցանկ

1. Ա.Յու. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան 2005 թ., 455 էջ
2. Ս.Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան, Նախադպրոցական մանկավարժություն Երևան, 2005 թ.
3. Հ. Միտոյան, Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2020թ:
4. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում, մեթոդական ուղեցույց մանկապարտեզի դաստիարակների համար, Երևան, 2007 թ:

Հավելված 1

Հարցաթերթ ծնողների համար 1

1. Գիտե՞ք ինչ է ուսումնասիրում էկոլոգիան:

_____

2. Ձեզ հետաքրքրո՞ւմ է շրջական միջավայրի բնապահպանական խնդիրը:

_____

3 Պե՞տք է երեխաներին ծանոթացնել բնության մեջ վարքի կանոններին:

_____

4. Հաճա՞խ եք զբոսնում երեխաների հետ: Եթե այո, ապա որտեղ: Ո՞րն է նպատակը:

_____

5. Ինչպե՞ս եք վերաբերվում երեխային մանկապարտեզում բնությանը ծանոթացնելուն:

_____

6. Ձեր առաջարկությունները մանկապարտեզում բնապահպանական կրթության կազմակերպման վերաբերյալ.

_____